1609

947.925
U-15

9(47.925)
Կ-15

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկասիրութիւն

ԳԷՈՐԳԱՅ ԱՐՈՎԵԱՆՑ.

Աչքից հեռացած, մտքից մոռացած,
Իրանք անլեզու, աչխարհս անլեզու,
Որ Հայոց ազգին անէծիւ ու անբաւ
Էապէս քաջ որդիք խլեց՝ չկշտացաւ:
Վէր. Հայ. Խ. Աբովեան. (էր. 274):

(1004/15598)

ՏՓԽԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 5
1884

30342-42

ՀԱՍ-ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
ա. անվան ՊԵՏԱԿԱՆ

12926-58 ֆ

ԻՒՐ ԳՈՐՈՎԱԳՈՒԹ

ԵՒ ՍԻՐԵԼԻ ՄՕՐԸ

ԵՂԻՍԱԲԷԹ ԱԲՈՎԵԱՆՑԻՆ

Երախտագէտ սրտով

ՆՈՒԻՐՈՒՄ Է

2004

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ։

ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

2004

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Ноября 1883 г.

Типографія И. Мартиросіанца. Орбеліан. ул., д. № 5

ՀՀՅ ԱԱՀ Գրադարան
ГСС. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ա. ԱՄՍՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ц. им. А. Мясникяна

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Ամեն լուսաւորեալ ազգերի մէջ պատմական գիտութեանց ուսումն, իբրև ամենակարեւոր մարդկային սեռի լուսաւորութեան և յառաջադիմութեան, ամեն փոքր՝ի շատէ բարեկարգ դպրոցների մէջ ընդունած է: Եւ սա չիրաւի այսպէս էլ է. որովհետև նա է հայելի, որի մէջ մարդկութիւնը կարող է ճշդութեամբ տեսնել, թէ իր կատարելութիւնքը և թէ իր թերութիւնքը, որով աւելի մօտենում է անձնաճանաչութեան, որ նորա կեանքի մէջ ամենից հարկաւորն է: Ընդհանուր պատմական գիտութիւնքը, ընդհանուր մարդկութեան համար, այս նշանակութիւնը ունին: Բայց իւրաքանչիւր ազգ, իբրև մասն մարդկութեան, ունի և իւր առանձնական յատկութիւնները, ուստի և իւրաքանչիւր ազգ, իրան լաւ ճանաչելու համար, անշուշտ հարկաւորութիւն ունի իւր պատմութիւնը մանրամասնաբար ուսանելու, որովհետև նորա մէջ իւր առանձնական կատարելութիւնքը և թերութիւնքը տեսնելով, ճշդութեամբ կը ճանաչէ իրան, և . . . .

Այս աչքի առաջ ունենալով, հարկ համարեցի տպագրելու իմ անյայտացեալ եղբօրս — Գէորգայ Աբովեանց — «Հայոց պատմութեան Համառօտութիւնը». իբրև ձեռնարկ, որոյ հարկաւորութիւնը շատ զգալի է մեր ազգային դպրոցներումը: Կը յուսանք, որ ներողամիտ աչքով կը նային մեր բանասէրներն այս երկասիրութեան վերայ, որովհետև սորա աշխատասիրողը դեռ ևս չէր մշակած իր գործը, ինչպէս հարկն է, և անյայտացաւ կիսատ թողնելով իւր ցանկալի ձեռնարկութիւնը: Իսկ ես, թէ յաւերժացնելու համար նորա յիշատակը և թէ մի նոր մխջոց աւելացնելու համար մեր բանասէրների ձեռքին այս առարկայի մշակութիւնը առաջ տանելու համար, որոշեցի ՚ի լոյս ընծայելու այս աշխատասիրութիւնը երրորդ անգամ, ՚ի նպաստ ուսանող երիտասարդաց:

Բաղդասար Աբովեանց.

՚ի 19-ն Յունիսի 1869

Տփխիս.

Ց Ա Ն Կ

Հայոց պատմութեան մեծամեծ դաբերն, նոցա շրջաններն և իւրաքանչիւր դարի և շրջանի գլխաւոր նիւթը... ա—ջ:

ԱՇԽԱՐԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

	Էջե՝
Հին Հայաստանի սահմանը	1
Հայաստանի լեառները	2
Հայաստանի գետերը	4
Հայաստանի լճերը	6

ՄԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

1	Բարձր Հայք	7
2	Չորրորդ Հայք կամ Փոքոց աշխարհ . . .	—
3	Աղձնիք կամ Աղձնեաց աշխարհ	8
4	Տուրուբերան աշխարհ	—
5	Մոկք կամ Մոկաց աշխարհ	—
6	Կորճէք կամ Կորդուաց աշխարհ	9

7 Պարսկահայք 9
8 Վաճառականաց աշխարհ . . . . . —
9 Սիւնիք կամ Սիսական 10
10 Ուտի կամ Ուտէացւոց աշխարհ . . . . —
11 Փայտակարան աշխարհ . . . . . —
12 Արցախ կամ Փոքր Սիւնիք . . . . . —
13 Գուգարք կամ Գուգարաց աշխարհ . . . 11
14 Տայք կամ Տայոց աշխարհ . . . . . —
15 Այրարատեան աշխարհ . . . . . —
Փոքր Հայք 12
Միջագետք Հայոց 13
Կիլիկիա . . . . . —
Հայաստանի և Հայոց յատկութիւնքը . . 14
Հայաստանի յիշուած կենդանիքը . . . 16
Հայաստանի գազանները և թռչունները . 17
Հայաստանի Հանքերը . . . . . —
Հայաստանի նախկին բնակիչքը և նոցա կրօնը 18

ՀԱՅԿԱԶԱՆՑ ՀԱՐՈՑՈՒԹԻՒՆ

Հրջան առաջին.

Հայկայ գալուստը ի Հայաստան և նորա պատերազմը Բէլի դէմ 20
Հայոց նահապետների գաղթականութիւնը և

նոցա աշխարհաշինութիւնները 21—19-դ
դարը 24
Արամ 18-դ դարուն 28
Ընդ գեղեցկէն մինչև Պարոյր թագաւորը
կամ մինչև 600 թիւը Քրիստոսից առաջ . . 30
Մեր թագաւորները Մարաց ժամանակները կամ 610—535 թիւը Քրիստոսից առաջ . 34
Տիգրան առաջին 35
530—330 թիւը: Ինչ ժամանակ Հայաստանի մէկ մասը Պարսից թագաւորութեան նահանգ դարձաւ 38
Հայոց հեթանոսական կրօնը 40
Հայոց գլխաւոր չաստուածները 42
Հայաստանը 330—150 թիւը Քրիստոսից առաջ 44

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հրջան երկրորդ.

Արշակունի Վաղարշակ թագաւորը 150 թուականին Քրիստոսից առաջ 48
Վաղարշակայ օրէնքները և կարգադրութիւնքը 54
Կարգադրութիւնները 55
Արշակ առաջին 124 թուականին . . . 58

Արտաշէս առաջին 111—86 թուականը ն. ք. ՔՔրիստոս 58
Տիգրան երկրորդ 86—36 թուականին Քրիստոսից առաջ 60
Միհրդատայ երկրորդ պատերազմը Հայոց օգնութեամբ 63
Արտաւազդ 36—33 թուականը Քրիստոսից առաջ 68
34 թուականիցը Քրիստոսից առաջ մինչև 80 թուականը Քրիստոսից յետոյ, ըստ ազգային մատենագրաց 70
Արտաշէս Բ. 80—135 թիւը Քրիստոսից յետոյ 75
Արտաւազդ 135 թիւը Քրիստոսից յետոյ 81
Տիրան 135—156 թիւը Քրիստոսից յետոյ —
Տիգրան Գ. 156—195 թիւը 82
Վաղարշ 195—210 թիւը 83
Խոսրով 210—253 թիւը 84
Տրդատայ մանկութիւնը և նորա թագաւորութեան սկիզբը 86
Հայոց քաղաքականութեան նոր հանգամանքները. Սղկունեաց Սղուկ իշխանի ապստամբութիւնը. Սկիւթացւոց դէմ պատերազմը և զօրավարութեան բաժանումն 88
Քրիստոնէութեան առաջին քարոզութիւնները Հայոց աշխարհումը և նորա ուշ մտնելու պատճառը 91
Հայոց կատարեալ դարձը ի Քրիստոնէութիւն. Լուսաւորչայ մանկութիւնը. նորա տանջանքները. Տրդատայ հրովարտակները ընդդէմ Քրիստոնէից. Հռիփսիմեանք և Աստուծոյ պատիժը 92
Լուսաւորչայ ելն խորվիրապից. Հարուածելուց բժշկութիւնը. քարոզութիւնը. մեհենաց քանդումն. Լուսաւորչայ ձեռնադրութիւնը. նորա կարգադրութիւնները և Հայաստանի երկու ամենամեծ երախտաւորաց մահը 94
Տրդատայ յաջորդների նկարագրութիւնը. նոցա յարաբերութիւնը դէպի նախարարները և Հարևան երկու պետութիւնները 98
Խոսրով Բ. Սանատրուկ և Բակուր ապստամբեալները, մէկը Փայտակարան և միւսն Աղձնիք. Կոստանդիոս կայսեր մօտ հրեշտակագնացութիւնը. Անտիոքայ գալուստը. չորս զօրավարութեան նորոգութիւնը, Փանաճիհրի եղեռնագործութիւնը. Սկիւթացւոց արշաւանքը. Օշականի ճակատը. Տիրան Բ. և նորա անհրաւութիւնները 343—364 թուականը 101
Արշակ երկրորդ 364—382 թիւը 105
Պապ 382—388 թիւը 110
Վարազդատ 391—394 թիւը 113
Արշակ երրորդ. Վաղարշակ երկրորդ. Խոսրով երրորդ 394—399 . . . . . —
Խոսրով Գ. միայն թագաւորում է երկու բաժնի վերայ մինչև 400 թիւը 115

Վռամշապուհ 401—421 թիւը 117
Խոսրով Գ. միւս անգամ թագաւորում է և յետոյ Շապուհ Յազկերտի որդին մինչև 427 թիւը 119
Արտաշէս Գ. 427—433 թիւը. Ընշակունեաց թագաւորութեան և Լուսաւորչայ տան հայրապետութեան վերջը 120
Հինգերորդ դարու առաջին կիսի հայոց աշխարհի հանգամանքները 124
Յազկերտ Բ-ի յաջողութիւնները, նորա դիտաւորութիւնը քրիստոնէական հաւատի մասին. Ատոմեանց նահատակութիւնը, Գենշապուհ ի Հայաստան, Զրադաշտական նամակը. պատասխանը. նախարարաց կոչումն. բանտարկութիւն, առ երես ուրացութիւն. դարձ. Վասակ սրտանց ուրացեալ. ուխտապահ նախարարաց յաղթութիւնը 440—450 թիւը 128
Հայոց դեսպանութիւնը առ կայսրն. Պարսից յարձակմունքն Աղուանից վերայ. Հայոց օգնութիւնը. Վասակայ ուխտանենգութիւնը. Վարդանայ դարձն և Այրարատայ դրաւելը 451 թուին. պատերազմի պատրաստութիւնները. Տիզբոնի դրան նենգութիւնները. Պարսից զօրքի գալն, Առանձար, Աւարայրի ճակատը և նահատակութիւն Վարդանանց 132
Հայոց խռովութեան սաստկանալը. Յազկերտ միտքը փոխում է. Ատրորմիզդ մարզպան. Վէռնդեանք կալանաւորվում են, նախարարները բողոքում են. Վասակը պատապարտվում է. նախարարաց կալանաւորութիւնը. Վէռնդեանց նահատակութիւնը և նախարարաց դարձը 451—461 թիւը 137
Տիզբոնի դրան խորամանկ քաղաքականութիւնը. Փիւտ կաթողիկոսը. Վահան Մամիկոնեան. ուխտապահութիւնը. Յովհան Մանդակունի կաթողիկոսը. Պարսիկք հալածեալք. Ատրվըշնասպը. Արկոփ. Ատրներսէհ. Ներսէհ Հազատ. Միհրան. Զարմիհր Հազարավուխտ. Շապուհ մարզպան, Վահան դիւցազն և նորա արտաքոյ կարգի քաջութիւնները. Պարսից դրան քաղաքականութեան փոփոխութիւնը. Վաղարշ. Նիխոր. դաշն խաղաղութեան և Վահան մարզպան 461—485 թիւը 141
Հինգերորդ դարու վերջերի և վեցերորդի սկիզբների քաղաքական և կրօնական նոր հանգամանքները. Պարսից Հալածանաց մեղմութիւնները. Յունաց քաղաքական ներգործութիւնները և նոցա կրօնական ատելութեան սկիզբը. Բաբգէն կաթողիկոսը և Վաղարշապատու ժողովը. 150

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Հինգերորդ դարի վերջերից մինչև եօթներորդի սկիզբները 155

ԿԻՐԱՊԱՂԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԱԲԱՑԻՈՑ ԱՐՁԱԻԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՔ.

ԿԱՄ

631—693 *Թիւը* 160

ՈՍՏԻԿԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՔ

Եօթներորդ դարու վերջերից մինչև իններորդ դարու կէսը 163

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հրյան երրորդ.

Բագրատունեաց Թագաւորութեան կանգնման և անկման նկարագիրը 171
Աշոտ Ա. 856—889 *Թիւը* 175
Սմբատ Ա. 889—914 *Թիւը* 179
Աշոտ Բ. երկաթ 915—928 *Թիւը* . . . 185
Աբաս 928—951 *Թիւը* 191

Աշոտ Գ. Ողորմած 952—977 *Թիւը* . . 193
Սմբատ Բ. 977—990 *Թիւը* 195
Գագիկ Ա. 990—1020 196
Յովհաննէս Սմբատ 1020—1040 *Թիւը* . 198
Գագիկ Բ. 1040—1045 *Թիւը* 202
Տասն և մէկ դարու կիսերիցը մինչև այն դարու վերջերը 205
Որբենեանց ժամանակագր. նկարագրութիւնը 209

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հրյան չորրորդ.

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ 1080—1123 ԹԻՒԸ։

Ռուբէն Ա. մինչև 1095. Կոստանդին Ա. մինչև 1100 և Թորոս Ա. մինչև 1123 *Թիւը* 215
Լեւոն Ա. 1123—1141 *Թիւը* 219
Թորոս Բ. 1145—1168 *Թիւը* 220
Մլեհ Թորոս Բ-ի եղբայր 1168—1174 *Թիւը* 224
Ռուբէն Բ. 1174—1185 *Թիւը* 227

Լևոն Բ. 1186—1219 թիւը 228
Լևոնի մահից յետոյ ծագած շփոթութիւնները 1219—1226 թիւը 234
Հեթում Ա. 1226—1270 թիւը 235
Լևոն Գ. 1270—1289 թիւը 238
Հեթում Բ-ի ժամանակները 1289—1307 թիւը 243
Օշինը 1308—1320 թիւը և նորա որդի Լևոնը Ե. 1320—1342 թիւը 248
Լուսինեան տան թագաւորաց սկզբնաւորութիւնը. Կոստանդին Գ. և Թաթոն: Առաջինը 1342—1343 թիւը, երկրորդ 1343—1345 թիւը 254
Կոստանդին Գ. 1345—1362 թիւը . . 256
Կիլիկիայի խղճալի վիճակը 1362—1365 թիւը: Լևոն Ջ. 1365-ին, նորա գերութիւնը —1374 թուին: Կիլիկիոյ թագաւորութեան անկումն և Լևոնի մահն 1393 թուին . . 258
Հայոց աղգի, քաղաքական իշխանութիւնը կորցնելից յետոյ, ունեցած վիճակների համառօտ նկարագրութիւնը (Հազար չորս հարիւր թուից մինչև ներկայ ժամանակս): 263

Հայոց պատմութեան մեծամեծ դարերն, նոցա շրջաններն և իւրաքանչիւր դարի և շրջանի գլխաւոր նիւթը:

Ա.

Առաջին կամ հին դար ասւում է Հայոց տէրութեան սկզբնաւորութիւնից մինչև Արշակունեաց Հարստութեան անկումն, կամ 2200 թուիցը Քրիստոսից առաջ մինչև 430 թիւն Քրիստոսից յետոյ:

Բ.

Միջին դար ասւում է Արշակունեաց Հարստութեան վերջանալուց յետոյ մինչև Ռուբինեանց Հարստութեան անկումն կամ 430 թուիցն մինչև 1400 թիւը Քրիստոսից յետոյ:

Գ.

Նոր դար ասւում է Ռուբինեանց Հարստութեան անկումիցն մինչև մեր օրերը, կամ 1400 թուիցն մինչև ներկայ ժամանակս:

I.

Հին դարուն Հայերը Հեթանոս են, Հայոց տէրութիւնը հիմնւում է, շէնանում է, կարգաւորւում է, զօրեղանում է և պատերազմական մեծ վաստքեր է ժառանգում:

Այս դարը ունի մէկ քանի շրջաններ:

ԱՌԱՋԻՆ շրջանումը Հայաստանը կառավարւում է Հայկազանց Հարստութիւնից. նահապետներն զարդարում են Հայաստանը զանազան շինութիւններով, հիմնւում են նահապետական փոքր տուներն, ամեն մէկն իւր կալուածքն և իւր ստանն ունենալով. այս միջոցումն է նմանապէս որ Հայոց մեծ նահապետներից մէկն ընդունում է թագաւորական տիտղոս և թագ: Այս միջոցն տեւում է Հայկից մինչև Վահէի մահն, կամ 2200 թուից մինչև 330 թիւն Քրիստոսից առաջ:

ԵՐԿՐՈՐԴ շրջանումն Հայերը զրկւում են իրանց օրինաւոր թագաւորներից, ընկնում են Մակեդոնացի Ազէքսանդրի ձեռի տակն, յետոյ Սելևկացւոց. բայց ազատութեան հոգին լինելով Հայոց մէջ, անդադար ոտի են կանգնում և Հայերից թագաւոր ընտրում զանազան տեղ: Այս միջոցն գալիս է Վահէի մահից մինչև Արշակունեաց Հարստութեան Հայոց գահի վերայ բազմիլն, կամ 330—150 թուականը Քրիստոսից առաջ:

ԵՐՐՈՐԴ շրջանումն Արշակունիքն սկսում են Հայաստանին տիրել, նահապետական կարգն և

կառավարութիւնը մեծ փոփոխութեան տակ ձգել. նահապետութեան աւերակների վերայ դուրս են գալի նախարարներն իրանց զօրազօրութեամբն: Հայերի ղէնքը զօրացնում է շրջակայ ազգերին. Հայերը քաջութեամբ պատերազմում են Հռովմայեցւոց, Պարսից, Սկիւթական և այլ ազգաց հետ: Հայաստանը իր ամենամեծ ընդարձակութեան և փառքին է հասնում: Այս միջոցն տեւում է մինչև պարսկական Արշակունեաց Հարստութեան անկումն ի Պարսկաստան, կամ 150 թուից Քրիստոսից առաջ մինչև 230 թիւն Քրիստոսից յետոյ:

ՉՈՐՐՈՐԴ շրջանումն Արշակունի թագաւորներն, թոյլ և կնատ, տանն են նստած. Սասանեանց տունը, նրանց հետ թշնամացած, կամենում է նրանց էլ կործանել, ինչպէս Պարսկաստանումն արաւ: Հայոց նախարարները Պարսիկներից զրգռուած ընդդիմանում են իրանց թագաւորներին, կամենում են իրանց իշխանութիւնը ընդարձակել և ինքնագլուխ լինել, վերջապէս վախճան են տալիս Հայաստանի Արշակունի Հարստութեանը: Էլի այս միջոցումն քրիստոնէական կրօնի լոյսն սկսում է տարածվել Հայոց մէջ, և նոցա մէջ նոր կեանք և հոգի է ծնում: Հայկական տառերն գտնվում են և գրութիւնը ծնում է և ծաղկում է բազմահմուտ հոգևորականաց ձեռամբն: Այս միջոցն գալիս է 230 թուից մինչև 430 թիւն կամ մինչև Հայկական Արշակունի գահի կործանելն:

II.

Միջին դարուն և արդէն նորա սկիզբներից Հայերն քրիստոնեայ են. այն ինչ մարմնաւոր իշխանութեան կապերը քակվում են, Հոգևորը օր քան զօր զօրեղանում է, հաստատվում է ազգային եկեղեցին և Հայոց բոլոր ոյժը ջանք է անում այն եկեղեցին հաստատ պահել, նորա հետ պահպանվում է և Հայոց ազգութիւնը. մաքառում են այդ պատճառաւ Պարթից, Յունաց, Արաբացոց և այլոց դէմ: Թշնամիքն զօրեղանում են, Հայերը վերջին ջանքն 'ի գործ են դնում իրանց երկրումը պաշտպանել իրանց եկեղեցին, ազգութիւնը և նորա հետ կապուած սովորութիւնները, ոչինչ չեն կարողանում ազդել, սկսում է գաղթականութիւնը: Միջին դարն ունի մէկ քանի շրջաններ:

Առաջին շրջանումն Պարսիկներն Հայոց թագն գրաւելով կամենում են բառնալ և կրօնը, կրակապաշտութիւնը Հայաստան մտցնելով Հայերին կամենում են իրանց հետ խառնել, Հայերն ընդդիմանում են և եկեղեցին հաստատ է մնում. նոյն միջոցին Յոյներն էլ (թէև ոչ այնքան ոստիկ ինչպէս Պարսիկներն,) կամենում են մեր ազգային եկեղեցին և սովորութիւնները նորաձևութեանց ներքոյ ձգել: Այս միջոցն դրաւում է Արշակունեաց անկումնից մինչև Արաբացոց երևելը, կամ 430 թուից մինչև 630 թիւն Քրիստոսից յետոյ:

Երկրորդ շրջանումն Յոյները աշխատում են

բոլոր Հայաստանը գրաւել. բայց նոցա կրօնամոլութիւնը աւելի շտապեցնում է Արաբացոց տիրապետութիւնը, որ նախարարական դասուն մեծ հարուածներ է տալի, նոցա անկախութիւնը զսպելու և Հայոց երկիրն անմիջապէս ձեռք ձգելու համար: Այս միջոցն դրաւում է Արաբացոց երևելուցն մինչև Բագրատունեաց Հարստութեան ծագումն կամ 630—860 թիւը:

Երրորդ շրջանումն Հայերի արտաքին հանգամանքներն բարելաւանալով յառաջանում են մէկ քանի թագաւորական հարստութիւններն — Բագրատունեաց, Արծրունեաց, Կարուց, Սիւնեաց, Լօռու և այլն: Հայաստանը շէնանում է, վանքերը շատանում, գրութիւնը ծաղկում, դպրոցները աւելանում են. բայց երևում են Սելջուկեան կամ Տուղրիլեան թուրքերը: Յոյները խաղալիք են դառնում մանր մունր թագաւորներին: Յոյների կրօնամոլութիւնը և խարդախութիւնը մէկ կողմից և Սելջուկեանց սուրը միւս կողմից քակում են Հայկական իշխանութիւնները: Այս միջոցն դրաւում է 860-ից մինչև 1050 թիւը Քրիստոսից յետոյ:

Չորրորդ շրջանումն Հայերն միանգամայն ճարակատուր սկսում են թողնել իրանց արիւնով ներկած և պահպանուած աշխարհը. սկսում է Հայաստանի թումբերը պատառուիլ և Հայոց մեծ ազգը տարագրուիլ. վրէժխնդրութեան և ազատութեան ոգին Հայերիցը շատերին Տաւրոսի անառիկ լեռները վերայ է կանչում: Հիմնվում է Ռուբինեան Հարստութիւնը. գալիս են խաչակիրք. Հայերը թէև են

առնում և նուաճում են բոլոր Կիլիկիան և Փոքր Հայաստանի Հարաւը. Մեծն Հայաստանի Հիւսիսը անդորրանում է Վրաց Հայկազն զօրավարաց ձեռամբն: Ընկարգութիւնքը շատ տեղ վերանում են, վանքերն գիտնական միաբանութեամբք զարդարվում են, արևելեան վանդեալ քրիստոնէութիւնը ոգի է առնում (Ներսէս Շնորհալի, Լամբրոնացի, Վարդան և այլն). Յոյները վերջին ջանքն ի գործ են դնում Հայոց քաղաքական և կրօնական անկախութեան վերջ տալու: Մօղոլք Հայոց դաշնակից. յաղթութիւնք. վանդնեղի ներկայութիւն. խաչակրութիւնը հովանում է. Մամելուկք՝ արևելեան քրիստոնեայ թագաւորութեան թշնամիք: Պապերը օգնութիւն տալու փոխարէն հաւատափոխութիւն են պահանջում. կրօնական երկպառակութիւնները կեղեքում են Հայերին, Մողոլները մահմետականութիւն են ընդունում, Մամելուկները հարուածը: Այս միջոցն գրաւում է 1000-ից մինչև մօտ 1400 թուականը:

III.

Այս շրջանը բովանդակում է իւր մէջ ժամանակի միջոցը՝ Ռուբինեանց Կիլիկիական տէրութեան անկումնից մինչև մեր օրերը: Այս շրջանը ամենից թշուառն է մեր ազգի համար, որն որ սկսում է թողնել իւր հայրենիքն և ցրուել ամեն տեղ ու գաղթականութիւնք կազմել, որոնցից մի քանիսը ժամանակի և հանգամանքների կլանող զօրութիւնից անհետանում են և միւսները փոքր առ փոքր ծաղկում են և աւելի բարելաջող ապագայի յոյսեր են ստանում:

ԸՆԴՀԱՆՐԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ

Հին Հայաստանի սահմանը հիւսիսից էին՝ Ե-
գերայւոց աշխարհը, Վրաց և Աղուանից աշխարհներն,
որոնք կուր գետովն բաժանվում էին Հայաստանից.
արևելքից՝ Կասպից կամ Վրկանայ ծովը և Ատրպա-
տական աշխարհը. հարաւից՝ Մարք, Ասորեստան և
Տօրոս լեռները. որով Հայաստանը բաժանվում էր
Միջագետից, այսինքն այն երկիրներից, որոնք
գտնվում են Եփրատէս և Տիգրիս գետերի մէջտե-
ղումը, և Ասորիքից: Արևմուտքից՝ Կապադովկիա
և Փոքր Ասիա: Հայաստանի տարածութիւնը ըստ նոր
աշխարհագրաց համարվում է 15,000-մղոն քառա-
կուսի:

Հայաստանի լեառները։

Հայաստանի գլխաւոր լեառներն են՝ Պասխ, ըստ այլոց ազգաց Արարատ, Տօրոս, Կովկաս, Կորդուաց, Պարխար և Պոսկիքեան լեառները։ Պասխ լեառը՝ որոյ անունը ծագումն է մեր Ամասիա նահապետի անունից՝ ընկնում է Արարատայ նահանգի մէջ և երկու ճիւնապատ գագաթներով կանգնած է ընդարձակ դաշտի մէջը. սորա վերայ գտնվում է մէկ մեծ հրաբուխ, որ 1840-թվին իւր սարսափելի ներգործութիւնը ցոյց տուեց՝ Արկուռի գիւղը կործանելով։

Տօրոս կամ Տաւրոս (որ կ՚նշանակէ ցուլ) գալիս է Փոքր Ասիայից և Միջերկրական ծովի արևելեան հիւսիսայ ուղղութեամբ դէպի Վանայ կամ Բղնունեաց ծովը և դէպի Աղձնեաց նահանգը։

Կովկաս լեառը՝ որոյ անունը ծագած է մեր Հայկ նահապետի Կովկաս եղբօր անունից, ընկնում է Վրաց և Ազուանից աշխարհներիցը դէպի հիւսիս, բայց սա Հայոց լեառների կարգիցն չէ, միայն մեր աշխարհակալ թագաւորաց ժամանակը մեր տէրութիւնը մինչև այդ տեղ էր հասնում։

Սարդին Կովկաս ասում է այն լեառն, որ ընկնում է Կուր գետի սկզբներիցը դէպի հիւսիս. սա իսկ Հայոց լերանց կարգիցն է։ Կորդուաց լերանց անունը դարս է եկած Կորդուք անունով գաւառի անունից. սոքա գտնվում են Ասորեստանի սահմանում և տարածվում են մեր Պարակահայ գաւառները

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ս. ԱԱ. Ա. Մյասնիկյան
ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ՄԱՆՎԱՆ

մինչև Տիգրիս գետը։

Պարխար լեառները գտնվում են Տայք և Բաբդր Հայք անուամբ նահանգներումն։ Պոսկիքեան անուանեալ լեառները գտնվում են Մեծ Հայաստանի արևմտեան Հիւսիսային կողմերը և բաժանում են Մեծ Հայաստանը Պոնտոս և Կողքիս աշխարհներիցը։

Այս վերոյիշեալ մեծ լերանց մօտերքումը գտնվում են և ուրիշ փոքր լեառներ, որոնք երևելի են մեր ազգային պատմական անցքերով։ Այսպէս են՝ Արագած լեառը, որ Հայկայ որդի Արմենակայ անունով է կոչվում և ընկնում է Պասխ լերան Հիւսիսային կողմը. Գեղամայ լեառը, որ կոչուած է մեր Գեղամ նահապետի անունովը, ընկնում է Սևանայ կամ Գեղամայ ծովի արևմտեան կողմը։ Գրգուռ լեառը, որ կոչուած է Պարսից Վախթանգ գօրավարի Գրգուռ որդւոյ անուամբը. ընկնում է սա Վանայ կամ Բղնունեաց ծովի արևմտեան կողմը։ Ընձաքարա կամ Կապուտողն լեառը ընկնում է Վանայ ծովի հարաւային կողմը։ Կղարճք լեառները, որոնք Պարխար լեառներիցը դէպի հիւսիս են ընկնում և որոնցից սկիզբն է առնում Կուր գետը. Պասխոս լեառը համարվում է Տօրոս լերան մէկ ճիւղը, և ընկնում է Միջագետաց մէջ՝ Մծբին քաղաքիցը դէպի արևմուտք։ Նպատ լեառը՝ Պասխից դէպի արևմուտք, Սուկաս կամ Սուկաւէտ կամ Ջրաբաշխ լեառը, որ կոչվում է սուրբ Սուքիասեանց անունովը, ընկնում է Նպատ սարիցն դէպի արևմուտք։ Վարագայ լեառը ընկնում է Վանայ ծովիցը դէպի արևելք։

Հայաստանի գետերը.

Հայաստան աշխարհը առ հասարակ երկրագրնտի ջրաբեր երկիրներից մեկն է: Գլխաւոր գետերն են՝ Եփրատ, Տիգրիս, Երասխ, Ճորոխ, որոնք ինչպէս Աստուածաշունչ գիրքը վկայում է, դրախտիցն են դուրս գալի, և Կուր գետը:

Եփրատ գետը յառաջանում է երկու ճիւղերից, մեկը սկսվում է Կարնոյ բարձրաւթիւնից, իսկ միւսը Արարատեան լեառների արևմտեան ծագկան գետառէլ լեառներից. այս յետին ճիւղը էլի առվում է Արածանի: Տիգրիս գետը սկսվում է Աղթամարայ ծովակի արևմտեան Տօրտս լերան ճիւղերից:

Տիգրիս և Եփրատ գետերը Պարսից ծոցի մօտ խառնուելով՝ անուանվում են Ջատալարար և թափվում են Պարսից ծոցը: Երասխ գետը, որ Աստուածաշունչ գրքի մէջը Գհհովն է անուանվում, իւր անունը առել է մեր Արամայիս նահապետի Երաստ թոռի անունից. սա նմանապէս իւր սկիզբը առնում է Կարնոյ բարձրաւթիւնից. սա պատ տալով Արարատեան բարձրաւթիւններին՝ Հայաստանի արևելեան հիւսիսոյ մասերումը խառնվում է Կուր գետի հետ և միասին թափվում են Կասպից ծովն:

Ճորոխ գետն՝ որ Աստուածաշունչ գիրքը Փիսոն և արտաքին պատմիչներն Փասիս են կոչում, սկսվում է Պարխարեան կամ Բարձր Հայոց բարձրաւթիւնից, պատ է տալի Մոսկիքեան լեառները և Կողքիս կամ այժմեան Մինգրելիա աշխարհքը

և թափվում է Սև ծովն:

Կուր գետը, որ Կիւրոսի անունովն է կոչուած, նմանապէս Հայաստանի Պարխար կամ Բարձր Հայոց բարձրաւանդակաւթեան հիւսիսային մասերից է սկսվում. սա բաժանելով Հայաստանը Վրաց և Աղուանից երկիրներից, խառնվում է Երասխի հետ և այնպէս թափվում են Կասպից կամ Վրկանայ ծովն: Այս վերոյիշեալ գետերը շինում են իրանց մեծաւթեամբն մեկ մեկ աւազան, որոնց մէջը թափվում են Հայաստանի միւս փոքր գետերը, ինչպէս են՝ Ազատ գետը՝ որ բղխում է Գեղամայ լեառներից և թափվում է Երասխ: Ախուրեան գետը՝ (Հիմայ Արփաչայ) սկսվում է Կարս քաղաքի մօտերից, անցանում է մեր Անի մայրաքաղաքովն և թափվում է նմանապէս Երասխ գետը: Կարմիր գետը՝ սկիզբն է առնում Կապուտան ծովակի հիւսիսային բարձրաւթիւններից և թափվում է նմանապէս Երասխ գետը: Հրազդան գետը, որ սկիզբն է առնում Սևանայ ծովիցը, Երևանայ մօտերքովը գալիս և թափվում է նոյնպէս Երասխ գետը: Մեծամօր գետը՝ սկիզբն է առնում Արագածան լեառներից և իւր ծոցն ընդունելով Քասախ գետը, որ Էջմիածնայ մօտերքովն է անցնում, թափվում է Երասխի մէջ:

Աղստեւ և Ձօրագէտ գետերը՝ նմանապէս և Խրամը՝ սկիզբն են առնում Հայաստանի զանազան լեառներից և թափվում են Կուր գետը: Գայլ գետը ծագուելով Փոքր Հայաստանի բարձրաւթիւնից և Եկեղեաց գաւառովն անցնելով՝ թափվում է Եփրատը:

Մլուս Գայլ գետը թափվում է Սև ծովը, և նմանապէս Փոքր Հայաստանի բարձրաւանդակութիւնից է սկիզբն առնում: Տիգրիսի մէջը թափվում է Ջաւ գետը, որ սկիզբն է առնում Կորդուաց լեառներից և Թուխ գետը, որ նմանապէս Վանայ ծովի մօտերքի Տօրա լեառների ճիւղերից է սկիզբն առնում:

Հայաստանի լճերը.

Մեր նախնիքը սովորութիւն ունէին լճերը ծովակ անուանելու և ասելի մեծերին ծով, ինչպէս էին Վանայ կամ Բզնունեաց ծովը, Գեղամայ ծովը, Կապուտան ծովը: Բզնունեաց ծովը, որ կոչվում է Հայկայ Թոռան Բազ նահապետի անունովը, էլի ասում են Ռշտունեաց, Վասպուրական ծով՝ որ այժմ կոչվում է Աղթամարայ կամ Վանայ ծով: Նորա մէջը գտնվում են չորս կղզի լրանց անապատներովն կամ վանքերովն, որոնք են՝ Աղթամար, Առաքէլ, Լիմ և Կտուց: Այս ծովի հարաւումը Հայկը Բելին չաղթեց և սպանեց: Ծով Գեղամայ՝ որ կոչուած է մեր Գեղամ նահապետի անունովը, կը կոչուի և Գեղարքունի, իսկ այժմ կոչվում է Սևանայ ծով՝ Սևանայ անապատի անունովը: Կապուտան ծով՝ որ չորս կողմից պատած է լեառներով. ասվում է Թխկա ծով իբր մէջի կղզոյ անունովը, այժմ կոչվում է Որմիոյ ծով, Որմի քաղաքի անունովը: Բացի սոցանից Հայաստանի մէջը ուրիշ փոքր լճեր էլ կան, ինչպէս են՝ Գայլատայ՝ Արարատեան լեառների մօտ, Ծովակ Հիսոիոյ՝

Գուգարքումն է գտնվում և այլք:

ՄԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

1. Բարձր Հայք.

Բարձր Հայք՝ որ տեղ է Բարձր Հայոց բարձրաւանդակութիւնը, որ տեղից Համարեա թէ Հայաստանի մեծ գետերը սկիզբն են առնում. սորա մէջը գտնվում էին մէկ քանի գաւառներ, որոնցից երևելիքն էին՝ Սպեր, Սպեր և Բաբերդ քաղաքներովն. Կարին կամ Թէոդոսուպօլիս քաղաքովն. Դերջան, Մանանաղի. Եկեղեաց՝ իւր Երիզա կամ Երզնկայ քաղաքովն և Թիլ գիւղովն, որոնք երևելի էին իրանց կաւատուններովն Յունաց չաստուածների, որոց բերել էին Հայոց թագաւորները Յունաստանից և Փոքր Ասիայից: Գարանաղի նահանգ, սորա սահմանումն է Սեպուհ լեառը կամ Մանեայ այրը, որ տեղ որ ճգնաւորեցաւ մեր Գրիգոր լուսաւորիչն, սորա մէջն էին Թորդան գիւղը՝ Աորոց Բարշամ չաստուծոյ կաւատանովն, և Անի ամրոցն, որտեղ Արշակունի թագաւորներն էին թաղվում, որ ասվում է և Կամախք:

2. Ծորորդ Հայք կամ Ծոփաց աշխարհ.

Երևելի գաւառներն են՝ Խոզնա՝ Երապոլիս քաղաքովն. Հանձիթ գաւառ՝ Խարբերդ քաղաքովն,

Պազնատուն գաւառ՝ Պազին գիւղովն. Բալահովիտ՝ Բալու քաղաքովն, Հաշտեանք, որտեղ Արշակունի Թագաւորների փոքր որդիներն էին բնակում. Մեծ Փոլիք, Նիրկերտ՝ Մարտիրոսաց քաղաքովն։

3. Ղճնիք կամ Ղճնեաց աշխարհ.

Որոյ երևելի գաւառներն են Արզն, Ամիտ կամ Տիգրանակերտ քաղաքովն և Արզն գիւղովն. Ակռայ Ձոր և Սալնոյ Ձոր։

4. Տուրուբերան աշխարհ.

Երևելի գաւառներն էին Տարօն՝ Մուշ քաղաքովն և Աշտիշատ գիւղովն, որտեղ էր Վահէվանեան կռատունը, ուր կատարում էին մեր Վահագնի պաշտամունքները, և ուր գտնվում էին Վահագնի քրմերը. Սուրբ Կարապետ կամ Գլակայ վանք. Հարք գաւառ՝ իւր Հայկաշէն քաղաքովն, որ մեր Հայկը շինեց. Բգնունիք, Խորխոռունիք՝ Արծկէ քաղաքովն. Ապահունիք՝ Մանազկերտ քաղաքովն և Թոնդրակ գիւղովն. Աղիովիտ՝ Ջարիշատ քաղաքովն և Քաջբերունիք։

5. Մոկք կամ Մոկաց աշխարհ.

Մեր նախնեաց ժամանակը սա երևելի էր ինչպէս իմաստուն մարդկերանց տեղ. երևելի գաւառներն էին Առաւնից Ձոր, Ջերմաձոր և Սառանձնակ Մոկք։

6. Կորճէք կամ Կորդուաց աշխարհ.

Երևելի գաւառներն են՝ Կորդիք կամ Տմորիք, Որսիրանք, Ջահուկ և Փոքր աղբակ։

7. Պարսկահայք

Երևելի գաւառներն են Տամբեր, Ջաւեհաւան՝ Որմի քաղաքովն. Հեր և Ջարևանդ՝ Հեր քաղաքովն, այստեղ է և Սալմաստ քաղաքն։

8. Վասպուրական աշխարհ.

Սորա երևելի գաւառներն են՝ Ծշտունիք, որտեղ է Նարեկայ վանքն. Տոսք՝ Տոսք, Վան և Արտամիդ քաղաքներովն. Երուանդունիք, Աղբակ, Մարանդ՝ Մարանդ գիւղովն, Ջուաշտուտ՝ Մառականդիւղովն. Անձևացիք, Գողթն՝ Ջուղայ քաղաքովն. Նախջևան՝ Նախջևան քաղաքովն, Արտազ՝ Ձաւարշան քաղաքովն, այստեղ է Աւարայր գիւղն իւր Աւարայր դաշտովն, ուր Վարդանանց պատերազմը եղաւ. Առբերունի. Բգնունեաց ծովի կղզիքը, ինչպէս են՝ Աղթամար, Լիմ, Կտուց և Առտէր՝ իրանց անապատներովն, որք այս նահանգի մէջն են գտնվում։

9. Սիւնիք կամ Սիսական.

Սորա անունը ծագեցաւ Գեղամ նահապետի Սիսակ որդւոյ անունիցը. երևելի գաւառներն են՝ Կովսական կամ Կուսական՝ Ամարասու վանքովն. Երնջակ՝ իւր Երնջակ քաղաքովն. Ծղուկք Ստաթևու կամ Տաթևու վանքովն և Որոտն գիւղովն. Հաբանդ. Վայոց Ձոր, Գեղարքունի՝ Գեղամի կամ Գառնի քաքաղաքովն. Ձորք կամ Կապան՝ Կապան քաղաքովն և Գանձասարովն, ուր երևելի վանք կայ։

10. Ուտի կամ Ուտիացւոց աշխարհ.

Երևելի գաւառներն են՝ Ձակաշէն, Գարդման և Ուտի առանձնակ՝ Պարտաւ քաղաքովն։

11. Փայտակարան աշխարհ.

Երևելի էր սա վարդանակերտ գաւառովն՝ Համանուն քաղաքովն, Երասխ գետի վրայ շինուած։

12. Արցախ կամ Փոքր Սիւնիք

Վաղարշակ Հայոց Թագաւորի Առան կուսակալի անունովն է կոչուած, երևելի գաւառներն են Փառնէս կամ Փառիոս, իւր Ջամբռա գիւղովն և Գանձակ քաղաքովն. Գողթն, միւս Հաբանդ։

13. Գուգարք կամ Գուգարաց աշխարհ.

Երևելի գաւառներն՝ Տաշիր՝ Լօրի քաղաքովն, Ձորափոր՝ Օձուն գիւղովն, Հախպատ, Սանահին՝ Հռաչակաւոր վանքերովն, որոնք շինեց Հայոց Աշոտ ողորմած Թագաւորի Խոսրովանուշ կինը. Ջաւախք, Ախալքալաք քաղաքովն. Սամցխէ՝ Ախալցխա քաղաքովն և Սամցխէ բերդովն։

14. Տայք կամ Տայոց աշխարհ.

Սորա գաւառներն են՝ Կողբովոր, Արտահան՝ իւր անուամբ քաղաքովն. Կղարջք՝ Լարանուն լեառներովն, որտեղից սկիզբն է առնում Կուր գետը։

15. Այրարատեան աշխարհ.

Սորա գաւառներիցը երևելի էին՝ Վանանդ՝ Կարս քաղաքովն. Ձիրակ՝ Ձիրակաւան կամ Երազգաւոր քաղաքովն, ուր Բագրատունիք Թագաւոր էին նրստում. Անի քաղաքը, որտեղ յետոյ նոյն Թագաւորները նստեցին։ Արագածոտն՝ Եղիվարդ՝ Աշտարակ և Օշական գիւղերովն, Օշականի մէջն է սուրբ Մեսրովբի գերեզմանը. Երասխաձոր կամ Արշարունիք՝ Երուանդակերտ և Երուանդաշատ քաղաքներովն, որ շինեց Երուանդ Ե։ Այս տեղ էր Բագարան քաղաքը, որ երևելի էր իւր բազիններովն. Ծաղկոտն գաւառը՝

իւր Վաղարշակերտ քաղաքովն. Բագրեւանդ՝ իւր Բագրեւան աւանովն. որ տեղ էր Արամազդայ Վանատրի կռատուչնը և ուր որ կատարվում էին ամանորաբեր տօները. Կոտայք՝ իւր Երևան ամրոցովն. Փառեցոտն Ակաի դիւզովն. Ոստան Դվինն քաղաքովն: Արարատ նահանգումը գտնվում էին Արտեմիտ կամ Վարդգեսի աւանը, ուր յետոյ Էջմիածինը շինուեցաւ. Արմաւիր՝ որ Արամայիս նահապետը շինեց կոխածաւ քարից. Արտաշատ՝ որ շինեց Արտաշէս Թագաւորը: Արտաշատի մէջն էր գտնվում խոր վիրապը, որ էր պատժապարտ տեղի մահապարտների, որի մէջն ընկաւ և Գրիգոր լուսաւորիչն: Արտաշատի մօտն էր և Երազմոյն տեղը կամ Երազացոյց մեհեանը: Այս վերոյիշեալ նահանգներից երևելի էին իրանց պատմաբանական անցքերովն և ընդհանրութեամբն՝ Բարձր Հայք, Այրարատ, Տուրուբերան և Վասպուրական:

Փոքր Հայք.

Մեր Արամ նահապետը՝ Հայաստանը աւելի ապահովացնելու համար իրան մերձակայ Թշնամիներից առաւ Բուն Հայաստանի արևմտեան կողմի երկիրները և անուանեց Փոքր Հայք, որ զանազանուի Մեծ Հայաստանիցը: Փոքր Հայք, որ Յոյնք Արմենիա էին ասում, հիւսիսից պատած էր Պոնտոսովը, արևելքիցը՝ Մեծ Հայաստանովը, Հարաւիցը՝ Կիլիկիայովը և Տօրոս լերան ճիւղերովը և արևմուտքիցը՝ Փոքր Ասիոյ զանազան տէրութիւններովը: Լեառնե-

րիցը անուանի էին Հարաւումը Տաւրոս և Սեաւ լեառները, որոնք չի հնուց երևելի էին իրանց հնագոյն վանքերովը. երևելիքն էին Առաջին Հայքումը՝ Երզէոս լեառը, իսկ հիւսիսիցն էին Պարխարեան լերանց ճիւղերը: Գետերից երևելի էին Ալիս, որ սկսում էր Պարխարեան լեառներիցը. Իրիս, որ յառաջանում էր երկու ճիւղից, աւաջինը Գայլից՝ որ սկիզբն էր առնում Բարձր Հայքիցը, երկրորդը Իրիսից՝ որ սկսվում էր Պարխարի հիւսիսային մասերիցը: Փոքր Հայաստանը Արամի ժամանակիցը բաժանվում էր՝ Առաջին Հայք՝ Մաժաք քաղաքովն, որ յետոյ Կեսարիա կոչուեցաւ. Երկրորդ Հայք՝ Նիկոպոլիս և Սեբաստիա կամ Կաբբիա քաղաքներովն. Երրորդ Հայք՝ Մելիտինէ և Սամոսատ քաղաքներովն:

Միջագետք Հայոց.

Այս աշխարհը, որ գտնվում էր Աղձնեաց նահանգիցն հարաւ, մինչև Երուանդ Բ. Արշակունի Թագաւորը՝ Հայոց ձեռին էր. քաղաքներիցն երևելի էին Մծբին՝ որտեղ նստէց Վաղարշակը և մէկ քանի Արշակունի Թագաւորներ. Եդեսիա կամ Ուռհա, որ տեղ էին Աբգար Թագաւորը և նորա յաջորդները:

Կիլիկիա.

Երբ որ Բագրատունեաց Թագաւորութիւնը Մեծ Հայաստանումը վերջացաւ, նոցա ազգական Ռուբէն

Իշխանը Կիլիկիայումն Հայոց Ռուբինեանց Թագաւորութիւնը Հիմնեց։

Այս աշխարհը արեմուտքէը պատած էր Պամփիւլիայովը, Հիսպիրը՝ Փոքր Հայաստանումը գրտնուող Կապադովկիայովը կամ Տօրոս լերան ճիւղերովը. արեւելքէը՝ Եփրատացւոց աշխարհովը, ուր գտնւում էր Հռոմկլայ ամրոցը և ուր կաթողիկոսութիւն սրին Ներսէս Ծնորհալին և նորա եղբայր Գրիգորը. հարաւէը՝ Միջերկրական ծովովը։ Կիլիկայի գետրիցը երևելի էին Կիւղնոս, որ Տարսան քաղաքովն էր անցանում, և Սարոս։ Քաղաքներիցը երևելի էին Տարսան, որ բանասիօսները համարում էին թէ՝ Յոհան մարգարէի վախած Թարշիշն էր, Սիս՝ ուր Սիսու կաթողիկոսն է նստում. Անարզաբա՝ Դրագարիկ վանքովն, Ադանա։ Բրդերիցը երևելի էին Վահկայ բերդ, Տօրոս լերան վերայ և Լամբրօն, Տարսոն քաղաքիցն դէպի արևմուտք հիսիսոյ, ուր ծնաւ Ներսէս Լամբրօնացին։

Հայաստանի և Հայոց յատկութիւնը.

Որովհետև Հայաստանի մակերևոյթը միանման չէ, և որովհետև Հայաստան աշխարհումը կան այնպիսի տեղեր, որոնք բարձր են և կան այնպիսիք, որոնք ցածր են, ինքն լեռնոտ աշխարհ լինելով՝ այս պատճառաւ էլ Հայաստանի բերքերը և կլիման զանազան տեղ զանազան են, չընայելով որ Հայաստանը բարեխառն գօտումն է գտնւում։ Սորանից է որ

Հայաստանի շատ կողմերում կան այնպիսի տունկեր և անասուններ, որոնք այլեցած գօտուն են պատկանում, կան այնպիսիներ էլ, որոնք բարեխառն գօտուն են պատկանում, և վերջապէս կան այնպիսիներ էլ, որոնք բոլորովին պատկանում են սառուցեալ գօտուն։ Եթէ մեր աչքի տակն առնունք այն, թէ կլիման և տեղի դրութիւնն մարդոց վերայ ևս ներգործութիւն ունեն, կարող ենք ասել միևնոյն բանը Հայաստանի բնակիչների վերայ։ Վերոյիշեալ բանիցը կարող ենք հասկանալ, որ Մոկաց աշխարհի բնութիւնը և երկինքը կարող էին ներգործել այնտեղի Հայերի վերայ, որոնք պարապում էին աստեղաբաշխութեամբ և ուրիշ գիտութիւններով։ Գողթն գաւառի գինին և բնութիւնը կարող էր լուր միջի Հայերին բանաստեղծ առնել, որոնք մեր քաջ նախնեաց վիպասանութիւններն երգում էին իրանց անմահ քնարովն։ Սիւնեաց, Գուղարաց և Արցախու նահանգների բնութիւնն և երկրի դիրքը ներշնչում էին իրանց միջի Հայերի հոգւոյ մէջ այն պատերազմական ազատ հոգին, որով նոքա պատրաստ էին իրանց արիւնը թափելու Հայրենեաց ազատութեան և իրանց անկախութեան համար. այո, կար Հայոց մէջ և այն հոգին, որով նոքա ճանաչեցին քրիստոնէական հաւատոյ բարձր ճշմարտութիւնը և պարզութիւնը, իրանց անձն զրին այն հաւատոյ վերայ և անխախտ մնացին նորա մէջ մինչև ցայսօր, այն ժամանակը, որ իրանց ուրիշ դրացի ազգերը, կուրացած լինելով թէ Ղուրանի խաւարովը և թէ մոխրապաշ-

տուբեան վոշխովն, սպառնում էին ամեն քայլում կլանել նոցա և մեր քաղցր Հայրենիքը:

Հայաստանումը, ինչ տեղ կլիման և տեղի պըղտիքինը յարմար էին, այն տեղ գտնվում էր ցորեան, հաճար, գարի, վուշ, բամբակ, թուզ, սերկևիլ, նուռը, պիստակ, շագանակ, նուշ, վարունգ, դդոյր, մեղր, ձիթենի, յասմիկ, մուրտ ծառը, ոսկեայ ծառը, լօշտակ բոյսը: Անուանի էր Հայաստանի գինին, մանաւանդ Գաղձն գաւառինը, Արարատ և Ուտի նահանգացը. անուանի էր և Հայաստանի ձիերանը, որ Ներսէսեանք Հայաստանեայց տարան. Հայաստանումը գտնվում էր նմանապէս դանագան տեսակ խնկեղէններ, ինչպիսի են՝ քարախունկ և պրտղախունկ. առաւել երևելի է Հայաստանի գաղբէնն՝ որ մանանայի պէս քաղցր բան է, և որ գտնվում է այժմ մէկ քանի ծառերի տերևների վերայ. գաղբէնն գտնվում էր աւելի Կարնոյ և Սասունքի մէջ տեղի երկիրներումը: Հայաստանումը շատ անտառներ կային, ինչպէս բնական, որոնք աւելի գտնվում էին Գուգարքումը և Սիւնեաց աշխարհումը, նոյնպէս և արհեստական՝ որ տնկել էին մեր թագաւորները, և լցնում էին նրանց վայրենի անասուններով որսի համար:

Հայաստանի յիշատակ կենդանիքը.

Հայաստանի մէջ գտնվում էին ՚ի հնուց դանագան որսի կենդանիներ. ինչպիսի էին՝ եղջերու, վարազ, վայրի այծ և աւելի խարձր Հայոց, Զորրորդ

Հայոց, Արարատեան և Սիւնեաց նահանգներումն, ցիռ, այսինքն վայրի էշ, Հաւարակ էշ և ջորի: Խիստ անուանի էր Հայաստանի ձին, թէ գեղեցկութեան և թէ ուժեղութեան կողմանէ, որոյ մէկ տեսակն էր նժոյգ անուանեալն, որ աւելի գտնվում էր Տուարածոտն գաւառի Խնուսի կողմերը, որ ըստ մեծի մասին Հայոց թագաւորները և իշխանները գործ կ՚ածէին: Կենդանեաց և բերքերի կարգը կարելի է ՚դնել և որդան կարմիր մանր ճիճուներն, որ աւելի գտնվում էր և գտնվում է Արարատումը: Հայաստանի դանագան ձիերի միջին երևելի էին և են տաւեխը, կարմրախայտը և դեղարքունին:

Հայաստանի գազանները և թռչունները.

Գազանների ցեղիցը Հայաստանումը գտնվում էր՝ առիւծ, ինձ, վագր, ընձուղտ, գայլ և այլն. թռչունների ցեղիցն՝ ագռաւ, կաքաւ, սագ, բադ, վոր կամ կարապ և ուրիշ դանագան թռչուններ, մանաւանդ Արարատայ, Խարձր Հայոց և չորրորդ Հայոց մէջ:

Հայաստանի Հանքերը.

Հայաստանը շատ տեսակ Հանքեր ունի, բայց այժմ ըստ մեծի մասին անգործ մնացած են, ինչպիսի են Փանանաղի և Փարանաղի գաւառներումը, նմանապէս և Տուրուբերանի Աղիովիտ գաւառումը,

(1004/Т65568) 12926-58
ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА ЗССР Арм. ССР им. А. Мясникяна

ունէր և աղի շատ հանքեր, ինչպէս և մինչև յայժմ Բագրեւանդ գաւառի Կողբ գիւղումն։ Աղձնեաց և Տուրուբերան աշխարհներումը գտնվում էր՝ երկաթի, պղնձի, ւկապարի և ուրիշ հանքեր. Բարձր Հայոց Սպեր և Ձորրորդ Հայոց՝ Հանձիտ գաւառումը արծաթի, ոսկու հանք, Այրարատայ դաշտան կողմերումն, ինչպէս Աղձնեաց Արգն գաւառումն՝ աղի։ Ինչպէս մեր, նոյնպէս և օտար մատենագիրներն պատմում են՝ թէ Հայաստանումը կային դաշտան և ագնիւ քարերի հանքեր, ինչպէս էին՝ բիւրեղ կամ սառնատեսակ, եղնգաքար կամ սարտիոն, շափիւղ, զմրուխտ, ակատ, սև սաթ, մարմարիոն, որ մինչև այսօր էլ կան, իսկ Հասարակ կիճեր, ինչպէս և դաշտան գոյնզգոյն հրաբուղիի քարեր, խիստ շատ կան։ Զամիրամ Ասորոց թագուհին Հայաստանի ժայռերիցը մէկ քար կտրել տուաւ, որոյ երկայնութիւնն էր 130 ոտնաչափ իսկ լայնութիւնն 25 ոտնաչափ։

Հայաստանի նախկին բնակիչները և նոցա կրօնը.

Ինչպէս Հայաստանի աշխարհագրական դրութիւնը և Հայոց լեզուն վկայում են՝ Հայերը ծագում են Յարեթի սերունդներից և ջրհեղեղիցը յետոյ բնակվում էին Հայաստանումն առանց որոշ անուան, Հաստատ կառավարութեան։ Պէտք է որ դրանց այդ ժամանակուայ կրօնը աւելի ճշմարիտ և պարզ լինէր՝ քան մեր ժողովուրդներինը, որոնք արդէն ցրուել

էին Հայաստանիցը և սկսել էին մոռնալ ճշմարիտ Աստծուն։ Նոյ նահապետը ինչպէս և նորա կին Նոյեմզարէն մնալով Հայաստանումը, որոնք արդէն Արմենական ժամանակներն են մեռնում, կարող էին ճշմարիտ Աստուծոյ կրօնը և Հասկացողութիւնը անխախտ աւանդել անդրէածին Հայերին, ինչպէս և նոցա, որոնք Բաբելոնը թողին և Հայկայ Հետ եկան Հայաստան։ Այս պատճառաւ է, որ շատերը մեր Հարազատ պատմաբանների ցիցը խոստովանվում էին՝ թէ Հայկը Բաբելոնը թողեց և եկաւ Հայաստան, այն պատճառաւ որ չկամեցաւ միւս եօթանասուն նահապետների Հետ Հնազանդել և պաշտել Բէլին, այլ ինքն լինելով Հայաստանի որդի և ունենալով ճշմարիտ Աստուծոյ վերայ Հասկացողութիւն, վրէժխնդիր եղաւ Աստուածապաշտութեան, սպանելով Բէլին։

ՀԱՅԿԱԶԱՆՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Երջան առաջին.

Հայկայ գալուստը ի Հայաստան և նորա պատերազմը Բէլի դէմ։

Քանիերկուերորդ դարումը նախ քան զՔրիստոս, երբոր աշտարակաշինութեան և այնտեղ գտնուած հսկայից պատճառաւ, այն ժամանակուայ աշխարհումը մեծամեծ փոփոխութիւններ յառաջացան, մէկ մարդ, որոյ անունն էր Հայկ, գալով Բաբելաստանիցը Հայաստան, ժողովեց իրան ձեռի և հովանաւորութեան տակ՝ այն տեղի Յաբեթական ժողովուրդներին և իւր անունովն այն ժողովրդեանը անուանեց Հայ, իսկ երկիրը Հայաստան։

Ինչպէս հայերը, Հայկն էլ ծագում էր Յաբեթից և Յաբեթի թոռան Թորգոմի որդին է համարւում։ Այս զեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ Հայկը միւս քաջարի մարդկերանց նման հայաստանիցը գնացել էր Բաբելոն, սա քաջ և երևելի էր հսկայից միջին, որոնք մասնակցութիւն ունէին աշտարակաշինութեան մէջն։ Աշտարակաշինութիւնը անյաջող վերջանալուց յետոյ, երբոր Բէլ կամ Նեբրովթը կամենում էր ամենի վերայ իշխել և տիրել բոլոր երկիրներին, Հայկը բարկանալով վերառաւ իւր Արմենակ որդուն, որ ճնել էր Բաբելոնումը, և իւր ստացուածովն և մարդկե-

բանցովը, որոնք թուով 300 հոգի էին, եկաւ Այրարատ աշխարհը։ Այս տեղ՝ Հայաստանի հարաւային մասերումը, որ կարծելի է Մոկաց և Կորդուաց աշխարհները, մէկ բարձրաւանդակ տեղ բնակութիւն շինեց և տուաւ իւր կազմոս թոռանը՝ որ Արմենակայ որդին էր, իսկ ինքն իւր Արմենակ որդուովն և ուրիշներովը գնաց Ռշնունեաց ծովի արևմտեան հիւսիսայ կողմերը։ Այն տեղի ցիրուցան ժողովրդոց իւր ձեռի և հովանաւորութեան տակն առաւ, շինեց Հայկաշէն քաղաքը և այն երկրի անունն էլ կոչեց Հայք։ Մինչև որ Հայկը Հայոց երկրի և Հայոց վիճակը բարելաւացնելու վերայ էր, Տիտանեան Բէլը, որ արդէն իւր հզօր տէրութիւնը հաստատել և կառավարում էր, կամենում էր որ միւս նահապետներն ևս իւր ձեռքի տակը լինեն, ուստի իւր որդուն դեսպան ուղարկեց մէկ քանի թիկնապահներով Հայկայ մօտ ասելով. «Բնակեցար սառնամանեաց և ցրտութեան մէջ, այժմ մեզմիր քո հպարտացած բարքի ցրտութիւնը, հնազանդիր ինձ և հանդարտութեամբ կաց իմ երկիրներիս մէջ, որտեղ քեզ հաճոյ կը լինի»։ Հայկը՝ երբոր լսեց այս պատգամաբերութիւնը, խրստութեամբ պատասխանեց դեսպաններին և յետ դարձրեց։ Բէլը բարկանալով Հայկայ յանդգնութեան վերայ, իսկոյն բազմաթիւ զօրք ժողովեց և դիմեց դէպի Հայաստան, այն նպատակաւ, որ մեր աշխարհը հիմն ի վեր տապալի։ Երբոր Բէլը մօտեցաւ Հայոց աշխարհին, Կազմոսը՝ որ արդէն Ասորեստանի սահմաններումն էր գտնվում, շուտով մարդիկներ ուղարկեց

Հայկայ մօտ, այսպիսի խօսքերով՝ «Գիտացիր, ով մեծդ դիւցազանց, որ Բէլը գալիս է քո վերայ՝ քաջ և բարձրահասակ հսկաներով՝ և ես իմանալով նորա մօտ լինելը, ահա քեզ լմայ եմ տալիս, ուրեմն մտածիր և ինչ որ անելու ես արա». այն ինչ լինքն՝ Կադմոսն էլ շուտով պատրաստուեցաւ և գնաց Հայկայ մօտ: Այն ժամանակն ուշիմ և խոհեմ Հայկն իրան մատաղ տէրութիւնիցը ժողովեց իւր որդիներանցը, թոռներին և ուրիշներին՝ որոնք իւր Հովանաւորութեան տակն էին և որոնք թուով շատ քիչ էին իրանց թշնամիներիցը, գնաց Բղնունեաց ծովի մօտ. այստեղ կանչելով իւր փոքր գնդին իւր առաջը սկսեց յորդորել նրանց՝ չվախենալ ահարկու և բազմաթիւ թշնամիներից, այլ քաջութեամբ գնալ դէպի այն կողմը, որտեղ կը գտնուի Բէլը և աշխատել նորան սպանել. նմանապէս իւր քաջ զօրավարներին ասելով՝ թէ այն յաղթութիւնից է կախուած իրանց գերդաստանների կեանքը և մատաղ տէրութեան վիճակը. ուրեմն պէտք է կամ մեռնիլ, որ իրանց մահիցը յետոյ միայն թշնամիները կարողանան իրանց սրբազան երկրին տիրապետել, և կամ յաղթել, որ օրինակ լինի յետին եկողներին, թէ՝ իրանց նախնիքը չվախնացին իրանց արիւնը և կեանքը հայրենեաց ազատութեան համար: Այսպէս ասելով Հայկը՝ յառաջ գնաց դէպի Բղնունեաց ծովի հարաւային լեառները, այն տեղից տեսաւ նա Բէլին և նորա բազմաթիւ զօրքերին, ուստի շուտով կարգ դրեց իւր զօրքի մէջին և նոցա կանգնեցրեց եւան-

կիւնի ձեւով,—առաջին տեղն ինքը բռնեց իւր մարդկերանցովն: աջ կողմն կանգնեցրեց Արմենակին իրաններովն, իսկ ձախ կողմն՝ Կադմոսին, նմանապէս իրաններովն: Այս կերպով սպասեց Բէլին և նորա ամբոխին ցրուեց: Բէլը զարմանալով Հայկայ վստահութեան վերայ, ջոկեց իրան զօրքի մէջիցը քաջերին և նրանցով յառաջ գնաց՝ Հայկայ միտքն իմանալու. իսկ Հայկը չզկտրցնելով իրան ձեռից այսպիսի յաջող դիպուածը՝ յարձակուեցաւ Բէլի վերայ, վակեց նորա ամբոխին իրան եւանկիւնիի մէջ և սկսեց մեծ ջարդ տալ իրան թշնամեացը: Բէլը զարհուրելով այս անակնկալ դիպուածից՝ կամեցաւ յետ դնալ և ըսպասել իրան միւս մնացած զօրքին, բայց Հայկը հասկանալով նորա դիտաւորութիւնը՝ յառաջ գնաց և այնպէս պինդ քաշեց իրան երեքթեւեան նետն, որ դիպչելով Բէլայ կուրծքին թիկունքից դուրս եկաւ, և ինչպէս պատմում են, խրեցաւ երկրի մէջին. Բէլը վեր ընկաւ, փչեց Հոգին և մնացեալ զօրքը զարհուրելով Հայոց քաջութիւնից. սկսան փախչել դէպի Բաբելաստան: Պատերազմի տեղը Հայկը շինեց քաղաք և անուանեց Հարք, Բէլի վերընկած տեղն ասուեցաւ Գերեզմանք, իսկ երկիրն Հայոց Ձոր:

Հայոց նահապետները և գաղթականութիւնը և նոցա աշխարհակալութիւնները 21—19 դարը.

Հայկը արդէն Բէլին սպանելուց յետոյ կրկին անգամ Հայաստանի Հարաւային մասերը յանձնեց Կադմոսին և նորա սերունդներին, որոնք պէտք է պահէին Հայոց նոր տէրութեան այդ կողմերը, որևիցէ թշնամեաց արշաւանքներից. իսկ ինքը կրկին անգամ գալով Հարք գաւառը՝ սկսեց զանազան կարգադրութիւններ անել և դեռ իւր մահից առաջ ազգի նահապետական կառավարութիւնը յանձնեց իւր անդրանիկ Արմենակ որդուն: Արմենակը, ինչպէս և նորա յաջորդները, Հայկայ աշխարհակալութեան հետևելով՝ Հարք գաւառը և նորա սահմանակից երկիրները յանձնեց իւր Խոռ և Մանաւազ եղբարցն, որոնցից սերեցան Խոռխոռունիք և Մանաւազեանք, ինչպէս Մանաւազի որդի Բազից՝ Բգնունիք, և ինքն գնաց յարևելս Հիւսիսոյ՝ Արարատայ աշխարհը: Այս տեղ Արարատայ Հիւսիսային լերանց մէկի ստորոտումը սկսեց զանազան շինութիւններ և կարգադրութիւններ անել: Մօտակայ լեառը իւր անուամբը կոչեց Արագած, իսկ երկիրն Արագածոտն: Արմենակը շատ տարիներ մեր աշխարհը կառավարելուց յետոյ մեռաւ, առաջուց ազգի կառավարութիւնը յանձնելով իւր Արամայիս անդրանիկ որդուն: Արամայիսն իւր հօր նման թողում է Հայրական երկիրը և գնում է դէպի Հարաւ. այս տեղ Գէհօվն գետի ափերումը շինում է կոփածու քարերից մէկ քաղաք, որ Հայկազանց մայրաքաղաքն էր, և իւր անուամբը կոչում էր Արմաւիր, իսկ գետն իւր Երասխ Թոռան անուամբն՝ Երասխ: Երևելի էր և սորա Զարայ որդին, որոյ շատակերութիւնը վերջին ժամանակներն առասպել դարձաւ, և որին իրան հօրիցը տրվեցաւ Ախուրեան գետի մօտ մէկ արդաւանդ երկիրը, որ այժմ ասում են Շիրակ կամ Զօրագետ: Արամայիսին յաջորդում է նորա Ամասիա անդրանիկ որդին, որ Արմաւիր քաղաքը յանձնելով իւր անդրանիկ Գեղամ որդուն, միւս երկու որդկերանցովն՝ — արի Փառնոսովը և կայտառ Յոլակովը - գնում է արևելս Հարաւոյ: Այն տեղ մէկ մեծ լերան ստորոտումը շինում է երկու քաղաք՝ միմեանցից մէկ օրուայ ճանապարհ հեռի, տալիս է իրան երկու որդուցն, որոց անուամբն սաւում են Փառնոստ և Յոլակերտ. իսկ ինքն գալով Արմաւիր մեռնում է, յանձնելով ազգի կառավարութիւնը Գեղամին: Գեղամն իրան նախորդներին հետևելով՝ թողնում է Արմաւիր քաղաքն իւր անդրանիկ Հարմայ որդուն, և ինքն միւս Սիսակ որդուվն գնում է դէպի արեւելք, այս տեղ մէկ ծովակի ափումը շինում է զանազան բնակութիւններ, որոց մէջին երևելի էր իւր անուամբ Գեղամ կամ Թոռան անուամբը Գառնի քաղաքն, որ շինած էր իւր անուամբ Գեղամայ լեառների մէկի վերայ՝ Ազատ գետի ափերումը: Սա շատ շինութիւններ և կարգադրութիւններ անելուց յետոյ, և ծովն, ինչպէս և երկիրն, իւր անուամբ Գեղամայ անուանելով՝ դառնում է Արմաւիր և մեռնելուց առաջ մեր աշխարհի վերայ նահապետ է կար-

գում իւր անդրանիկ Հարմայ որդուն: Սկսակը մնալով Գեղամայ կամ Գեղարքունի աշխարհումը, Հայաստանի համար լինում է հրեշտակ պահապան թշնամեաց արշաւանքներից հիւսիսումն և արևելքումն, ինչպէս Կադմեանք հարաւումը: Սկսակն իրան յանձնած աշխարհը ընդարձակում է մինչև Կուր և Երասխ գետերը և տիրում է արևելքում բոլոր երկիրներին, սկսեալ Գեղամայ ծովակիցը մինչև Կուր և Երասխ գետերն, և իւր անուամբը կոչում է՝ Սիւնիք կամ Սկսականք: Անց է կենում Կուր գետն, իրան ձեռի տակն է առնում բոլոր երկիրները մինչև Կասպից ծովը և անուանում է իրան երկրորդ անունով՝ Աղուանք, որ յետոյ Հայոց տէրութիւնից բաժանուելով առանձին տէրութիւն դարձաւ:

Այս կերպով Հայկը և նորա յաջորդները սկսում են հարաւից գալ դէպի հիւսիս և Հայաստանի հին ժողովուրդներին իրանց հովանաւորութեան տակն առնել. ամեն տեղ, ուր որ յարմար էր և յաջող բնակելոյ և սպաս տանելոյ լցնել զանազան շինութիւններով և իրանց իշխանութիւնը, ինչպէս և տիրապետութիւնը, ընդարձակել այն ամենայն երկիրների վերայ, որոց բնութիւնը սահմանել էր, արևմուտքից Եփրատ գետը, հարաւից Կորդուաց լեառները և Ասորեստանը, արևելքից Մարաստանը և հիւսիսից Կուր գետը: Այդ սահմանի մէջ վակուած աշխարհն է, որ ասում ենք Մեծ կամ Բուն Հայաստան, որ մեր առաջին նահապետների հոյակապ շինութիւններով և անջնջելի յիշատակարաններով Հա-

յաստանի որդիներանց համար մեկ սրբազան ժառանգութիւն է աւանդած:

Հայկից սկսեալ մինչև Հարմայն, մեր նահապետների ջանքն այն է լինում, որ տիրեն և շինութիւններով, ինչպէս և բնակիչներով լցնեն այն երկիրները՝ որոնք մասն էին Հայոց նոր տէրութեան: Տեսնում ենք, որ նահապետներն իրանց անդրանիկ որդիներանցը թողում են իրանց Հօրական շինութիւններումը և իրանք միւս որդիներանցովը գնում են միւս կողմերը՝ շինութիւններ, կարգադրութիւններ անելու: Վերջապէս տեսնում ենք, ինչպէս անդրանիկ որդին Հօրից առնում է անմիջապէս նահապետութիւնը և ազգի գլխաւոր վերատեսչութիւնը՝ աւելի լուկ անուամբ էր, քան թէ գործով, որովհետև միւս որդիքը ամենքն էլ իրանց յանձնած աշխարհումը՝ իշխանութիւն են անում, ինչպէս և կամենում են. այս պատճառաւ էլ մեր մատաղ և նոր տէրութիւնը զուրկ լինելով իրան քաջ և տարածուած որդիներանց միութիւնից, շուտով Հարմայ օրերումը վայելում է այդ անմիութեան դառը պտուղը: Զորս կողմից վեր են կենում բազմաթիւ թշնամիք և Հայոց ձեռից խլում են մեր երկիրները և սպառնում են, մինչև անգամ, նրանցից խլել մեր քաղցր լեզուն և աւանդութեամբ ժառանգած ճշմարիտ Հաւատը:

Հայաստանը, Հայոց լեզուն և կրօնը այս վտանգաւոր հեղեղից ազատելու համար պէտք էր միութիւն, պէտք էր մեկի հրամանին լսել և մեկի խօս-

քով դնալ։ Ժամանակը վախուել էր, մեր Հարեւան երկիրները Թշնամի ազգերով լցվել էին և սպառնում էին մեզ գլխովին կլանել։ Հայաստանի ոգին կարծես հանգցաւ իրան կարիքը, զգաց իրան տառապանքը և մէկ փրկիչ էր սպասում։ Այո, փրկիչը դուրս եկաւ, ազատեց մեր աշխարհը և լեզուն Թշնամեաց սպառնալիքից. բայց կրօնը անգատնալի կորաւ, որովհետև այն ժամանակից յետոյ Հայաստանում կռապաշտութիւնը սկսում է իրան սև գրւխը բարձրացնել։ Այս փրկիչն էր մեր քաջ Արամ նահապետը։

Արամ 18-դ դարում,

Երմենակիցը սկսեալ մինչև Հարմայ նահապետը՝ արդէն Հայաստանը լցուել էր Հայերով, բայց նոցա մէջը չկար կառավարութեան միութիւն. իւրաքանչիւր նահապետ կառավարում էր իրան տոհմը։ Այս պատճառաւ շրջակայ Թշնամի ազգերը սկսել էին ոտք դնել Հայաստանի մէջ և նորան ոտնակոխ առնել, և չկար այն միութիւնը, որով նա կարող էր ապահով մնալ։ Արամայ ժամանակը տեսնում ենք այս բաղձալի միութիւնը, Հայաստանի առանձին նահապետների դօրութիւնը իրան թևի տակը հաւաքելով՝ Արամը կարողանում է մեր Թշնամեացը յաղթել, մինչև անգամ ուրիշ երկիրներ էլ խլել Թշնամեաց ձեռքից. Հայաստանը ապահովացնել և հայութիւնը, ինչպէս և մեր մայր լեզուն, առաջ տանել։

Արևելքիցը, Հարաւից և արևմուտքիցը Հայաստանը ոտնակոխ էր եղել օտարածին զաւակներից։ Արամը սկսեց արևելքից։ 50,000 քաջ զինուորներ իրան թևի տակը հաւաքելով ընկաւ Մարաց Նիւքարի վերայ՝ ջարդեց նորա զօրութիւնը, դուրս քշեց Հայաստանիցը և Մարաց ազգի մէկ մասն հարկատու արաւ, իսկ Նիւքարին սպանեց և նորա գլուխը բերեց Արմաւիր քաղաքը։ Հարաւային կողմից մեր աշխարհն սպանում էր Բարշամ Ասորին։ Արամը Մարաց յաղթելուց յետոյ նոյն զօրքով գնում է դէպի Հարաւ. յաղթում է Ասորոց ամբոխին և Բարշամին սպանում։ Այս յաղթութիւններից յետոյ Սիսակեանց պահապան կարգելով Հայաստանի հիւսիսային և արևելեան կողմերում, իսկ Կադմոսեանց Հարաւում, ինքն իրան քաջ զինուորներով գնում է արևմտեան կողմերն՝ որտեղ արդէն մէկ Պայապես անուամբ իշխան տիրել էր Հայաստանի արևմտեան կողմերին։ Պայապիսը չկարողանալով դէմ կենալ Հայոց զօրութեանը՝ թողում է մինչև անգամ իրան երկիրն էլ և իրան անձը ազատելու համար ընկնում է Միջերկրական ծովի մէկ կղզու վերայ։ Արամը Հայաստանի արևմուտքը մաքրելով այս կերպ ամբարտաւան հարևաններից, առնում է նրանցից Կապադովկիայ և Պոնտոսի մէջի երկիրները։ Այս նոր երկիրն ասում է Փոքր Հայք, և բաժանվում է երեք նահանգներ կամ աշխարհներ, որք են՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք և Երրորդ Հայք։ Այդ կողմի Հայերը արդէն ընկնելով ուրիշ ազգերի ձեռի տակ, մոռացել էին իրանց

մայրենի լեզուն: Արամը կարգում է մէկ կուսակալ Մշակ անուամբ, որ պէտք է այն տեղի բնակիչներին հայերէն լեզուել ստիպէր: Այս Մշակ կուսակալը գտնվում էր Առաջին Հայքումն, որ տեղ շինեց Մշակ քաղաքը՝ որ ասվում էր Մաժակ, որովհետև բնակիչները չէին կարողանում արտասանել, ինչպէս հարկն էր:

Արամայ կառավարութեան վերջին օրերումն Ասորեստանեայց Նինոս թագաւորը, որ իւր տէրութիւնը մինչև Բակտրիացւոց և Հնդկաց աշխարհներն էր տարածել, կամենում էր և Հայաստանը նուաճել, բայց նորա նպատակը չէ կատարվում և մեր Արամ նահապետը մաքրելով Հայաստանը զանազան թշնամիներից, միացնելով իրան ձեռում Հայաստանի բոլոր զօրութիւնը, կառավարում էր մեր աշխարհը միապետութեամբ, իրան գլխին մարգարտեայ վարսակալ ունենալով՝ որ այն ժամանակները միայն թագաւորները կարող էին կրել:

Արայ գեղեցիկն մինչև Պարոյր թագաւորը կամ մինչև 600 թիւը Քրիստոսից առաջ:

Արամ նահապետին յաջորդեց նորա որդի Արայ գեղեցիկը, որոյ մահիցը յետոյ մեր աշխարհը ընկնում է Ասորեստանի թագաւորութեան ներքոյ: Արայ նահապետն արդէն տասներկու տարի ամուսնութեան սիրով և զթով կապուած էր իրան նուաղող ամուսնոյ հետ: Նոյն ժամանակներումն Ասորեստանումը թագաւորում էր Զամիրամը, որ սպանելով իւր ամուսին

Նինոսին՝ յաջորդել էր նորան: Այս վավաշոտ կինը լսելով մեր Արայի գեղեցկութիւնը՝ կամենում էր ամուսնանալ նորա հետ. բայց երբոր ջանքն և խոստումները ունայն դուրս եկան, այն ժամանակ Զամիրամը կամեցաւ պատերազմով հասնել իւր նպատակին: Զուտով երկու կողմերը հանդիպում են միմեանց Արարատեան աշխարհումը՝ Երասխ գետիցը դէպի հարաւ: Արայ գեղեցիկը չըսպասելով պատերազմի վերջին, ընկնում է իւր քաջ զինուորաց հետ թշնամեաց դնդի մէջ և մեծ ջարդ է տալի նոցա: Զամիրամը հրամայում է իւր զինուորներին, որ Արային կենդանի բռնեն, բայց չը նայելով ամենակերպ նախազգուշութիւններին՝ Արայ գեղեցիկը վեր է ընկնում պատերազմի դաշտումը և թագուհու յոյսը զուր է անցանում: Ասորեստանի թագուհին, հմուտ լինելով կախարդութեան արհեստի մէջ, կամենում է գիւթութեամբ կենդանացնել նահատակեալ Արային և այնպէս հասնել իւր բաղձանքին, բայց այս տեղ էլ չէ յաջողում նրան, երեք օրից յետոյ, երբ հոտում է դիակը, հրամայում է թաղել նորա մարմինը: Հայոց զօրքը կոլոյնելով իւր նահապետին, ոտի է կանգնում և մեծ նեղութեան մէջ է ձգում Ասորեստանեայց թագուհուն: Սա կամենալով նրանց հանդարտացնել, իւր մօտ գտնուած մարգկերանցից մէկին, որ շատ նման է լինում Արային, հագցնում է նորա հանդերձները և ասում է. «Թէպէտ Արայն մեռաւ, բայց աստուածները լիզելով կենդանացրին և նա գտնվում է իւր մօտ»: Զամիրամը տեսնելով Հայաստանի ավանա-

կիտ աղբիւրներն և օդի բարեխառնութիւնը, ճշնաւնեաց ծովի արևելեան ափամբ շինում է Ջամիրամակերտ քաղաքը, ամառը այն տեղ անցկացնելու համար: (այս քաղաքը Վան թագաւորը նորոգելով իւր անուամբ կոչեց Վան): Այնուհետև Հայոց աշխարհը Ասորեստանի ընդարձակ թագաւորութեան մէկ նահանգ է դառնում և հարկ է տալիս նրան: Միայն ներքին կառավարութիւնը երկրի մնում է Հայ նահապետների ձեռքումը, Հայկազանց հարստութենից:

Արայ դեղեցիկն յետոյ Հայաստանը կառավարում է նորա որդի Կարզոյը կամ Արայ Արայեանը, որ միևնոյն ժամանակ կախումն ունէր Ասորեստանի թագաւորից, և ինչպէս որ մեր Հարազատ պատմաբաններն ասում են, Ջամիրամին օգնութիւն է տալի նորա որդի Նինուասայ դէմ և սպանվում է մէկ յանդուգն պատերազմի մէջ: Արայ Արայեանի որդի Անուշաւանը գերի է ընկնում Նինուասայ ձեռքը: Սա ծնուել էր իւր Հօր պայազատութեան ժամանակը և նուիրուած էր Արմաւիր քաղաքի մօտի սօսինեղին, ուր որ Հայերը հմայութիւն էին անում, և որոց նուիրեալը սուրբ և դիւցազն էր համարվում: Անուշաւանը իւր խոհեմութեամբն և համեստութեամբը Նինուասի, ինչպէս և նորա շրջապատողների, սէրը վայելելով, ազատվում է գերութիւնից. ընդունում է Հայաստանի վերատեսչութիւնը և վերադառնում է իւր Հայրենիքը:

Մինչև Անուշաւանը, Հայոց նահապետները Հայ-

կից սկսեալ որպէց որդի էին կառավարում մեր աշխարհը, բայց Անուշաւանը չունենալով որդի, Հայաստանի կառավարութիւնը ուրիշ քաջ և երևելի Հայերի ձեռքն է անցանում, որոնք ինչպէս իրանց նախորդները՝ Կարզոան և Անուշաւանն Սօսանուէր կախուած էին Ասորեստանի թագաւորներից: Սրանց վերայ երևելի բան չկայ պատմելու և մեր պատմաբանները միայն նրանց անուններն են յիշատակում, որոց թիւը հասնում է մինչև 27-ի, որոնցից երևելի էին Պարէտը, որ առաջինն էր Սօսանուէրից յետոյ, Փառնաս՝ որոյ ժամանակները Սեզոստրիս Եգիպտացոց թագաւորը, ինչպէս պատմում են, մտնում է Հայաստան. Սուր՝ որին Գրիգոր Մագիստրոսը Սուսեր Հատու է ասում, որա օրերումը Խալդէացիք մտնում են Պաղեստինէ, և շատ Քանանացիք Քանանիդաս եշխանի առաջնորդութեամբը գալիս են Հայաստան, որոնցից Ֆինիկեացոց կամ Քանանիդացոց նախարարութիւնն է սերվում. Զաւարշ, որ շինեց Արտազ գաւառի Զաւարշան քաղաքը. Ջարմայր, որոյ ժամանակը սկսել էր Տրոյացոց պատերազմը, Պրիամոս թագաւորի խնդրանօքը Ասորեստանի Տէւտամոս թագաւորի զօրքն և մեր առանձին գունդը առնում է իւր հրամանատարութեան ներքոյ և գնում է Տրոյացոց օգնութիւն ընդդէմ Հելլենացոց: Այս տեղ Ջարմայրը շատ քաջութիւն անելուց յետոյ սպանվում է Հելլենացոց քաջերից, և մենք Մովսէս Խորենացոյ հետ պէտք է ասենք որ՝ Ջայրմայրը վիրաւորուեցաւ Աքիլլէսից և ոչ թէ ուրիշներից:

Մեր Թագաւորները Մարաց ժամանակները կամ 610—535 Թուը Քրիստոսից առաջ.

Մեր աշխարհը Բաբել մահից յետոյ կախված էր Ասորեստանի Թագաւորներից, Թէպէտ մեր քաջ և խոհեմ նահապետաց, ինչպէս և Ասորեստանի զեղչ և շռայլ Թագաւորաց ժամանակները, երբեմն երբեմն մեր աշխարհը կառավարում էր ինքնօրէն. բայց Աստուած չափել էր Նինուէի Թագաւորութեան օրերը: Մարաց ազգը Դիովկի ժամանակից ըսկսեալ անդադար պատերազմի մէջ էր Նինուէի Թագաւորաց հետ: 610 Թուականին Քրիստոսից առաջ մեր Պարոյր նահապետը միացաւ Մարաց Կիաքսարի հետ Սարդանապաղի դէմ, նրանից խոստումն առնելով՝ որ մեր աշխարհի վերայ Թագաւորէ: Այս կերպով Նինուէի Թագաւորութիւնը կործանելուց յետոյ, Հայաստանը անկախ Թագաւորութիւն դարձաւ և առաջին պատուաւոր Թագաւորն էր Պարոյր Սկայորդեանը: Սրան յաջորդում են՝ Հրաչեայ, Փառնաւազ՝ Պահոյճ, Կոռնակ, Փաւոս, Հայկակ բ. Երուանդ Սակաւակեաց: Սրանցից երևելի էին՝ Հրաչեայ՝ որ մեծ Նաբուգոդոնոսորի հետ 590 Թուին գնաց Հրէաստան և այն տեղից գերիներ բերեց Հայաստան, որոնց միջին էր Զամբաթ անուն Հրէայն՝ որից սերեցան Բագրատունիք և Վաղարշակայ Բագրատ իշխանը, որ Արշակունեաց Թագաւորների Թագադիրն էր: Երուանդ Սակաւակեացի օրերումն էր Վարդգէս մանուկը, որ ամուսնացաւ նորա քրոջ վերայ և որնոր Քասախ գե-

տի և Ջրէշ բլրի մօտ շինեց Վարդգէսի տանը:

Տիգրան առաջին:

Երուանդայ որդի Տիգրանայ ժամանակները Հայոց տէրութիւնը ընդարձակվում է մինչև Գամիրք և Ուդայոց և Յունաց գաղթականութեանց մէկ քանիները մինչև անգամ ընկնում են Հայոց ձեռքի տակ և Հարկ են տալի մեր Թագաւորներին: Այս կերպով Հայոց մէջ արհեստը և քաղաքականութիւնը առաջ են գնում: Ի բնէ Հայերը ընդունակ էին վաճառականութեան և այդ ժամանակները շատ ազդելի հետ վաճառականութիւն էին անում: Երասխ գետովը, Կասպից ծովով և Օքսոս գետովն՝ որ այն ժամանակը մէկ ճիւղով մտնում էր Կասպից ծովը, Հայերը գնում էին, ինչպէս Յոյն Ստրաբոնն է պատմում, Բակտրիացոց և մինչև անգամ Հնդկաց աշխարհները, և Եփրատ գետովն, ինչպէս Հերոդատոսն է պատմում, հասնում էին Բաբելոն: Կարաւանով գնում էին Կապադովկիա և մինչև անգամ Ասորոց աշխարհովն՝ Փիւնիկէ: Տիւրոսացիք Հայերից առնում էին լաւ տեսակ ջորի և ձիաններ և Հայաստանի ապրիշ բերքեր, իսկ նոցա վոխարէնն տալիս էին ոսկի, արծաթ, պատուական քարեր և զանազան անկաւածներ: Նաւագնացութիւնը նոցա ստիպեց նաւեր շինել, որոնք աւելի գտնվում էին Կասպից ծովումն և Եփրատ գետի վերայ: Մէկ քանի արհեստներ, որոնք Հարկաւոր էին կենցաղավարութեանը, բաւական

առաջացած էին. մշակուած էր նամանապէս ոստայնանկութիւնը ինչպէս և նալօտ գործելը, ինչպէս Մովսէս Խորենացին է ասում: Տիգրանայ ժամանակները զինուորական արհեստները առաւել կատարելագործուեցան, հետեւակ զօրքի մօտ գտնւում էին հեծելազօրք, լոկ շերտաւորների տեղը հիմայ երեւում են՝ սուսերաւորները և տիզաւորները. Թեթեւ հագնուած զօրաց տեղը՝ վահանաւորներ, սպառազէններ և զրահակիրներ. իսկ մեր աղեղնաւորները և պարսաւորները, որոնք հետւից պէտք է կռուէին, առհասարակ զուրկ էին ուրիշ ապդերից: Զինուորական արհեստը կապուած լինելով խիստ դարբնութեան հետ, պէտք է ասենք, որ այս արհեստն էլ մեր մէջ բաւականին առաջ էր գնացել:

Առաւել երեւելի էին Տիգրանայ ժամանակուայ Հայոց պատերազմական գործքերը. Երեմիայ մարգարէն Հայոց և վրէժխնդիր կանչում Բաբելացւոց դեմ թագաւորաց դէմ, որոնք գերի էին տարել Հրէից ժողովրդեան և նոցա սրբազան անօթները: Կիւրոսը, որ այս ժամանակներումը սկսել էր հիմնել Պարսից ընդարձակ տէրութիւնը, նուաճել Մարաց և Լիդացւոց թագաւորներին, մեր Խոհեմ և քաջ Տիգրանի հետ է բռնում իւր ամեն առաջարկութիւնները: Մարաց Աժդահակ թագաւորը տեսնելով դրանց սէրը և միաբանութիւնը մտածմունց մէջ էր ընկնում և երազի մէջ տեսնում է Հայոց բարձր լեառների մէկի վերայ մէկ կին, որ ծնում է երիք դիւցազունք. առաջինը առիւծի վերայ նստած գալիս էր դէպի ա-

լեմուտք. երկրորդ դիւցազն ընձու վերայ՝ դէպի հիւսիս և երրորդը մէկ անարի վիշապ սանձելով գալիս է իւր աէրութեան վերայ: Այս վերջինը հասնելով նորա պալատի մօտ՝ ուր Աժդահակը զոհ էր մատուցանում կուռց, կամենում է խորտակել նոցա, բայց Աժդահակը մէջն է ընկնում և ազատվում է նրանից: Աժդահակը ասլատաճելով՝ զարթնում է քնից և կանչում է խորհրդականաց և մոգերին, որոնք մեկնութիւն են տալիս՝ թէ դէպի արեւմուտք եկող է Կիւրոսն, դէպի հիւսիս Բաբելացւոց թագաւորը, իսկ վիշապին սանձողն է Հայոց քաջ Տիգրանը, ուրեմն և պէտք է շուտով զօրք ժողովել և նոցա առաջը կտրել: Բայց Աժդահակը կամենում է խորամանկութեամբ բանը վերջացնել, այն է բարեկամութիւն անել Տիգրանայ հետ՝ նորա քոյրը կին առնել և այնպէս սպանել նրան, բայց ինքն խաբվում է և իւր կորստեանը առիթ է լինում: Պատգամաւորներ է ուղարկում Տիգրանայ մօտ նորա քոյր Տիգրանուհուն կին խնդրելով: Ամատանամուց յետոյ ասում է նրան՝ թէ քո եղբայր Տիգրանը իւր Զարուհեայ կնոջ խօսքովն կամենում է մեզ և մեր թագաւորութիւնը ոչնչացնել. որովհետև Զարուհին նախանձել է քո տիկնոց տիկին լինելուդ համար: Տիգրանուհին չհաւատալով այսպիսի պատրոպական խօսքերիցը՝ շուտով հաւատարիմ մարդկանց միջնորդութեամբ յայտնում է եղբօրը:

Աժդահակը հրաւիրում է Տիգրանին առանձին խօսելու, բայց սա յայտնում է, թէ շուտով կր տես-

նեն միմեանց պատերազմի դաշտումը: Սրանից յետոյ զօրք է ժողովում և հասնում է Մարաց սահմանը: Այս-եղել պատերազմը ուշանում է առժամանակ, մինչև Տիգրանուհին փախչում է եղբօր մօտ, Կիւրոսն էլ վրայ է հասնում 535 թուականին. Տիգրանը անձամբ ընկնում է Աժդահակայ վերայ և նրան սպանում է: Այսպիսով պատերազմը վերջանում է և 10,000 մարդ դերելով իրանց Անուշ Թագուհա հետ միասին բնակեցնում է Մասիս սարիցը դէպի արևելք՝ Երասխ գետի ափերումը, որտեղից յետոյ Ծաղեցան Վիշապազունք: Իսկ իւր Տիգրանուհի քրոջ համար Երնջակ գաւառումը Տիգրանակերտ քաղաքն է շինում և նրան, ինչպէս և նորա սերնդոց, այնտեղ է բնակեցնում:

530—330 Թ. Ինչ ժամանակ Հայաստանի մէկ մասը Պարսից Թագաւորութեան հնազանդ գտնուեր:

Թէպէտ Մարիբասը և Մովսէս խորենացին յայտնի չեն պատմում՝ թէ Հայաստանը ինչ պրծութեան մէջ էր այս միջոցումը, այսուամենայնիւ Ասիոյ այդ ժամանակուայ դրութեան վերայ, ինչպէս և այդ ժամանակուայ պատմաբանների խօսքին նայելով՝ Հայաստանը, եթէ ոչ բոլորովին, գոնեայ նորա Հարաւային և արևմտեան մասերը, Պարսից ձեռին էր և Հայաստանի այդ մասը սոցա սատրապներն էին կառավարում, որ Գարեհ Վշտասպեանիցը բաժանուած՝ 20 սատրապութիւններից 11 երորդն էր: Հայոց

սատրապների բնակութիւնը գտնվում էր Եփրատ գետի մօտերքումը և կենցաղավարութիւնները այնպէս ճոխ էին, ինչպէս Պարսից մէւս սատրապներինը. և իրանց զօրքը ժողովում էին ըստ մեծի մասին Խազտէացւոց, Տայոց, Կորդուաց աշխարհներիցը և Արաբատայ Բահեան գաւառիցը: Այդ կողմի Հայերը հնազանդ լինելով Պարսից իշխանութեան ներքոյ անդորր կեանք էին վարում 200 տարու չափ:

Տիգրանայ յաջորդները՝ որոնց միայն անուններն է յիշում Մովսէս Խորենացին, Թագաւորում էին հիւսիսային Հայաստանումը: Տիգրանին յաջորդեց իւր որդի Վահագն, որ մեր կառավարութեան ժամանակը Հայերից և Վրացիներից պաշտվում էր իբրև Աստուած, և սա մեր նախնեաց համար միևնոյն նշանակութիւնն ունէր, ինչ որ Յունաց համար Հերակլէսը, որովհետև նա էլ պատերազմել էր վիշապների և զանազան հրէշից հետ: Վահագնի մահից յետոյ աստուածացրին նրան և առանձին քրմաց դաս կարգեցին, որոնց գլխաւոր պարտաւորութիւնն էր պաշտօն տանել իրանց ազգային դիւցազնին: Վահագնին յաջորդեցին որդէց որդի՝ Առաւան, Ներսէհ, Զարեհ, Արմոզ, Հայգամ և Վան: Վանին յաջորդեց իւր որդի Վահէն, որ առաջ Գարեհին օգնութիւն ուղարկեց 40,000 հեծեալ և 7,000 հեծելազօր Աղէքսանդր Մակեդոնացւոյ դէմ և յետոյ, երբ Գարեհ Կոդոմանոսը յաղթուեցաւ, ինքն անձամբ դուրս գնաց նորա առաջն և շատ քաջութիւն անելուց յետոյ մեռաւ մօտ 330 Թուին:

Վահէէ մահից յետոյ բոլոր Հայաստանը ընկաւ Մակեդոնացւոց իշխանութեան ներքոյ.

Հայոց Հեթանոսական կրօնը: (*)

Արայի ժամանակները սկսում են հեթանոսական մտքերը Հայոց մէջը մտնել: Ինչպէս Պեղասգացւոց համար Դօդօնայ քաղաքը, նոյնպէս էլ Հայոց համար Արմաւիրը նաւիրական էր՝ Արմենակիցը տրնկուած սօսիներովը, որոնցով Հայկազանց ժամանակները համայութիւն էին անում: Հայոց ազգը խոկզբանէ մեծ կապակցութիւն ունէր Արեաց անուանեալ ազգաց հետ, ինչպէս ցոյց են տալի մեր գետերի շատերի անունները, մեր նախնեաց միաբանական գործ բռնելը նոցա հետ, աշխարհագրական դրութիւնը, որով Հայաստանի արևելեան մասերը հաւասար մակերևոյթով միանում է նոցա աշխարհների հետ, և մինչև անգամ մեր աշխարհի արևելեան մասերը լցուած էին Պարսիկներով և Պարաց ազգով: Այս պատճառաւ Հայոց հին հեթանոսական կրօնը մեծ մասով նման էր նրանց Զրադաշտական կրօնին: Բարձրագոյն էակին մենք Արամազդ էինք ասում, իսկ նրանք Աւրամաստա: Մեր կրօնովը, ինչպէս և

*) Հայոց հեթանոսական կրօնը կարելի է երեք չրջան բաժանել այն են, 1 ժամանակ բնութեան պաշտաման. 2 Զրադաշտականութիւն և 3 բազմաստուածութիւն, ըստ յունականին:

նոցա՝ հոգեղէն էութիւններն երկու էին՝ բարի և չար կամ հերշտակ և դև: Զրադաշտի ուսման համեմատ Հայերը մեհեաններ չունէին, որովհետև արգելուած էր աստուածութիւնը վակել մեհեանների մէջ. բայց յետոյ քիչ քիչ ուրիշ խառն պաշտամունքներ էլ մտան այդ առաջուայ պարզ վարդապետութեան մէջ: Առաջ Փոքր Ասիոյ կողմերից մեր մէջը մտաւ Անահիտ չաստուածուհու պաշտամունքը. որ այն տեղ վառաւոր պաշտամունքներ և հոյակապ մեհեաններ ունէր: Յետոյ Արշակունի Թագաւորների պաշտամունքները և ամենից վերջը Յունաց դիցաբանութիւնը բոլորովին խառնակեցին մեր նախնեաց պարզ կրօնը, երբ որ մեր Արշակունի Թագաւորները նրանց չաստուածների արձանները և քրմերը բերին Հայաստան: Ամենից առաջ Աշտիշատը, յետոյ Թիլը, Անի ամրոցը, Երիզը, Բագայաւիճը և Բագաւանն կամ Դիւցաւանը՝ նաւիրական տեղերն էին համարվում, ունէին վառաւոր մեհեաններ և քրմաց դասեր: Քրմապետութեան պատիւը՝ մինչև Տիգրան Բ-ի օրերը Վահագնի սերունդներն ունէին ժառանգութեամբ. բայց երբ նրանք զրկուեցան այդ պատիւը, ուրիշներն էին կատարում միևնոյն պաշտօնը և շատ անգամ Թագաւորների որդիք և Թոռներն էին առնում այդ պատիւը մեր Թագաւորներից: Շատ անգամ ուխտ էին գնում երևելի բագիններին և չաստուածներին, զոհ էին մատուցանում՝ ցուլ, նոխազ, ձի, ջորի, որոնք պէտք է լինէին սպիտակ և ոսկով և արծաթով զարդարած,

նուիրում էին նոյնպէս ոսկեայ պսակ, ականակապ անօթներ, և երբեմն ծաղկանց պսակներ կամ ծառերի ճիւղեր։

Հայոց գլխաւոր չաստուածները։

Չաստուածոց Հայրը Համարվում էր Արամազդը, որոյ հոյակապ պատկերը գտնվում էր Անի ամրոցումն, ուր որ նստում էին քրմապետներն և ուր թաղվում էին Արշակունի թագաւորները, իսկ քրմապետները թաղվում էին Բագաւանումը, Արամազդայ միւս պատկերը գտնվում էր Բագաւանումը, ուր թաղուած էր Տիգրան դ-ի եղբայր Մաժան քրմապետը։ Իր եղբօր մահից յետոյ Տիգրան դ. նորա գերեզմանի վերայ կանգնեցրեց Արամազդայ պատկերը, ուր հիւրերը նորա զոհերով և նուէրներով բաւականանում էին։ Այս պատճառաւ այդ պատկերը կոչվում էր Արամազդ Վանատրի։ Վաղարշ թագաւորը՝ նաւասարդ ամսեան մուտքերումը, որով մեր նոր տարին էր սկսվում, այդ տեղ հիմնեց ամանորարեր տօնը։ Երկրորդն էր Անահիտ չաստուածուհին, որ ծնունդ էր Արամազդայ, մայր ամենայն զգաստութեանց, փառք ազգին Հայոց, կեցուցիչ, շունչ և կենդանութիւն աշխարհին Հայոց։ Սորա պատկերը գտնվում էր Եկեղեաց Երիզ աւանումը և շատ ջերմեռանդութեամբ էին գնում ուխտ սորա բադինին։ Հայոց թագաւորների հիւանդութեան ժամանակ առողջութիւն էին խնդրում նրանից և շնորհակալութիւն էին մատուցանում յաղթութեանց

ժամանակը։ Սորա միւս պատկերը գտնվում էր Տարօն գաւառի Աշտիշատ գիւղումը։ Այս պատկերը ասվում էր ոսկեծին, ոսկիամայր դիք կամ ոսկիահատ, որովհետև ոսկեզօծ պղինձ էր։ Երրորդն էր Վահագն, որոյ պատկերը և մեհեանը գտնվում էր Աշտիշատումը, նորա պատկերն ասվում էր Վիշապաքաղն Վահագնի, իսկ մեհեանը Վահէվանեան, որ էլի ասվում էր Հաշտից տեղի։ Վահագն միևնոյն նշանակութիւնն ունէր Հայոց համար, ինչ որ Հերակլէսը Յունաց համար։ Բացի վերոյիշեալ գլխաւոր չաստուածներից՝ Հայերն էլի պաշտում էին Տիր անուամբ չաստուածուն, որ երազների մեկնողն էր, դպրութեանց և ուսմանց պաշտպան. սորա մեհեանը գտնվում էր Աշտիշատ քաղաքի մօտ, ճանապարհի վերայ, որոյ անունն էր Երազմոյն, որ էլի ասվում էր Դիվան գրչի Արամազդայ կամ ուսման հարստարութեան մեհեան։ Մհրեական դիք, որոյ առաջին կրակն անշէջ էին պահում. սորա մեհեանը գտնվում էր Բագաւանումը կամ Բագայտարճումը։ Նանէական դիք՝ որ միևնոյնն էր Հայոց համար, ինչ որ Յունաց համար Աթէնասը. սորա մեհեանը Թիլ աւանումն էր։ Աստղիկ՝ որ համեմատէ Յունաց Ափրոտիդէին. սորա մեհեանը Աշտիշատումն էր։ Բարշամեան դիք, որ էլի ասվում էր Սպիտակափառ դիք, որովհետև շինած էր փրղոակրից, բիւրեղից և արծաթից, և այս կուռքը Տիգրան բ. Հրամայեց Միջագետից Թորգան տանել։ Մեր Աբգար թագաւորը Փարաթա անուամբ մէկ չաստուած էր պաշտում։

Հայաստանը 330—150 Քրիստոսից առաջ։

Վահէի մահից յետոյ Հայաստանը ընկաւ Մակեդոնացւոց ձեռքի տակն և կառավարվում էր նրանցից ուղարկուած կուսակալներով։ Առաջին կուսակալն էր Միհրանը, բայց երբ որ Աղէքսանդր մեռաւ և նորա տեղը նորա Պերդիկկաս զօրավարը սկսեց կառավարել Մակեդոնացւոց ընդարձակ տէրութիւնը, այն ժամանակը Միհրանի տեղն եկաւ Նէոպտղոմէոս կուսակալն, որ Հայերին շատ էր նեղացնում։ Այս ժամանակներումը Կապադովկիոյ աշխարհը զրկուելով իրան թագաւորից, նորա որդի Արիէթէոսը իւր անձը մահից ազատելու համար փախաւ Հայաստան, ուր սիրով ընդունուեցաւ մերոնցից (Հայերից)։ Սա դրդեց Հայերին՝ ամբարտաւան Նէոպտղոմէոսի դէմ։ Այս ժամանակը Սիւնեաց Արտաւազդ Հայ նախարարը Հայոց զօրքին առաջնորդելով՝ ընկաւ Նէոպտղոմէոսի վերայ, նրան դուրս արաւ Հայաստանիցը 317 թուին և նշխահելով Մակեդոնացւոց տէրութիւնը, սկսեց ինքնագլուխ պայազատել Հայոց ազգը։ Պերդիկկասը լսելով այս բանս՝ հրամայեց Կապադովկիոյ կուսակալ Եումենէսին գինուս զօրութեամբ հաստատել դարձեալ Նէոպտղոմէոսին իւր նախկին տեղը, բայց նա տեսնելով Հայոց զօրութիւնը, քաջ Արտաւազդ պայազատին յորդորից բանը խաղաղութեամբ վերջացնել։ Այս պատճառաւ Նէոպտղոմէոսը կրկին անգամ եկաւ Հայաստան և համարվում էր երկրորդն Արտաւազդի։

Նէոպտղոմէոսը արդէն վաղուց ոխ ունէր Եումենէսի դէմ, Հայաստանի մէջ մտնելով այդ կերպ ցած պայմաններով՝ որ յառաջացած էր Եումենէսի անփութութիւնից կամ թուլութիւնից. ի հարկէ նորա համար մեծ ցաւ էր։ Մէկ քանի ժամանակից յետոյ դուրս գալով պատերազմաւ Եումենէսի դէմ Նէոպտղոմէոսը սպանվում է նրանից։ Այնուհետև Հայաստանը մնում է միայն Սիւնեաց իշխանի ձեռքին։ Սա Եումենէսի մահից յետոյ Արիէթէոս թագաւորին շատ զօրքով ուղարկում է Կապադովկիա։ Սա Հայոց զօրաց օգնութեամբը Հաստատելով իւր պապերի գահի վերայ՝ առատ պարգևներով և ընծաներով յետ է ուղարկում նոցա։

Արտաւազդ Հայկազն իշխանից յետոյ, Հայաստանի կառավարութիւնը 284 թուին տեսնում ենք Հրանտ կուսակալի ձեռքին, որ ուղարկուած էր Սելևկացւոց թագաւորից։ 239 թուին Հրանտ կուսակալի մահից յետոյ տեսնում ենք Արտաւազդ Հայկազն իշխանին որ պայազատում է մեր աշխարհը։ Սելևկացւոց թագաւոր Անտիոքոս մեծն 189 թուին կարգում է Հայաստանի կուսակալ երկու Հայկազն իշխանների—Արտաշասին՝ Վերին Հայաստանի վերայ, իսկ Զարեհին կամ Զարեհին՝ Հարաւային Հայաստանի։ Արտաշասը Արտաւազդ նահանգումն էր նստում, իսկ երկրորդը Տփխաց աշխարհումը։ Այս ժամանակներումը Կարքեդոնացւոց զօրավար Աննիբաղն եկաւ Հայաստան Արտաշասի մօտ, և սա նորա խորհրդովն Երասխ գետի վերայ շինեց Արտաշատ քաղաքը։ Արտաշասը և Զարեհը տեսնելով Սելևկացւոց նստաղելն

և Հռոմայեցւոց օրէց օր գօրանալը, յետ կանգնեցին նրանից և Հռոմայեցւոց հետ դաշն կապեցին: Այնուհետև մեր երկու կուսակալները սկսեցին լինքնագլուխ կատաւարել մեր աշխարհը: Սեվևկացւոց Անտիոքոս Եպիփան Թագաւորը լսելով Հայոց նահանջելն և առաւել Արտաշասի վերայ բարկանալով մեծ զօրութեամբ գնաց նորա վերայ: Բայց սա չկարողանալով նորա դէմը կենալ՝ հաշտութիւն խնդրեց և շատ դանձ ուղարկեց, խոստանալով նշանակեալ հարկն միշտ իւր ժամանակին Հատուցանել: Արտաշասը կարծելով թէ այս գրգռութեան պատճառը Զարեհն է եղել, կամենում էր նրանից վրէժխնդիր լինել: Սա իւր հաւատարմութիւնը և խոնարհութիւնը ցոյց տալու համար իւր Տորոն որդուն կամ Պարանին պատանդ է ուղարկում նորա մօտ: Զարեհի մահից յետոյ նորա տեղը յաջորդում է Մորփիւլիկէսն՝ որ նորա որդին էր: Արտաշասը կամենում է նրանից խլել Հարաւային կամ Փոքր Հայաստանը, այն ժամանակը նա ապստամբում է Կապադովկացւոց Արեթ Թագաւորի մօտ: Արտաշասը խորհուրդ է տալիս Կապադովկացւոց Թագաւորին՝ սպանել Զարեհի երկու որդւոցն, որոնք իրան մօտ էին գտնվում—Տորոնին և Մորփիւլիկէսին, և այնպէս նրանց երկիրներն իրանց մէջը բաժանել, բայց Արեթը չէ լսում նորա չար խորհուրդին, այլ ընդհակառակն ձեռնտու է լինում Մորփիւլիկէսին Թագաւորել իւր հայրական երկրի վերայ: Արտաշասը Թէպէտ կամենում էր Մորփիւլիկէսից խլել նորա երկիրները, բայց մահուան օրը

շուտով վրայ է հասնում և նորա տեղը՝ 159 Թուին Քրիստոսից առաջ՝ նստում է նորա որդի Արտաւազդը, որոյ օրերումը Պարթևացիք տիրում են Հայաստանին:

Մովսէս Խորենացին այս միջոցի համար, այսինքն Վահէի մահիցը մինչև Վաղարշակ Թագաւորը կամ 330—150 Թուին Քրիստոսից առաջ, այսպէս է պատմում Սահակ Բագրատունուն՝ «Յայսմ հետէ (յետ մահուանն Վահէի) մինչև ցԹագաւորութիւն Վաղարշակայ ի Հայս՝ ոչինչ ճշմարտագոյն ունիմ քեզ պատմել, քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այր գաղտմամբ ելանէին տիրել աշխարհիս և վասն այսորիկ դիւրամատ՝ի Հայս լեալ Արշակ մեծ Թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ՝ի վերայ աշխարհիս Հայոց:

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հ. ԴԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Արշակունեք Վաղարշակ 150 Թուականին Քրիստոսէ առաջ։

Հայկայ ցեղի թագաւորութեան անկմանէն յետոյ Հայաստանը ընկաւ անդադար խռովութեանց, թագաւորաց փոփոխմունքի, քաղաքական կառավարութեան այլայլութեանց, ներքին խառնակութեան և արտաքին պատերազմաց, շատ անգամ էլ բարբարոսաց փորձանքի, թագաւորական աթոռոյ յափրշտակութեան և շատ զանազան չարութեանց ներքոյ, որ գործել են այս աշխարհի հրամայողներն և բնակիչների մեծ մասն էլ եղել են արիւնարբու, չարութիւն սերմանողք, ապստամբք և աւելի պատրաստք խռովութեան, քանթէ հնազանդուելու իրանց օրինաւոր իշխանութեանը։

Չարութիւնը այն աստիճան հասաւ, որ չէր կարելի Հայաստանումը հնարք գտնել նրան ոչնչացնելու։ Ուստի փրկութեան դուռն բացուեց նորա համար այն ժամանակ, երբոր իշխանութեան սանձը տրուեցաւ Արշակունեաց երևելի հարստութեան ձեռքը։ Ամենայն թագաւորական հարստութեանց մէջ, որ արևելքում տիրում էին, երևելին Արշակունեացն էր, որ իրան բարձրանալու օրէն աւելի ցոյց տուեց՝ քաջութեան, արիութեան, քաղաքական առաքինութեան փորձեր, և այն հաղուագիւտ յատկութիւններն, որով պէտք է իրան առնէր երևելի տէր աշխարհի և բաղկացնէր թագաւորութեան երջանկութիւնը։ Այս տէրութեան բարերար ներդործութիւնը շատ ազդեցութիւն ունեցաւ Հայոց մտաց և բնաւորութեան վերայ։ Նորա սկզբնական ճաշմանէն յառաջ եկան շատ բարի յառաջադիմութիւնք։ Ինչ ժամանակ Արեձն Արշակ իւր եղբայր Վաղարշակի հետ մտաւ Հայաստան, այն ժամանակ ժողովուրդն անբաւական լինելով Արտաւազդի վատթար արարմունքից, շտապեց գնալ նոր թագաւորի առաջն և իրան համար վառք համարեց հրատարակել նրան փրկիչ Հայրենեաց, տալ նրան մեծ պատիւ և նրան հնազանդ մնալ։ Արտաւազդը իմանալով այս համբաւները և նախատեսնելով իւր ժնդակ վիճակը իւր աչքի առջև, թողեց իւր հարճերը, թողեց իւր առատակութիւնքն և դուրս գալով իւր պալատից, կամենում էր հրաման տալ, բայց նորա երևելն առաւել զրդռեց ժողովրդեան բարկութիւնը՝ որք Հայհոյում էին նրան։ Իւր նախարարները խորհուրդ տուին նրան յետ մտնել պալատն, իսկ զօրավարները իրանց կողմից՝ հաւատացնում էին թէ ամեն բանն

էլ կը շինուի առանց նրան և իրանց անձն վտանգութեան ներքոյ կը ձգեն նորա համար՝ և թէ նա յոյս կ՚ունենայ նրանց վերայ թագաւորութեան ազատութեան համար, և ճշմարիտ որ Արտաւազդը տալով գործոց կառավարութիւնը իւր սիրելեացն, ընկաւ իւր առաջին անառակութեանց մէջ, թմրած մնալով կարծեցեալ անելիկիւղութեան մէջ։ Այս ժամանակն Արշակի և Վաղարշակի զօրութիւնքը մեծանում էին մտնելով թագաւորութեան ներսը։ Այլ և այլ գաւառների գլխաւորները ստացան ծածուկ հրամաններ միանալ Պարթևաց զօրաց հետ և վերջապէս այն ամենայն զօրքը միացած եկան Արտաշատ մայրաքաղաքի պռնների մօտ՝ մտան քաղաքն առանց պատերազմի։ Արտաւազդը տեսնելով թէ ամենքն էլ թողին իրան, դղջացաւ իւր անցեալ գործքերի վերայ, բայց չգտաւ ուրիշ հնարք ազատվելու, բացի ինքն իրան սպանելուց, ուստի գնաց Երասխ գետի ափը, կոխեց սուրը սրտի մէջ և ընկաւ գետն։ Այսպէս վերջացաւ Արտաւազդի իշխանութիւնը։

Մեծն Արշակ իւր եղբօրը նստացրեց Հայոց գահի վերայ 152 թուականին Քրիստոսից առաջ։ (Պարթևները քաջալերուած տիրեցին՝ Պարսից, Հայոց, Հնդկաց և Մասքթաց թագաւորութիւններին. առաջին ձիւղն նոցա Պարթևական անուամբ Պարսից վերայ, երկրորդը Արշակունի՝ Հայոց վերայ, երրորդը Հնդկաստանի, և չորրորդը Մասքթաց)։

Վաղարշակ Հայաստանի իշխողն և Հայոց սիրտն՝ աշխատում էր ազդել իւր ժողովրդեան մէջ

աշխարհակալութեան ցանկութիւնն և պատերազմական հոգին։ Նա էր հեզ, մարդասէր, բանի վերահասու, և խօսում էր սիրով իւր հպատակների հետ առանց գանազանութեան։

Սա (Վաղարշակ) ժողովելով իւր թագաւորութեան երևելի անձանց և քաջ զօրավարներին, որք էին երևելի և հին ցեղերից, մանաւանդ նրանց՝ որք Հայկայ ցեղից էին, նամանաւանդ Կամսեանց, Գեղամեանց, Խոռխոռունեաց, Գուգարաց, Սիսակեանց, Ամբատեանց, Քանանիդեանց և ուրիշ իշխաններուն, հրամայեց որ ամեն մէկը իւր իշխանութեան մէջ զօրք ժողովէ. նոյնպէս ուղարկեց յատուկ զօրաւոր մարդիկ միևնոյն բանի՝ համար՝ Ատրպատական, Վրաստան և Հայոց Միջագետք։ Ժամանակ չանցած ժողովեցաւ Վաղարշակի մօտ մեծ զօրք։ Հաւատարմութիւնը, որ ունէին այս թագաւորի վերայ, անսահման էր և ուրախութիւնն ամեն տեղ, ինչպէս որ պատմիչներն գրում են՝ թէ քիչ մնաց որ Հայաստանի կէսը փառք համարէր զէնք բարձրացնելը և մտնելը այս քաջ երիտասարդի զօրաշակի ներքոյ։ Վաղարշակը ժողովեց այս բոլոր զօրքը դաշտ տեղ, Երասխի ափը, Արմաւիր քաղաքի մօտ, որ բլուր էր տակում, և շատ օր կենալով այնտեղ՝ աշխատում էր սովորցնել նրանց պատերազմական կարգը, որովհետև ոչինչ կարգ չգիտէին, բաժանելով նրանց մէկ քանի դաս, հնազանդացրեց պատերազմական ամառիկ կարգերին և տալով բոլոր զօրագլուխներին հարկաւոր հրամաններ պատերազմի մասին, ճանապարհ բռնաւ Փոքր Հա-

յաստանի կողմը: Մորփիւլիկէսը, որ այս կողմի թագաւորն էր, աշխատեց ձգել իւր կողմն՝ Փռիւգիոյ, Կապադովկիոյ, Պոնտոսի, Լազիստանի և մէկ քանի ուրիշ աշխարհների բնակչանցն, և ունեցաւ յաջողութիւն, քանզի կարճ ժամանակում ժողովեց մեծ զօրք և դիմեց Վաղարշակի վերայ և երկու թշնամիքը կանգնեցան միմեանց հանդէպ մէկ բլրի մօտ: Նախ Վաղարշակը յարձակեցաւ մեծ ուժգնութեամբ. Մորփիւլիկէսը մէկ քանի օր յաջողութեամբ ընդդիմանում էր այնպէս, որ իրան կողմից շատ քիչ մարդ կորցրեց, իսկ թշնամուն նեղացնում էր: Յետոյ Մորփիւլիկէսը գտնելով յաջող ժամանակ՝ յարձակեցաւ բոլոր զօրքով և ինքն իւր յատուկ գնդով խփեց թշնամու մէջ տեղը: Ամրացած սաղաւարտով ու երկաթի զրահով վազեց Վաղարշակի վերայ և վիրաւորելով շատ զինուորաց՝ որք խափան են լինում նորա ճանապարհին. գցեց թագաւորի վրայ նիզակն ինչպէս երեք թևանի նետ: Այս վայրկենում քաջ մարդիկ Հայկայ և Սենեքերիմայ ազգից, որ Վաղարշակայ չորս կողմը պատած էին, յարձակեցան Մորփիւլիկէսի վերայ, ձիուց վայր ձգեցին և սպանեցին, նորա զօրաց հետ նմանապէս վարուեցան շատ անողորմ, նրանց մեծ մասը ջարդուեցան, ոմանք փախան, իսկ մնացածները գերի ընկան: Սրանից յետոյ Վաղարշակը տիրելով բոլոր ազգաց, որք բնակվում էին Կապադովկիոյ, Պոնտոսի, Լազիստանի, Խազտեաց և Եգերացւոց սահմաններումը, նրանց վերայ իշխաններ դրաւ և տուեց ժամանակաւոր օրէնքներ՝

քաղաքական և զինուորական: Վաղարշակը յետ գտնալիս առժամանակ մնաց Տայոց նահանգումը, վանդները վերջացնելու համար, որ քաշել էր այս երկիրը, և հաստատելու նորա մէջ առաւելութիւն և երջանկութիւն: Այս կողմի բնակիչներն, ևս առաւել Պարխարայ լերան շրջակայ տեղերումն և երկու եղերքին Փաղայ դետի՝ դարձել էին յափշտակողներ, մարդասպաններ և աւազակներ՝ նման իրանց դրացիներին, Խազդեաց և Լազաց: Նրանք հոգ չունէին ոչ վարուցանի մշակութեան, ոչ բարձր հողերը հաւասարելու, ոչ ափները պահելու, այնպէս որ ջրերի անդադար հեղեղներն դաշտերի վերայ բարձրացել և յայնատարած տեղերը ճահճուտ դարձրել էին: Վաղարշակն իմանալով իւր նախարարներից այս բոլոր անկարգութիւնները, միտ դրաւ շուտով ուղղելու այս ամենը: Նա հրամայեց ուղարկել այնտեղ 30 հազարից աւելի մշակ, ճանապարհներն և հողաբլուրներն ուղղելու. ճահճոտ տեղերը ցամաքացնելու և սկսելու վարուցանք: Նա (Վաղարշակ) հրամայեց ջրանցքներ փորել՝ ջրի հեշտ գնալու համար փաղ գետը: Կտրել տուաւ թանձր անտառներն, որոնք աւազակաց ոջիլներ էին, նրանց մէջ բացուեցան մեծ ճանապարհներ, բարձր տեղերից հողը վայր էր առած և ցածր տեղերը հողով բարձրացած՝ հեղեղներն արգելելու համար. և վերջապէս Վաղարշակն այնքան աշխատեց այն երկիրը լաւացնելու համար, որ կարճ ժամանակում դարձաւ զուարճալի երկիր: Այս թագաւորն այնտեղ շինեց զուարճալի ամարանոց, սահ-

մանեց տեղեր գաղաններէն՝ որոյ համար, երկու տեղ էլ առանձին՝ ձիաներէն բազմացնելու համար շինեց պալըքէզներ ու այդիք Կոզ քաղաքի մօտ, որ Հայաստանի քաղաքներից մինն էր, բայց մէկ քանի ժամանակ առաջ կորցրել էր իւր բնակիչներին: Վաղարշակը բնակեցրուց այս նահանգումը բոլոր գերիներին և օտարներին՝ բերած Կովկաս լեառների կողմից: Նա հարկադրեց նորա բնակիչներին թողուլ աւազակութիւնն և մարդասպանութիւնը, կենալ ինչպէս կարգն է լուսաւորեալ ազգի, աշխատել և պարապել օգտակար արհեստներով, տէրութեանը տալ հարկ, շուտ շուտ առելով նրանց՝ թէ իրան շատ հաճոյ կը լինի, երբ որ միւս անգամ յետ կը դառնայ դէպի այն կողմը և կը գտնէ նրանց հեզ, մարդասէր և ընդունակ ճառայութեան և երևելի պաշտօններ ստանալու: Վաղարշակը կարգաւորելով այս երկրի գործերը՝ մօտեցաւ Արտաշատին և իւր զօրքերը կարգաւորեց բանակով այս քաղաքի շրջապատը, Մեծամօր (Զանգի) գետի ափերումն: Այս թագաւորը ծնել էր աւելի մեզմ կլիմայում քան ինչպիսի էր Արտաշատինը: Մծբին քաղաքն իւր օդի բարեխառնութեամբը նրան աւելի հաճոյ գտնուեցաւ:

Վաղարշակայ օրէնքները և կարգադրութիւնքը:

Հայոց ազգը մեծ խոհեմութեամբ ընտրեց Վաղարշակին, որ էր լի մարդավարութեամբ, պատուով և

թագաւորական վարքով, օրինակ թագաւորաց և զարդ. և իրրև օրէնսդիր արժանաւորութիւն է ցոյց տալի այն բարբարոս ժամանակներն: Մծբին քաղաքումն մեծ ժողովք արեց մեծամեծներից և ամեն հասարակութիւնից, խելօք մարդկանցից, քննեց Հայոց աշխարհի սովորութիւնները, կամեցաւ իմանալ ազգերն և տներն, որոնք պատուելի էին ամեն գաւառներում, առաւել և տներին, որոնք ընդունակ էին կառավարելու հասարակութեան գործերն, կամեցաւ իմանալ անցեալ կեանքի պատմութիւնն և նորա վերայ հիմնել թագաւորական տան, ազնուականաց, հասարակ քաղաքացեաց, արհեստաւորաց, գիւղականաց գաւառների կառավարութիւնը՝ զինուրական կրթութեան, դատաստանի և ուրիշ բաների մասին օրէնքներ դրեց և կարգադրութիւններ:

Կարգադրութիւններ.

Հայաստան աշխարհը բաժանվում էր մէկ քանի հարիւր նախարարութիւններ, իւրաքանչիւր նախարարութիւնը պէտք է ունեցել էր մէկ տանուտէր կամ նահապետ, որոյ ձեռքի տակը պէտք է գրտնուել էին նախարարութեան ժողովուրդները, և պէտք է որ նշանակեալ թուով զօրք պահէր և միշտ պատրաստ լինէր իւր գնդով՝ թագաւորի կոչելու ժամանակ: Այս նախարարութիւններից մէկ քանիսներին, որոնք իրան ծառայութիւն էին արել, աւե-

լի արժանաւորութիւն տուաւ. Ա. Բագրատունեաց նախարարութեանը տուաւ իրաւունք Արշակունի թագաւորաց թագ դնելոյ, նոցա նահապետն իրաւունք ունէր երեք տակէն վարսակալ դնել: Բագրատ իշխանը՝ որ սերել էր Հրէից Զամբաթիցն, առաջինն էր որ Վաղարշակայ օրերումն այսպիսի պատիւ ստացաւ. Բ. Գնթունեաց նախարարութեանն, որ սերել էր Քանանիտաց Հրէիցը, տուաւ իշխանութիւն թագաւորին հանդերձ զգեցուցանելոյ. Գ. Թիկնապահներն ընտրվում էին Խոռխոռունեաց նախարարութիւնից, որոնք սերել էին Հայկայ Խոռորդուց. սոցա նախարարութեան նահապետը Վաղարշակայ օրերումը Պալխաղն էր. այս պատճառաւ Թիկնապահութեան պատիւը մեզ մօտ ասվում էր և մալխազութիւն. Դ. Արքունական որսերի վերայ կարգուած էր Վարաժնունեաց նախարարութիւնը: Վաղարշակայ օրերումը դրանց առաջին նահապետն էր Դատը. Ե. Սպասաւորութեան և զահաւորութեան պատիւը տուաւ Աբեղեանց նահապետ՝ Աբեղ իշխանին: Գաբեղին կարգեց արքունի ապարանների վերայ, որ Գաբեղեանց նահապետն էր. Գնունեաց Գին իշխանը տակառապետ էր, իսկ Սպանդունիքն՝ որ սերել էին Վահագնից, ըստ իւրեանց ցանկութեան, ընկալան քրմապետութեան պատիւը և պաշտօնը. Ջ. Թագաւորների երկրորդը ընտրվում էր Ամժահակայ սերունդներից, որոնց անունն էր Պուրացան տէր:

Ջինաւորութեան մէջն էլ փոփոխութիւններ և

բարելաւութիւններ էր տեսնվում: Թագաւորի թիկնապահները բաժանվում էին չորս գունդ. իսկ միւսները միմեանցից որոշվում էին՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն աստիճաններով: Հայաստանի բազմաթիւ նախարարութիւններից՝ որոնք արդէն յայտնի էին իրանց քաջութեամբ և մտերմութեամբ, վեց կամ եօթը կարգուած էին մեր աշխարհի սահմանների վերայ և նոցա տանուտէրներն ասվում էին կուսակալք կամ սահմանակալք: Սրանցից չորսն ասվում էին Բդեշխ և իւրաքանչիւրն ունէր իրան ձեռքին տասն հազար զինուոր: Ա. Գաւգարայ բդեշխութիւնը Հիւսիսային կողմն էր. Բ. Աիւնեաց բդեշխութիւնը՝ յարևելս Հիւսիսոյ, այստեղ առաջին բդեշխն էր Առանը. Գ. յարևմուտս Հարաւոյ գտնվում էր Աղձնեաց բդեշխութիւնը, որոց նահապետն էր Զարաշանը. Դ. Հարաւումն էր Աղձնեաց աշխարհի նոր Զիրական գաւառումը: Միւս կուսակալներն էին Կադմեանք յարևելս Հարաւոյ, իսկ արևմուտքումն Անգեղտան նախարարութիւնը, որ սերվում էր Անգեղ – Տորքից, որին Վաղարշակը կարգեց նահապետ այս նախարարութեան: Արաւ և ուրիշ բարոյական կարդադրութիւններ. նշանակեց երկու մարդ, որոնցից մէկն իրան միտքն բերէր բարերարութիւնը անիրաւ հրամանի ժամանակ. իսկ միւսը պատուհասն, եթէ անփոյթ լինի չարագործներին պատժելու: Սահմանեց որ թագաւորի անդրանիկ որդին Արծրին մնայ, իսկ միւսները գնան հաշտենից գաւառը:

Արշակ առաջին 124 Թուականեն։

Վաղարշակայ հետքովն դնում է նորա որդի Արշակը։ Սա՝ մեր աշխարհքը զարդարում է գանազան կարգադրութիւններով։ Սորա ժամանակը Պոնտացիք նահանջում են, բայց սա շուտով հնազանդեցնում է նրանց և Սև ծովի մօտ կանգնեցնում է մէկ արձան, որին երկար ժամանակ Պոնտացիք պաշտօն էին մատուցանում։ Առհասարակ մեր առաջին երկու մեծամեծ Արշակունի Թագաւորները հետու էին աշխարհակալութեան հոգուց, իրանց նպատակն այն է լինում, որ աշխարհաօգուտ կարգադրութիւններով Հայաստան աշխարհը զարդարեն։ Բայց դրանց յաջորդները իրանց քաղաքական հայեցողութիւնը փոխում են և չեն թողնում կամ ժամանակ չեն տալիս, որ այդ կարգերը մեր ազգի կեանց և վարուց մէջ արմատանան և հաստատուին։

Արտաշէս առաջին 111—86 Թուականը Ն. Ք.

Սա դեռ իւր մանկութեան ժամանակը դրանուելով Փոքրին քաղաքումը սկսել էր Վաղարշակին իւր կայտառութեան և քաջութեան պատճառաւ Հայոց մեծամեծները գուշակում էին նորա ապագայ քաջութեանց մասին։ Եւ իրաւի իւր Հայր Արշակի տեղը նստելով՝ իւր մեծագործութեամբը և վստահ աշխարհակալութեամբը գերազանցում է իւր նախորդներից։ Հայոց Արշակունի Թագաւորներն, որ մինչև

այն ժամանակն երկրորդ էին համարվում Պարթեւաց, այնուհետև առաջինն են, և պարթևաց Արշակաւան կամ Արշակը յօժար կամօք տալիս է նահապահութիւնը մեր Արտաշէսին։ Մինչև այդ ժամանակները Պարթևաց Թագաւորներն էին դրամ կտրում, այնուհետև Արտաշէսն է առնում այդ իրաւունքն՝ իւր անունը և պատկերը փորագրել տալով նորս վերայ։ Հայաստանի արևելքն իւր ձեռքի տակը հնազանդացնելուց յետոյ, միանում է Պոնտացւոց Միհրդատ Եւպատոր Թագաւորի հետ, որին տալիս է իւր Արտաշատ աղջիկը Կնութիւն։

Հայաստանի արևելեան և հիւսիսային ազգաց զօրութիւնները Հայոց զօրութիւնների հետ միացնելով՝ Պոնտացւոց Թագաւորի հետ մտնում է Փոքր Ասիա (այժմ Անատօլիա) և այնտեղի փոքր տէրութիւններն իւր ձեռքի տակն է առնում։ Յունաստանը այդ ժամանակները Հռովմայեցւոց հասարակապետութեան նահանգն էր։ Մեր Արտաշէսը և Պոնտացի Միհրդատը Փոքր Ասիան նուաճելուց յետոյ, Արշիպելագոսը նաւատորմիղներով լցնում են, նուաճում են Թրակիան և հեշտութեամբ մտնում են Ելլադա կամ միջին Յունաստան 88 Թուականին։ Հռովմայեցիք դաշնակցաց անուանեալ կուսներն էին վերջացնում և զբաղուած էին Մարիոսի և Սուղղայի հետ Սիպղոսի կուիւներովը։ Նոքա լսելով Յունաստանի նուաճիլը՝ Հայոց և Պոնտացւոց զօրութիւնից, Սուղղային իրանց լեգէոններովն նրանց դէմ են ուղարկում։ Մեր դաշնակից զօրու-

Թիւննեըն արդէն ամրացել էին Աթէնքում, բայց պաշարուելով Սիղղայից՝ սկսան թողուլ քաղաքը, որովհետև սովը նեղում էր նրանց: Սրանից յետոյ մեր դաշնակից զօրքը և Հռոմայեցիք Քաղքիս և Որքոմէն քաղաքաց մօտ պատերազմելով, Հայերը և Պոնտացիք ստիպուեցան թողուլ Յունաստանը և գալ Փոքր Ասիա: Այս նահանջելու ժամանակը Հայոց զօրաց մէջ շփոթութիւն ընկնելով, Արտաշէսը սպանուում է նրանցից և Մհերդատը ստիպվում է 86 Թուականին Սուղղայի հետ խաղաղութեան դաշն կապել, յետ տալով Փոքր Ասիոյ բոլոր նուաճած երկիրները: Արտաշէսը նախ քան իւր մահը Փոքր Ասիայից և Յունաստանից մեծ աւարներ ուղարկեց Հայաստան: Երևելի էին Աթենասայ, Հերակլէսի կամ Հերքիւլէսի, Ապողոնի, Հելիեստոսի, Փիոսի կամ Եուպիտերի, Արտեմիդայ, Ափրոդիտեայ արձաններն իրանց քրմերովը:

Տիգրան երկրորդ 86—36 Թուականը Քրիստոսից առաջ:

Սա մանկութեան ժամանակը տուած էր Վարժաժնունեաց Վարաժ իշխանին, որ նրան վարժում էր զինուորական արհեստի մէջ և Արտաշէսի արշաւանքներից առաջ կարգուած էր Հայոց Թագաւոր: Արտաշէսի մահից յետոյ տիրապետն զօրքը գալով Հայաստան՝ Փոքր Ասիայից ստպատակութիւններ ուղեցին անել Հայոց երկրումը, կարծելով թէ Հայերն անգլուխ են մնացած: Մեր Տիգրանը՝

որ իւր խոհեմութեամբ և քաղաքականութեամբ մեծ էր իւր հօրից, դուրս է գնում նրանց առաջը, ջնջում է նրանց և Փոքր Հայաստանը իւր իրաւասութեան տակն է առնում: Այնուհետև սկսում է Հայաստանը կարգադրել: Յունաց քրմերի կամեցողութեամբը Պիտի բագինը կանգնեցնում է Անի ամրոցումը կամ Կամախքումն, Աթենասայ բագինը՝ Թիլ աւանումն, Արտեմիսինը՝ Երիզայումը, Հելիեստոսինը՝ Բագայարիճումն, Ափրոդիտէինը՝ որ մենք Աստղիկ ենք ասում, և Հերակլէսինը Թողում է Տարոնի Աշտիշատ գիւղումը: Վահագնի քրմերը կարծելով թէ Հերակլի արձանը իրանց նախնի Վահագնինն է, ինքնագլուխ առանց Թագաւորի հրամանի, տարել էին իրանց սեփհական Տարօն կամ Մարդաղի գաւառները: Տիգրանը այս բանիս վերայ բարկանալով զրկում է նրանց քրմապետութեան իշխանութիւնից: Ինչպէս վերոյիշեալ, նմանապէս և Հայաստանի այլ և այլ քաղաքներումը, Տիգրանը հրամայում է վտառաւոր մեհեաններ շինել և բագիններ կանգնել: Նախապարութիւններին հրաման է դուրս գալիս Թագաւորից, զոհ և երկրպագութիւն մատուցանել, այս կերպով Բագրատունեաց նախարարութիւնը մեծ վտանգի մէջ է ընկնում, որովհետև Վաղարշակը Բագրատ իշխանին ստիպեց Թողուլ իւր Հայրենական կրօնը, բայց տեսնելով որ Հաստատ է մնում իւր Հաւատին, Թողեց նրան իւր կամքին: Արշակայ օրերում Բագրատունեաց ցեղից երկուսը նահատակեցան իրանց Հաւատի համար և միւսները խօսք

տուին շաբաթ օրը որս և պատերազմ դնալ և երեխայոց անթվատ թողուլ: Իսկ Հիմայ Տիգրանը ստիպում է նրանց թողուլ բոլորովին լրանց հաւատը: Ասուր իշխանի լեզուն կտրեց, որ չար էր խօսում կուռց վերայ. միւս Բագրատունիքը տեսնելով այս սպառնալիքները՝ սկսան խոզի միս և զոհերից ուտել, միայն պաշտօն չէին մատուցանում կուռց: Որովհետև կիսով չափ թողին նրանք (Բագրատունիք) իրանց հայրենի կրօնը, ուստի Տիգրանն էլ խլեց նրանցից զօրավարութեան իշխանութիւնը, միայն թագադրութեան արտօնութիւնը նրանց թողնելով:

Արշամայ ժամանակները, ինչպէս երևում է, Բագրատունիքը բոլորովին հեթանոս են դառնում, և այս բանից բաւականին ապացոյց կարող է լինել՝ Ենանոսի կամ Անանիայի վերայ եղած անցքը: Որովհետև սա իրան հայրենակից Հրէից Հիւրկանոս քահանայապետին, որին գերել էր Տիգրանը, ծաճուկ փախցնում է Հրէաստան, Արշամ թագաւորն իմանալով այս բանս բոլորովին աչքից ձգում է: Այն ժամանակը Ղևթունեաց Զօրայ նահապետը յայտնում է թագաւորին՝ թէ Ենանոսը կամենում է ապըստամբել, թագաւոր Արշամը հրամայում է Ենանոսին կամ թողուլ բոլորովին հրէութիւնը կամ թէ ոչ իւր տունը կջնջի բոլորովին: Զատ տանջանքներից և իւր որդուց մահից յետոյ Հրէան իւր ընտանեօք ընդունում է հեթանոսութիւն:

Տիգրանայ օրերումը Սեւկացոց տանը մեծ

ազմուկներ և երկպառակութիւններ էին լինում թագաժառանգութեան մասին: Ասորոց ազգը, երկար մտածելոյ յետոյ, լաւ համարեց Հայոց իրաւասութեան տակը մտնել: Տիգրանին հրաւիրում են, և սա մտնելով նրանց աշխարհը՝ հալածում է ամբարիշտ թագաւորներուն, ինչպէս էին Անտիոքոս Պիոսը և նորա եղբայր Փիլիպպոսը. խաղաղացնում է նրանց բոլոր աշխարհը և 85 թուականին Քրիստոսից առաջ Սեւկացոց թագաւորաց թագն իւր գլխին է դնում: Սակ քանի ժամանակից յետոյ, այն է 79 թուականին, Անտիոքոս Պիոսի կին Սեղինէն կամ Կղէոպատրէն գնալով Փիւնիկէ, ուրքի է կանգնեցնում Փիւնիկեցոց և նրանց Հարևան ազգացն՝ ընդդէմ Հայոց: Տիգրանը շուտով վրայ է հասնում, պաշարում է Պտղոմայիս քաղաքը, ուր էր նրանց գլխաւոր զօրութիւնը. յաղթում է նրանց, Սեղինէին սպանում է և բոլոր երկիրները մինչև Պաղեստինէ Հայոց ձեռքն են անցնում: Հրէայք լսելով Հայոց քաջութիւններն, իրանց Աղէքսանդրայ թագուհու խօսքովը, Տիգրանայ առաջ դեսպաններ են ուղարկում մեծ ընծաներով, և խնդրում են նրանից պաշտպան և հովանաւոր լինել իրանց աշխարհին:

Մեհրդատայ երկրորդ պատերազմը Հայոց օգնութեամբ:

Այն ժամանակներն, երբոր Տիգրանը վերադառնալով Ասորոց երկրից՝ իւր ուշքն գարձրել էր

Վայկուն աւազակի ասպատակութեան վերայ. Միհրդատը, որ սիրելիմ թշնամի էր Հռովմայեցւոց, կամենում էր եղբորդ անգամ պատերազմել նրանց հետ: Սուրբալի դաշինն յետոյ, որ եղաւ 86 թուականին, Միհրդատն աշխատում էր իւր ծովային և ցամաքային զօրութիւնները շատացնել: Միևնոյն ժամանակը Բոսփոր աշխարհն իւր ձեռքն է առնում և Կողքիսացւոց վերայ թագաւորացնում է իւր որդուն: 75 թուականին Բրիտոսից առաջ մխանում է Հռովմայեցի Սերտորիոսի հետ, որ գտնվում էր Սպանիայումն և անգադար պատերազմում էր իւր հայրենակիցների հետ, և ընկնում է Բիւթանացւոց Նիկոմիդես թագաւորի աշխարհի վերայ, որ իւր մահից առաջ կտակաւ թողել էր Հռովմայեցւոց Հասարակապետութեանը: Իսկ Տիգրանը նորա խորհուրդովը մտնում է Կապադովկիա և այնտեղից 30,000 հոգի գերի է բերում Տիգրանակերտ: Այս ժամանակներումը Պրոպոնտիս և Բիւթանիա աշխարհները յանձնած էին Կոտտա զօրավարին, իսկ Ասիա անուամբ նահանգը, Կիլիկիան և Կապադովկիան՝ Ղուկուղղոսին: Միհրդատը մեր Բասենեան գնդովն ընկնում է Քաղկեդոն քաղաքի վերայ և նրանց օգնականութեամբը Հռովմայեցւոց ջարդում է՝ թէ ծովի և թէ ցամաքի վերայ, ուր նրանց կողմից սպանվում են 18,000 հոգի և առլվում են 60 նաւեր: Սրանից յետոյ Պոնտացւոց թագաւորը պաշարում է Կիւզիկոն քաղաքը: Ղուկուղղոսը լսելով Քաղկեդոնի կոտորածը և Կիւզիկոնի պաշարումը, շուտով վրայ է հասնում և Գրանիկ գետի մօտ ջարդում է Միհրդատի ցամաքային զօրքն, այն ինչ նաւատորմիղներն ոչնչանում են Հռովմայեցւոց զօրքից՝ Հելլեսպոնտոսումը և Լեմնոս ու Տենեդոս կղզիների մօտ: Այնուհետև Միհրդատը լաւ համարեց մնացած նաւերով և զօրքերովը վերադառնալ Պոնտոս: Ղուկուղղոսն էլ Բիւթանիան և Պափղագոնիան նուաճելուց յետոյ մտաւ Պոնտացւոց աշխարհը: Այս տեղ Պոնտացիք մեկ քանի յաջող պատերազմներից յետոյ Ամիսոս քաղաքի մօտ բոլորովին ջարդուեցան և Միհրդատն այն ժամանակը Հռովմայեցւոց ազատվելու համար՝ փախաւ Հայաստաղղոսը պատգամաւոր ուղարկեց Տիգրան՝ Միհրդատին իրան ձեռքը տալու, բայց նա նորա խօսքին չը լսեց, ընդհակառակը Պոնտացւոց թագաւորին բաւականին զօրք տուաւ և ուղարկեց Պոնտոս: Ղուկուղղոսն այն ժամանակն անցաւ Եփրատ գետն և պաշարեց Տիգրանակերտ քաղաքը: Այն միջոցին Տիգրանը գտնվում էր Վերին Հայաստանումը և լսելով իւր աթոռանիստ քաղաքի պաշարուիլը մեծ զօրքով օգնութիւն եկաւ, բայց երբ տեսաւ Հռովմայեցւոց սակաւութիւնը, անհոգ մնաց, մինչև որ խորամանկ Ղուկուղղոսը յանկարծ նորա վերայ յարձակուելով փախստական արաւ և Տիգրանակերտ քաղաքի յոյն բնակիչների մատնութեամբը՝ քաղաքը հեշտութեամբ առաւ և միջի դանձերը կողոպտեց: Սրանից յետոյ Հռովմայեցւոց գօրութիւնը սկսում է տկարանալ, որովհետև Միհր-

դատը Հայոց ղօրքովը կրկին անգամ առնում է Պոնտացւոց աշխարհը, այն ինչ Տիգրանը նոր ղօրութեամբ Էմէկուղղոսին հալածում է Հայաստանից: Հռովմայեցիք լսելով Հայոց և Պոնտացւոց կրկին ղօրանալը, Ղուկուղղոսի տեղը նշանակում են Պոմպէոս ղօրավարին: Սա նոր ղօրութեամբ մտնում է Փոքր Հայաստան և 67 թուականին Երկրորդ Հայքումն, Եփրատ գետի մօտ, հանդիպելով Միհրդատին՝ յաղթում է նրան: Այնուհետև Միհրդատը գնում է Բոսփոր (Ղրիմ): Այս տեղ Միհրդատ[illegible] ազդիցը բազմաթիւ ղօրք է ժողո
է Եւքսինեան Պոնտոսի Հիւսիսա
Պանոնիայովը մտնել Իտալիա, ի
այլոց յորդորում է ապստամբուել Հռովմ
Զօրքը չէ լսում իւր տիրոջը և Հայրազատ
Փառնակէս, կաշառուած լինելով Հռովմայեցիներից
վեր է կենում իւր Հօր դէմ, և Միհրդատ[illegible]
լով իւր որդւոյ ապստամբութիւնը՝ անճա[illegible]
քըն իրան ապանում է 64 թուականին: Իսկ Պոմպէոսը Տիգրանայ ապստամբեալ որդի Տիրանիցն առաջնորդուելով մտնում է Հայաստան, Տիգրանն էլ անճարացած հաշտութիւն է խօսում Պոմպէոսի հետ, տալով նրան շատ քանքար արծաթով և հրաժարուելով այն աշխարհներից, որոնք Հայաստանիցը դուրս էին: Այսու ամենայնիւ Տիգրանը սպասում էր ժամանակի, որ իրանից խլած երկիրները ձեռք ձգի: Գաբիանոս ղօրավարից յետոյ Հռովմայեցւոց արևելեան նահանգների վերայ կարգվում է

ընչաքաղց և անափառ Կրասոսը: Սա արդէն Հռովմում մտքումը դրել էր, որ Հայոց և Պարթեւաց թագաւորութիւնները նուաճէ: Երուսաղէմայ տաճարի դանձերը չափշտակելուց յետոյ, անց է կենում Եփրատ գետը 40,000 զինուորներով: Այն ժամանակը Հայոց և Պարթեւաց թագաւորների զօրքերը Սուրէն զօրավարի առաջնորդութեամբ, որ Պարթեւաց առաջին թագաւորն էր, չարդում են նախ և առաջ Կրասոսի որդուն, որ յաղթուելուց ինքն իրան սպանում է, և յետոյ խառանի մօտերքում Կրասոսին, որ և ընկնում է պատերազմի դաշտումն իւր զինուորաց հետ: Այսպիսի կոտորած Հռովմայեցիք շատ քիչ էին տեսել և նոցա արծուէնշան զրօշակները գերի են ընկնում Պարթեւաց ձեռքն, որ միայն 30 տարուց յետոյ Օգոստոս կայսեր ժամանակներն են յետ դարձնում: Տիգրանի գանձատները կրկին անգամ լցուեցան այդ աւարներից, որ ըստ մեծի մասին Երուսաղէմայ տաճարի և ուրիշ մեհեանների հարստութիւններն էին:

Միջագէտի յաղթութիւնից յետոյ երկու դաշնակից թագաւորներն առանձին զօրք են տալիս Ոշտունեաց Բարզափրան նահապետին և Պարթեւաց արքայորդի Բակուրին, որ կրկին անգամ ձեռք բերեն Ասորոց և Փիւնիկեցւոց աշխարհներն: Արդէն Կրասոսից յետոյ Ասորոց վերայ գտնվում էր նորա տեղակալ Կասիոս զօրավարը: Մեր դաշնակից զօրքերը 40 թուականին Բարզափրանի և Բակուրի առաջնորդութեամբը հալածում են Հռովմայեցւոց, և տի-

ըում են մինչև Պաղեստինացւոց աշխարհին: Այս ժամանակներումը Պակաբայեցի Հիւրկանոս և Անտիգոնոս եղբարքը վիճում էին քահանայապետութեան և թագաւորութեան համար: Անտիգոնոսը Բարզափրանին արծաթով իւր կողմն գրաւեց, և սա Հայոց զօրավար Ինել Ինուհուց ձեռամբը Հիւրկանոսին կանչելով Պտղոմայիս՝ մատնեց իւր եղբօր ձեռքը: Հերովդէսն՝ որ Հիւրկանոսի տեղը մնացած էր Երուսաղէմում, հալածվում է Հայոց զօրքից և Անտիգոնոսը թագաւորում է Երուսաղէմացւոց վերայ: Այնուհետև Հայոց զօրքը մեծ ասարնելով և Հրէից գերիներով՝ որոց մէջին երևելի էր Հիւրկանոս քահանայապետը՝ յետ են դառնում Հայաստան, Ասորոց և Փիւնիկեցւոց աշխարհներն յանձնելով Բակուրին: Տիգրանը, որ շունչ և հոգի էր այսքան քաջութիւններին, մեռնում է 36 թուականին:

Արտաւազդ 36—33 թուականը Քրիստոսից առաջ:

Տիգրանայ տեղը նստում է նորա որդի Արտաւազդը, որին արդէն թագաւոր էր դրել իւր Հայրը վերին Հայաստանի վերայ. Հռովմայեցւոց արևելեան նահանգներն այս ժամանակները տուած էին Անտոնինոսին: Սա լսելով Տիգրանայ մահը, յանդուգն յարձակմամբ Ասորոց երկիրը նուաճելուց յետոյ մըտնում է Հայոց աշխարհը, կամենալով Կրասոսի մահուան վրէժը Պարթևներից և Հայերից առնել: Արտաւազդը, որին մեր պատմաբանները վատ որա-

սէր են ասում, իսկ օտարները՝ ուսումնասէր և շատ գրքերի հեղինակ, հաշտութիւն է խօսում Հռովմայեցւոց հետ, խոստանալով նրանց օգնական լինել ընդդէմ Պարթևաց, բայց ծածուկ Արշակ կամ Փըրաատ թագաւորի կողմն լինելով: Հռովմայեցիք խարդախ ճանապարհ ցոյց տուողներից մոլորուելով Պարսից աշխարհումն և միանգամայն յոյս չունենալով յաղթութեան վերայ՝ դեսպան են ուղարկում Փրաատի մօտ և պահանջում են Հռովմայեցւոց գերեալներն և արծուէնշան դրօշակն: Այս ժամանակները Պարթևացիք սկսում են զանազան կողմերից յարձակուել Հռովմայեցւոց վերայ և նրանց շատ տեղ ջարդել, այնպէս որ Անտոնինոսը հազիւ ազատվում է նրանց ձեռքից և Երասխ գետը անցկենալով մտնում է Հայաստան և Միջագետն իրան ձեռքը ձգելով դնում է Եգիպտոս, բայց կարճ ժամանակից յետոյ կրկին անգամ Անտոնինոսը մտնում է Հայաստան: Հայերը չէին կամենում Միջագետը նրանց ձեռքը տալ, ուստի ոտքի էին կանգնել նրանց դէմ Արտաւազդայ առաջնորդութեամբ, իսկ Հռովմայեցւոց զօրավարը գրգռուած լինելով Կղէոպատրայիցը, կամենում է Անտիքոս Պիոսի կին Կղէոպատրի կամ Սելինէի վրէժը Արտաւազդիցը հանել. Հայերը յաղթվում են, և Արտաւազդը շղթայակապ տանվում է Եգիպտոս 33 թուականին, որ տեղ էլ գլխատվում է:

Արտաւազդից յետոյ, Հայոց թագաւորների գահի վերայ Արշամին ենք տեսնում, որ Տիգրանայ եղբօր Արտաշէսի որդին էր: Սա թէպէտ կամենում

է Միջագետը բոլորովին ազատել Հռովմայեցւոց ձեռքից, բայց միջոց չէ ունենում և Պարթևացիք էլ չեն օգնում, ուստի լաւ է համարում Միջագետի համար առաջին անգամ հարկ տալ Հռովմայեցւոց:

Սորա տեղը նստում է իւր որդի Արգարը, որ Հայոց բոլոր աշխարհի համար հարկ է տալի Հռովմայեցւոց և սրանց գործակալները տիեզերական աշխարհագրի ժամանակ Օգոստոս կայսեր պատկերը բերում են, որ Հայոց մեհեաններումը կանգնացնեն:

34 *Թուականեցը Քրիստոսից առաջ մինչև* 80
Թուականը Քրիստոսից յետոյ, քան ազգային
մատենագրաց:

Արտաւազդայ և նորա որդւոյ գերութիւնից յետոյ Միջագետի Հայոց վերայ թագաւորում է Արշամը, որ Տիգրանայ եղբայրը Արտաշէսի որդին էր: Ինչպէս իւրան նախորդներինը, սորա նիստը լինում էր Մծբին քաղաքումն: Այս ժամանակներումն Եփրատ գետի արևելեան ափումը գտնվում էր Ուռհայեցւոց փոքր տէրութիւնը, որոյ ժողովուրդը, բուն մեծի մասին, Ասորի էին և Յոյն: Սրանք իրանց թագաւորներն ընտրում էին միշտ ուրիշ ազգաց իշխաններից, որոնք ընդհանուր անուամբ աւանդ էին՝ Աբգար կամ Մանոս: Այն ժամանակներն, երբոր Արտաւազդայ որդի Արտաշէսը ազատուեցաւ Անտոնինոսի ձեռքից, Պարթևաց օգնականութիւնամբը թագաւորում էր վերին Հայաստանումն: Արշամը

Ուռհայեցւոց կամեցողութեամբ՝ նրանց թագաւոր ընտրուեցաւ և տիրում էր բոլոր Միջագետին, որոյ հիւսիսային կողմից պատած էին՝ Մասիոսը և Կորդուաց լեառները, արևմուտքից՝ Եփրատ գետը, և արեւելքից՝ Ասորեստան: Սորան յաջորդում է Միջագետումը, նորա որդի Աբգարը: Սա իրան աթոռը դնում է բոլորովին Ուռհայ կամ Եդեսիա իրան դիւանովն և կուռքերովն: Արշամայ ժամանակները Հռովմայեցիք միայն Միջագետից էին հարկ առնում, իսկ Աբգարայ ժամանակները բոլոր Հայաստանից: Օգոստոս կայսեր գործակալները գալիս են Հայաստան և Աբգարը հրամայում է նորա պատկերը մեհեաններումը կանգնեցնել: Հերովդէս թագաւորն, որ այդ ժամանակները թագաւորում էր Երուսաղէմումը, կամենում է իրան պատկերն էլ բազմեցնել Հայոց մեհեաններումը, բայց Աբգարն յանձնառու չէ լինում. Հերովդէսը բարկանալով հրամայում է իրան Յովսէփ եղբօրն՝ որ Պարթևաց դէմ գնալու ժամանակը Հայոց երկրովն անցկենայ: Աբգարն էլ, ի հարկ է, լսմանալով Հերովդէսի իւր եղբօր ուղարկելը Հայաստան՝ միանում է Պարթևաց հետ և ջարդում է Հերովդէսից ուղարկած ամբոխին և բռնկանում է Յովսէփ զօրավարին: Հերովդէսը կամենում էր վրէժխնդիր լինել Աբգարիցը, բայց մահուան օրը շուտով վրայ է հասնում և նորա տեղը յաջորդում է Հերովդէս Չորրորդապետը, որ նմանապէս թշնամի էր Աբգարին, ոչ միայն իրանց ընկալեալ հարուածի համար, այլ որովհետև Աբգարը օգ-

նուիրուն էր տուել Արաբացւոց Արիդաս թագաւորին՝ ընդդէմ Հրէից։ Արգարը տեսնելով որ իրան թշնամիքը շատացել են, մէկ կողմից Հռովմայեցիք, որոնք իրան դեսպաններին անարգութեամբ էին ընդունել, մէս կողմից Հերովդէս Չորրորդապետը. ուստի Աստոց վերակացու Մարինոս Ստորգեանի մօտ ուղարկում է Աղճնեաց բդեշխ Մարիհաբին, Ապահունեաց նահապետ Ջամշագրամին և իրան հաւատարիմ Անանին՝ դաշը կռելու նորա հետ։ Մարինոսը ընդունում է սիրով և նրանք այնտեղից գնում են Երուսաղէմ. ուր տեսնում են ՓՐԿՉԻՆ և նորա հրաշագործութիւնները։ Արդէն եօթը տարի հիւանդութեան մէջ էր Արգարը, երբոր լսում է Փրկչի հրաշագործութիւնները, հրաւիրում է նրան իրան վոքրիկ քաղաքը՝ Հրէից ձեռքից ազատուելու և իրան բժշկելու։ Պատասխան է գրում Փրկիչն Թոմայ առաքելոյ ձեռամբ, այսպէս. «Երանի քեզ այնմ, որ հաւատայ յիս, երբ ոչ լցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանեն զիս ոչ հաւատասցեն, և որք ոչն տեսանեն, նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այնր զի գրեցեր դու առիս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ աստ կատարել զամենայն ինչ. վասնորոյ առաքեցայ ես։ Եւ երբև կատարեցից զայս, ապա համբարձայց առ նա, որ առաքեացն զիս և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ և կեանս քեզ և որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ»։

Քրիստոսի համբառնալուց յետոյ 72 աշակերտներից մէկը Թոմայ առաքելոց ընտրութեամբը գալիս է Հայաստան, բժշկում է Արգարին և թագաւորին, լինչպէս և Եդեսացւոց, գարձնում է՝ի Քրիստոնէութիւն։ Թագաւորի խոյրարար Ադդէին Եպիսկոպոս է կարգում հաւատացելոց վերայ, իսկ ինքն գնում է Վերին Հայաստան։ Այնուհետև Արգարը ջատագով է կանգնում Քրիստոսի անուան համար, թուղթ է գրում Տիբերիոս կայսեր, Պարթևաց Արտաշէս և Աստոց Ներսէհ թագաւորների վերայ, բայց դեռ պատասխան չըստացած մեռնում է առաջին Քրիստոնեայ թագաւորն 36 թուականին Քրիստոսից յետոյ։ Արգարին յաջորդում է Ուռհայեստանում նորա որդի Անանուն, որ Եդեսիոյ մեհեանների վանած դռները բաց անել տուաւ և նահատակեց Ադդէ Եպիսկոպոսին, որ չէր կամենում հեթանոս թագաւորի համար խոյր շինել։ Այնուհետև սկսում է վերանորոգել արքունական պալատը, և նոյն միջոցին մեռնում է կճեայ քարիցն, որ վեր ընկաւ նորա վերայ։ Դեռ Անանի կենդանութեան ժամանակն ապստամբել էր Արգարի Ադդէ քրոջ որդի Սանատրուկն, որ վերակացու էր Միջագետի վերին մասերումն և որ Բագրատունեաց և Արծրունեաց օգնութեամբը թագ էր կապել և կամենում էր տիրել բոլոր Միջագետին։ Թէպէտ Անանունի կենդանութեան ժամանակն չկարողացաւ, բայց նորա մահից յետոյ Եդեսացիք լինքեանք նորա մօտ դեսպան ուղարկեցին և ըստ իւրեանց սովորութեան հրաւիրե-

ցին նրան Ուռհայի թագաւորական գահը նստելու։ Սանատրուկը, գրաւելով արքունի բոլոր կայքը և գանձը, հրամայեց Աբգարու տան զաւակներդուն՝ ի սուր օտարների մաշել։ Հրամայում է վերանորոգել Մծբին քաղաքը, որ խախտուել էր երկրաշարժու-թիւնից. այն քաղաքի հրապարակումը կանգնեցնում է մէկ անդրի, ձեռքին բռնած մի դրամ, նշանակելով՝ թէ արքունի գանձերը սպառել են։ Սանատրուկը Հայոց նախարարների աչքին հաճոյ երեւելու համար, հալածում էր Քրիստոնէից, սպանեց Թադէոս առաքեալին Արտազու դաշտումը և նահատակեց իւր քոյր Սանդուխտին, որ շատ ջերմեռանդ քրիստոնեայ էր։ Այս կերպով Թէպէտ Վերին Հայաստանում Քրիստոնէութիւնը շատ յառաջադիմութիւն չունէր, այսուամենայնիւ Եղեսիայումն հաստատ արմատ էր բռնել և ունէր առանձին քրիստոնէից եկեղեցի։

Սանատրուկի մահից յետոյ, որ սպանուեցաւ որսի ժամանակը, թագաւորում է Ուռհայեցոց վերայ Երուանդը՝ որ մօր կողմանէ Արշակունի էր։ Բագրատունիքը չեն համաձայնում այս բանիս և անց են կենում Սանատրուկի որդւոց կողմն։ Երուանդը հրամայում է կոտորել Սանատրուկի որդւոցը, որոնցից մէկը, Արտաշէս անուամբ, ազատւում է և տանում է Պարսկահայոց Հեր գաւառը, գնում է այն տեղ և Սմբատ Բագրատունին, որ շատ վտանգներից ազատուելուց յետոյ Արտաշէս մանուկին տանում է Պարթեւաց Դարեհ թագաւորի մօտ։ Այնու-

հետև Երուանդը կասկած ունենալով Պարթեւաց կողմից, Հռովմայեցոց վերայ է յոյս դնում, թողնում է Եգեսացոց գահը, գալիս է Վերին Հայաստան և նստում է Հայկազանց թագաւորանիստ Արմաւիր քաղաքումն։ Երուանդը նախատեսնում էր գալոց պատերազմները, թողնում է խախտեալ Արմաւիրը, և Որճաքար բլրի վերայ, Երասխ գետի ափերումը, շինում է Երուանդաշատ քաղաքը իրան բարձրապարիսպ միջնաբերդովն և պղնձէ դռներովն. «Ելանելեօք երկաթեօք որոդայթաւորօք», մէկը ցեղակի համար, որ արքունի սպասաւորներն ել ու մուտ առնեն, իսկ միւսը դիշերուայ համար, որ դաւաճանները բռնուին։

Արտաշէս բ. 80—135 թիւը Քրիստոսից յետոյ։

Այն ինչ Երուանդն, որ մօրով միայն Արշակունի էր, բռնութեամբ թագաւորում էր Հայոց վերայ. Արտաշէսը՝ որ Սանատրուկի որդին և ժառանգն էր, իրան դայեակ Սմբատի հետ անվում էր և մեծամեծ դժուարութիւնով իւր անունը փառաւորում էր իրան արևնակից Արշակունի թագաւորաց մօտ՝ Արեաց աշխարհումը և բնակվում էր Մարաստանումն։ Այն ինչ Սմբատը շատ քաջութիւններ էր անում Աղուանից և Ալանաց դէմ, Արեաց թագաւորը նախարարաց իրատուն յօժարանում էր նորա սիրագործութեանց հատուցումն տալ։ Այս հատուցումն այն էր, որ Ատրպատականից և Ասորեստանից դունդ

առաւ Սմբատը, որ գնայ Հայաստան և այն տեղ Արտաշէսին թագաւորացնէ: Գարնան ժամանակ Սմբատը ձեռաւ իւր զօրքով Ուտէացւոց աշխարհը և այն տեղից սկսաւ գնալ դէպի Գեղամայ ծովակը: Ամենայն կողմից Հայոց նախարարներն իրանց զօրքերովն անցանում էին Սմբատայ կողմն, որ աշխատում էր շուտով յարձակիլ Երուանդի բանակի վերայ, որն որ գտնվում էր Ախուրեան (Արփաչայ) գետի մօտ: Երուանդայ զօրքը բաղկացած էր Հայոց և Վրաց ազգերիցը և Փոքր Հայաստանի գամիրնեբիցը: Բայց որովհետև Հռոմայեցւոց լեգէոններն ուշանում էին, այն պատճառաւ էլ նախարարացն և զօրացը հաղիւ էր կարողանում արծաթով և ուրիշ պարգևներով իրան կողմը պահել. ինչպէս ասել էր Մուրացան նախարարութեան Արգամ տանուտիրոջն, տալով նրան երկրորդական գահն, որ նրանցից խլել էր Տիգրան Բ-ը: Բայց ամեն բանն էլ զուր էր: Որովհետև, երբոր Արտաշէսի զօրքն երևեցաւ, Արգամն ուրիշ նախարարաց նման իւր հետեւակ զօրքովն նորա կողմն անցկացաւ, Արտաշէսիցը խոստումն առնելով որ առաջուան իւր պատիւը պահէ: Երբոր պատերազմը սկսուեցաւ, Երուանդայ բանակի աջակողմեան և ձախակողմեան նախարարներն էլ անցկացան Սմբատի կողմը, միայն մէջ տեղի գունդը, որ բաղկացած էր Վրաց ազգիցն և Գամիրների վարձկան զօրքերիցն, որոնք սաստիկ կռւում էին, Հաւատարիմ մնացին Երուանդին և մէկ քանի Տաւրացի մարդիկ պայման էին կապել

նորա հետ, որ սպանեն Արտաշէսին: Բայց Գիսակն, որ Արտաշէսի ստնտուի (ծծմօր) որդին էր, ազատեց նրան, իսկ ինքն զրկուելով իրան դիմաց կիսիցն մեռաւ: Երուանդը տեսնելով իրան զօրաց անհնարին կոտորածը, փախաւ դէպի Երուանդաշատ: Սմբատը գնաց նորա ետևից քիչ զօրքով և քաղաքի մօտ սպասում էր Արտաշէսին և մնացած զօրքին: Սրանք գիշերը այն տեղ մնալով և առաւօտեան մեռելներին թաղելուց յետոյ, կէս օրին Հասան քաղաքի մօտ, և քիչ պատերազմելուց յետոյ քաղաքացիք անձնատուր եղան: Զօրքը սկսեց մեծ զօրութեամբ դիմել դէպի պալատը, ուր նրանցից մէկը սրով տալով Երուանդայ գլուխը չախչախեց: Արտաշէսը հրամայեց պատուով թաղել նորա մարմինը և մահարձան կանգնացնել վրան, որովհետև Արշակունի արիւն ունէր: Իսկ Սմբատը գանձատանումն գտնելով Սանտարուկի թագն, ըստ իւր ասպետութեան իրաւանց, դրաւ Արտաշէսի գլխին 80 թուին: Այնուհետև Մարաց և Պարթևաց զօրքերը մեծ պարգևներով յետ դարձան: Արգամը պատուեցաւ երկրորդութեան պատուովն յակնթակապ պսակով, գինդերով, կարմիր սենապանօք (կօշիկներով), ոսկեղէն պատառաքաղով և դրգալով: Սմբատը բացի թագաւորութեան ասպետութիւնից, իշխան է կարգվում արևմտեան զօրաց վերայ և գլխաւոր հրամանատար Հայոց բոլոր զօրաց, գործակալաց և նահանգաց վերայ: Գիսակայ որդի Ներսէսը նահապետ է կարգվում Գիմաքսեան նախարարութեան: Արտաշէսի

Հրամանով Սմբատը սպանում է Երուանդին Բագաւանումն և նորա տեղը քրմապետ է կարգում Մոպ-պաշտէ անունով մէկին: Արտաշէսը վերանորոգելով Արտաշատ քաղաքը, Բագարանից բոլոր կուռքերը բերել է տալիս այն տեղ: Իսկ մեհեանների և Երուազի գանձերը Սմբատայ ձեռքով ուղարկում է Արեաց Թագաւորին, որ իրան այնքան բարերարութիւն էր արել:

Հռոմայեցիք, որ մինչև այն ժամանակները լուռ էին կացել, սկսեցին մեծ զօրքով Փոքր Հայաստանին մօտենալ և գործակալներին ուղարկել Արտաշէսի մօտ Հարկ ուղելու: Արտաշէսը լաւ համարեց բանը խաղաղութեամբ վերջացնել. այս պատճառաւ խոստացաւ Հարկը տալ և դաշը կռել Հռոմայեցւոց կայսերութեան հետ: Այս ժամանակներում Ալանաց ազգը, ըստ իւրեանց սովորութեան, ուրիշ լեռնական ազգերի հետ արշաւեցին Հայաստանի վերայ, անցկացան Կուր գետը և աւազակում էին Հայաստանը: Արտաշէսը մեծ բազմութեամբ դուրս եկաւ նրանց առաջը՝ գերեց նրանց Թագաւորի որդուն և տիպեց Կուր գետի միւս կողմն անցկենալ: Մինչև որ Թշնամեաց բանակը գետի աջ կողմն էր և մերը ձախ կողմը, նրանց Թագաւորի բարեկամ Սաթենիկ աղջիկը կանգնեց մէկ բարձր տեղ և Թարգմանի միջնորդութեամբ այսպէս ասաց Արտաշէսին. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց, եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ պա-

տանիդ»: Արտաշէսը յետ դարձրեց Թագաւորի որդուն, և Սմբատայ խորհրդով ամուսնացաւ Սաթենկայ հետ:

Արտաշէսը իրան բոլոր Թագաւորութեան ժամանակը մեծ հոգս էր անում մեր աշխարհի շինութեան վերայ: Հայաստանը լցրեց բազմաթիւ գաղթականութիւններով. ինչպէս էին Ալանացն, որ Սմբատը գնալով նրանց աշխարհը, Արտազ անուամբ տեղևյը շատ բնակիչներ բերեց և բնակեցրեց Զաւարշան գաւառումն, որ էլի առում էր նրանց անունից Արտազ: Միւսներն էին՝ Կասպից և Առաւեղեանց գաղթականութիւններն, ինչպէս և Ամատունիքը: Առաւեղեանք Սաթենկայ ազգականներն էին՝ որոնք նորա հետ էին եկել: Իսկ Ամատունիքը Մանու Հրէի սերունդներն էին, որոնք առաջ Արեաց աշխարհումն էին և ապա Արտաշէսի օրերումն եկան Հայաստան: Իւրաքանչիւր գիւղի և ագարակի սահմաններն որոշուեցան՝ քառանկիւնի կոփածու քարերով. երկիրը և լեռները մշակվում էին, գետերը և ծովակները լցուեցան նաւերով, շինուեցան շատ կամուրջներ: Ուսումն առաջ էր գնում, և շաբաթները, ամիսները, ինչպէս և տարիքը առելի ճիշդ սկսեցան համարուել: Արտաշէսը թէպէտ բաղեաքոտ էր իրան գործքերումը, այսու ամենայնիւ իւր տանը անբաւատ էր: Արտաւազդը, որ Սաթենկայ առաջին որդին էր, անձնահաճ և բարքով մոլի էր: Արտաշէսի և Փուրացան տէր Արգամի մէջը խառնակութիւն ձգեց. խլեց նրանից երկրոր-

գական պատիւը, և Արգամին ինչպէս և նորա ազգականներին սրի ճարակ արաւ: Երկրորդականութեան պատուոյն չբաւականանալով՝ խլեց Սմբատից սպարապետութիւնը, որ այնուհետև ինքնայօժար կամօք գնաց Կորդուաց աշխարհը և բնակվում էր Տմորիք գաւառումն: Արտաւազդը բոլոր պատիւները և իշխանութիւնները իրան ձեռքը հաւաքելով՝ իրան եղբարցը նախանձելի դարձաւ: Այս պատճառաւ Արտաշէսը քրմապետութեան պատիւը տուեց Մաժանին և ուղարկեց Անի ամրոցը Արամազդայ պաշտօնատարութեան համար: Իրան նախորդների նման ղօրքը չորս բաժանեց. արևելքը տուեց Արտաւազդին, արևմուտքը Տիրանին և Հիւսիսը Զարեհին, իսկ Հարաւը Սմբատին: Արտաշէսը տեսնելով մեր աշխարհի բարեկարգութիւնը և իրան որդւոց համաձայնութիւնը, ինչպէս և քաջութիւնը, մտքումը դրեց նշկահել Հռովմայեցւոց, այս լսելով Հռովմայեցիք՝ Տրայիանոսի առաջնորդութեամբ մտան Փոքր Հայաստան, ջարգեցին Տիրանի զօրքին և հասան մինչև Բասեանք: Այն ժամանակին արևելեան և Հիւսիսային գունդերը Արտաւազդի և Զարեհի առաջնորդութեամբ վրայ հասան, բայց նրանք էլ ոչինչ չկարողացան անել, մինչև որ ալևոր և քաջ Սմբատը Հարաւային գնդովն օգնութիւն գալով նրանց՝ Հայաստանիցը դուրս քշեց Տրայիանոսին և մտաւ Հռովմայեցւոց իշխանութեան տակ եղող երկիրները: Այսպիսով, մէկ քանի ժամանակ, Հայերը հարկ չրտուին Հռովմայեցւոց, բայց մէկ քանի տա-

րիից յետոյ նոր զօրքով Հռովմայեցիք դարձեալ Տրայիանոսի առաջնորդութեամբ եկան Պարթևաց վերայ. Արտաշէսը լաւ համարեց շատ ընծաներով հաշտեցնել Տրայիանոս կայսերը, խոստանալով տալ նշանակեալ հարկը: Այնուհետև Արտաշէսը հաւատարիմ մնաց Հռովմայեցւոց: 135 թուին Քրիստոսից յետոյ Հռովմայեցւոց օգնութիւն տալու ժամանակն ընդդէմ Պարթևաց Մարանդ գաւառի բակուրանակերտ աւանումն հիւանդանալով մեռաւ, մինչև որ Աբեղենից Աբեղայ նահապետը յետ չէր դարձել Երիզա քաղաքից, ուր գնացել էր Աննահիտ Ոսկիամայր դիքից կենդանութիւն խնդրելու Հայոց թագաւորի համար:

Արտաւազդը 135 թուը Քրիստոսից յետոյ:

Արտաշէսի տեղը նստեց նորա անդրանիկ որդի Արտաւազդը, որ ինչպէս թագաւորական գահի վերայ նստեց, իրան եղբայրներին և քոյրերին Այրարատից ուղարկեց Աղիովիտ և Առբերանի գաւառները: Մէկ անգամ որս գնալով Վասիս լերան վերայ, իրան ձիովն մէկ վոսի մէջ ընկաւ և անհետացաւ: Այս արկածքի վերայ Խողխան երգիչները և Հայոց պատմիչները շատ բաներ էին պատմում:

Տիրան 135—156 թուը Քրիստոսից յետոյ:

Արտաւազդին յաջորդեց նորա եղբայր Տիրանը,

որ Այրարատումը մնացել էր նորա մօտ իբրև ժառանգ, որովհետև Արտաւազդը որդի չունէր: Երկրորդական պատիւը, ինչպէս և արևելեան զօրաց զօրավարութիւնը, Տիրանը տուեց Անձևացեաց բդեաշտ և քաջ Երախնաւոր իշխանին, որ Արտաւազդայ մահից յետոյ նորա կնոջներից մէկին առել էր իրան կնութիւն: Իսկ ինքը Տիրանը լինելով թոյլ և վախկոտ մարդ՝ դնացել էր Եկեղեաց Զրմէս աւանը և այնտեղ զբօսանքով էր պարապում: Մէկ օր, ինչպէս Մովսէս Խորենացին է պատմում, Հիւսոյ տակ ընկնելով մեռաւ այն ժամանակն, երբոր Տըղատ Հագրատունին իրան Երանեան քրոջը պատնել էր և փախչում էր Պարատան:

Տիգրան գ. 156—195 *Թիւք.*

Սա յաջորդելով իրան եղբայր Տիրանին՝ չկամեցաւ իրան Հօր և եղբարց պէս Հնազանդ լինել Հռոմայեցւոց: Պատճառ Պարսից Պերոզ ա. Թագաւորի հետ և դիմեց Փոքր Ասիոյ վերայ, այն տեղ բռնվելով մէկ աղջկանից՝ որ այն կողմերին տիրում էր, ազատուեց Ղուկիոս կայսերից՝ որ եկել էր Հռոմայեցւոց լեգէոններուն Հայոց արշաւանքի առաջն առնելու: Այնուհետև կայսեր ազգական Թոփի աղջիկն իւր կին առնելով՝ Տիգրանը գարձաւ Հայաստան և սկսեց զանազան կարգադրութիւններով զբաղել: Իրան եղբայր Մաժան քրմապետի գերեզմանի վերայ մէկ բագին շինել տուաւ, որոյ զո-

հերովը պէտք է կերակրուէին անցաւորները և օտարականները:

Վաղարշ 195—210 *Թիւք.*

Տիգրանի որդի Վաղարշը մեր քաջ և աշխարհաշէն Թագաւորներից մէկն էր: Բասեան գաւառի Մուրց գետի Երասխի հետ խառնվելու տեղումը, որ իւր ծննդեան տեղն էր, շինել է տալիս Վաղարշաւան քաղաքը, ամուր պարսպով պատում է Վարդէսի աւանը, իւր անուամբը կոչում է Վաղարշապատ և ամրոցը այն տեղ է բերում: Շինել է տալիս նմանապէս և Փաղկոտն գաւառի Վաղարշակերտ քաղաքը, որ այժմ ասում ենք Այշկերտ: Սա հաստատեց, որ Բագաւանցւոն Մաժան քրմապետի բագնի մօտ, Հայերը նաւասարդ ամսեան մըտին ժողովվին և կատարեն վաւաւոր ամանորեաներ կամ ամենաբեր պտղոյ տօնը: Նորա ժամանակները Հայաստանը երկու կողմից պաշարուած էր Թշնամիներից:—Արևմտեան կողմից Հռոմայեցւոց լեգէոնները կամենում էին Սեպտիմիոս Սեվերոս կայսեր առաջնորդութեամբ Հայաստան մտնել: Իսկ Հիւսիսայինն կողմից Խազրները և Բասլները ձորայ դուռն անցկենալով՝ Հռոմայեցւոց արշաւանքից փոքր ինչ յետոյ՝ աոպատակում էին Հայաստանը: Հռոմայեցւոց Հետ առանց պատերազմի Իրան բանը յաջող վերջացնելով, Իրան զօրութիւնը ուղղում է Վաղարշը Հիւսիսականաց վերայ, որոնք Կուր գետն անց

էին կացել, ջարդում է և փախստական է առնում նրանց մինչև Ճորայ դուռը, որտեղ կրկին պատերազմելով նրանց հետ չարաչար յաղթում է նրանց, բայց ինքն զոհ է լինում այն յաղթութեանը, որովհետև նետով վիրաւորված սպանվում է:

Խոսրով 210—253 թիւը

Խոսրովն իւր հօր վրէժն առնելու համար, անցկացաւ Կովկասու լեառների հիւսիսային կողմն և այն տեղից Ճորա կամ Ալանաց դուռը, չարաչար յաղթեց և պատժեց Սկիւթական ցեղերին. յոյն գրով արձան կանգնացրեց իրրև նշան իւր ընդարձակ տէրութեան, և յետոյ հարիւրիցը մէկ հոգի առնելով նուաճեալ ազգերից՝ դարձաւ Հայաստան: Թէոկրիտոս Հռովմայեցւոց զօրավարին յաղթելով որ կամենում էր Կարակալլայ կայսեր Հրամանաւ բոլորովին նուաճել Հայոց, առ ժամանակ Հայաստանը խաղաղացրեց, որովհետև Հայոց թագաւորը չէր խառնվում այն պատերազմների մէջ, որ Պարսիկները և Հռովմայեցիք ունէին: Բայց երբոր, 226 թուականին Քրիստոսից յետոյ, Սասանեան Արտաշիր Պարթից իշխանը ապստամբեցաւ Պարթևական Արտաւան թագաւորից և նրան սպանելով ինքն թագաւորեց Պարթևաց թագաւորի տեղն, այն ժամանակը մեր Խոսրով թագաւորը, երկար ժամանակ, Հռովմայեցւոց և Սկիւթացւոց օգնութեամբը, պատերազմ բացեց Արտաշրի դէմ, մտաւ Ասորեստան և

այն տեղից թագաւորական Տիզբոն քաղաքը և այնպէս նեղեց նրան, որ մինչև Հնդկաստան հալածեց: Արտաշիրը չկարողանալով Խոսրովի դէմ կենալ, յորդորեց իրան իշխաններին և աւելի Պահլաւներին, որոնք Պարթևաց թագաւորական ցեղից էին, որ եթէ մէկ խորամանկութեամբ սպանեն Խոսրովին և ինքն կրկին անդամ տիրէ Պարսկաստանին, նրբան կտայ երկրորդական պատիւը Քուշանաց աշխարհի: Անակը՝ որ Սուրէնեան Պահլաւներից էր, յանձն առաւ այս չար պաշտօնը և իբրև թէ փախչելով Արտաշրի ձեռքից՝ եկաւ Հայաստան: Խոսրովը՝ որ արդէն մեծ աւարներով յետ էր դարձել իրան Ամերանաց խաղխազ քաղաքն՝ սիրով ընդունեց Անակին: Գարնան նոքա այն տեղից ի միասին գրնացին Վաղարշապատ, որտեղ ծնուեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն-: Այն ինչ Խոսրովը մտքումը դրել էր կրկին պատերազմ սկսել և Պարսկաստանի վերայ Պարթևական ցեղից մէկ ուրիշին թագաւոր դնել, Անակը դիպող ժամ գտնելով սպանեց Խոսրովին և կամեցաւ փախչել Պարսկաստան, բայց Հայերը վրայ հասնելով Արտաշատ քաղաքի մօտ Տարբերական կամրջիցը նրան և նորա եղբօրը ջուրը ձգելով խեղդեցին, այն ինչ թագաւորի հրամանաւ, մինչև որ նա կենդանի էր, սրի ճարակ տուին նորա բոլոր զերդաստանը, որոնցից միայն Գրիգոր Լուսաւորիչն ազատուեցաւ: 253 թ. Արտաշիրը իբրան բաղձանքին հասնելով՝ մտաւ Պարսկաստան և այնտեղից կամենում էր տիրել և Հայաստանին.

բայց Հայերը՝ մեր քաջ նախարարների միաբանական Հոգւովն՝ երկար ժամանակ դէմ կացան Արտաշրի զօրաթեանը, մինչև որ 260 թ. անճարացած հնազանդեցան նրան: Այնուհետև Հայաստանը, մինչև 280 թիւը, Պարսից մարզպանութիւն դարձաւ: Արտաշիրը հրամայեց Բագաւանում, ըստ մոգութեան օրինաց, անշէջ պահել կրակն. Արտաշէսի անուամբ սահմանագրեալ քարերն իւր անուամբ փոխել տուեց:

Տրդատայ մանկութիւնը և նորա թագաւորութեան սկիզբն:

Ինչ ժամանակ Արտաշիրը տիրեց Հայաստանին, Մանդակունեաց Արտաւազդ իշխանը Տրդատին փախցրեց Հռոմ, ուր նա պահվում էր Լիկինիոս Կոմսի մօտ: Նորա մէտքը պարարվում էր յունական փիլիսովայութեամբ, իսկ մարմինը կազդուրվում էր զանազան մարզերով, գտնուեցաւ Պեղոպոնեսական մրցմունքների մէջին և երկու անգամ մէկ ձեռքով խորտակեց վայրենացեալ ցոյլերի եղջիւրները: Մէկ անգամ Հռոմմումը, երբ որ նորա ոսոխը կատքից նրան վայր ձգեց, նա բռնեց կատքիցը և արգելեց ընթացքը: 283 թուին, երբոր Կարոս կայսրը Արտաշրի դէմ պատերազմ եկաւ, Տրդատը նորա հետ միասին էր: Հռոմայեցւոց զօրքը ջարդուելուց յետոյ նորա ձին էլ վիրաւորուեցաւ, այն ժամանակն տանելով իրան ձիու ասպազէնները և լոզ տալով Եփրատ գետի վերայ եկաւ Միջագետ Լիկինիոսի մօտ: Տրդատի քաջութիւնների վերջինն էր Գոթացւոց թագաւորի դէմ մենամարտութիւնը, որ արաւ Պիոկղետիանոս կայսեր փոխանակ 286 թուին: Կայսրը իրան երախտագիտութիւնը ցուցանելու համար պրծակեց Տրդատին թագաւորական թագով և լեգէոններով ուղարկեց Հայաստան աշխարհը՝ իրան հայրական աթոռը ժառանգելու: Երբոր Տրդատը Կեսարիա հասաւ, Հայոց նախարարներից շատերն առաջ գնացին, որոնց հետ էր և Սմբատ Բագրատունին, որ պահել էր նրան իբրև թագադիր Արշակունի թագաւորաց: Այս կերպով կրկին անգամ Հայաստանում կանգնեցաւ Արշակունեաց հարստութիւնը, երեսուն տարի անտէր մնալուց յետոյ: Օտայ Ամատունեաց իշխանին, որ իրան քոյր խոսրովադուխտին պահել էր Անի ամրոցում, Հայոց աշխարհի Հազարապետ կարգեց. Արտաւազդ Մանդակունուն որ իրան դայեակն էր եղել՝ սպարապետ. իսկ Տաճատին, որ Արտաւազդայ քրոջն ազատել էր Արտաշրի դահիճների ձեռքից և փախցրել էր Կեսարիա Աշոցայ նահապետ: Սորանից յետոյ սկսում է մտնել Հայաստան և իրան մօտ ժողված Հայոց զօրքովն, ինչպէս և Հռոմայեցւոց լեգէոններովն, Հալածում է Պարսից մեր աշխարհից, որոց թագաւորն այն ժամանակն էր Արտաշրի որդի Շապուհն, և մինչև անգամ Ասորեստանի և Պարսից նահանգներից շատերին տիրապետում է: Այս կռիւների ժամանակ Տրդատը շատ քաջութիւններ ցոյց տուեց,

որ Հայոց միջին երկար ժամանակ առած կար. »Իբրև զԱԿն Տրդատ՝ որ սիդալովն աւերեաց զԹումբս գետոց, և ցամաքեցոյց խոկ ՚ի սիդալն իւրում գյորձանս ծովուց»: Այս պատերազմներից յետոյ Սմբատ Բագրատունին Աշխադար Ալանաց Թագաւորի Աշխէն աղջկանը բերում է Տրդատին կնութիւն:

Հայոց քաղաքականութեան նոր Հանգամանքները, Սըզկունեաց Սղոսկ նշխանի ապստամբութիւնը, Սկիւթացւոց դէմ պատերազմ և գօրավարութեան բաժանումն:

Քանի որ Արեաց աշխարհումը Թագաւորում էին Արշակունիքն և քանի որ Հայերը հեթանոսական կրօն ունէին, Հայոց աշխարհը աւելի կապուած էր Պարսից հետ. բայց երբոր Արշակունեաց տեղն Արեաց աշխարհումը Թագաւորեցին Սասանեանք. և երբոր Հայաստանումը հեթանոսական խաւարի տեղն Աւետարանի լոյսը տարածուեցաւ Տրդատ Թագաւորի ջերմեռանդութեամբ, այն ժամանակը մեր աշխարհի յարաբերութիւնները փոխուեցան: Տրդատն՝ որ Արշակունի Թագաւորների միջին Տիգրանից յետոյ առաջինն է, իրան աշխարհակալութեամբ և իմաստութեամբը մեծ ներդործութիւն գործեց մեր աշխարհի վերայ երկար ժամանակ. մեծանալով արևմուտքումը՝ լինելով Արշակունի՝ իրան խնհեմութեամբը տարածելով Քրիստոնէական լոյսը մեր աշխարհի վերայ՝ Հայոց ազգին ջոկեց արևելեաններից և առաւել Պարսից ներդործութիւնից և այնպէս մօտացրեց արևմտեան քրիստոնեայ ազգաց հետ: Քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ, մինչև անգամ, ինքն անձամբ անձին գնում է Հռոմ և Կոստանդիանոսի հետ նոր սերտ դաշն է կապում 319 Թուին: Պարսից Շապուհ Թագաւորն անհանգիստ աչքով էր մտիկ տալիս այս ամենայն յեղափոխութիւնների վերայ, և մինչդեռ Տրդատը Հռոմի էր գտնվում, յորդորում է Սղկունեաց Սղոսկ նահապետին, որ գտնվում էր Տարօնում, ապստամբուիլ Թագաւորից. միևնոյն ժամանակ Սկիւթացւոց խառնիճաղանճ ազգերին ճանապարհ էր ցոյց տալիս դէպի Հայաստան: Տրդատը վրայ է հասնում, ժողովում է զօրքն և Կարգաբացւոց աշխարհումը կտրում է Սկիւթացւոց առաջն: Այս տեղ կոր ՚ի գլուխ չարդում է Սկիւթական հասյաց ազգին և սպանում է Գեղբեհոն Թագաւորին: Հոլոդովին յաղթում է Սկիւթացւոց, բայց այս յաղթութիւնը Թանդ գնեցաւ, որովհետև սպանած երեւելի իշխանների միջին գտնվում էր և Արտազդ Մանդակունին՝ Հայոց աշխարհի ընդհանուր սպարապետն: Այն ինչ Թագաւորը քշում էր մնացեալ Սկիւթականաց մինչև Հոնաց աշխարհն և վերադառնում էր այն տեղից շատ պատանդներով. լում է և Սղկայի մահուան աւետիքը: Որովհետև այն ապստամբ նահապետը սպանելով Օտայ իշխանին և վախենալով Թագաւորի արդար պատժից իւր ապրուստամբութեան համար ամրացել էր Տարօնոյ Սըղկայ ամրոցումն, և Թագաւորի դէմ ոտքի էր կանգ-

նացրել Սիմ լերան բոլոր բնակիչներին: Իսկ Թագաւորն, որովհետև զբաղուած էր Հիւսիսականաց դէմ, խոստացաւ Տարօնոյ դաստակերտներն և գիւղերն նրան տալ, ով որ Սղուկին ձերբակալ կ'առնէ: Զինաց աշխարհիցը գաղթեալ Մամկունը խոստացաւ կատարել Թագաւորի հրամանը, և այս պատճառաւ իբրև Թագաւորիցը հալածեալ ապաւինում է Սղուկի մօտ և յաջող ժամանակ գտնելով սպանում է այն ապատամբ իշխանին, տիրապետում է ամրոցին և սրի ճարակ է տալի նորա բոլոր գերդաստանը, որոնցից միայն երկուսն են ազատվում և գնում Փոփոյ աշխարհը: Թագաւորը հրամայում է տալ Մամկունին հրովարտակաւ՝ ինչ որ խոստացել էր և նորա տոհմը դասել Հայոց նախարարութեանց դասը: Ընդհանուր սպարապետի մահիցը յետ, որ մեռաւ Կարգալացւոց դաշտումն, ըստ Հին օրինաց զօրավարութիւնը չորս է բաժանում: Հիւսիսային գնդի վերայ կարգում է Վրաց քրիստոնեայ Միհրան Թագաւորին, արևելեան գնդի վերայ՝ Ամատունեայց Վահան նահապետին, հարաւայինների վերայ՝ Ընշտունեայց Մանահիւր նահապետին. իսկ արևմտեանի վերայ Բագրատ նահապետին: Իսկ ինքն անձամբ անձին պիմում է Պարսից դէմ, իրան հետ առնելով Հիւսիսականաց զօրքն, որոնց նաւաճել էր ինքն, բայց որովհետև Կարգարայի պատերազմումը կորցրել էր շատ երևելի զօրավարներ, այս պատճառաւ սպասում է մէկ յաջող ժամանակի, մինչև որ հովմայեցիք մտնում են Ասորեստան, իսկ ինքն մտնե-

լով Պարսկաստան, իրան ձեռքի տակն է առնում այն տեղի երկիրները և Ըրկրորդ Եկբատանումն, որ կարճելի է Գաւրէժ, կալզելով վերակացու՝ յետ է գառնում մեր աշխարհը, այն ժամանակն, երբոր Զապուհը հաշտութիւն է խօսում Կոստանդիանոս կայսեր հետ:

Քրիստոնէութեան առաջին քարոզութիւնները Հայոց աշխարհումը և նորա ուշ մտնելու պատճառը:

Հայոց եկեղեցին, ինչպէս ուրիշ արևմտական եկեղեցիները, Առաքելական է և Հայաստանումն առաջին անգամ Աւետարանի քաղցր Հնչմունքն ե-ղան՝ 'ի ձեռն Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց: Հայաստանը հէնց չորրորդ դարի սկիզբներից ընդունում է նոցա քարոզը յիշատակն և Եւսեբիոս յոյն պատմագիրն ընդունում է Թադէոսին Հայոց առաքեալ: Սակայն նոցա քարոզութիւնը այնքան խոր արմատ չբռնեց, և Ոսկեանք՝ որոնք նոցա աշակերտ էին, Թէպէտ Արտաշէս Բ. արքանիքը մտան, և Սաթենական տգղականներից շատերը Հաւատացին, այնուամենայնիւ մոլի Արտաւազդից, Քրիստոսի Հաւատը չուրանալու պատճառաւ, զլխատվում են Բագրատունեաց լեռներում, ուր նաքա ճգնվում էին: Նոյն վիճակն ունեցան և Սուքիասեանք: Այսպիսով Քրիստոնէութիւնը Հայաստանումը հալածվում էր մինչև չորրորդ դարու սկիզբներն, և ուշ մտնելու պատճառը կարելի է ասել. նախ՝ որ Հայաստանի Հրէայքը բոլ մեծի մասին Հեթանոս էին

դարձել, և Աւետարանի վարդապետութիւնը, որ իրանց հայրենակիցների ձեռամբն էր տարածվում, ազատ չէր քարոզվում Հայաստանում, ինչպէս հրոռվմայեցւոց տէրութենում. երկրորդ՝ Հայոց մատուռը կրթութիւնը պահանջել էր և Հայաստանը այդ ժամանակներն անդադար պատերազմների և ազմուկների ասպարէզ էր դարձել:

Հայոց կառավարեալ դարձը ի Քրիստոնէութիւն, Լուսաւորչայ մանկութիւնը, նորա տանջանքները, Տրդատայ հրովարտակները ընդդէմ Քրիստոնէից, Հռիփսիմեանք և Աստուծոյ պատիժը:

Հայերը միայն Տրդատայ ժամանակներն են բոլորովին ընդունում Քրիստոնէութիւնը, բայց որովհետև այն թագաւորը սնուած էր հեթանոսական հոգւով և հալածում էր Քրիստոնէից, այս պատճառաւ էլ պէտք էր որ մէկ երևելի դէպք էր պատահել նորա հետ, որ նա համոզուել էր ընդունելու այն վարդապետութիւնը, որ առաջ հալածում էր:

Ինչ ժամանակ խոսրովը սպանուեցաւ և Անակը դեռավէժ եղաւ, Եւթաղ անուամբ մէկ մարդ Անակայ տան կոտորածէից ազատեց երեք տարեկան մէկ երեխայ իրան տանտուր Սոփիայի հետ և գնաց Կեսարիա: Այս տեղ այն մանուկը մեծացաւ քրիստոնէական հոգւով և անուանեցաւ ԳՐԻԳՈՐ, որ մէկ քանի ժամանակից յետոյ ամուսնացաւ Մարիամ անուամբ կնոջ հետ և նորանից ունեցաւ երկու

որդի, այն է Վրթանէս և Արիստակէս: Երեք տարուց յետոյ սոքա միահաւան քակեցին իրանց ամուսնական կապն, Մարիամը վռնքը որդուովը մտաւ կուսանոց, իսկ Գրիգորիոսն՝ իրան մեծ որդուն թողնելով դայեակի մօտ, գնաց Հռոմ Տրդատայ մօտ, վասն դի նրան ծառայութիւն անելով՝ կամենում էր վճարել իրան հօր վնասու վոխարէնը:

Դեռ քանի որ Տրդատը չէր եկել Հայաստան, նա ստիպում էր Գրիգորին թողուլ իրան հաւատը, բայց երբ որ մտաւ Հայաստան և իրան յաղթութեանց մասին զոհ էր մատուցանում Անահիտ չաստծուն Երիզայ քաղաքումն, և երբ որ Գրիգորը յանձն չառաւ մասնակից լինելու այն զոհերին, այն ժամանակը հրամայեց, որ նրան սաստիկ չարչարեն և շատ տանջանքներից յետոյ, երբ որ լսեց Աշոցայ Տաճատ նախարարներից՝ թէ նա Անակի որդին է, 287 թուին հրամայեց նրան Արտաշատայ մահապարտների խորվիրապն գցել: Այնուհետև մէկը մեսից յետոյ երկու հրովարտակ հանեց, որով մահ էր սպառնում նրանց, որոնք կը խոստովանէին Քրիստոնէութիւնը, և միանգամայն հրաման էր տալիս, որ չերմեռանդութեամբ պաշտօն մատուցանեն՝ արի Արամազդին, զգաստ Անահտին և քաջ Վահագնին:

Մինչդեռ այս այսպէս էր լինում 300 կամ 301 թուին Կուսանաց մի դունդ մտաւ Հայաստան, որոց միջին անուանի էին Հռիփսիմէն և Գայիանէն, որ նրանց առաջնորդն էին: Սոքա փախել էին Պիոկղետիանոս կայսեր հալածանքներից և բնակվում

էին Վաղարշապատայ մօտ մէկ հնձանում: Կայսրն իմանալով նրանց տեղը, խոստն ղահանջեց նրանց Տրդատից, իսկ սա՝ որ հաւանել էր Հռիփսիմէին, շատ աշխատեց նրան համոզել, որ իրան կին դառնայ, բայց լուսը, սուրբ կոյսը փախաւ Թագաւորի սենեկից և դահիճներն պնդելով նրան քամաքից սպանեցին նրան և նորա ընկերներից շատերին: Գայիանէն, որ պիտի Հռիփսիմէին համոզէր Թագաւորի կամքին, նոյն նահատակութեամբը նահատակուեցաւ: Հռիփսիմէի մահը Թագաւորին ոդի և տրտմութեան մէջ ձգեց և մէկ քանի օրից յետոյ, երբ որ նա որսի էր գնացել, Աստծուց պատուհաս առաց, նոյն անցքն անցկացաւ և շատ պալատականների հետ:

Լուսաւորչայ ելն խոր վերապից, հարուածելոց բժշկութիւնը, քարոզութիւնը, մեհենաց քանդումն, Լուսաւորչայ ձեռնադրութիւնը, նորա կարգադրութիւններն և Հայաստանի երկու ամենամեծ եպիսկոպոսաց մահն:

Մինչդեռ Տրդատը վայրենի անասունների նման Թափառում էր անտառներում, երազ տեսաւ նորա Խոսրովիդուխտ քոյրը, որ հանել տան Գրիգորին վերապից, և սա միայն կարող կ'լինի անասնացեալ Թագաւորին բժշկել: Առաջին անգամ ուշագրութիւն չդարձրին երազի վերայ, իսկ երկրորդ անգամին, երբ որ կրկնուեցաւ նոյն երազն, Օտայ Ամատունին

դնաց Արտաշատ 301 թուին և հանեց վերուցից մեր Պանիէլին: Վաղարշապատայ ճանապարհում անասնացեալ Թագաւորը Գրիգորի առաջն է գալիս, որ ծունկի վերայ ընկնելով խնդրում է Աստծուց իրան բժշկութիւն, և երբոր Թագաւորը և նորա հետ եղած իշխանները բաւական զգաստացան, Գրիգորը նրանց մխիթար բերեց այն վերին զօրութիւնը, որով նրանք պէտք է ընդունել էին կատարեալ բժշկութիւն:

Այնուհետև Սուրբն ժողովելով վկայեալ կուսանաց մասունքները, սկսում է իրան երկար քարոզութիւններն՝ սուրբ երրորդութեան՝ Հօր, Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ վերայ: Օրէց օր հշմարտութեան սերմերը բողբոջում էին մեր աշխարհումն և մեր նոր առաքեալն սկսում էր հիմն ձգել սուրբ Հռիփսիմէի և Գայիանէի վկայարանների, ամփոփելով իւրաքանչիւրի մէջ նոյն սրբոց նշխարները: Զարմանալի էր Թագաւորի և Թագաւորազանց ջերմեռանդութիւնը. Թագաւորը փայտասր ձեռքն առած, Հանգիստ էր պատրաստում Սրբոց նշխարների համար. իսկ Աշխէնը և Խոսրովիդուխտն իրանց փեշերովը քանդեալ հողն էին դուրս ածում: Այս տեղ հաւատացեալ Թագաւորը չէ բաւականանում և երեքօրեայ ճանապարհ հեռաւորութեամբ Պասխս լեռից բերում է մեծ արձաններ, որ կանգնեցնէ Հռիփսիմէի վկայարանի սեամքումն, իբրև նշան նորա յաղթութեան: Երրորդ վկայարան շինուեցաւ նոյն հնձանի տեղն, որտեղ Հռիփսիմեանք բնակվում էին, իսկ չորրորդն

էր Էջմիածինն, որ տեղ ամենայն օր քարոզութիւններ և մաղթանքներ էին կատարվում և ուր ախտացեալ Թագաւորը Սուրբ Լուսաւորչայ աղօթքով ստացաւ կատարեալ առողջութիւն:

Այնուհետև Թագաւորը Սուրբի հետ միասին սկսեց շրջիլ բազմաթիւ նախարարներով Հայաստանի ամենայն կողմերն և ժողովրդեան շատ տեղ ստիպելով և շատ տեղ յորդորելով Թողնել էր տալիս հեթանոսութիւնը: Միևնոյն ժամանակը այրուեցան բագիններն և կործանվեցան կռքերը և նրանց տեղն եկեղեցիների հիմք ձգուեցան և խաչեր կանգնեցան: Այսպիսի վիճակ ունեցան՝ Երիզայի Անահիտն, Թորդանի Բարշամն, Արտաշատի Տիւրը, Բագայարիճի Մհրական դիքը, Անիի Արամազդը, Թիլ Աւանի Նանէական դիքն և այլք: Այն ժամանակ Թագաւորը և նախարարները միահաւան խորհուրդ արին և ընտրեցին Գրիգորին ընդհանուր հովիւ Հայոց աշխարհի, որ մեկ քանի դիմադարձութիւնից յետոյ, տեսնելով թէ Աստուծոյ կամքն այնպես է, համոզուեցաւ և տասնուվեց երեսփի նախարարների հետ ուղարկուեցաւ Կեսարիա Կապադովկիոյ մօտ և նրանից, ինչպէս և ուրիշներից միասին, ընդհանուր Կաթողիկոս օծուեցաւ Հայոց աշխարհի:

Վերադառնալով Հայաստան և հասնելով Տարօն Լուսաւորիչը քանդել է տալիս՝ Աշտիշատայ, Անահտայ, Վահագնայ և Աստղիկայ մեհեաններն, որոց տեղը շինել է տալիս եկեղեցիներ և իրան բերած նշխարներն էլ ամփոփում է նրանց մէջը: Տըր-

դատը լսելով Լուսաւորչայ գալուստն, առաջ է գընում մինչև Բագաւան՝ իրան ընտանիքովն և զօրքովն: Այն տեղ, ամսօրեայ քարոզութիւնից յետոյ, Լուսաւորիչն Եփրատ գետի վերայ մկրտում է Հաւատացեալ Թագաւորին, նորա ընտանեացն և չորս միլիոնից աւելի մարդկերանց: Քրիստոնէութիւնն աւելի հաստատելու համար շինեցին շատ վանօրայք, պալոցներ՝ ուր սովորում էին Հայոց մանուկները և զարգանում էին քրիստոնէական հոգւով և նրանցից յառաջադէմներին ձեռնադրում էին եպիսկոպոս և ուրիշ պաշտօնեաներ Եկեղեցւոյ: Եպիսկոպոսների Թիւը միայն երկու Հարիւրի հասաւ, որոնցից անուանի էին՝ Ալբիանոս, Մովսէս, Ագապէս և այլն: Այնուհետև կաթողիկոսութեան պաշտօնը տուեցաւ Արիստակէսին. իսկ Սուրբն առանձնակեաց կեանք էր անցկացնում:

Տրդատ ու Լուսաւորիչը, որոնք արդէն լուսաւորել էին Քրիստոնէական լուսով Հայոց աշխարհը և մեծ ջատագով էին, լսելով Կոստանդիանոս կայսեր դարձը՝ ի Քրիստոնէութիւն, իրանց սրտի ուրախութիւնը յայտնեցին: Այսպէս մեր Լուսաւորիչը ճանաչուեցաւ ընդհանուր Կաթողիկոս ամեայն Հայոց: Մեկ քանի ժամանակից յետոյ Նիկիայումն եղաւ առաջին Տիեզերական ժողովն, ուր հրաւիրուեցաւ և մեր Սուրբ Գրիգորը, բայց սա յանձնառու չեղաւ և նորա տեղը գնաց նորա որդի Արիստակէսն: Արիստակէսի գարձից յետոյ Լուսաւորիչը չէր երևում մարդկանց և բոլորովին առանձնացել էր

Քանեայ այրումն, ուր մնաց մինչև 332 թիւը, երբ որ մեռաւ և Թագուհեցաւ Հովիւներից։ Սուրբ Տրդատն էլ Լուսաւորչի մահից յետոյ, այնտեղ առանձնացաւ, և երբ որ նախարարների կոչմամբը յանձն չառաւ կրկին Թագաւորութիւնն, ասում են՝ թէ Թունաւորուեցաւ 342 թուականին Քրիստոսի ծնունդից յետոյ։

Տրդատայ յաջորդների նկարագրութիւնը, նոցա յարաբերութիւնը դէպի նախարարները և հարևան երկու պետութիւնները։

Եթէ աչքներուս տակն առնունք այն բանը՝ թէ կրօնական հասկացողութիւնները մէկ ազգի կեանքի վերայ մեծ ներգործութիւն ունեն. այս բանս կարելի է ասել Հայոց ազգի համար, որ տեղ քրիստոնէութիւնը մտնելուց յետոյ Աստուածաշունչ դիրքը մեծ ներգործութիւն է գործում, ինչպէս մեր Թագաւորաց կառավարութեան վերայ, նոյնպէս էլ մեր ազգի քաղաքական կեանքի վերայ։

Թագաւորները չեն ունենում առաջուայ պատերազմական հոգին և ազգը կարծես մոռանալով Թագաւորին և Հայրենեացը՝ մէկ ուրիշ Թագաւորի և Հայրենեաց է մաղթում։ Գրեթէ Տրդատայ բոլոր յաջորդներն ոչ նորա քաջութիւնն ունէին և ոչ լուսաւորութիւնը, անդադար պատերազմներ էին լինում, առանց նրանց մասնակցութեան և նրանցից շատերը դեռ ունենալով իրանց մէջն արևելեան

պարթևական չար սովորութիւնները բազմակին էին և ներքինեաց դասերին էլ խաղալիկ։ Սրանից հետևում է այն բանը, որ Թագաւորաց հրամանը բաւականի զօրութիւն չունէր անձնասէր նախարարաց վերայ, որոնք արդէն վաղուց անկախ իշխանութիւն ունենալով, ամրանում էին իրանց նախարարութիւններումն և բերդերումն, որոնք երբեմն միմեանց հետ էին պատերազմում, երբեմն քսութեամբ միմեանց կործանման պատճառ էին լինում, երբեմն միաբանվում էին իրար հետ Թագաւորի դէմ և վերջապէս դարձանց ժամանակն երբեմն Պարսից կողմն էին լինում և երբեմն Յունաց։

Սրանից յայտնի է, որ իւրաքանչիւր Թագաւորի մեռնելուց յետոյ կրկնվում էր այն սոսկալի վտանգն, որ մէկ անգամ պէտք է կործանէր Արշակունեաց տան պայազատութիւնը՝ որ նախարարներից էր կախեալ։ Գողգեալ Թագաւորութեան միակ յոյսն և նեցուկը միայն եկեղեցին էր և նորա սուրբ և հաւատարիմ պաշտօնեայքն, եկեղեցին՝ որ հաւատարիմ մնալով իւր առաքելաւանդ, լուսաւորչական և ազգային աւանդութեանցը, խորշում էր Արևմուտքից իրրև անհաստատ քրիստոնեաներից, որոնք եկեղեցին անդադար դանազան վոխոխութեանց և նորոգութեանց տակ են ձգում, Արևելքից՝ իրրև անքրիստոնեաներից և մոխրապաշտներից, և որ իւր ախտացեալ ոչխարը լաւ էր համարում քան օտարի առողջ գազանը։ Տրդատից յետոյ նմանապէս փոխուեցաւ Հայոց աշխարհի քաղաքականութիւնն

երկու դրացի պետութիւնների հետ, որովհետև, մինչև այն ժամանակը, Հայերը երբեմն արևելեան կողմն էին և երբեմն արևմտեան, բայց աւելի արևելեան՝ իրրև ազգակից Պարթևների, այլ այնուհետև այնպէս չէր, խորշում էին արևելքից՝ իրրև անհաւատներից, և Պարթևաց ազգի թշնամիներից և մօտենում էին Բիւզանդիոյ տէրութեանը, իրրև քրիստոնեաների։ Տրդատի յաջորդներից շատերը խնամութիւն էին անում կայսերաց տան հետ և ազգը մինչև անգամ իրան մտաւոր կրթութիւնը քաղում էր արևմուտքից, Թէպէտ ամենամեծների, ինչպէս և Թագաւորների, ներքին կեանքն աւելի նման էր Պարսից, և մեր ազգը տուր և առութիւն ունէր նրանց հետ։ Այսպիսով Պարսիկները Սասանեաց Հարստութեան ժամանակին ոգևորուելով հին զրշադաշտական ուսումովն և նորա խաւարասէր պաշտօնեաներովն, ինչպէս էին՝ մոգպետները և մոգերը, զինուորվում էին Հայոց ազգութեան, նոցա լոյս կրօնի և Պարթևական Թագաւորներու դէմ. Թշնամիները Հաւասար չեն լինում։ Պարթևական Թագաւորութիւնը վերջանում է, երկիրը նուաճվում է, բայց կրօնին, առանց պատժվելու, չեն կարողանում ձեռք տալ։

Խոսրով բ. Սանատրուկ և Բակուր ապստամբեալները, մեկը Փայտակարան և մեւսն Աղձինք, Կոստանդիոս կայսեր մօտ Հրեշտակագնացութիւնը, Անտիոքայ գալուստը. չորս զօրավարութեան նորոգութիւնը. Մանաճիհրի եղեռնագործութիւնը, Սկիւթացւոց արշաւանքն, Օշականի ճակատը. Տերան բ. և նորա անհրաւութիւնները 343—364 Թուականը։

Տրդատայ մահից յետոյ մեր աշխարհը երկպառակութեան մէջ ընկաւ. Ընշակունեաց ցեղէն Սանատրուկն՝ որ սուրբ Թագաւորից Փայտակարանի և Աղուանից վերակացու էր կարգուած՝ Թագ կապեց Փայտակարան քաղաքումն, այսպէս արաւ Հարաւումն և Աղձնեաց Բակուր բդեշխը և երկուսն էլ յոյսերն դրել էին Պարսից վերայ, և այս այն պատճառաւ, որ մեր աշխարհը անգլուխ էր մնացել, և շատ նախարարութիւններ էլ, ինչպէս էին՝ Բզնունիք, Որդունիք և այլք միմեանց հետ անդադար արիւնահեղ կռիւներ և վէճեր էին անում։ Բացի այդ, Հեթանոսութեան ջերմ պաշտպաններն՝ ոտքի էին կանգնել և կամենում էին քրիստոնէութիւնն արմատախիլ առնել. այսպիսով Գրիգորիս Աղուանից կաթողիկոսն՝ որ ուղարկուած էր Հայոց Հայրապետից, այն տեղ սպանուեցաւ՝ Վատնեան դաշտումն՝ Կասպից ծովի մօտ և նորա Հայր Վրթանէսն, որ արդէն յաջորդել էր իրան Արիստակէս եղբօրը, մեծ նեղութիւններ կրեց մեհենաշատ Տարօն գաւառումն և Հազիւ Հազ կարողացաւ փախչել Թիլ աւանը,

ուր եղբօր դերեզմանի վերայ սկսեց ողբալ այս ամենայն թշուառութիւնները: Բայց կային և բարեմիտ նախարարներ էլ, որոնք հաւաքուելով երջանիկ Հայրապետի մօտ, խորհուրդ արին և ուղարկեցին Մար և Գագ, Ծոփայ և Հաշտենից իշխաններին, Կոստանդ կայսեր մօտ և խնդրեցին նրանից, ըստ Տրդատայ քաղաքական դաշանց, օգնել և թագաւորացնել Խոսրովին՝ որ թագաւորի որդին էր:

Կայսրը լսելով նոցա խնդիրը՝ իրան պալատի վերակացու Անտիոքոսին ուղարկում է Հայաստան լեգէոններով, նոյնպէս և թագաւորական ծիրանի և թագ. Խոսրովը պսակվում է և իրան հօր կարգած չորս զօրավարներին հաստատում է. Բագրատ Բագրատունին արևմտեան կողմը, Միհրան Գուգարաց բդեշխը հիւսիսայինն, Վահան Ամատունին արևելեան, իսկ Մանաճիհր Ռշտունին հարաւային: Այնուհետև Հռոմայեցւոց զօրավարը, Միհրանի հետ միասին, Հալածում է Սանատրուկին Փայտակարանից և Հարկը ժողովելով՝ գնում է կայսեր մօտ: Այն ինչ Մանաճիհրն էլ իրան գնդերով գնում է Բակուրի դէմ, սպանում է նրան և Պարսից դուրս է անում Հայաստանյեցը: Բայց եղեռնագործ զօրավարը չէ որոշում անմեղներին յանցաւորներից, ամենին էլ սրի բերան է տալիս և շատ անմեղ շինականների և եկեղեցականների դերութեան է մատնում: Յակովբ Մծբնայ Հայրապետն աղաչում է, բայց անագորոյն իշխանը նրան չէ անսում, ընդհակառակն բարկանալով հրամայում է նորա ուղթը

սարկաւագներին Աղթամարայ ծովը ձգել, Հայրապետը դաւը սրտով բարձրանում է մէկ բարձրաւանդակի վերայ, որ տեղից երևում է Ռշտունեաց բոլոր գաւառն, անիծում է նորա երկիրն, որ շուտով ամայի է դառնում: Այն միջոցներումը թագաւորն՝ որ թէպէտ իւր հօր քաջութիւնները չունէր, բայց նորա առաքինութիւններից զուրկ չէր և Մանաճիհրի եղեռնագործութեան վերայ զայրացել էր, պարապում էր հաւերի և էրէոց որսերով, տնկել է տալիս անտառներ, կանգնել տուեց Խոսրովակերտը՝ Ազատ գետի մօտ, և Դուին քաղաքն՝ ուր տեղափոխեց իրան բնակութիւնը:

Մինչ այս մինչ այն Անակը գրգռում է Շապուհ Բ. որ ոտքի է կանգնեցնում Հայոց վերայ հիւսիսական Մազկիւթներին՝ իրանց թագաւորի զօրավարութեամբը, նրանց առաջին խորտակվում է հիւսիսայինն գունդը, սպանվում է Միհրանը և թշնամիքն իրանց ասպատակութիւնը հասցնում են մինչև Վաղարշապատ: Խոսրովը սարսափելով գնում է Ծոփայ աշխարհն, այն ինչ Բագրատն և Վահանն իրանց արևելեան և արևմտեան գնդերովը վրայ են հասնում և յետ են քշում Մազկիւթներին դէպի Օշականու առասպարը՝ թաւիում են նրանց այն անձուկ ճանապարհն և սաստիկ ջարդում են, իսկ Վահանն իւր հզօր ձեռամբը սպանում է նոցա թագաւորին (Սանասարին): Քաջ զօրավարները գնալով Ծոփք՝ յաղթութեան աւետիս են տանում թագաւորին, որ Օշականը Վահանին է շնորհում, խոս-

խոռունեաց Գարջոյլ Մաղխազը կարդվում է Մհերանի տեղն և Խոսրովն լմանալով այս արշաւանքի պատճառն՝ յետ է կանգնում Պարսից Հարկ տալուց: Այսպիսով, եթէ մինչև Հիմայ Պարսիկները դաղտնի թշնամի էին, այնուհետև յայտնի թշնամի դարձան և սկսեցին արշաւել Հայոց վերայ. բայց Խոսրովը մեռնում է 352 թուին: Վրթանէսը նորա Տիրան որդու հետ գնաց Կոստանդնուպօլիս, և Արշաւիր Կամսարականը պէտք է Պարսից արշաւանքի առաջն առնէր մինչև նրանց վերադարձը:

Տիրանը՝ որ յաջորդում է հօրը 353 թուին, ունէր նորա մոլութիւնները՝ առանց նորա առաքինութեանց: Սա կամենում էր երկու դրացի պետութեանց հետ էլ խաղաղութեամբ վարուիլ, բայց իրան թագաւորութեան վերջին օրերումը վատացաւ Ձապուհ երկրորդի հետ, որովհետև Կոստանդիոսի յաջորդ Յուլիանոսը գալիս է Պարսից վերայ պատերազմ: Տիրանը նրան օգնութիւն է տալիս թէ Եփրատովն անցկենալու ժամանակն և թէ պատերազմի ժամանակը, (*) յաղթութիւնը Պարսից կողմն է լինում և Ձապուհը կարծիք չըտալով՝ թէ խմացել է

* Յուլիանոսը, երբև թշնամի քրիստոնէութեան, նրան պատկերը տալիս է Տիրանին կանգնեցնելու Հայոց եկեղեցիներումն: Վրթանէսի որդի Յուսիկ Հայրապետը յորդորում է Թագաւորին չընկատաբել այդ անիրաւութիւնը. Թագաւորը չէ լսում նորա խօսքին և սուրբ Հայրապետը խորտակում է այն պատկերը: Տիրանը

Տիրանի արարմունքները՝ կանչում է իւր մօտ, երեսովն է տալիս նորա ուխտազրուժութիւնն և կուրացնելով ուղարկում է Կուաշ աւանը 364 թուին:

Արշակ երկրորդ 364—382 թիւը.

Տիրանից յետոյ Ձապուհ երկրորդը կամենալով իւր ներդործութիւնը Հայոց վերայ զօրացնել քան թէ Յունացն, թագաւորացրեց նորա որդի Արշակ Բ: Եւ իրաւի Պարսից թագաւորի իրաւասութիւնն այնքան տարածուեցաւ Հայոց նախարարների վերայ էլ, որ մինչև անգամ Վահան Ամատունւոյ տեղը կարգեց արևելեան զօրաց վերայ՝ իրան սիրելի Վաղենակ Սիւնեցուն: Այսպիսով Հայոց թագաւորը ճանաչում էր միայն Պարսից ինքնակալին, այն ինչ Վաղենտինիանոս կայսրն Արշակի մխոը բերեց իրանց ա-

Հրամայում է բռնաճեռ առնել Հայրապետին մինչև վերջին շունչը: Այսպէս վարուեց չար և անիրաւ թագաւորն և Դանիէլ Ծերունւոյ հետ, որ աշակերտ լինելով Լուսաւորչի, նստում է Յուսկան տեղը և նզովում է չար թագաւորին իրան անիրաւութեան համար: Զօրայ Ուշտունին, որ Հայոց օգնական զօրքի զօրավարն էր Յուլիանոսի մօտ, լսելով Տիրանի անկարգութիւնը և Յուլիանոսի ուրացութիւնը, իրան զօրքով գնում է Տմորիք: Յուլիանոսը խմաց է անում Տիրանին և սա իւր մօտ կանչելով բարեպաշտ Ուշտունուն, սպանել է տալիս և նորա տեղը կարգում է Սաղամուտ անզգայ եղբանին:

ռաջուայ դաշն և պահանջում էր սովորական հարկը: Հայոց Թագաւորն անպատուութեամբ յետ է դարձնում նորա դեսպաններին: Հռովմայեցւոց կայսրը սպանել է տալիս Թագաւորի եղբօր որդի Տրդատին, որ Տիրան երկրորդի ժամանակներից պատանդ էր Կոստանդնուպօլսում, և Թէոդոս զօրավարի առաջնորդութեամբը զօրք է ուղարկում Հայոց վերայ: Թագաւորն ուշ է լմանում իրան տկարութիւնը և Յունիկի Թոռան՝ Մեծն Ներսէս կաթողիկոսին միջնորդ է ձգում հաշտութեան և խոստանում է սովորական հարկը տալ: Կայսրը զիջանում է իւր բարկութիւնից, Տրդատայ որդի Գնէլին հիւպատոսութեան պատիւ է շնորհում և սերտ բարեկամութեան համար իրան ազգական Ողիմպիադային կին է ուղարկում Արշակին: Այնուհետև անխոհեմ Թագաւորը, ըստ իւր անկենցաղագիտութեան և անպիտան կրքից, ընկնում է դեղխութեան մէջ և վարում է անկարգ կեանք. շրջապատած լինելով վարձկաններից, արհամարհում է Պարսից և այսպիսով նոր պատճառ է տալիս Պարսից աւերելու Հայաստանը, ինչպէս առաջ Յունաց, և փոխանակ իրան ոյժը զօրացնելու, ինչպէս ինքն կամենում էր, անմտութեամբ սպանում է Հօրեզբօր որդի Գնէլին՝ Տիրիթի և Վարդան Մամիկոնեան զինակրի ղրդռելովը: Սասանական Թագաւորը հիւսիսականաց կռիւը վերջացնելով՝ մխեն է բերում Արշակայ արհամարհութիւնը և կամենում է վրէժխնդիր լինել. Թագաւորն արդէն զայրացրել էր շատերին իրան անիրաւութեամբը, զգում է իրան տկարութիւնը և իրան սիրելի Տիրիթին և Վարդան Մամիկոնեանին է միջնորդ ձգում: Զապուհն ընդունում է, բայց օգնութիւն է ուզում ընդդէմ Յունաց, որ և կատարվում է: Մինչև որ այս այսպէս էր լինում, Արշակը կրկին անգամ սկսում է նեղացնել նախարարներին, հիմն է ձգում Արշակաւան քաղաքի, որ շուտով լցվում է նորա հրամանաւը զանազան պարտապան և յանցաւոր մարդկերանցով: Իշխանները բողոքում են, բայց Թագաւորն և ոչ Մեծն Ներսէսի խօսքին է լսում, որ իրան վերադառնալուց յետոյ Յունաստանից, արդէն զբաղուած էր զանազան զբաղմունքներով և այս ողորմելի ժամանակը կարծես միակ մխիթարութիւն էր Հայաստանի:

Մինչ այս մինչ այն Զապուհը վերադառնում է Յունաց պատերազմիցն և արդէն սկսել էր պաշարել Տիգրանակերտն, (որովհետև իրան դնալու ժամանակը պաշար չէր տուել), նախարարները բողոքում են իրանց Թագաւորի արարմունքից և Սասանական Թագաւորը նախարարներին մէկ քանի դունդ զօրք օգնութիւն է ուղարկում: Անճարացեալ Թագաւորը վախչում է Վրաստան, Արշակաւանի բնակիչները սրի ճարակ են լինում, բացի կաթնասուն մանուկներից: Անի ամրոցն առնվում է բարբարոս Պարսիկներից և Արշակունի Թագաւորաց ոսկորները տեղահան են լինում: Այսպիսով անտէր աշխարհն աւերվում է հիւսիսումն, այն ինչ Հարաւումը Զապուհն առնում է Տիգրանակերտը յոյն գե-

ըելոց ձեռնտուըթեամբն, և գնում է մեծ աւարաւ Պարսկաստան, Հայաստանը իւր զինուորաց բռնութեանը թողնելով: Այլ բաւական չէր, Արշակն էլ ելևւում է վրաց օգնականութեամբն և նախարարքը Ներսէհ Կամսարականի առաջնորդութեամբն երկու տարի ժամանակ ընդդիմանում են Թագաւորին և երկու տարի աստիկ կոտորած է լինում, Թագաւորը նեղ տեղն է ընկնում. Հայաստանը դողում է իբան որդոց սրերի տակին, Պարսիկներն աւերում են աբևելքից և Վաղէսի զօրքերը Թէոդորոսի առաջնորդութեամբը քայլ առ քայլ մօտենում են, որովհետև անխոհեմ Թագաւորն օգնութիւն էր տուել Զապուհին ընդդէմ Յունաց: Արշակը շուարում է և Մեծ Ներսէսը նորա և նախարարաց մէջը խաղաղութիւն է ձգում՝ ուխտ դնելով. «Յայսմ հետէ Թագաւորն վարեսցի ուղղութեամբ և նախարարքն ծառայեսցեն միամտութեամբ»: Այլ այն ինչ Սուրբ Հայրապետը Պապայ հետ գնում է Կոստանդնուպոլիս՝ կայսեր բարկութիւնը դիջուցանելու և աքսորվում է մէկ անմարդաբնակ կղզի, Թագաւորը կրկին անգամ պարապ ժամ գտնելով առ ոտն է հարկանում ուխտը, վրէժխնդիր է լինում նախարարներից և Կամսարականաց ցեղը բոլորովին ջնջել է տալիս, բացի Սպանդարատն, որ փախչում է Յունաստան. հրամայում է անթաղ Թողնել նրանց դիակներն և երկերն յարքունիս դրաւել. շինականները Թագաւորի հրամանաւն իրանց տէրերի ինչքը բերում են Արմաւիր:

Այս միջոցին նախարարներից շատերը փախչում են Զապուհի մօտ, յարգվում են նրանից և Ալանողան Պահլաւի առաջնորդութեամբը մտնում են Հայաստան: Թագաւորն անմտութեամբ արշաւում էր Դամարաց երկիրն՝ իբրև վրէժխնդիր Ներսէսի աքսորանաց, բայց երկու կրակի մէջն է ընկնում ու աւելի լաւ է համարում կամայ երթալ Տիզբոնի դուռը: Զապուհը սրանով էլ չբաւականացաւ, բոլոր նախարարների կանանցն և Թագուհի Փառանձեմին էլ է պահանջում, նախարարները չեն կատարում նորա պահանջը, կոտորում են Պարսից զօրութիւնը և իւրաքանչիւր ոք, ըստ իւրեանց սովորութեան, ամրանում են իրանց ամրոցներումը: Բայց արդէն նրբանցից շատերը խաբուել էին աշխարհալին փառքերից և ընդունել էին Պարսից աղանդն, այսպէս էր ուրացեալ Մեհրուժան Արծրունին և ուրիշներն, որոնք Պարսից Թագաւորի հրամանաւը կրկին անգամ մտնում են Հայաստան. սուրն ու հուրը կրկին անգամ տարածվում է ամենայն տեղ և Արտագերս ամրոցն, ուր ամրացել էր Փառանձեմը՝ Թագաւորական գանձովը պաշարվում է. Պապը շատ հեռու էր՝ որ մօր ձայնը և աղաչանքը լսել էր. բերդն առնվում է և Թագուհին միւս գերելոց հետ սպանվում է Սորեստանումն: Արշակն, որ իւր անխոհեմութեամբն այսքան չարեաց և աւերմանց պատճառ էր, անձնասպան է լինում Անուշ բերդումը Խուժաստանի:

Գաղ 382—388 թթ.։

Արշակի մահից յետոյ ուրացեալ Մեհրուժանը Զապուհի Որմզդուխտ քրոջ վերայ ամուսնանալով նոր զօրութեամբ մտնում է Հայաստան։ Հայաստանը անթագաւոր էր և չար իշխանը կամենում է այն տեղ քրիստոնէութիւնը ոչնչացնել և հաստատել մոխրապաշտութեան աղանդը, որ ինքն ընդունել էր, և ապա գրաւել Արշակունեաց թագն՝ իւր անեծքով օգնականութեամբ, այս էր և Տիզբոնի դրան քաղաքականութիւնը։ Մեհրուժանը եպիսկոպոսներին և արժանաւոր հոգևորականներին աքսորում է, զանազան պատճառաւ, Պարսկաստան, այրում է Յունաց և Ասորոց աթթաթայիք գրեալ սրբազան գրքերն, և արգելում է միանգամայն Հայերին հաղորդութիւն ունենալ քրիստոնեայ ազգաց հետ։ Այսուամենայնիւ նախարարներից շատերը վախչում են Յունաստան, և Ներսէս Կաթողիկոսն, որ արդէն Թէոդոս կայսեր Հրամանաւը դարձել էր աքսորանքից՝ մաշվում էր հոգուվ այս ամենը լսելով. խնդրում է ուղղափառ կայսրից՝ զէթ արևելեան քրիստոնէութիւնը պահպանելու համար, ձեռնտու լինել տառապեալ Հայաստանին։ Բարեպաշտ կայսրը թագաւորացնում է Արշակի որդի Պապին և մեկ քանի լեգէոններ է տալիս Տերենտիանոս զօրավարի առաջնորդութեամբ։ Հայրապետն և փախստական նախարարներն ուղեկից են լինում նորընտիր թագաւորին։ Մինչ այս մինչ այն Մեհրուժանը վախչում է

Զապուհի մօտ, որ հրամայում է իւր մերձակայ հրպատակ ազգերին օգնութիւն գալ ուրացեալ իշխանին. իսկ կայսրն Պապի մօտ Ադդէ կոմսին է ուղարկում նոր գունդերով։ Այսպէս մեծ պատրաստութեամբ նա մտնում է Հայաստան և մեկ քանի փոքր ճակատներից յետոյ՝ երկու կողմի զօրքերը հանդիպում են միմեանց Նպատ լերան Ձիրաւ դաշտումն. առաւօտ էր և արեգական ճառագայթները մեծ վնաս էին պատճառում քրիստոնեայ զինուորացը. Հայոց Մովսէսը բարձրանում է լերան վերայ, բարձրացնում է իւր բազուկները դէպի երկինքը և աղօթում, մեկ ամպ յանկարծակի ծածկեց արեգակը և պատերազմն ուրիշ կերպարանք ստացաւ։ Սպանդարատ Կամսարականը սպանում է Վեկաց Զէրգիր թագաւորին, Աղուանից Ուռնայրը վիրաւորվում է Վասակ Մամիկոնեանի Մուշեղ քաջ որդուցն, այնուհետև յաղթութեան փառքն անց է կենում քրիստոնէութեան ջատագովների կողմն և ուրացեալ Մեհրուժանը ճարակտուր փախչում է։ Սմբատ Բագրատունի սպասեն, որ արգէն մեծ ճակատից առաջ դարան էր մտել, բռնում է նրան (Մեհրուժանին) Գագայովտի շամբուտի մօտ և կեծացած շամփուրը պսակաձև բոլորած գլխին է դնում ասելով. «Պսակեմ զքեզ, ով Մեհրուժան, քանզի ՚ի խնդիր էիր թագաւորել Հայոց, և ինձ, զի սպասես եմ, պարտ է պսակել ըստ սովորական հայրենի իշխանութեանս իմում»։

Հայաստանը այսպիսով ազատուեցաւ այն ար-

հաւլրքիցը՝ Զրադաշտական ուսման, որ նախադուշակ էր գալոց կրօնական սուրբ պատերազմի։ Ուր աշխարհը խաղաղանում է և սուրբ Հայրապետը ժողովելով նախարարաց և Թագաւորին՝ Արշակայ ժամանակայ ուխտը նորոգում է և Պապը յետ է տալիս նախարարներին նոցա յարքունիս գրաւած կալուածները։ Բայց կարճ ժամանակից յետոյ Թագաւորն ոտքի տակ է առնում իւր ուխտը. և կաթողիկոսը նախատում է նրան և այս պատճառաւ գաղտնի Թունաւորվում է երախտամոռ Թագաւորից։ Կենցաղագէտ Հայրապետն՝ որ պարզ լուսով էր տեսնում Հայաստանի խեղճ դրութիւնը, մահից առաջ դուշակում է Արշակունեաց պայազատութեան անկումը։ Թագաւորն, որոյ դիտաւորութիւնն այն էր, որ Յունաց ներդործութիւնից ազատուի, այնուհետև կաթողիկոսացնում է Զահակին, հալածում է յոյն դօրավարներին և գլուխ է քաշում կայսրից. Թէոդոս կայսրը Տերենտիանոսին նոր դօրքով ուղարկում է Հայաստան։ Պապը բռնվում է և գլխատվում Կոստանդնուպօլսում։

Վաղագաս 391—394 Թիւք։

Պապի մահից յետոյ Թէոդոսը Թագաւորացնում է Հայոց վերայ մէկ արշակունի Վարազդատ անունով պատանուն, որ արդէն իրան յաջողակութեամբն և անձնական ուժովը սիրելի էր Բիւզանդացւոց կայսեր, բայց մանուկ Թագաւորը գալով Հայաստան միտքը փոխում է. հրաժարում է իրան մօտիցն և հեռացնում խորհուրդատուութիւնից երևելի և անուանի նախարարներին. իրան անկենցաղագիտութեամբը, մինչև անգամ, դեսպանական կապակցութիւն է առնում Տիզբոնի դրան հետ։ Կայսրն լսանալով այս ամենը՝ կանչում է նրան Կոստանդնուպօլիս։ Վարազդատը, որ կարծում էր Թէ իրան դիտաւորութիւնը խուլ է կայսրիցը, գնում է այն տեղ և խափն աքսորվում է Թուլիս կղզին։

Արշակ եբրորդ, Վաղարշակ երկրորդ, Խոսրով եբրորդ 394—399 Թիւք։

Թէոդոս կայսրը մտածելով՝ եթէ երկու Թագաւոր լինի ապստամբութիւնը հեշտութեամբ չի գլուխ գալ, այս պատճառաւ Պապի Արշակ և Վաղարշակ երկու որդոցն է Թագաւորացնում, որոնք իրրև պատանդ արդէն Պապի գալու ժամանակը կայսերական քաղաքումն էին մնացել։ Երկու Թագաւորները հալածում են Պարսից, որոնք արդէն մտել էին Հայաստան։ Արշակը տիրում է արևելեան

Հայաստանին և բնակվում է Այրարատումն, այն ինչ Վաղարշակն՝ արևմտեան Հայաստանին և Եկեղեաց գաւառի Երիզայ քաղաքումն է նստում: Ամենայն ինչ կատարեալ է. առաջին և ծանր Հարուածը դիպաւ Արշակունեաց Հարստութեանը: Թէոդոս մեծը մեռնում է, Հռովմէական կայսերութիւնը բաժանվում է և կրօնական վէճերն արևելեան կայսերութեան քաղաքականութիւնն է դառնում: Ջրադաշտական ուսումն արդէն վաղուց էր զինուորուել քրիստոնէութեան դէմ: Հայոց ազգն իւր թուլութիւնն և կործանումն աչօք տեսնելով՝ իրան ազգութիւնը պահպանելու համար պէտք է հաստատ մնար իրան կրօնին և ազգային աւանդութեանցն, որոնք միակ յոյսն էին և են նորա փրկութեան:

Հայաստանը՝ որ իւր աշխարհագրական դրութեամբը, քաղաքական և կրօնական հանգամանքներովն՝ երկու ոսոխ և միմեանց հակառակ պետութեանց մէջ խաղալիք էր կռիւների պատճառաւ, Վաղարշակի մահից յետոյ բաժանվում է Արկադէոս կայսեր և Զապուհ Բ. մէջ: Արշակ Գ. չէ կամենում հեթանոս թագաւորի ձեռքի տակը մնալ, Այրարատից գնում է Յունաց մասը. նախարարներից շատերը նորա հետ են գնում: Սասանական թագաւորը լաւ է համարում, նախարարներին յետ դարձնելու համար, խոսրով Գ. Արշակունուն թագաւորացնել իրան մանուսմը և յայտնել, որ վախած նախարարների կալուածքն յարքունիս կ'գրաւվին, եթէ նոքա յետ չեն դառնալ: Արշակ Գ. արդէն իրան անխոհեմութեամբը նախարարներից շատերին զայրացրել էր և ոմանց քսու խօսքերին լսելով՝ քաջ Սմբատ Բագրատունուն հեռացրել էր իրան մօտից. Սուրէն Խոռխոռունին, Վահան Առաւեղեան և Աշխադար Փիմաքսեան նախարարները նորա օրինակին են հետևում, հեռանում են թագաւորից տանելով իրանց հետ և նորա գանձերը: Արևմտեան վիրաւորեալ թագաւորը պահանջում է իրան գանձը. բայց խոսրովը չէ լսում նորա խօսքերին: Այսպիսով երկու համազգի թագաւորներն և զինուորները մեծ պատրաստութեամբ հանդիպում են միմեանց Վանանդայ երևելի դաշտումն, որ Տիգրանի և Բիւզանդիոյ դրութներին նոր ուրախութեան պատճառ պէտք է լինէր: Արշակը յաղթվում է, դառնում է վիրաւորեալ սրտիւ Եկեղեաց գաւառն և այնտեղ շուտով մեռնում է: Բիւզանդիոյ դուռն առժամանակ իրան մասումը թագաւոր չէ կարգում և կառավարում է այն Յոյն կոմսերի ձեռքով:

Խոսրով Գ. միայն թագաւորում է երկու բաժնի վերայ մինչև 400 թիւը:

Արշակի մահից յետոյ Հայոց նախարարները որոնք գտնվում էին Յունաց բաժնումն, չը կամենալով առանց Արշակունի թագաւորի մնալ, միաՀաւան նամակ ուղարկեցին Այրարատայ թագաւորի մօտ, որով յայտնում էին նրան իրանց ցանկութիւնը՝ դալ Պարսից բաժինը, միայն այն պայմանաւ, որ

անցեալ բաները մոռացուին, իրանց առաջուայ կալուածները ստանան և խոսրովը խոստանայ պաշտպանել յոյն կալուածականների դէմ այն նախարարների իրաւունքն, որոնք Յունաց բաժնումը կալուածներ ունէին։

Թագաւորի և նախարարների մէջ հաստատուեցան պայմաններն, եկան և նախարարներն, տրուեցան նոցա իրանց կալուածներն. իսկ Գազաւոն կամ Սարակոն, որ նրանց առաջնորդն էր և Յունաց բաժնումը նախարարների պատուելի՝ դրուեցաւ Արշակունի։ Միայն Սամէլ Մամիկոնեանը չհետևեց նրանց, այլ գնաց կայսեր մօտ և իրաց եղելութիւնը հասկացրեց նրան։ Խոսրովը կամենալով և Յունաց բաժնի Հայաստանը իրան ձեռքի տակն առնուլ, խմացնում է կայսեր, որ նախարարների միտքն արդէն լաւ հասկացած լինելով՝ համաձայնուեցաւ և խոսրովը բոլոր Հայաստանի թագաւոր եղաւ, հարկ տալով միայն դրացի երկու պետութիւններին, բայց իրան դրութիւնը լաւ չճանաչելով՝ իրան կոթծանման պատճառ եղաւ, որովհետև առանց Տիզբոնի դրան զիտութեան կաթողիկոսացնում է Մեծն Ներսէսի Սահակ որդուն։ Զապուհը յանդիմանում է խոսրովին, բայց նա արհամարհօք է պատասխանում։ Հայոց թագաւորը յոյսը դնում է Յունաց կայսեր վերայ, բայց սխալվում է, որովհետև նա էլ արդէն վաղուց դայլացել էր նրանից։ Զապուհի որդի Արտաշիրը մտնում է Հայաստան մեծ զօրութեամբ. թագաւորը շուարվում է և ակամայ կամօք Արտաշրի ձեռքն է ընկնում։ Այնուհետև

ոչ միայն խոսրովն է զրկվում թագաւորութիւնից, այլ նորա կարգած նախարարներն էլ իրանց ունեցած պատուիցը զրկվում են։ Խոսրով Գ. Գազաւոն Կամսարականի հետ կապուած տանվում է Տիզբոն։ Զաւարշ Գազաւոնի եղբայրն և Գարբիւ Ամատունին 700 հոգով կամենում են ազատել նրանց ճանապարհումը, բայց առաջինը մեռնում է և երկրորդը բռնուելով մորթվում է։

Վռամշապուհ 401—421 թիւը։

Արտաշիրը խոսրովի տեղը նստացնում է նորա եղբայր Վռամշապուհին, որ իրան խոհեմ կառավարութեամբը մեր աշխարհի համար շատ բարեաց պատճառ և առիթ եղաւ։ Սորա ժամանակները չէին լինում այն խռովութիւնները, որոնք երևում էին, ինչպես վերևը տեսանք, թագաւորների և նախարարների մէջ և որոնք մեծ վնասուց պատճառ էին լինում։ Եւ արդարև Հայաստանի ապագայ վիճակը մեծ հարկաւորութիւն ունէր այս խաղաղութեան համար։ Հայաստանի դժուար դրութիւնը վեր էր կացնում իրան Սամուէլներին և Երեմիաներին, որոնք հեռատես աչօք տեսնում էին Հայոց թագաւորութեան անհաստատութիւնը և շատ հանգամանքներ այս բանիս վկայութիւն էին տալիս։ Ի վերայ այսր ամենայնի Հայոց ժողովուրդն իրան ազգութեան և խղճմտանքի համար մեծ պատերազմներ պէտք է մղել էր։ Ունէր իւր անկախ հովուա-

պետն ու եկեղեցին, բայց եկեղեցւոյ վարդապետներն և սուրբ Գրիգորը՝ պակաս էին թողել ազգային նշանագիրները-Հնարելը, որոնցով ժողովուրդը պէտք է ամբանար իւր կրօնի, ուսման և լեզուի կրթութեան մէջ։ Ահա այս էր թողել Նախախնամութիւնը Վռամշապհոյ Թագաւորութեանը։ Թագաւորը խոհեմութեամբ վարուելով երկու դրացի պետութեանց հետ և մինչև անգամ նրանց մէջ Միջագետքումը ծագած խռովութեանց ժամանակ միջնորդ և հաշտարար լինելով, իւր ուշքը դարձնում է մեր աշխարհի բարեբախտութեան վերայ, աջակից ունենալով Սահակ կաթողիկոսին՝ որ կրկին անգամ կաթողիկոսացաւ Արտաշրի կամօքն, որ հօրը յաջորդել էր, և մեծ Թաբունեն կամ Պաշտոցին։ Սահակ Պարթևն՝ որ Խոսրով Գ. ժամանակները կամենում էր իրան վեհապետ Համազասպ Մամիկոնեանին սպարապետութեան հասցնել, բայց որ ակն էր ածում Գազաւոնից, հիմայ խնդրում է նոյնը Վռամշապհուհից։ Ընջահայեաց Թագաւորը չէ կամենում ինքն անձամբ անձին կատարել այս առաջարկութիւնն, ուղարկում է սուրբ Հայրապետին Սասանական դուռը, որ կատարում է եպիսկոպոսի ցանկութիւնը և թողութիւն է շնորհում Կամսարականաց և Ամատունեաց տոհմերին յանձնելով Վռամշապհուհին յետ դարձնել նրանց յարքունիս գրաւած կալուածները։

Մեսրովբն՝ որ Հայեկաց Տարօնի գիւղից էր, որ և վարժուած էր Հայրենի դպրութեամբ և աշակերտած Մեծին Ներսէսի, Արշակ Գ. ժամանակն

արքունի ատենադպիր էր, Խոսրովի ժամանակը թողնում է այն պաշտօնը և իրան անձն տալիս է մխայնակեցութեան։ Վանական դպրութեամբ կրթուելուց յետոյ՝ ճանապարհորդութիւն է անում Թողթան գաւառն, ուր դեռ Հեթանոսութեան խրմորը մնացել էր, Սիւնիք, Վրաստան և Աղուանից աշխարհներն աւելի արծարծելու նոցա մէջ քրիստոնէութիւնը։ Վռամշապուհ խաղաղասէր Թագաւորի ժամանակը Հայոց նշանագիրներն են գտնվում, կանգնվում են դպրոցներ, ուր Հայ պատանեակները սկսում են Հայ դպրութիւնը առաջ տանել։ Այնուհետև թարգմանվում են Աստուածաշունչ գիրքը, որ մինչև այն ժամանակը Յունաց և Ասորոց լեզուաւ էին կարդում Հայոց եկեղեցիներումը թարգմանիչ վարդապետաց ձեռամբն։ Այսպիսով մեր աշխարհը խոհեմ և հանգարտ Վռամշապուհի ժամանակը հոգի է առնում և մեծ փոփոխութիւններ է տեսնում իրան մէջ քաղաքական և կրօնական առաջնորդների ձեռնտուութեամբը։

Խոսրով գ. մնաս անգամ Թագաւորում է և յետոյ Շապուհ Յազկերտի որդին մինչև 427 Թիւը։

Վռամշապուհը մեռնում է 421 Թուին և Խոսրով Գ. որ Անոյշ բերդի կապանքներից ազատուել էր Հայոց խնդրքովը՝ կրկին Թագաւորում է Հայոց վերայ. բայց մէկ տարուց յետոյ մեռնում է. այնուհետև Պարսից Յազկերտ առաջին Թագաւորը կամե-

նալով Հայոց դարձնել արևապաշտութիւն՝ ուղարկում է իրան Զապուհ որդուն՝ փոխանակ մէկ Արշակունի թագաւոր կարգելու Հայոց վրայ։ Թէպէտ մեր ազգն այն ժամանակը միտք ունէր այն բռնութեանը դէմ կենալ, բայց որովհետև Համազասպ Մամիկոնեանը մեռած էր և մէկ հաւատարիմ առաջնորդ չկար, այն պատճառաւ էլ արքայորդի Զապուհը դիւրութեամբ մտաւ Հայաստան, այսուամենայնիւ նա չկարողացաւ հաճել նախարարների միտքն, որովհետև օրինաց և կրօնից հաւատարմութիւն չկար՝ ինչպէս իրանց ժամանակն. նոյնպէս Համազգի Արշակունի թագաւորների ժամանակն, և չէր ընդունվում իբրև հարազատ թագաւոր։ Այս պատճառաւ Զապուհը լսելով իւր հօր մահը՝ գնում է Տիզբոն և հրաման է տալի մնացեալ զօրապետներին Պարսկաստան տանել, բայց բոլորովին ընդհակառակն է լինում, ինքն սպանվում է Տիզբոնում և հօր տեղը նստում է Վռամ Ե. այն ինչ Հայոց նախարարները զօրք ժողովելով ներսէս ձիճրանեցւոյ առաջնորդութեամբը հալածում են Պարոից

ԱՐՏԱՀԻՍ Գ. 427—433 ԹԻԻՔ.

Արշակունեաց թագաւորութեան և Լուսաւորչայ տան Հայրապետութեան վերջը։

Յազկերտի յաջորդ Վռամ Ե. նոր զօրք է ուղարկում Հայաստան, ուր նախարարներն իրանց առաջնորդ ամրոցներումն ամրանալով շատ վնաս էին հասցնում Պարսից զօրքերին. թէպէտ և մեր աշխարհն աւերվում էր, անտէր մնալով երեք կամ չորս տարի։ Վերջապէս Արեաց թագաւորը տեսնելով թէ առանց նախարարների կամաց չէ կարող տիրել Հայաստանին և թէ ոչինչ օգուտ չկայ այնպիսի անշահ պատերազմներից, Մմբատ Բագրատունւոյ ձեռամբը խաղաղութիւն ձգեց։ Համայնքնուեցան նախարարներն, որոց ժողովել էր Սահակ Հայրապետը և իրանց միջից Սմբատին և Վարդան Մամիկոնեանին ուղարկեցին Տիզբոնի դուռը։ Ընդունեց Վռամ Ե. նոցա առաջարկութիւնը և Վռամշապուհի տան և ութ ամեայ որդի Արտաշէսին թագաւոր ճանաչեցին։ Կրկին անգամ հոգի է առնում Հայաստանը, Սահակը և Մեսրովբը կրկին անգամ միջոց են գրտնում Հայաստանը ծաղկեցնելու, Հայաստանի բազմաթիւ ուսումնարաններից աշակերտներ են ուղարկում Բիւզանդիոն, Աղէքսանդրիա, Աթէնք և այլ լուսաւորեալ քաղաքներ. արծարծվում է ազգի մէջ քրիստոնէական կրթութիւնը։ Բայց հասել էր այն ժամանակին, երբ որ Հայաստանը պէտք է կորցրել էր իրան անկախութիւնը, հասել էր այն ժամանակը, երբ որ արևելեան քրիստոնէութիւնը մէկ անօգնական ազգի ձեռամբ պէտք է իրան վսեմութիւնը ցոյց տար։ Մանուկ թագաւորի զեղխ բարքը զայրացրին նախարարներին։ Հայոց եկեղեցւոյ աւանդապահ և կենցաղագէտ եպիսկոպոսապետն՝ որ պարզ լուսով էր տեսնում մօտակայ սպառնալիքները՝ ըզ-

գաստացնում է Թագաւորին և աշխատում է համոզել նախարարներին: Ամենայն բան էլ ի զուր էր, անխոհեմ մեծամեծները, որոնք երբ որ Թշնամիները մտնում էին Հայաստան, բաժանվում էին միմեանցից և ամենայն ոք ամրանում է էր իրան դղեակումը, հիմա էլ միաբանվում են և միահաւան խնդրում են Պարսից Թագաւորից դատել և հրաժարեցնել իրանց միջից իրանց Թագաւորին և նորա տեղը պարսիկ մարզպան կարգել: Հայոց եկեղեցւոյ արժանաւոր աւանդապահ և ջատագով Սահակ Պարթևը չէ համաձայնում նոցա խօսքին, «Ինձ քաւ լեցի, ասում էր նա, մատնել զայլոյ ոչխար և ոչ պահել զհիւանդացեալն կամ զբժշկեալըն, այլ զահաւէժ առնել.., Ջխարդ լինիցի այդ, ասում էր, վտխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեծ պատուհաս»: Նախարարները այս բանս խաբեբայութիւն են համարում և կարծում են՝ Թէ Հայրապետի ջանքն այն է, որ Թագաւորին ժամանակ տայ նոցա վրէժն առնելու, այս պատճառաւ խորհուրդ են անում, որ Թագաւորութեան հետ վերջացնեն և Լուսաւորչայ տան Հայրապետութեան իրաւունքը: Գնացին Վռամի մօտ Արծկէացի Սուրմակ քահանայի հետ, չարախօսեցին Թագաւորից, իբր Թէ նա միացել է Հռոմայեցւոց հետ և կամենում է ապստամբել Արեաց Թագաւորից: Կոչվում են Տիզբոնի դուռը՝ Արտաշէս Թագաւորն և Հայրապետը. քննութիւն է բացվում առանց ունկն մատուցանելոյ մե-

ղադրեալների խօսքին: Ջնջվում է Հայոց Թագաւորութիւնը, իսկ աշխարհն պառնում է Պարսից մարզպանութիւն՝ որ Վռամը վաղուց ի սրտէ էր ցանկանում, իսկ եպիսկոպոսապետութիւնն ընկնում է անարժան Սուրմակի ձեռքը: Այսպիսով վերջանում է Արշակունեաց Թագաւորութիւնը և Հայրապետի տան եպիսկոպոսապետութիւնն, որոյ անդամներն իրաւամբ ժառանգեցին մեծ անուն, Հայրենեաց և եկեղեցուն մեծ ծառայութիւններ մատուցանելով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ

ԸՆԱՋԻՆ ԿԻՍԻ ՀԱՅՅՑ ԱԶԽԱՐՀԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ։

Սասանական պետութեան նպատակներն, որ ունէր երկու հարիւր տարիի չափ, կատարուեցան ինքնագլխութիւն սիրող նախարարների ձեռնտուութեամբ. նախարարների եմ ասում, որոնք արդէն վաղուց էին աշխատում դուրս գալ Արշակունեաց տան բարձրագոյն իրաւասութիւնից։

Արշակունի թագաւորների տեղը գալիս են Պարսից մարզպաններն, որոնք Պարսից թագաւորի անունամբ գլխաւոր վերատեսչութիւն են կատարում մեր աշխարհի վերայ, և հարկ ժողովելով ուղարկում են Պարսկաստան։ Հայոց եկեղեցին՝ որն որ իւր մէջ ամփոփում էր Հայոց բարոյական կեանքն, այդ մասին ընդդիմութիւն է ցոյց տալի։ Տիզբոնի դուռը կամենում է քայքայել այդ եկեղեցին, որ այդքան ընդդիմանում էր իրան նպատակներին, և զանազան հանդամանքներն, յիրաւի, նորա մտաւրութեան յաջողութիւն էին խոստանում։ Կային Հայաստանում

այնպիսի իշխաններ, որոնք Արշակունեաց թագն աչքի առաջին ունենալով՝ պատրաստ էին յանձն առնուլ ամենակերպ կեղտոտութիւններ և անբրաւութիւններ։ Հռոմայեցւոց կայսերութիւնը չունէր իրան առաջուայ զօրութիւնը, բաժանուել էր երկու մասն և արևելեան կայսերութիւնը մոռանալով միանգամայն իրան զինուորական վառքն և պարտականութիւնը՝ որ ունէր դէպի արևելեան քրիստոնէութիւնը, ընկել էր կրօնական վէճերի մէջ և նորա քաղաքականութիւնը բաղկացել էր ներքին կրօնական վէճերից։ Անկարգութիւնը վերջին աստիճանին հասցնելու համար, արդէն սկսվել էին ազգայ անուանեալ մեծ արշաւանքներն, որոնք գրաւել էին արևելեան կայսերութեան բոլոր զինուորական զօրութիւնը։ Ի՞ հարկ է իրաց հանդամանաց որպիսութիւնն այսպէս լինելով՝ Սասանական այժը թագաւորող էր արևելքումը։ Սասանական պետութիւնը չբաւականացաւ սորանով, նա կամենում էր իրան ջրագաշտական ուսումն ևս թագաւորացնել արևելքումն։ Արևելեան քրիստոնէից մայր Համարվում էր Հայոց եկեղեցին. Աղուանք, Վրաց աշխարհը, մասամբ Ասորոց՝ Հայոց եկեղեցւոյ ծնունդք էին։ Սասանական բռնութիւնը միանգամայն ընկնում է Հայոց եկեղեցւոյ վերայ, բայց Հայոց եկեղեցին և կրօնը այնպիսի խախուտ հիմք չունին, ինչպէս քաղաքականութիւնը, նոքա ունին իրանց համար պաշտօնեայք և վարդապետք, կաթողիկոս, Հարիւրաւոր եպիսկոպոսներ, Հազարաւոր քահանաներ, բիւ-

բաւոր դպիրներն, որոնք սպաս էին տանում նրանց Հաւատարմութեամբ և Աւետարանի լոյսը բորբոքում էին Հաւատացեալների սրտերի մէջ։

Թէ Հայոց եկեղեցւոյ Հանգամանքներն այդ ժամանակն ինչպէս էին և ինչ հիմքի վերայ էր շինած, բաւական է, որ միտներս բերենք մէկ քանի Աստուածաչունչ գիրքը թարգմանելու մասին, Հայոց տառերը գտնելով, ուսումնարանները բազմացնելով և բազմաթիւ աշակերտներ ուղարկելով ուսում առնելու համար՝ Աթէնք, Եգիպտոս, Աղէքսանդրիա և Յունաստանի այլ տեղերը, որոնցից անուանի էին Մովսէս Խորենացի, Եղիշէ վարդապետ, Ղևոնդ երէց, Գիւտ կաթողիկոս, Մամբրէ Վերծանող՝ Մովսէս Խորենացւոյ կրտսեր եղբայրը, Դաւիթ անյաղթ, Խորենացու քեռորդին, որ իւր քաջահմուտ փիլիսոփայութեան համար կոչուեցաւ Անյաղթ փիլիսոփայ, Կորիւն Ալքանչելի, Ղազար Փարպեցի, Եղնիկ Կողբացի, Յովսէփ Պաղնացի և այլք։ Մօքա իրանց ժամանակին սուրբ հարք դարձան Հայոց ազգի համար քրիստոնէական ուսումն արծարծելով և Հայոց գրականութիւնը ծաղկեցնելով, այնպէս որ հինգերորդ դարը Հայոց գրակա-

նութեան համար սրանցով կոչուեցաւ ոսկեղէն դար, և սոքա երևեցան մի այնպիսի ժամանակում, երբ պատած էր մեր աշխարհը կռապաշտութեան և մոխրապաշտութեան վոշիով։

Ի Հարկէ մի եկեղեցի, որոյ հիմն այնպիսի ամրութիւններ ունէր, պէտք է մեծ դժուարութիւն էր առաջարկել Սասանական թագաւորին, և սա պէտք է որ մեծ ջանք դնէր այն եկեղեցւոյ բարեկարգութիւնը նսեմացնելու և խախտելու համար։ Եւ գուցէ հէնց այս պատճառաւ էր, որ նոյն իսկ անօրէն նախարարների ձեռնտուութեամբն՝ եկեղեցւոյ անարժան առաջնորդներ կարգեց Հայաստանումն. ինչպէս էին՝ Սուրմակ, Բրքիշոյ, Զմուէլ։ Բայց մենք ասացինք, որ մեր աշխարհի կրօնական կարգերն այնպէս խախուտ չէին, ինչպէս քաղաքական կարգերը։ Քաղաքականը շուտով աղաւաղեցաւ, բայց կրօնականը այնպէս չէր. եկեղեցին և հարազատ նախարարները բողոքում են և իրանց Հոգևոր գլուխ են ընտրում, 440 թուին, Սահակի և Մեսրովբի մահից յետոյ, Յովսէփ Պաղնացուն, որն որ իրան ընտրութիւնից երկու տարի յետոյ, Զահապետվան քաղաքումն, ուր գտնվում էր Հայոց սպարապետ Վարդանը, մէկ եկեղեցական ժողովք արաւ, որով վերջացրեց այն ամենայն անկարգութիւնները՝ որ իրան անարժան նախորդների ժամանակը մտել էին աշխարհականաց և հոգևորականաց մէջ։

Յազկերտ Բ-ի յաջողութիւնները, նորա դիտաւորութիւնը քրիստոնէական հաւատի մասին. Ատոմեանց նահատակութիւնը. Դենշապուհ՝ի Հայաստան. Զրադաշտական նամակը. պատասխանը. նախարարաց կոչումն, բանտարկութիւն. առ երեսս ուրացութիւն, դարձ. Վասակ սրտանց ուրացեալ. ուխտապահ նախարարաց յաղթութիւնը 440—450 թիւը։

Հայաստանը մոռանալով միանգամայն իրան քաղաքական ազատութիւնը, արդէն պատրաստած էր Քրիստոսի արժանաւոր աշակերտ լինելու։ Յազկերտ Բ. իրան վրամ հօր տեղը նստելով՝ դուռ մէկ այնպիսի յաջող ժամանակ, որ կարծես թէ կարող էր կատարել Սասանական թագաւորաց մէս նպատակը։ Ընդհանուր պատմութիւնից գիտենք, որ այն ժամանակները Բիւզանդիոյ կայսերութիւնը լինչ ձախողակ հանգամանքների մէջ էր։ Յազկերտը նրանց ձեռքից խլում է արևելեան երկիրներից շատերը և այն՝ մեծ յաղթութեամբ։ Այսպէս հպարտացած և արևելեան կայսերութեան թուլութիւնը տեսնելով՝ մտքում դնում է արևելեան քրիստոնեաներին Զրադաշտական կրօնի դարձնել։ Հրամայում է իրան ստորադրեալ քրիստոնէից իշխաններին՝ իրանց զօրքով գնալ օգնութիւն ընդդէմ Հոնաց ազգի, որոնք բնակվում էին Օքսուս և Եաքսարտէս գետերի երկիրներումը։ Հոնաց ազգն՝ որ արդէն ղրկուել էր իրան մեծ մասիցն, որ այն ժամանակն Ատելզայի առաջնորդութեամբը սարսափեցնում էր Եւրոպան և ահ ու դող էր ձգում նորա վերայ, այժմ տկարացած չի կարողանում Սասանեանց զօրութեանը դէմ կենալ ուրիշ ժամանակուայ նման։ Այս պատերազմներումն էր, որ մեր ազգի նախարարներից և զօրքերից կատորուեցան պարսկական խորամանկութեամբ, իբրու այն՝ թէ մէկ ազգի և աշխարհի պաշտպանը՝ զօրավարն և զօրքն է, եթէ սոքա ոչնչանան, այնուհետև աշխարհն էլ կըլսի բռնակալի անիրաւ հրամանին. դարձեալ այս պատերազմների ժամանակն էր, որ Յազկերտը փորձ էր փորձում Հայերի միտքը որսալու դէպի մոխրապաշտութիւնը։ Պատերազմը վերջացաւ, Հոնաց աշխարհը դուռ Սասանականի ձեռքն ընկաւ։ Յազկերտը հրապարակաւ յայտնեց նախարարներին՝ արեգական երկրպագութիւն տալ, բայց նորա յանձն չառին։ Բռնաւորը փոխանակ շնորհակալութեամբ վարձատրելու նոցա, հրամայեց բանտարկել, (Ատոմեան նահատակութիւն)։

Մինչ այս այսպէս էր լինում, Յազկերտը Դենշապուհ պարսիկ իշխանին ուղարկում է Հայաստան, որի ձեռամբը Հայաստանը աղմկի և խռովութեան մէջ է ընկնում։ Նախարարաց մէջ ատելութիւն է ձգում, արժանաւոր հոգևորականաց ղրկում է, բայց Հայերը ոչինչ ակնկալութիւն չեն ցոյց տալի Տիզբոնի դրանը, Միհրներսէհ հազարապետը նամակ է դրում անարգելով Հայոց կրօնը և Զրադաշտականի ճշմարտութիւնը ցոյց տալ ցանկալով։ Հայոց եպիսկոպոսները, Յովսէփ կաթուղիկոսի առաջնորդու-

թեամբ, ժողովում են Արտաշատ քաղաքը և լմաստալից բանիւք պատասխան են դրում Տիզրոնի դըրանը, որով զարմանում և շուարվում է Յազկերտը. բայց կատաղեալ Յազկերտը պահանջում է իրան մօտ Հայոց մարզպանին և երևելի նախարարներին: (Վարազվաղան և Վասակ մարզպան:) Յովսէփ կաթողիկոսը խոստումն առնելով նրանցից՝ օրհնում է և ճանապարհ է ձգում հաւատացեալներին: Վասակ մարզպանը, Վարդան Մամիկոնեան սպարապետը, Գադիշոյ, Վահան Ամատունին հասնում են Տիզրոն: Բռնաւորը սովորական պատիւը չցոյց տալուց յետոյ, հրամայում է արեգական երկրպագութիւն տալ. նոքա հրաժարվում են և այս պատճառաւ յանձն են առնում բանտարկութիւնը: Յազկերտը կամենում է բանտարկեալ նախարարներին աքսորել հեռի տեղ և Հայերին անզօրաւար և անիշխան թողնելով՝ հեշտութեամբ նպատակին հասնել: Նախարարները Յազկերտի այս մտքերն իմանում են մէկ Պարսկի միջնորդութեամբ, ուստի Յազկերտին առ երեսս խոստանում են և հաւանութիւն են տալի կռպաշտութիւնն ընդունելու: Վարդանը՝ Սուրբ Սահակի թոռն, աղի արտասունքով պէտք է հաւանութիւն տար ընկերների խօսքերին: Թագաւորը պատանդ է պահում Վասակի երկու որդոցն և միւսներին մոդերի հետ ճանապարհ է ձգում դէպի Հայաստան: Քահանաներից մէկը՝ որ գտնվում էր նախարարաց մօտ, նրանց դիտաւորութիւնը չիմանալով, շուտով հասնում է Հայաստան և մեր աշխարհը կոծ է առ-

նում, կաթողիկոսը և միւս Հոգևորականներն ազդին իմացում են տալիս: Բոլորեքեանք արդար բարկութեամբ բարկացած զինուորվում են Հաւատափոխ նախարարաց դէմ չնայելով՝ ոչ հօր, ոչ մօր, ոչ եղբօր և ոչ ազգականի: Նախարարները մոգերի հետ միասին հասնում են Թազկոտն գաւառի Անդղ գիւղը, և ուր մէկ ամիս հագստանալուց յետոյ, սկսում են իրանց յանձնարարութիւնը կատարել: Մոգպետի գլուխը չարդվում է կիւրակի օրը, երբ որ Ղևոնդ քահանայն պատարագ էր մատուցանում: Հայերը վառված և բորբոքուած կրօնի հրով՝ չարդում են և սպանում են մոգերին, մոգպետը Վասակ մարզպանի վերայ բարկանում է և կամենում իրաց եղելութիւնը յայտնել Արեաց թագաւորին. Վասակը սարսափում է՝ իւր որդոցը միտ բերելով և դուշէ փառասիրութիւնից շարժեալ, Սիւնեաց գնդերով Հայոց դէմն է գնում և զինու զօրութեամբ կռատուններ է շինում և մոգերին պաշտպանում: Հայոց եկեղեցւոյ պաշտօնակատարները տեսնելով այս ամենայն չարութիւնները, վերջին ջանքն ի գործ դրին և շատ նախարարներին իրանց կողմը քաշեցին, որոց գլուխն էր Հայոց սպարապետ Վարդանը: Սոքա խաչով և Աւետարանով երդուեցին, Հոգևորականաց առաջին, ուխտեցին չարագործ Վասակի առաջը կտրել. մարզպանը բռնվում է և խօսք է տալի խաչի և Աւետարանի վերայ Հաւատարիմ մնալ իրան եկեղեցուն և Հաւատին:

Հայոց դեսպանութիւնը առ կայսրն, Պարսից յարձակումնքն Աղուանից վերայ, Հայոց օգնութիւնը. Վասակայ ուխտանկնդրութիւնը. Վարշանայ դարձն և Այրարատայ գրաւելը 451 թուին, պատերազմի պատրաստութիւնները, Տիգրոնի դրան նենգութիւնները, Պարսից զօրքի գալն, Առանձաւր. Աւարայրի ճակատը և նահատակութիւն Վարդանանց։

Վտանգը մերձ էր և Հայերը սէտք է պատրաստուել էին. Թէոդոս կայսեր մօտ ուղարկում են դեսպանութեամբ՝ Գնունեաց իշխան Ատոմին և Երմայեակ Մամիկոնեանին և Հայցում են նրանից օգնութիւն հասցնել այն եկեղեցուն, որ յոյս և նեցուկ էր և է քրիստոնէութեանը արևելքում. Իզուր, Պարսիկները, որոնք գտնվում էին Հոնաց աշխարհումը, Սերուխտի առաջնորդութեամբը, մտան Աղուանից աշխարհը։ Հայերը կայսեր պատասխանի վերայ չէին կարող յոյսները դնել և սպասել։ Աղուանից եպիսկոպոսը Հայերից օգնութիւն էր խնդրում, Հայոց զօրքը երեք գունդ է բաժանվում մէկը Վարդանի առաջնորդութեամբ Աղուանից է դնում օգնութիւն, միւսը Ներշապուհ Իմբոստեանի առաջնորդութեամբ Ատրպատականի սահմանները պէտք է դիտէր և երրորդը Վասակ մարզպանի՝ առաջնորդութեամբ Հայաստանը պահպանէր։ Բայց չարութեան Հոգին արդէն մտել էր չար մարզպանի մէջ, և գաղտնապէս յայտնում է իրաց որպիսութիւնը Սերուխտին։ Սերուխտը սիրտ առած Վարդանանց

ռակաւութիւնից՝ անց է կենում Կուր գետը և խաղխաղ քաղաքի մօտ Հանդիպում է Հայոց. խորտակուեցաւ պարսկական գումարտակը՝ Վարդանի, Խորէնի Խոռխոռունոյ և Արշաւիր Կամսարականի առաջին, և Հայերը մտնելով Աղուանից աշխարհը, կործանեցին ատրուշանները և կոտորեցին մոգերին. լեռներում թագնված Աղուաններն իջնում են, ըստուարացնում են Հայկական գունդը, որ արդէն Վարդանի առաջնորդութեամբն անցնում է խրոխտ և բարձրագլուխ Կովկասը, կործանում են Ձորայ դուռն և Հոնաց ազգի հետ դաշն են կապում։

Այս միջոցին անկիրաւ Վասակը սկսել էր իրան չարագործութիւններն, Այրարատայ երևելի քաղաքներն և աւաններն այրել էր և տարուշաններ էր շինել տալի իրան հակամիտ նախարարների հետ միասին, ստուար գունդ ունէին և գրեթէ բոլոր Սիւնեաց աշխարհը կրակ էր սպառում իրան նահապետի անյողդողդ հրամանից ստիպեալ։ Սպարապետը (Վարդան) կայծական արագութեամբ հասնում է Հայոց աշխարհը, անօրէն Վասակն, երկչոտ ազուեսի նման, թողնում է Այրարատն և ապաստանում է Սիւնեաց ամրութիւններում։ Ձմեռն արդէն վրայ էր հասել և Հայոց քաջ Սպարապետն (Վարդան) դադարեցնում է պատերազմը և արձակում է իւր զօրքը, բացի մէկ քանի հրոսակներից, որոնց արձակում էր անօրէնի երկրի վերայ, արձակեց և իւրաքանչիւր նախարարութեան զօրքը, հրամայելով գարնան սկզբին հաւաքուել։ Այն ինչ պարապու-

թեան ժամանակը մի առ մի յայտնում են Հայերն իրաց եղելութիւնը Յազկերտին և անկարգութեանց պատճառը. գոյում են Վասակի վերայ. Արեաց թագաւորը սկսում է իւր գործը խարդախութեամբ և խորամանկութեամբ առաջ տանել: Պարսից տէրութիւնը կասկածում էր Հոնաց կողմից՝ Հայոց դաշնակիցներից, և կայսերութեան ասիական զօրավարներից, ուստի և Հրատարակում է կրօնի ազատութիւն: Եւ Վասակի ձեռամբն՝ որին արդէն խօսք էր տուել Հայոց վերայ թագաւորացնելու, տարածում է ամեն տեղ, իբր թէ Հայերը խռովասէր են և ունենալով ազատութիւն իրանց կրօնի և պաշտամանց մասին, միայն անկախութեան համար են խռովում: Այս հնարքով խորամանկ Պարսիկը հեռացրեց Հայոց օգնութիւն տալուց այն ամենայն անձանց, որոնք մտադիր էին Հայոց եկեղեցին պաշտպանելու: Արևմտեան Հայերը սառն աչքով են մտիկ տալիս, իսկ արևելքինը Վասակի կողմն էր. կայսրն առանց էն էլ զբաղմունքներ ունէր: Այն ինչ պարսկական զօրութիւնը Միհրներսէհ հազարապետի առաջնորդութեամբ Հայաստանի սահմանին է մօտենում: Միջին Հայաստանը ակներև տեսնում է՝ թէ խաբուած է և մատնուած. Հայոց եկեղեցին տեսնում է՝ որ իրան արևելեան սահմանի որդիքները կռապաշտութեան կողմն են, այն ինչ արևմտեանը սառն է իրան ծնող եկեղեցւոյ պաշտպանութեան համար. Հայաստանեայց եկեղեցւոյ յոյսը միայն իրան Հարազատ կեդրոնական որդկերանց

վերայ էր: Միհրներսէհը պարսկական գումարտակը ստուարացնելով և լեռնականներով՝ Մուշկան—Նիւսալաւուրտ պարսկի առաջնորդութեամբ ուղարկում է Հայաստան, Հրամայելով նրան, որ Վասակին և նորա կողմնակիցներին խորհրդակից առնի: Վասակը՝ սրտավ ուրացել էր մայրենի աշխարհն չնչին թագի համար: Հայերը տեսնելով, որ վտանգը մօտ է, Վարդան սպարապետի առաջնորդութեամբ ժողովում են նախարարութիւններում ցրուած զօրքերին և ուխտապահ նախարարներին Արտաշատ քաղաքը: Պարսիկներն արդէն հասել էին Ձեր և Ջրևանդ գաւառները, սրի և կրակի ճարակ էին տալի ամեն բան. եկեղեցիները կործանում էին և հաւատացեալներին սրի բերան տալի: Հայոց կողմից Առանձայր Սեպուհը նրանց առաջն է գնում, Հայոց մէկ քանի քաջերով, և նրանց վնաս է պատճառում: Այսուամենայնիւ Պարսիկները առաջ են խաղում դէպի Միջին Հայաստան, և հասնում են Արտազ գաւառը, Հայերը Վարդանի առաջնորդութեամբ, հաւատացեալ զօրքով. կտրում են նրանց առաջը և բռնում են Աւարայրի դաշտը, Տղմուտ գետի միւս ափը: Վասակ և Պարսիկ զօրավարը դեսպանական տուր և առութիւն են անում, բայց Հայերը արդէն հաւատ չեն ընծայում այնքան խարդախութիւններից յետոյ:

Ղևոնդ քահանան և սուրբ Սահակն իրանց ներկայութեամբ խրախուսում են Հայոց սակաւաթիւ զօրացը, նրանց մատակարարում են Փրկչի փրկա-

բար մարմինն և արիւնը: Մեր նոր Մակարէն հին Մակարէի պատմութեամբն է խրախուսում հայերին. ամենայն ինչ կատարեալ է. քրիստոնէութիւնը պէտք է մաքառի հեթանոսութեան դէմ: 451 Թուին Աստուած նշանակել էր իրան ընտրեալների համար, Այետիոսին դրել էր Կատալաունեան դաշտում Ատիղալի դէմ. իսկ Վարդանին անօրէն Յազկերտի դումարտակի դէմ. այն ինչ Բիւզանդական կրօնամոլ կայսերութիւնը զուրկ էր այս ամենայն առաքինութիւններից և Քաղկեդոնումը քննութիւններ էր անում Աստուածային բնութեան վերայ: Այետիոսին արևմուտքն էր նաշանակած, իսկ Վարդանին արևելքը. Վարդանը՝ աւագայ խորհուրդով բաժնեց Քրիստոսի զինուորներին երեք գունդ, աւագ ձախ թևն իրան առաջնորդութեամբ, իւր նիզակակից առնելով Արշաւիր Կամսարականին. աջ կողմն տալով Խորէն Խոռխոռունուն՝ Արսէն Անձևացւոյ նիզակակցութեամբ և ուրիշներին. իսկ միջնավայրը՝ ներշապուհ Արծրունուն՝ Արտակ Մոկացւոյ նիզակակցութեամբն: Առաւօտեան լոյսը բացուելուն պէս, երկու կողմից էլ պաշրոկական կերպիւ սկսվում է նետաձգութիւն. հայոց զօրքն անց է կենում Տըղմուտը. Պարսկական գունդը դժուարութեան մէջ է ընկնում. հայոց ձախ թևը Վարդանի առաջնորդութեամբ նեղն է ձգում Պարսից աջ թևին. բայց հէնց այն ժամանակը հայոց գնդի մէկ մասը ճակատից դուրս գնաց. Արեաց զօրավարը հոգի առաւ և մատեան գունդը կարգի բերելով՝ ընկնում է

Վարդանանց վերայ և նոցա շրջափակում է. Վարդանանք իրաններից մատնուած, քաջութեան հրաշքներ են ցոյց տալի: Վարդանը, հայոց եկեղեցւոյ արժանաւոր զաւակը, քաջութեամբ պատերազմելով՝ ընկնում է շրջապատող թշնամիներից. ընկնում են պատերազմի դաշտումը նաև Խորէնը, Արտակը, Տաճատը, Հմայեակ Դիմաքսեանը, Վահան Գնունին, Ներսէսը, Արսէն Ընձայեացին և Գարեգին Սրուանձտեանը, իսկ մնացեալ զօրքն անտէր անզլուխ մնալով՝ ապաստանվում է դէպի ամուր լեռները: Բայց այս յաղթութիւնը արժան չէ նըստում պարսիկներին. որովհետև նոցա կողմից պատերազմի դաշտումն ընկնում են 9 մեծամեծներ և 2544 զինուոր. իսկ հայերից նախարարներով միասին 1016 հոգի:

Հայոց խռովութեան սաստկանալը, Յազկերտը մեծաքը վոխում է. Ատրոռմիզդ մարզպան. Վահանդեանք կալանաւորվում են, նախարարները բողոքում են. Վասակը դատապարտվում է. նախարարաց կալանաւորութիւնը, Վահանդեանց նահատակութիւնը և նախարարաց դարձը. 451—461 Թիւը:

Վարդանանց նահատակութիւնը շարժեց, մորմոքեց Հայաստանի Հաւատարիմ որդվերանց սիրտը. հայերը չեն կարողանում արձակ դաշտի վերայ Պարսից զօրութեան դէմ կենալ. ամրանում են անառիկ բերդերում, իրանց զօրութիւնը հաւաքում են հա-

յաստանի ազատ լեռները վերայ, և այն տեղից մեր Հայ Վեստոլիները կայծակի նման շանթում են մոխրասպաշտութեան զօրաւիգներին: Վասակը և Մուշկան — Նիւսալատուրը յորդորում են և ազատութեան առաջարկութիւններ են մատուցանում, բայց Ղզնւը, հաւատացող չըկար նրանց քսու և թունաւոր խօսքերին: Քաջ Հայերը Կորդուաց կողմերից ընկնում են Պարսիկների վերայ և նրանց մեր երկրի աւերանաց վոխարէնն են հատուցանում: Պարխարի կողմերից Հմայեակի առաջնորդութեամբն ընկնում են Հայաստանի մէջ գտնուած Պարսիկների վերայ և սրախողխող են անում նոցա. Արցախի լեռներից Վասակի երկիրների վերայ և այնտեղից Հոնաց ազգի միտն են բերում Վարդանայ ժամանակուայ նրանց հետ կապած դաշը: Յազկերտը տարակուսանաց մէջն է ընկնում, ուշ է լմանում՝ թէ մեկ ամբողջ ազգի խղճմտանքի դէմ մաքառելն ինչպէս դժուարին բան է: Մուշկանին հրամայում է պատերազմական գործողութիւնները վերջացնել Հայաստանումն և միայն աշխատել, որ Հոնաց առաջը կտրի: Վասակի տեղը մարզպան է կարգում Պարսիկ Ատրոմզդին և հրամայում է ժողովրգեանը, ինչպէս կարելի է, խաղաղ պահել կրօնի ազատութիւնը ճիշտ պահպանելով, և մինչև անգամ ակամայ մոգութիւն ընդունողներին իրանց առաջուայ հաւատի մէջ թողուլ և հաստատել: Հայաստանը խաղաղանում է, բայց իրան արժանաւոր հովիւներն, իրան հոգևոր հայրերն, որոնք էին Ս. Ղևոնդեանք՝ կալանաւորեալ Պարսկաստան

են տանում, իբրև բոլոր չարագործութեանց պատճառ և յորդորող: Ուխտապահ նախարարները բողոքում են և երդմամբ հաստատած խօսք առնելով Յազկերտից գնում են Պարսկաստան՝ այնքան չարագործութեանց պատճառն երեան հանելու. բայց չարագործ Վասակն արդէն վաղուց էր գնացել Պարսկաստան և իրաց եղելութիւնը, ըստ իւր կամաց, յայտնել: Ատեան է բացվում և Վասակը մեղաւոր է դուրս գալի, մահապարտից բանտն է ընկնում, ուր և խղճի տանջելուցը չարաչար վախճան է ընդունում:

Այսպիսով այն մարդն, որ Հայաստան աշխարհի վերայ իշխել էր ցանկանում և լոկ միայն իրան փառաց մասին այնքան անօրէնութեանց պատճառ եղաւ, և ոչ անգամ գերեզման ունեցաւ մեր որբացած և մեր քաջ Վարդանի անմեղ արիւնով ներկուած աշխարհումը: Խորամանկ և խարդախ պարսիկը նախարարներին էլ ուղարկում է Վրկանայ Նիւշապուհ քաղաքն, ուր արդէն բանտարկուած էին Ս. Ղևոնդեանք՝ ինչպէս էին Յովսէփ Կաթողիկոսը, Ղևոնդ երէցը, Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը և այլն: Նախարարները թուով 35 կամ 37 էին, որոնք առհասարակ Արծրունեաց, Մամիկոնեանց, Ամատունեաց, Գնունեաց և ուրիշ անուանի նախարարութիւններից էին: Այս կենդանի նահատակուողաց նեղութիւնը մեծ էր և Հայաստանը նրբանցով մեծ կորուստներ էր զգում: Ոմի են կանգնում՝ Աղուաններըը, Գուշանքը, գուցէ մերաղնէից

դրդռութեամբ, Պարսից աշխարհը բաւականի վնասներ է կրում և Ս. Ղևոնդեանք նահատակվում են Նիւշապուհի մօտերումը դատապարտուելով ի մահ. որովհետև Հայաստանի մէջին ատրուշանների կործանողները նրանք էին. աստուածները բարկացել էին և Պարսկաստանը այն պատճառաւ վտանգի մէջ էր. այսպէս էին մեկնում մոգերը. բայց նախարարները դեռ տանջվում էին Նիւշապուհի բանտելումը. նրանք վառված էին երկնային աւետարանի խօսքերովն և առ ոչինչ էին համարում տանջանքները. նրանց կանայքը Հայաստանումը նրանցից յետ չէին մնում իրանց ճգնողական կեանքովը. նրանք զրկուած լինելով եկեղեցիներից՝ իրանց անձն եկեղեցի էին շինել և յետ չէին կանգնում խաչեալ Քրիստոսին փառաբանութիւն տալուց: Հայաստանն ունէր իրան Հոգւով սրբով լցուած մարդարէներին, ունէր իրան Պաւարաններին, ունէր և Յոբերին, վերջապէս բուռական համարեց Աստուած իրան Յոբե րի նեղութիւնը, փորձեց և նոցա հաստատուն հաւատը: Յաղկերտը մեղմացաւ և Ղողոմ—Ղապուհ պարսկի միջնորդութեամբն և բարեխօսութեամբն արձակեց կալեալ նախարարներին և մտադիր էր Հայաստան ուղարկելու, բայց մահը շուտով վրա հասաւ: Վերջապէս Պերոզն իւր Որմզդատ եղբօրը յաղթելուց և մեհեձան թագաւորելուց յետոյ 461 թուին նախարարներին դարձնում է մեր որբացած աշխարհը: Ահա այսպիսով վերջացաւ առաջին անգամն այն յանդուգն ձեռնարկութիւնը, որ իրան

մտքումն ունէր արևելեան հեթանոսութիւնը ընդդէմ արևելեան քրիստոնէութեան: Հայոց եկեղեցին, և նորա հարազատ որդիքն իրանց զինուց տկարութեամբը ցոյց տուին աշխարհին Աետարանի բարձր բարոյական զօրութիւնը հակառակ յանդուգն Զրադաշտի ուսմանը՝ որ ցոյց տուեց իրան սարսափելի զէնքերովն էլ իւր ամենատկար հոգեկան կարողութիւնը:

Տէզբոնի դրան խորամանկ քաղաքականութիւնը. Գիւտ կաթողիկոսը. Վահան Մամիկոնեան. ուխտապահութիւնը. Յովհան Մանդակունի կաթողիկոսը. Պարսկից հալածեալք. Ատրվշնասպը. Արկոռի. Առնեբսէհ. Ներսէհապատ. Միհրան. Զարմիհր հազարավուխտ. Շապուհ մարզպան. Վահան դիւցազն և նորա արտաքոյ կարգի քաջութիւնները. Պարսից դրան քաղաքականութեան փոփոխութիւնը. Վաղարշ. Նիւսոր, դաշն խաղաղութեան և Վահան մարզպան 461—485 թիւը:

Պարսից դժոխային զօրութիւնները և մեքենայքը, ինչպէս վերևը տեսանք, խորտակուեցան Հայոց կրօնական հոգեշնչութեան առաջին. հալածանքն էր՝ որ Հայոց որդւոց սիրտն աւելի բորբոքում էր, և եկեղեցին աւելի հաստատ հիման վերայ էր հաստատվում: Պարսիկները կարծես այս բանը հասկացան, և նոր արքայից արքայ Պերոզն իրան քաղաքականութիւնը փոխեց, Հայաստանին կրօնական ազատութիւն տալուց և կալեալ նախա-

բարներին արձակելուց յետոյ, շատերին առատ ռոճիկներ կարգեց, և աւելի բարձր աստիճանի և իշխանութեան հասցրեց այն մարդկերանցն, որոնք հակամիտ էին դէպի հաւատափոխութիւնը և որոնք մոգութեան մէջ մնում էին հաստատ: Փառքն և մեծութիւնը շատերի աչքերը կուրացնում և հայերի բարձր կրօնական հոգին կորչում էր. ժողովուրդը թուլանում էր և մեծերը զեղխութեան մէջ վարակվում: Հայոց Եկեղեցին կարծես սուզի մէջ էր մտել և նորա աւանդապահ Գիւտ կաթողիկոսն, որ Յովսէփից յետոյ երրորդն էր, սկսաւ ընդդիմանալ այս չար յեղափոխութեանցն և յանդիմանել այն նախարարներին և սեպուհներին՝ որոնք թուլացել էին հաւատիցը: Չսկող տեսուչը պայծառ լուսով է տեսնում արքունեաց դաւն: Պերոզը կաթողիկոսին կանչում է Պարսկաստան. Գիւտը մահը կամ նահատակութիւնն աչքի տակն առած՝ յայտնում է ամենայն անիրաւութիւնները, բայց զրկվում է քահանայապետական աթոռից: Տիզբոնի դուռն այսպիսով աշխատում է արժանաւոր հովիւներին Հայաստանից վերցնել և իրան դիտաւորութիւնն առաջ տանել. Հայաստանի վասակները դարձեալ պակաս չէին, որոնք հաւատի ուրացութեամբն արքունեաց աչքն էին մտել և մեր աշխարհի կառավարութիւնը ձեռք բերելով՝ աշխատում էին Քամիկոնեանց և ուրիշ քրիստոնեայ նախարարների պատիւը և արժանաւորութիւնը զետին ձգել: Հմայեակի որդի Վահանը՝ ի մանկութենէ մեծ հանճար և արժանավայել քրիստոնէի վարք էր ցոյց տալի: Վարդանանց պատերազմի ժամանակները պատրաստ էին կրկնվելու, թէպէտ ուրիշ ժամանակ և ուրիշ կերպով: Հայոց եկեղեցին նրան տեսնելով մխիթարվում էր, իսկ ընդհակառակը Զրադաշտականը կասկածանաց մէջն էր ընկնում. ուրացեալ հայերից մէկ քանիները Վահանին զրպարտում են Պերոզի առաջին, իբրև մէկ ապստամբ ոք: Վահանը սառիկ զայրանալով և կրօնափոխութեան չար հոգուց յափշտակվելով անձամբ անձին ներկայանում է արքայից արքայի առաջին, և իրան հպատակութիւնը և հաւատարմութիւնը ցոյց տալու համար՝ կրօնափոխութեան չար անունն է յանձն առնում: Վահանը վերադառնալով Հայաստան՝ զդում է իրան արած յանցանքը, քաջութեան միջոցներ է որոնում: Հայաստանը Պարսից անիրաւութեամբ լցուած, Գիւտ արժանաւոր կաթողիկոսն աթոռից զրկուած, Վրաստանը Վարդանանց օրինակովը վառուած (Վազգենի մահը և Վախթանգի թագաւորելը), Հայոց մտքերը բորբոքվում են և Վահանին շտապեցնում իրան մտադրութեան միջին: Այս միջոցին Պերոզը պատերազմ է բացանում Հեփթաղաց դէմ և Հայոց զօրութիւնը Ատրվշնասպ մարզպանի առաջնորդութեամբ Աղուանից կողմն է պահպանում:

Պարսիկները անյաջող վերջացնելով պատերազմը, Հայերը դալիս են Հայաստան և բանակ են դնում Ձիրակ դաւառումը: Վրաստանը դեռ խռովութեանց մէջն էր և Պարսից զօրքը մեծ վնաս կրած,

Վահանը խորհուրդ է կոչում Հայ Հաւատացեալ նախարարներին և Հայաստանի իրաց Հանգամանքները նկարագրում Ֆ Նրանց առաջին. նախարարներն ուխտում են և միաբանվում Վախթանգի հետ:

Յովհան Մանդակունին՝ որ ոսկեդարեան երեւելի աշակերտներից մէկն էր, կաթողիկոս է ընտրվում: Եկեղեցին մխիթարվում է և հոգի է առնում, և դանազան աղօթքներով և շարականներով զարդարվում: Նոր Վարդանանք իրանց համար նոր հովիւ կարգեցին Ս. Յովսէփին: Ամենայն ինչ կատարեալ է. ուխտապահ նախարարները, ինչպիսի են՝ Սահակ Բագրատունին, Վահան Մամիկոնեանը, Վասակ Մամիկոնեանը, Բաբկէն Սիւնին, Ատոմ և Թոստոմ Գընունիքը, Գարջոյլ Խոռխորունին, Ներսէհ և Հրահատ Կամսարականները և ուրիշները ընկենում են Պարսից զօրութեան վերայ. Ատրվշնասպը և նորա հետ ուրացեալները հաղիւ հազ փախչում են Ատրպատական: Հայերն ուրախութեամբ մտնելով Դուին 481 թուին Սահակ Բագրատունուն մարզպան են կարգում, իսկ Վահան Մամիկոնեանին ընդհանուր սպարապետ: Այն ինչ Ատրվշնասպը և ուրացեալները, առանց ժամանակ կորցնելու, սկսան Հայաստան մտնել: Մարզպանը և սպարապետը զբաղուած լինելով քաղաքական կարգերով միւս ուխտապահ նախարարներն են դուրս գալի թշնամեաց դէմ: Վասակ Մամիկոնեանը թշնամեաց զօրութիւնը դիտելուց յետոյ, նախարարները լաւ են համարում Ակռի գիւղի մօտ ճակատել, ուր Պարսիկները չարաչար

յաղթվում են և Ատրվշնասպը սպանվում է մէկ քանի հայ ուրացելոց հետ: Սրանով Պարսիկները աւելի զրգռուեցան և Ատրներսէհի առաջնորդութեամբ գարնան սկսուելովը՝ արշաւեցին Հայաստանի վերայ. սպարապետի զօրութիւնը քիչ էր և յոյսը Վրաց Վախթանգն էր. Վախթանգը հրաժարվում է. և սպարապետը Հայոց նախարարներին հաւատի և աշխարհի պահպանութեան համար հրաւէր է կարդում, բայց այս կողմանէ էլ անօգնական է մնում, թէպէտ և մէկ երկուսն իրանց զօրքովը գալիս են, բայց աննշան. Վահանը վտանգը իւր առաջին է տեսնում, միայն ապաւինելով սուրբ Յովհան Մանդակունոյ աղօթքի վերայ, իւր սակաւաթիւ զօրքովն առաջ է գնում և Արտազու Ներսէհապատ գիւղի մօտ թշնամեացը հանդիպում: Սուրբ խորհուրդը կատարելուց յետոյ, Հայոց սպարապետը, ըստ սովորութեան, զօրքը երեք է բաժանում. կեդրոնը Սահակ Բագրատունի մարզպանին է յանձնում: Հայոց զօրքն առաջին անգամ շփոթվում է Պարսից բազմութիւնից և սկսում է փախչել: Վահանը երեսին խաչ հանելով՝ ընկնում է իւր գնդով բազմաթիւ թշնամեաց վերայ և մեծ կոտորած է անում. փախստականները գնում են Վահանի մօտ և յաղթութիւնը միանգամայն Հայոց ձեռքն է ընկնում և Պարսիկները հալածվում են բոլորովին Հայաստանի սահմաններից, այնուհետև մեծ ուրախութիւն է լինում մեր աշխարհի համար և Յովհան Մանդակունին գոհաբանութեան մեծ մաղթանքներ է կա-

տարում: (Վարդի ազատութիւնը):

Այն ինչ Հայերը Ներսէհապատի ճակատիցը յետոյ Ծաղկոտն գաւառումը հանգիստ էին առնում, եկան Վրաց դեսպանները և յայտնեցին Վրաստանի կրած նեղութիւնները՝ Պարսից արշաւանքներից: Նոցա աշխարհն էլ, ինչպես մերը, երկպառակուած էր և քայքայուած՝ իրան ուրացեալ որդոց ձեռամբը: Ախթանգը նեղն էր ընկել և Պարսից Միհրան զօրավարը, Վրաստանի ուրացելոց ձեռնտուութեամբը գրաւել էր Կուր գետի բոլոր Հովիտը: Հայերն, իրանց երդման համեմատ, պէտք է այնտեղի քրիստոնէութեանն ևս ախոյեան էին հանդիսացել. Սահակ Բագրատունի մարզպանը և Վահան Մամիկոնեան սպարապետը սակաւաթիւ զօրօք գնում են դէպի Հիւսիս. Վրաց Թագաւորն՝ որ արդէն իւր աշխարհիցը վախած՝ գտնվում էր Գուգարացւոց լեռնեբուամբը, նրանց առաջն է դուրս գալիս և պէտք է Թշնամեաց առաջն առնէին. Հայերի զօրութիւնը համեմատելով Պարսից զօրաց հետ շատ քիչ էր. Ախթանգը Հայերին խաբելով խոստանում էր՝ Թէ շուտով Հոնաց ազգն օգնութիւն կը գայ: Հոնքը չերևեցան և Միհրանը, պարսկական զօրութեամբ, արդէն Կուր գետն անց է կենում դէպի Հայաստան. Հայերն ակներև տեսնում են Ախթանգի խաբեբայութիւնը, անճարացած պէտք է, եթէ կարելի էր, Պարսից առաջն առնէին: Ըստ սովորութեան զօրքը երեք է բաժանվում, Բարսեղ Վահեվունոյ, Ախթանգի և Վահանի հրամանատարութեամբը. Հէնց

որ պատերազմը սկսւում է, Հայերից մէկ քանիսը Թշնամեաց կողմն են անցկենում, Ախթանգն էլ իւր Վրացիներովը պատերազմի դաշտից փախչում է, Հայերի յոյսը միայն լինում են Սահակ Բագրատունին և Մամիկոնեան եղբարքն, բայց տասրաբազտաբար խառնուրդի մէջին Սահակ Բագրատունի մարզպանը և վառակ Մամիկոնեանը վեր են ընկնում. և Վահանը արդէն Հայաստանի գալոց վիճակի վերայ մտածելով պէտք է մէկ քանի քաջ Հայերով դէպի Տայոց սահմանները սպաստանվէր 482 թուին: Միհրանը առանց ժամանակ կորցնելու նորա ետեւից ընկաւ, մէկ քանի վիրք ճակատներ են լինում, բայց Վահանը անյաղթելի սուրճ է հանդիսանում՝ իւր քաջ Հայերովը. Պարսից զօրավարը սկսվեալ հաշտութիւն է առաջարկում, բայց Վահանը այն երեք պայմաններն է պահանջում նրանից, որոց մասին այլքան ազմուկներ և արիւնհեղութիւններ է լինում: Այս միջոցին Միհրանը յետ է կոչվում Տիզրոն և նորա տեղը գալիս է Ջարմիրհ Հազարավուխտը, և սակ ներշապուհ Միհրանը՝ մարզպանի պաշտօնով. սոցա բոլոր ջանքն այն է լինում, որ Վահանին բռնեն, բայց ի զուր: Հայերը մոտացել էին Վահանին և կարծես հակամիտ էին նորա բռնուելուն, բայց Վահանը իւր դրութիւնը լաւ է ճանաչում և զգուշանում է:

Վահանը անդադար ամրանում էր կամ Հայոց աշխարհի ամրոցներովը, կամ Ծովից աշխարհի: Պարսիկները նորա ետևից են պնդում, Վահանը

չէ երևում մինչև այն ժամանակն, երբ որ թշնամիքը միտք չունեն պատերազմելու։ Յարմար միջոցին ընկնում է նրանց ահագին զօրութեան վերայ, աղմուկ է ձգում նրանց մէջը, պիւրութեամբ խորտակում է նրանց զօրութիւնը։ Այսպէս էին Երիզայի և ուրիշ ճակատները, որտեղ Պարսիկները Զապուհի առաջնորդութեամբ՝ մէկ քանի հազար լինելով, Վահանը մէկ քանի քաջ ընկերներով և գիւղացիներով՝ նրանց կոր 'ի գլուխ ջարդում է։ Կարծես թէ Հայաստանը մոռացել էր Վահանին, որ միայն իւր անվեհեր քաջութեամբը նորա իրաւանցը պաշտպան էր հանդիսանում, բայց Աստուածային տնօրէնութիւնը ուրիշ կերպ էր։ Պերոզը 483 թուին Հեփթաղաց դէմ պատերազմելով սպանվում է. Պարսկաստանը աղմուկի մէջ է ընկնում. արքայից արքայ ընտրելու համար։ Զապուհ Միհրանեանը պէտք է որ Հայաստանը Վահանին էր թողել և դնար Պարսկաստան։ Այսուհետև Վահանը իրան ընկերակիցներովը գիւրութեամբ դրաւում է մեր աշխարհի միջոցը և մեծ յաղթանակաւ մտնում է մեր մարզպանական գահին քաղաքը։ Այս ժամանակը Պերոզի եղբայր Վաղարշը, շատ աղմուկներից յետոյ, զօրանում է իւր կուսակցութեամբ Պարսկաստանի մէջ և Արեաց թագաւոր է ընտրվում։ Զարմիհր Հաղարաւուխտը և Զապուհ Միհրանեանը նոր արքային պատմում են Վահանի դեր 'ի վերոյ սրատութիւնն և նորա քաջութիւնը։ Արքայից արքայի դրութիւնը դժուար էր և հէնց Պարսկաստանումն

ունէր ոսոխները. ինչպէս էր՝ Պերոզի որդի Զարեհն։ Դեսպանական պաշտօնիւ և բաւականի զօրութեամբ՝ Վաղարշը Նիւխոր իշխանին ուղարկում է Հայաստանի կողմերը, Վահանը մէկ քանի պատանդ առնելուց յետոյ, իւր քաջերովը գնում է Նիւխորի առաջ Հեր և Զարևանդի Նուարսակ գիւղը՝ (Վահանի անվեհերութիւնը)։ Վահանի և նորա հետ միաբանեալ նախարարաց և ազատաց առաջարկութիւնն այս էր. Առաջին՝ հաւատի կատարեալ ազատութիւնը, և Հայոց աշխարհումը կրակապաշտութեան նշան ամենևին չըլինի. Երկրորդ՝ եթէ խորութիւն կամ նախապատուութիւն պատահի նախարարաց մէջ, այն պէտք լինի ըստ Հայոց կանոնաց և օրինաց, չար, քսու և հաւատուրաց մարդիկները չպէտք է պատիւ ստանան Արեաց թագաւորից։ Երրորդ՝ մինչև երկու դանգատողաց խօսքերն էլ Արեաց թագաւորը չլսի, երկու կողմից էլ, չպէտք է որ վճիռ տայ։ Արեաց թագաւորը ուրախութեամբ ընդունում է այս պայմաններն և կնքով ու երդմամբ հաստատում է. այնուհետև Անդեկան մէկը մարզպան է կարգվում և Հայաստանը անդորր խաղաղութիւն է վայելում։ Վահանը իւր սպարապետական պաշտօնի մէջ աւելի հաստատվում է, այն ինչ ուրացեալները պէտք է ամօթապարտ երեսով իրանց ամրոցներն էին քաշուել. այսպիսով երկրորդ անգամ յաղթութեան պակը Հայաստանի եկեղեցւոյ հարազատ որդոց ձեռքն անցաւ, մինչև որ նոյն իսկ Անդեկանի խորհուրդովն Արեաց թագաւորը հետևեալ 485

թուին (Հայոց դօրքն ի Պարսկաստան՝ Վաղարշի պաշտպանութեան մասին) իւր հրովարտակովը Վահանին մարզպան է կարգում բոլոր Հայաստանի վերայ։ Անպատմելի էր Հայկազանց արտի ուրախութիւնը, կատարեալ մաղթողական և դոհարանական աղօթքներ Յովհան Պանդակունի Կաթուղիկոսի ձեռամբ՝ Վաղարշապատու մայր եկեղեցւոմը։

«Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, ասաց Ներսէսն կաթողիկոսն իւր քարոզութիւն, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս՝ որ ինձ Հաւատացաւ՝ պատուով և շքեղութեամբ պսակառացեալ ի Քրիստոսէ։ Փախեաւ Ադոնիա, որ առանց Աստուծոյ կարծէր թագաւորել, օգնականացն զգեցեալ զամօթ՝ սլացեալք, ընդ սեղանովն թագչին։ Այլ ձեռն տուք զթալով, չէ աստ ի քարեղէն սալս գրեալ անթողութիւնք օրինացն։ Քրիստոս է աստ՝ որ ասէ. Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն»։

Հինգերորդ դարու վերջերն և վեցերորդի սկիզբները քաղաքական և կրօնական նոր հանգամանքները։ Պարսից հալածանաց մեղմութիւնները. Յունաց քաղաքական ներգործութիւնները և նոցա կրօնական ատելութեան սկիզբը, Բաբգէն կաթողիկոսը և Վաղարշապատու ժողովը։

Հինգերորդ դարի վերջերից և վեցերորդի սկիզբներից յետ Հայաստանի հանգամանքները փոխվում

են. արդէն մէկ դար էր, որ Հայաստանը իրան քրիստոնէութեամբն Պարսից հալածանաց նիւթ էր դարձել։ Տիզբոնի դուռը տեսնելով Հայոց անընկճելի կրօնական հոգին, էլի այնպէս մեծ մեծ հալածանքներ չէր վերկացնում Հայոց եկեղեցւոյ վերայ, և թէպէտ ժամանակ առ ժամանակ Տիզբոնի թագաւորները ունկն են մատուցանում մոգերի խօսքերին, այսուամենայնիւ Պարսից տէրութիւնը այն զօրութիւնը չունէր, որով նա կարողացել էր վերանորոգել Վարդանանց և Վահանանց ժամանակուայ պատերազմները, և որ աւելին է ժառանգութեան կռիւներով բոլոր Արեաց աշխարհը երկպառակվել էր և իրանք իրանց ձեռքովն էին պատրաստում իրանց ահագին տէրութեան կործանումը։ Այդ մի և նոյն ժամանակները միւս կողմից Բիւզանդացոց կայսերութիւնը ազատվում էր սպգաց արշաւանքներից և մէկ քանի կայսերների ձեռնտուութեամբն իրան ուշքը դարձնում է դէպի արևելք. այսպէս էին՝ Անաստաս կայսրը՝ հինգերորդ դարի վերջերը և վեցերորդի սկիզբները, Յուստինիանոսը վեցերորդի առաջին կիսում, Մօրիկը՝ վեցերորդի վերջերը, Հերակլէսը՝ եօթներորդի առաջին կիսում։ Այսպիսի կայսերների ձեռքով Յունաց անկեալ կայսերութեան նշանակութիւնը միանդամայն բարձրանում է։ Ահա սրանից է, որ հինգերորդ դարի վերջերից յետ, Պարսից հալածանքները մեղմանում են։ Այսուամենայնիւ Հայաստանը ինչպէս խորշում էր Պարսիկներից, նոյնպէս խորշում էր և Յոյներից և նոցա

քաղաքականութիւնը երբէք չէ կարողանում հաստատ արմատ բռնել Հայոց Հողի վերայ: Հայաստանի Հողն էր, որ առաջին անգամը բեղմնաւորեց քրիստոնէական ուսումը. Հայաստանի Թագաւորն էր, որ առաջին քրիստոնեայ Թագաւոր Հանդիսացաւ: Այդ էր որ մէկ քանի ժամանակներից յետոյ արձագանք տուեց Հայոց սրտերի մէջին և իրանց առաքելական Լուսաւորչայ ձեռամբը կարճ մէջոցում Հայերը Թողին Հեթանոսութիւնը առ յաւիտեան. և նորա Հետ կապուած բազմադարեան չիշատակը և ուղղութիւնը: Քրիստոնէութիւնը Թագաւորում է և Հեթանոսութիւնը իրան կարգերովն ոչնչանում է: Ժողովուրդն արձարձում է Աստուածաշունչ գրքովը և սորա արձածողների բարոյական ներգործութիւնը սակաւ առ սակաւ սկսում է բարձրանալ և տիրապետող դառնալ մեր աշխարհումը: Այդ բարերար սկզբունքներից դուրս է գալի կաթողիկոսութիւնը և նորա բարոյական իշխանութիւնը. կաթողիկոսի իշխանութիւնը օրէցօր աւելանում էր և նորա ձայնը ամենայն տեղ և ամենայն մարդի սրտի մէջ լսվում է. իսկ Թագաւորինը ընդհակառակն է լինում: Հայաստանը ունենում է այնուհետև լաւ վարդապետներ, Հայրապետներ և եկեղեցական սրբազան կարգեր. իսկ քաղաքագէտ իշխաններից և Թագաւորներից, ինչպէս և քաղաքական կարգադրութիւններից՝ զուրկ էր մնում: Հայաստանը արձարձվում էր կրօնական Հոգով. իսկ քաղաքական կեանքը բոլորովին պակասում էր նրանից:

Վերջապէս Թագաւորը բանտարկեալ՝ խուժաստան է նստում. իսկ կաթողիկոսութիւնը մնում է Հաստատ և եկեղեցին զարդարվում է բազմաթիւ ուսումնական վարդապետներով և գեղեցիկ կարգադրութիւններով, որոնք Հիմնուած են այն աւանդութեանց և կարգերի վերայ, որոնք մնացած են առաքելոց և Լուսաւորչայ ժամանակներից: Վերջապէս Հայաստանի որդիքն՝ իրանց եկեղեցւոյ անկախութեան և կրօնի ազատութեան Համար, Վարդանանց և Վահանանց ժամանակները ցոյց տուին՝ թէ Հայերը պատրաստ էին նահատակուելու կաթողիկոսին իրանց առաջնորդ ունենալով:

Հինգերորդ դարի վերջերից և վեցերորդի սկիզբներից յետոյ կայսերաց ներգործութիւնը թուլի է արևելքումը. մէկ խօսքով նոքա կամենում էին Հայոց աշխարհի մէջ այնպէս վարուիլ, ինչպէս իրանց կայսերութեան մէջ: Հայերը թէպէտ և մէկ քրիստոնեայ ազգի օգնութեան Հարկաւորութիւն ունէին, այնուամենայնիւ Հայաստանեայց եկեղեցւոյ Հոգին խորշում էր դրացի ազգերի եկեղեցիներից, որոնք, ըստ մեծի մասին, ծառայում էին նոցա քաղաքականութեան, այն ինչ Հայոց եկեղեցին բոլորովին մնում էր ազատ ամեն մարմնաւոր իշխանութեան ազդեցութիւնից: Այն ինչ Հայաստանը քրիստոնէական Հաւատին ջատագով էր Հանդիսացել արևելքում և իրան արեան Հեղմամբը պահպանում էր Աւետարանը, Յոյները Հաւաքուած էին Քաղկեդոնումն Եւտիքէսի աղանդը Հերքելու:

Հայերը մինչև այդ ժամանակները ամեն ժողովքի մէջ էլ գտնուել էին. ինչպէս Նիկիայումբ՝ Կոստանդին կայսեր ժամանակը, Կոստանդնուպոլսումը՝ Թէոդոս մեծ կայսեր ժամանակը, Եփեսոսումբ՝ Թէոդոս Բ. ժամանակը. բայց Քաղկեդոնումբ չը գտնվեցան մի քանի քաղաքական հանգամանքների պատճառով, նա մանաւանդ, որ հարկաւորութիւն էլ ստիպողական չկար այս մասին, ըստ որում Հայերը և աւանդապահ հայրապետը պատերազմի դաշտումն էին և գինուորներին աւետարանի հոգուվը վառում և այլն:

Վարդանանց և Վահանանց պատերազմներից յետոյ՝ երբ մեր աշխարհը բաւականին անդորրացաւ, Հայերը իմացան Քաղկեդոնի միջի պատահած եղելութիւններն և կարգացին Ջենոն կայսեր Հենոտոնոն անուամբ հրովարտակն՝ որով կայսրը կամենում է Եւտիքական մտքերը խաղաղացնել և իւր տէրութեան մէջ եղեալ քրիստոնէից հրամայում էր միմեանց հետ սիրով վարուել, և որովհետև վերոյշեալ Հենոտոնոնը մտքն էր գրած և ոչ միանգամայն Եւտիքական էր և ոչ ուղղափառութիւն, Հայերն էլ բարկէն կաթողիկոսի ժամանակը, որ նրա տեղ Յովհան Փանդակունուց յետոյ, Աղուանից և Վրաց կաթողիկոսների հետ միասին հերքեցին Եւտիքէսի մոլորութիւնը, և որովհետև կայսեր հրովարտակից երևում էր՝ թէ Քաղկեդոնի ժողովը համամիտ է եղել Եւտիքէսին և նորա ուսմանը, այս պատճառաւ էլ Քաղկեդոնի ժողովը ուղղափառ չը համարեցին 491 թ. Վաղարշապատ քաղաքումն:

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ:

Հինգերորդ դասի վերջերեցը մինչև եօթներորդի սկիզբները:

Վաղարշ թագաւորը կարծես պարսկական տէրութեան դրութիւնը լաւ էր ճանաչում և իրան կառավարութեան միջին կամենում էր ամենայն բան անդորրութեամբ անցկացնել. բայց այս ուղղութիւնը նենգաւոր իշխաններին և աւատել մոգերին՝ հաճելի չէր երևում, ուստի Վաղարշը զրկվում է իրան աթոռից և կուրանալով բանտի մէջն է ձգվում: Վաղարշից յետոյ թագաւորում է Կաւատը, որ արիւնարբու և աշխարհակործան Պերոզի որդին էր, ի հարկէ Կաւատը պէտք է մոգերի խօսքերին հաւատ էր ընծայել և քրիստոնէից դէմ հալածանք յարուցանէր:

493 թուին Հայաստանը, Վահանի մարզպանութեան վերջին ժամանակները, կրկին անգամ տեսնում է մոգերի ամբոխը Հայաստանի մէջ, որոնք շատ

տեղեր կրակատուն են շինում, ազգին մոխրապաշտութիւնը ընդունել տալու համար: Վահանը, որ այնքան ժամանակ նահատակութիւններ էր արել մեր եկեղեցւոյ պաշտպանութեան համար՝ վառուեցաւ, բորբոքուեցաւ, մոգերին սրի ճարակ տուեց, իսկ կրակատուններն այրեց: Կաւատը զայրացած անձամբ կամենում է Հայերին պատժել, բայց գործը ուրիշ շրջան է առնում. Անաստաս կայսրը, որոյ ժամանակները կայսերութիւնը սկսել էր հոգի առնուլ. կամենում է Միջագետումը հաստատ ոտք դնել: Պարսիկները Հայերի հետ կամայ ակամայ հաշտութիւն են խօսում, և ամենայն զօրութեամբ Միջագետաց վերայ են յարձակվում, ջարդում են Նուվինոս զօրավարին և Ամիդ քաղաքն առնում: Պարսիկները յետ են դառնում և Միջագետը կրկին անգամ Յունաց ձեռքն է անցկենում: Այսպիսով գրեթէ բոլոր վեցերորդ դարը Կաւատի, Խոսրովանուշի, Երուանդի և Որմզդի՝ Պարսից Թագաւորների, և Անաստաս, Յուստինիանոս, Յուստինոս, Տիբերիոս՝ Յունական կայսերների ժամանակն՝ անդադար պատերազմներ էին լինում երկու մեծամեծ տէրութիւնների մէջ: Հայաստանը և նորա շրջակայքը գրեթէ բոլոր պատերազմների ասպարէզ էին դարձել, և պատերազմների ելքը մեծ կախումն ունէր Հայոց նախարարներից և նոցա զօրութիւնից: Այդ ժամանակներն էր, որ այնքան երևելի գտնուեցան Հայոց նախարարաններից շատերը. ինչպէս են՝ Ներսէս պատրիկը, Արտաւանը, Ներսէհ՝ Յունաց կողմից:

Պարսից Թագաւորները՝ ի հարկէ ակամայ կամօք պէտք է քաղցրութեամբ էին վարուել Հայոց հետ և Վահանից յետոյ, որ մեռնում է 510 թուին, նորա տեղը կառավարում է նորա Վարդ եղբայրը և ապա մէկ քանի ժամանակներից յետոյ Մժէժ Գնունի քաջ Հայ իշխանը, որնոր Հոնաց ասպատակաց առաջն էլ կտրեց, և այն պատճառաւ մեծ Համարումն ունէր Խոսրովի առաջին:

Հայաստանի վերայ միայն այն ժամանակներն են Հալածանքներ յառնում և պարսիկ մարզպաններ գալի, երբ որ վեցերորդ դարի կէսումը, Յուստինիանոս կայսեր ժամանակները, երկու մեծ տէրութեանց մէջին երկար ժամանակ խաղաղութեան պայմաններ հաստատուեցան, որով իւրանքանչիւր տէրութիւն պէտք է իւր հին սահմաններով բաւականանար: Այս ժամանակները գալիս են՝ Դենշապուհ, Վահրամ, Վարազդատ և Սուրէն պարսիկ մարզպանները, որոնցից առաջինը և վերջինը աւելի Հալածանքներ են յարուցանում և մեծամեծներին նեղութեան մէջ են ձգում. Սուրէնը սպանում է Մանուէլ Մամիկոնեանին՝ Վարդի Թոռանը. նորա եղբայր Վարդանը Յուստինոս կայսեր խոստման վերայ վստահացած՝ ապստամբութեան գլուխ է բարձրացնում և նախարարաց հետ միասին ընկնում է Սուրէնի վերայ, սպանում է նրան և նորա զօրութիւնը ջնջում, մոգերին կոտորում է և կայսերը յայտնում է, հարկը նրան ուղարկելով՝ որ ինքն էլ ձեռնտու և օգնական լինի մեր աշխարհին, ընդդէմ պարսկական զո-

բուլթեան, բայց կայսրն, որոյ գրաղմունքը միայն զբօսանքներն էին և շռայլ կենցաղավարուլթիւնը, և որն որ այնքան անվոյլթ եղաւ, որ Հիւսիսային Իտալիան ձեռքէցը կորչելից յետ էլ զարձեալ անգործ է մնում, անիոյլթ է լինում և արևելքում: Պարսիկները մեծ գօրուլթեամբ մտնում են Հայաստան, Վարդանը անօգնական մնացած կայսեր կողմից, առաջին անգամը Հայոց նախարարաց ձեռնտուուլթեամբ յաղթող է Հանդիսանում և Պարսիկներին Հալածում է Վասպուրականից, բայց Պարսիկները կրկին գալով և Հայ նախարարաց մէջ երկպառակուլթիւն ծագելով Վարդանն էլ չէ կարողանում Վահրամ զօրավարի առաջն առնել: Վարդանը փախչում է Կոստանդնուպօլիս, կայսրը նրան օգնուլթիւն է տալիս, բայց շատ ուշ: Հայաստանը բոլորովին Պարսից ձեռքն է ընկնում 578 թուին:

Հայաստանի ապագայ վիճակը պէտք է որ վատթարանար, բայց հանգամանքները փոխվում են: Մօրիկ կայսրն՝ որ Յուստիանոսից յետոյ երրորդ կայսրն էր, սիրով էր Տիզբոնի դրան հետ և նորա թագաւոր Խոսրով Բ. հետ, որ Որմզդից յետոյ թագաւորեց. հակառակ կուսակցուլթիւնից Խոսրովը զրկվում է աթոռից, բայց Մօրիկ կայսեր օգնականուլթեամբ և Հայ իշխանների զօրքով՝ ինչպէս էին Ներսէսը, Մուշեղ Մամիկոնեանը, Սմբատ Բագրատունին և ուրիշները, կրկին անգամ Հաստատվում է աթոռի վերայ: Խոսրով Բ. այնուհետև առանձին խնամք է ունենում մեր ազգի վերայ և նրան օգնող

իշխաններին մեծ աստիճանի է հասցնում, Սմբատ Բագրատունուն մարզպան կարգում է 492 թուին: 600 թ. նորա տեղը նստում է Գուրիէ Սահառունին մինչև 623 թիւը, որա ժամանակները Հայաստանի մեծ մասն անդորրուլթեան և անգործունէուլթեան մէջ էր, այն ինչ Տարօն գաւառի Մամիկոնեանց տան կալուածատիրուլթիւնները շատ արիւնհեղուլթիւններ են կատարվում: Մօրիկ կայսրը, որ բարերար գրտնուեցաւ Խոսրով Բ. սպանուեցաւ Փոկասից. Խոսրովը, կամեցաւ վրէժխնդիր լինել նորա մահուանը, 140 հազար զօրքով մտաւ Յունաց կայսերուլթեան պատկանեալ Հողը, Մուշեղ Մամիկոնէից նախարարը նրան օգնուլթիւն չէ դնում, Խոսրովը բարկացած Միհրան զօրավարին 30,000 զօրքով ուղարկում է Մուշեղի վերայ. Պարսիկները Տարօն են մտնում և զօրքով յարձակում են Մեխարի և Աստեղան վերայ. Գայլ Վահանը, որ Մուշեղի ազգականներից մէկն էր, զանազան հնարքներով և խարդախուլթեամբ սպանում է Միհրանին և կոտորում է նորա զօրքերը: Այնուհետև պարսիկները երկար ժամանակ մարտնչում են Մամիկոնէից տան հետ, բայց Մամիկոնեանք յաղթող են հանդիսանում միշտ: Գայլ Վահանի և նորա որդի Սմբատի՝ Թոռան Վահանի՝ որ ապրում էր իրան կնոջ տոհմի անունամբ Կամսարական, նահապետուլթեան ժամանակները Պարսիկները չեն կարողանում ընկճել Մամիկոնեանց մինչև Երաբացւոց գալուստը:

ԿԻՒՐՈՊԱՂԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԱԲԱՑԻՈՑ ԱՐՁԱՒԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԿԱՄ 631—693 ԹԻՒԸ։

Սասանական Թագաւորներէն և Յունաց կայսրներուն մեծամեծ պատերազմներէն մէկն համարուած է այն, որ պատահեցաւ Խոսրով Բ. և Հերակլէս կայսեր մէջ, որ Թագաւորեց 610—621 Թիւը։ Իսկզբան յաղթութիւնը լինում է բոլորովին Սասանականի կողմն մինչև 622 Թիւը և Եգիպտոսը, Սուրբ երկիրը, Ասորոց երկիրը, Փոքր Ասիան՝ ընկնում են Խոսրովի ձեռքը, որ և Սուրբ խաչը դերում է Երուսաղէմիցը, բայց 622 Թուից սկսեալ Յունական զօրութիւնը Մէջերկրական ծովիցը և ապա Սև ծովիցն յարձակուելով՝ Պարսիկները հալածվում են մինչև բուն Պարսկաստան. Խոսրովը սպանվում է Հարազատ Կաւատ Բ. որդուցը, որ Թագաւոր է նստում նորա տեղը, Սուրբ խաչը դերութիւնից ազատվում է և հին սահմաններն երկու տէրութեանց հաստատվում են և Հայաստանը Պարսից ձեռքն է ընկնում, Վարազտիրոց Հազրատունին մարզպան է կարգվում մինչև 631 Թիւը։ Այնուհետև բանը փոխվում է, Տիզբոնի պալատը մեծ շվոթութեանց մէջ է ընկնում (այր զարմը ելանէին տիրել Արեաց աշ-

խարհին)։ Ատրպատականի մարզպան Իոստոմը այս շվոթութեանց ժամանակը կամենում է ինքնագլուխ թագաւորել Պարս աշխարհի կողմերը և Հայոստանը իրան ձեռքը դրաւել. Վարազտիրոցը հերակլեան է ապաւինում և Հայոստանը կրկին անգամ Յունաց ձեռքն է ընկնում, վերոյիշեալ Դաւիթ Սահառունին՝ առաջին Կիւրապաղատ է կարգվում 632 Թուից սկսեալ։ Բայց Արաբացիք արդէն վառուած խլամով դուրս են գալի Արաբիոյ թերակղզուցը, դրաւում են Պաղեստինէն, Ասորիքը և Տիզբոնի դրան տէրութիւնները ի օգուտ քաղելով Պարսից ընդարձակ տէրութիւնն էլ են նուաճում։ Ծմարի ժամանակները 640 Թուին Արդերահման մէկ զօրավարի առաջնորդութեամբ մտնում են Հայոստան, այդ միջոցին Հերակլէոս մահուան տնկոզնում էր և Հայոց նախարարներն էլ անփոյթ։ Մամիկոնեան Տիրանը, որ Գայլ Վահանի Թոռան որդին էր, հրաւիրում է նախարարներին Հաւաքական Թշնամու առաջն առնել. բայց նոքա անփոյթ են մնում. Տիրանը՝ իրան վրդ զօրքով կամենում է Հայոստանի Հարաւումը նրանց առաջը կտրել, բայց մեռնում է Գրգուռ լերան մօտ։ Արդերահմանը արձակ Համարձակ աւերում է Հայոստանը, մինչև անդամ մարզպանական Դվին քաղաքն էլ առնում է և 35 Հազար Հոգի գերում է։ Բայց այս արշաւանքը մէկ վայրկեան նման բան էր, և մեր աշխարհը դարձեալ մնաց Յունաց ձեռքին։ Կոստանդ կայսրը 642 Թուին Վարազտիրոցին Հայոց վերայ Կիւրապաղատ

է կարգում և ապա նորա որդի Սմբատին:

Հայերը տեսնելով Արաբացւոց զօրանալը և Յունաց անփութութիւնը՝ մեր աշխարհի ապահով պահպանութեան մասին, միևնոյն ժամանակը տեսնելով Յունաց կրօնամոլութիւնը, Օսման ամիրապետի իշխանութեան ժամանակը մտնում են Արաբացւոց իշխանութեան ներքոյ: Այս իմանալով Կոստանդ կայսրը բարկութեամբ մտնում է Հայաստան 649 թուին և բոլոր աշխարհը գրաւելով՝ պահապան զօրք է կանգնեցնում. այն ինչ Օսմանն էլ իրան կողմից զօրք է ուղարկում և Յոյներին արտաքսում և Հայերից շատերին պատանդ է առնում և ծանր հարկ է դնում նոցա վերայ: Հայերը նեղացած կայսերն են դիմում, Համազասպ Մամիկոնեանը կիւրապաղատ է կարգվում: Ամիրապետը բոլոր պատանդներին կոտորել է տալիս և արդէն պատրաստութիւններ էր տեսնում Հայաստան մտնելու, միայն ինքն պանվում է. և Մուավիան, Օմէյեան Հարստութեան հիմնողն, ամիրապետ է կարգվում: Մահմետականութեան մայրաքաղաքը լինում է Դամասկոսը և Արաբացւոց զօրութիւնը աւելի մօտենում է Հայաստանին, Հայերը Հպատակում են Մուավիէին և Համազասպ Մամիկոնէիցը յետոյ Հայոց վերայ կարգվում է նորա եղբայր Գրիգոր Մամիկոնեանը 659 թուին: Սորանից յետոյ Հայաստանը ոտնակոխ է լինում առՀասարակ կամ Արաբներից կամ Յոյներից. լաւ էր Հայերի համար մնալ Յունաց ձեռքին, քան թէ Արաբացւոց, ըստ որում նոքա քրիստոնեայ են.

բայց Յոյները իրանց վարմունքով փոխանակ գրաւելու Հայերին, աւելի Հեռացնում էին նրանց իրանցից, որովհետև նոքա ունէին դէպի մեզ կրօնական ատելութիւն և միշտ կամենում էին քաղաքական ծառայութեան Հետ և կրօնականը և եկեղեցին միացնելու, և Հին ծէսերն ու արարողութիւնները Հիմն ի վեր տապալել: Հայերին իրանց եկեղեցուց բաժանելը դժուարին էր, (*) ուստի շատ փորձերից, նախատինքներից և նահատակներից յետոյ Հայերը լաւ Համարեցին Մահմետականի իշխանութեան տակ նուաճվել, և 693 թ. Աբդալմէլիք ամիրապետի ժամանակները, միանգամայն ոստիկանաց կառավարութեան տակն են մտնում:

ՈՍՏԻԿԱՆԱՑ

ԹԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Եօթնեերորդ դարու վերջերից մինչև ինհերորդ դարու կէսը:

693 թուին, երբ որ վերջին անգամը Յոյները թողին Հայաստանը, Աբդալմէլիք ամիրապետը ուղարկում է Հայաստան Աբդուլլայ կառավարչին ոստիկան, որ մարզպանական Դվին քաղաքը իրան բնակութեան տեղ է շինում:

(*) Մխ թերել՝ Մօրկէ, Հերակլէս և Կոստանդ կայսրների արարմունքը և Աբրահամ, Եզր և Ներսէս շինող կաթողիկոսաց ժամանակները:

Այնուհետև Արաբացւոց գլխաւոր նպատակն այն է լինում որ Հայաստանի նախարարական կառավարութիւնը ոչնչացնեն և երկիրը միանգամայն կառավարեն իրանք, և այս պատճառաւ չանք՝ի գործ են դնում նախարարներին կատորելու կամ Հաւատն ուրացնելու: Եւ ապրելու նոցա տիրապետութեան ժամանակները Հայաստանը իրան նախարարներից շատերին կորցնում է: Արդուլլան, երբ որ գալիս է Հայաստան դառնդան հնարքներով մեծամեծներից շատերին իրան մօտ է կանչում և Սահակ կաթողիկոսին էլ նոցա հետ միասին՝ շղթայակապ ուղարկում է Դամասկոս: Այնուհետև մեր աշխարհը կարծես անտէր մնալով՝ թալանվում է: Սմբատ Բագրատունին, որ դերեակների թունից էր, մեկ հնարքով վախչում է և գալով Հայաստան տեսնում է Հայկազանց նեղութիւնը, խմացում է տալիս Յուստինոս կայսերը, որ Լևոն Իսաւրացու առաջնորդութեամբ բաւականին զօրք է ուղարկում, Արաբացւոց զօրութիւնը Արդուլլայի առաջնորդութեամբ, Վարդանակերտի մօտ, սաստիկ ջարդվում է և մեկ քանի մարդով հազիւ վախչում է: Սմբատը լինում է Հայոց աշխարհի վերայ կիւրապաղատ և մեր աշխարհը մեկ քանի տարի խաղաղութիւն է վայելում, բայց այս խաղաղութիւնը շատ կարճատև է լինում: Լևոնը կայսերանում է և պատկերամարտութիւնը չարաչար սկսում է վրդովել կայսերութիւնը, Հայոց նորա հետ ունեցած կապը քայքայվում է և այն ժամանակը Արաբները յաջող միջոց

գտնելով Մոհմատ զօրավարին են ուղարկում Հայաստան: Ներսէհ Կամսարականը և Սմբատ կիւրապաղատը միացեալ զօրքով նրան վախցնում են, մինչև երբ որ Հայերի մէջ երկպառակութիւն է ընկնում, Մոհմատը կրկին անգամ մտնում է Հայաստան և ապառնում է ամենայն բան սրի ճարակ տալ: Սահակ կաթողիկոսը, որ միշտ Հայաստանի անդորրութեան վերայ էր մտածում, մեկ հնարքով ազատվում է բանտիցը և գալիս է Մոհմատի առաջը՝ նորա բարկութիւնը շիջուցանելու համար, բայց խաւսան չհասած մեռնում է մեկ աղաչանաց թուղթ գրելով Մոհմատի վերայ: Մոհմատն այն թուղթը կարդալով խաղաղութիւն է խոսում Հայոց հետ և Հայերը խաղաղութեամբ Արաբացւոց իշխանութեան ներքոյ են մնում, այսուամենայնիւ այս խաղաղութիւնն էլ կարճատև է լինում:

Երբ որ Արդուլլան ամիրապետ է դառնում, կամենում է Հայերիցը Վարդանակերտի վրէժն առնուլ, ուղարկում է Կաշմ զօրապետին, ոստիկանի պաշտօնիս, սաստիկ հրամայելով Հայոց նախարարներին ոչնչացնելու: Ոստիկանը երբ որ Հայաստան է հասնում, համբաւ է հանում՝ թէ ամիրապետը կամենում է նախարարներին բարձր աստիճանի հասցնել՝ իրանց հաւատարմութեամբ ծառայելու համար: Հայ նախարարները պէտք է գնացել էին Դամասկոս և դնալուց առաջ պէտք է երդուել էին Նախիջևանի եկեղեցումն, ուր խարդախ Արաբացւոց հրամանովն այրվում են: Հայերը այսպիսով մեծ

նեղուԹեան մէջ էին մինչև 716 Թիւը։ Օմար ամիրապետն էլ ուղարկելով Վլիթ ոստիկանին՝ մեր աշխարհը բաւականին խաղաղացնում է։ Այս ժամանակներն էր, որ Յովհան իմաստասէր կաթուղիկոսն իրան արտաքին վարքովն ոստիկանին և ամիրապետին սիրելի լինելով՝ նրանցից շատ պատիւ է ընդունում և մեր ազգին՝ իրան կաթուղիկոսուԹեան ժամանակը շատ խաղաղ է պահում։ Այնուհետև, մինչև ութներորդ դարի կէսն, առհասարակ Հայաստանն անդորր էր, երբ որ Արաբացւոց գօրուԹիւնը արևելքումը և արևմուտքումը մեծ մեծ գործքերով էր զբաղուած։ 727 Թուին գալիս է Վլիթի տեղը Մահմետն, որն որ չորս տարիից յետոյ Դաւիթ կաթուղիկոսի միջնորդուԹեամբը յետ է կոչվում ամիրապետիցը։ Գալիս է Արդլազիզը և յետոյ Մրուանը 742 Թուին։

Արդէն Արաբացւոց մէջ կրօնական կուսակցուԹիւնները շատացել էին և Օմէյեան տան մէջ արհաւիր էին սպառնում, Մրուանը, որ Օմէյեան տան կողմից էր, խաղաղուԹեամբ է վարվում Հայոց հետ և մեծ յոյս ունէր նոցա վերայ, Բագրատունեաց տանից Աշոտին մինչև անգամ իշխանաց իշխան է անուանում։ Դամասկոսի դրան խռովուԹիւնը սաստկանում էր, Վլիթ ամիրապետը սպանվում է և Մրուանը Հայաստանի կառավարուԹիւնը յանձնելով Աշոտին, ինքն Հայոց և ուրիշ ազգաց օգնականուԹեամբ Օմէյեան ՀալաստուԹեան վերջին ամիրապետն է դառնում. Աշոտի պատիւն առաւելանում է և

արտօնուԹիւնները շատանում։ Բայց այս անդորրուԹիւնը Հայոց աշխարհումը շատ կարճատև էր։ 750 Թուին Արաբական աշխարհի խռովուԹիւնները կրկին անգամ սաստկանում են. Մրուանը սպանվում է և Աբբասեան տունն է բարձրանում խալիփայի աթոռի վերայ Հաղթադրումը։ Այնուհետև Ալմանսուր ամիրապետն Աշոտի փոխանակ ուղարկում է Եզիտ ոստիկանին, որ Հայերին շատ նեղացնում է։ Հայոց նախարարները և աւելի Մամիկոնեան Դաւիթ և Գրիգոր իշխանները կամենում են ոտի կանգնել, բայց խոհեմ Աշոտ Բագրատունին քաջ ճանաչելով Հայոց տկար գօրուԹիւնը և անմխիթարական հոգին, ընդդէմ է լինում այս բանին, այս պատճառաւ կուրացնում են նրան (Աշոտին)։ Առհասարակ Աբբասեան տան բարձրանալուցը յետոյ Հայաստանը մեծ նեղուԹեան մէջ է ընկնում. գալիս են Սուլէյման, Բէքիր և Հասան ոստիկաններն, որոնք չարաչար նեղուԹիւններ են հասցնում Հայոց ազգին, և նրանցից առաւել Հասանը։ 778 Թուին Մուշեղ Մամիկոնեանը սկսում է գլուխ բարձրացնել անիրաւ ոստիկանների դէմ և նոցա անպատակների առաջը կտրել, միւս նախարարները սորանով սիրտ առած հաւաքում են 5,000 զինուոր և Մուշեղի հետ միանալով՝ բոլորովին ապստամբում են Ագարացւոց իշխանուԹիւնից. բայց Թշնամեաց գօրուԹիւնը աւելի շատ էր, որովհետև Հասնում էր մինչև 30,000 հոգու. Մուշեղը սպանվում է և մնացածները ցրվում են ամուր տեղեր։ Հայաստանը այնուհետև տակնուվրայ է լինում և

ոչ ոք չէ համարձակվում Արաբացւոց արշաւանաց առաջն առնել, միայն Աշոտ մսակերը և նորա եղբայր Զապուհը Հայաստանի արևմտահիւսիսային կողմերն, իսկ Սահակ, Համազասպ և Մեհրուժան Արծրունի իշխանները Հայաստանի արևելքումը մեր աշխարհը տեղ տեղ ապահով էին պահում, այս խառնակութիւնը լինում է մինչև Հարուն—Ալ—Ռաշիդի ժամանակները, որ Եղիա ոստիկանին Հայաստան ուղարկելով, զանազան խարդախութեամբ ընկճում է իշխաններին և Սահակ և Համազասպ Արծրունի իշխանները նահատակվում են հաւատի համար: Հարուն—Ալ—Ռաշիդի և Ալմամունի ժամանակներն, երբոր Բաղդադի դուռն իրան ամենամեծ զօրութեան ժամանակներումն էր, Հայաստանը խաղաղ էր՝ Կուղմայ և Հոլ ոստիկանաց ժամանակը: Հայերն ոչինչ ապստամբութեան խորհուրդ չեն մտածում, բայց լիններորդ դարի միջերում հանգամանքները փոխուեցան:

Պարսիկները արդէն սկսել էին իրանց ազատութիւնը միտ բերել և Հայերին ևս ղրգռել: Հայոց նախարարութեանց միջին ամենից զօրեղն էր Բագրատունեացը. Սևադա անուամբ մէկ երևելի Պարսիկ ամուսնանում է Բագրատունեաց տանից մէկ աղջկայ վերայ և Սմբատ Բագրատունի սպարապետին և Սահակ Սիւնեաց իշխանին իրան կողմն է ղրաւում և նոցա հետ միասին ոտի է կանգնում Արաբացւոց դէմ: Հոլ ոստիկանը յորդորում է նոցա իրանց խորհրդից յետ կանգնել, և Թաւիթ կաթողիկոսին էլ մէջ է ձգում, բայց 'ի գո՛ւր, նոքա համաձայն չեն լինում. Հոլը 2,000 զօրքով յանկարծ նոցա վերայ է ընկնում, Սահակ իշխանը սպանվում է և Սևադէն վախչում է, իսկ Սմբատը Թաւիթ կաթողիկոսի միջնորդութեամբ հաշտվում է: Մինչ այս միջոց այն 835 թուին Մուտասիմն ամիրապետը Հոլին յետ է կոչում և Բագրատունիին նշանակում. ամիրապետի դրութիւնը դժուար էր, նորա ընդարձակ տէրութեան մէջ ամենայն տեղ խռովութեան հոգի էր երևում: 839 թուին Բաբան պարսիկը կամենալով պարսկական թագաւորութիւնը վերանորոգել, Բագրատ Պատրկին իրան կողմն է դրաւում, բայց Սմբատ Բագրատունի սպարապետը Հայոց զօրքերը ամիրապետի օգտին գործ դնելով՝ յաղթութիւնը անց է կենում արաբական Արլին զօրավարի կողմն, որ գնալով Բաղդադ իրաց եղելութիւնները նկարագրում է և խալիֆայի առաջը: Բագրատ Պատրկի խարդախութիւնները դուրս են գալի, գալիս է Ապուսէթ ոստիկանը և խարդախութեամբ բռնում է Բագրատ Պատրկին, այն ինչ Սասունեցիք ազատում են Բագրատին և Ապուսէթին սպանում: Ամիրապետը բարկանալով ուղարկում է Բուղային, որ պէտք է Ապուսէթի մահուան վրէժը Հայերից հանէր, և որ աւելի իրան նպատակին հասնում է իրան խարդախ հրաւէրներովն և միշտ ամենայն բան ծածուկ է բռնում, այն ինչ Հայերը հաւատ ընծայելով նորա պատիր բաներին, միշտ նորա առաջն են գնում և շղթայակապ լինում:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ըստ յունաց երկոտղ.

Բագրատունեաց Թագաւորութեան կանգնման և անկման նկարագիրը։

Արշակունեաց վտառաւոր հարստութեան անկմանը, կարելի է ասել, երկու զօրաւոր պատճառներ եղան՝ բացի այն, որ մեր ժողովուրդը մոռանալով միանգամայն իւր Թագաւորի աշխարհային զօրութիւնը ոչինչ հոգս չէր քաշում այս մասին։ Նախ՝ որ երկու չափշտաւոյ դադան էին շրջապատել մեզ՝ Սասանականը արևելքից, լակ Բիւզանդիայինը արևմուտքից։ Երկրորդն էլ այն էր, որ նախաթաթական կառավարութիւնը և իշխանութիւնը վերկենալով վաղարշակայ ժամանակները հսկայաքայլ յառաջ էր խաղում. ի վերջոյ այնքան զօրացաւ, որ իւր հարազատ Թագաւորին անգամ պլուխ չէր ճանաչում մինչև 10 և 11-դ դարերումը Գաղղիաում։

Հայաստանի աշխարհագրական դրութիւնը և կառավարչական մասը մեծ ներգործութիւն ունէին

Բուզան յանդուգն զօրութեամբ մտնում է Տարօն և ամենայն բան սրի ճարակ է տալի և Բագրատ Պատրկի—Աշոտ-Ե Գաւիթ ոդիկերանցը բռնում է. Հայոց նախարարների մէջ չկար այն միաբանութիւնը, որոնք կարողացել էին արաբական զօրավարի առաջը կտրել։ Վասպուրականի Աշոտ Արծրունի իշխանը, որ իրան քաջութեամբն այն աշխարհը բաւականին ապահով էր պահում. տեսնելով Հայոց անհամաձայնութիւնը, Բուղային առաջն է գնում և շղթայակապ է լինում։ Սմբատ Բագրատունի սպարապետն ոչինչ չէ կարողանում անել, այսպիսով Հայաստանը շատ կտորածներ և տապատակներ կրելուց յետոյ, Բուղան հրաւիրում է Սմբատ սպարապետին իրան մօտ և նրան կապած իշխանների հետ տանում է Բաղդադ։ Ամիրապետը բոլորին էլ բանտն է ձգում և հրամայում է հատատն ուրանալ, շատերը նահատակվում են, շատերն առ երես ուրանում են և Սմբատ սպարապետն էլ խոտովանելով Քրիստոսի Հատատը՝ մնում է բանտի մէջ 856 թուին, և այն պատճառաւ առում է խոստովանող։

Հայաստանի վիճակի վերայ։ Մօտ 400 տարի էր, որ Հայաստանը զրկուած էր իւր թագիցը, բայց յանկարծ 9-դ դարի կիսերումը տեսնում ենք, որ բարձրանում է՝ Բագրատունեաց տան ձեռամբն։ Արդեօք ինչ էր պատճառը. պէտք է ասենք, որ վերոյիշեալ երկու Հարուածները Հայաստանի համար այն ժամանակը վերացել էին։ Արևելեան Սասանեան գազանը, որ արդէն իւր ժանտը բաւականին վեր էր աճել խեղճ քրիստոնեայ Հայոց վերայ, պատմութեան ասպարէզիցն անհետացել էր. նորա տեղը դուրս էր եկել Մահմետական Արաբը, որ նմանապէս իւր կարգին իրան դառն բաժակը վեր աճաւ Հայաստանի վերայ. բայց ՚ի վերջոյ 9-դ դարումը կորցրեց իւր ահագին զօրութիւնը, կտոր կտոր եղաւ Բաղդադի խալիֆայութիւնը, որ տարածվում էր Ատլանտեան ովկիանոսիցը մինչև Չինական պարիսպները։ Խալիֆան կամ ամիրապետը խաղալիք էր դարձել նահանգական իշխանների կամ ոստիկանների ձեռքին։ Արևմուտքիցն էլ Բիւզանդիան իւր կրօնական ազդեցութիւնը դարաւոր ժամանակ գործ դնելուց յետոյ, արդէն 8 և 9-դ դարերումն այնքան ներքին անկարգութեանց մէջն էր ընկել, և արտաքին թշնամիներից այնքան նեղացած, մինչև որ ինքն իրան հազիւ հազ կարողանում է պահպանել և շունչ քաշել։ Հայաստանի թագի վերանորոգութեան միւս բարեպատեհ միջոցն էլ այն էր, որ 9-դ դարի կիսերումը Բիւզանդիոյ նեմցացած կայսերութեան աթոռի վրայ Հայկազն

Արշակունի բարձրացած էր, Հայաստանի որդիքը, որոց մէջ պատերազմական հոգին վառվում էր, տեսնելով իրանց հայրենի գինուորութեան թշուառ դրութիւնը, իրանց համար ընդարձակ ասպարէզ էին որոնում, գրվում էին կայսեր գինուորականութեան կարգը և նրանով իրանց համար մեծ անուն և փառք էին ժառանգում; և երբոմն մինչև անգամ Բիւզանդիայի խռովութիւնից օգուտ քաղելով, կայսերական թագն իրանց գլխին էին դնում, այսպէս Մօրիկ և Լևոն Ազբրունի կայսրները, այսպէս էր և Արշակունի տան մէկ գաղթականը, որ գնալով Ագրիանուպոլիս, չքաւորութեամբ ապրում էր այն տեղ 9-դ դարումը։ Այն ազգատ Արշակունի գերդաստանը իւր ծոցից հանում է մէկ կորիւն, որ առաջ կայսեր գրանն էր ծառայութիւն անում և մեծ անուն ժառանգում. և անտ ազգականներից օգուտ քաղելով բարձրանում է կայսերական աթոռի վերայ Վասիլ Մակեդոնացի անուամբ։ Ահա այս հանգամանքների մէջ Հայաստանը 9-դ դարումը կարողացաւ իւր կորցրած թագն իւր ձեռն բերել։

Նախարարներն, որոնք նոյնպէս Հայաստանի անկման միւս պատճառն էին, Արաբացւոց ժամանակը շատ նուազ էին, թուով պակասացած, չկային այնպիսի յանդուգն և հզօր նախարարութիւններ, որոնք կարողացել էին առ ժամանակ ընդդիմանալ Բագրատունեաց Հարստութեան թագը կրելուն։ 9 և 10-դ դարերումը Բագրատունեաց Հարստութիւնը կարողանում է դանադան Հանգամանքների ձեռն-

տուրքեամբն և առաւել վերոյիշեալների Հայաստանի միապետական իշխանութիւնը ձեռք առնել, բայց շուտով վտանգները շատանում են և Հայաստանի թագաւորութեան գոյութիւնը կասկածանաց ներքոյ է ընկնում: Արդէն իսկ առաջին Բագրատունի թագաւորների ժամանակն Ատրպատականի ոստիկանը տեսնելով Հայաստանի վերանորոգումն, նախանձում է և մեծ թշնամի է Հանդիսանում մեր աշխարհի համար, մէկ քանի նախարարներ, ըստ մեծի մասին, նորա ձեռնտուութեամբը թողում են իրանց հարազատ թագաւորին և Հայկական անմիտ յանդգնութեամբ լաց են կրում զանազան տեղեր, ինչպէս էին Արծրունիք Վասպուրականումը, նոյնպէս և մէկ քանիսները Սիւնիքումը, Լօռումը, Աղուանքումը, Վարաժնումը և այլն: Այսուամենայնիւ հարազատ թագաւորը դեռ ևս մնում էր, թէպէտ և նեղ սահմանների մէջ փակուած, վերին այցելութեանը ակն ունենալով, բայց Աստուած ուրիշ կերպ էր տնօրինել: Նոր Իսրայէլը և նորա եկեղեցին կրկին անգամ պէտք է իրանց հաւատի մէջ փորձուել էին:

Տասներորդ դարի վերջերումը և տասն և մէկերորդի սկզբներումը հանգամանքները փոխվում են և այս ամենասարսափելի կերպիւ: Արևելքից դուրս են գալի Սելջուկեան թուրքերը, արևմուտքից Բիւզանդիան, որ մի քանի դար մոռացած էր իւր կրօնական առելութիւնը, կրկին անգամ գօրանում է և Բիւզանդիայի կայսրները նեղ հանգամանքներից

ազատվում են, որովհետև Բուլղարները և Ռուսները քրիստոնէութիւն են ընդունում և նոցա չարաչար յարձակմունքները կայսերութեան վերայ դադարում, բացի սրանից կայսրներիցը կորչում է այն վիշտակը, թէ իրանք Արշակունի են: Սելջուկեան թուրքերը կատաղաբար յարձակում են Անի քաղաքի վերայ և ամիրապետի մարմնաւոր իշխանութիւնը նրանց ձեռքն է ընկնում, և Հայաստանը, խալիֆայութեան նահանգը, նոցա աւար է լինում: Յոյների և մահմետական Սելջուկների մէջ տեղը շրջափակուած Բագրատունի թագաւորը պէտք էր Անին թողնէր և Կիղիստրայի ամրոցի պատերի վերայ մեռնէր:

ԱՇՈՏ Ա. 856—889 ԹԻՒ.

Աշոտ իշխանաց իշխան. գերեալ նախարարաց դաբձը. Աշոտի եղբայր Աբաս սպարապետ. Զահաք պաբսկիկ. Աշոտ թագաւոր. Վանանդացւոց խռովութիւնը. Գուգարաց ապստամբութիւնը. Աշոտ Կոստանդնուպօլսում. առաջին Բագրատունեաց թագաւորի մահը:

Հայաստանը ոստիկանաց ժամանակը շատ նեղութիւն կրելուց յետոյ իրաւամբ ճանաչում է հարազատ թագաւոր ունենալու օգուտը: Հայերն ամենայն կերպով աշխատում են իրանց երկարժամանակեայ կործանեալ թագաւորութիւնը վերականգնելու. և յիրաւի Սմբատ Խոստովանողի որդի Աշոտը, երբ-

որ, տնազրմ Բուղայից յետոյ, սկսաւ ազգին խնամք տանել. տեսնում ենք, որ ամենի աչքը դարձել էր դէպի նոր Աշոտի ելեւոյթն երեք ամեայ թագաւորութեան ժամանակը այս ինչ բաներըը պէտք է նկատել: Նախ՝ Հայաստանը անվտանգ էր Բիւզանդական կայսերութեան կողմից, ուր 867 թուին տեսնում ենք Մակեդոնական հարստութիւնը, որ նոր բարձրացած էր կայսերական աթոռի վերայ և Հայկական լիշատակը կենդանի ունէր: Երկրորդ՝ ամիրապետի կողմանէ նմանապէս ոչինչ երկիւղ չըկայ, քանի որում նորա արեւելեան ընդարձակ երկրները սկսել էին քայքայվիլ և առանձին իշխանութիւններ ծագիլ:

Այսպիսով, երբոր Աշոտը՝ իւր հօր աղէտալի մահից յետոյ, սկսաւ խնամք տանել ազգին, Մահմատ Ջաֆը ամիրապետն Ալի – Արմէն անունով մէկ ոստիկան ուղարկելով 859 թուին նորա ձեռքով Աշոտին իշխանաց իշխան կարգեց: Այնուհետև Աշոտն աւելի ևս սկսում է խնամք տանել ազգին և երկիրը կարգի դնել: Ինչ ժամանակ դերի դնացած նախարարներից շատերը դարձան Հայաստան, իրանց ուրացութեան վերայ զղջալով՝ կրկին քրիստոնէութիւնը ընդունեցին, նրանց օգնութիւն անելով Աշոտը շատ սիրելի եղաւ նոցա: Իրան Արաս եղբօրը սպարապետ է կարգում և իրան երկու աղջկերանցից մէկին տալիս է Սիւնեաց Վասակ—Գահուկ իշխանին, իսկ միւսը Գրիգոր— Գերենիկ Արծրունի Վասպուրականի իշխանին: Այս իշխանները օգնեց գործիք էին Աշոտի

իշխանութեան բարձրանալուն: Հայաստանը այսպիսով սկսել էր կենդանանալ, երբոր մեր երկիրը ներս մտաւ Ջահար անունով մէկ պարսիկ, որնոր արդէն չէր ճանաչում ամիրապետի դէսպատոր իրաւասութիւնը, և որնոր այն ապստամբ իշխաններից մէկն էր, որնոք 9-ր դարի կիսումը կամենում էին իրանց համար անկախ թագաւորութիւն կազմել, Բաղդադի ամիրապետի թուլութիւնից օգուտ քաղելով: Այդ Ջահարն եմ ասում, որ 80,000 հոգով Երասխ գետն անցկենալով մտնում է Հայաստան. բայց Հայոց նախարարաց միաբանական հոգին և Աբաս սպարապետի քաջութիւնը թշնամու առաջը կտրեցին: Այնուհետև Աշոտը սկսում է քաղցրութեամբ և խոհեմութեամբ, ինչպէս սկսել էր, այնպէս առաջ տանել իրան կառավարութիւնը. որ եկեղեցին, ազգը և նախարարները միաբան հոգւով աշխատեցին նրան իրանց վերայ թագաւոր կարգելու: Յիսէ ոստիկանը Հայոց խնդիրքը յայտնում է Բաղդադի ամիրապետին, որ արդէն ճանաչելով Թէ Աշոտին և Թէ իրան դրութիւնը՝ ուղարկում է նրան թագաւորական ծիրանի և թագ 885 թուին: Ձիրակաւան կամ Երազգաւոր քաղաքումը Գրիգոր կաթողիկոսը մեծ եկեղեցական հանդէս կատարելով՝ Աշոտին թագաւոր օծեց: Վասիլ Արշակունի Մակեդոնական կայսրը, իրան ուրախութիւնը ցոյց տալու համար, ուղարկում է ընծաներ և թագաւորական թագ: Հայաստանի Հիւսիսայինն մասումը շատ երկիրներ էլ կային, որոնք Հայոց թագաւորին էին պատկանում: Աշոտը

նրանց իրան ձեռքի տակն է նուաճում, և Հայաստանը աւելի ապահով պահպանելու համար Եգերացւոց հետ դաշն է կապում: Հայաստանի ապահով ժամանակներից օգուտ քաղելով Աշոտը կամենում է բոլոր Հայաստանումը իւր դիխաւոր իրաւասութիւնը կամ Թագաւորութիւնը ճանաչացնել, միայն քիչ թէ շատ ապստամբութիւն տեսնում ենք Վանանդումը և Գուգարքում, առաջինի առաջը կտրում է Աբաս սպարապետը, իսկ երկրորդինը Թագաւորի անդրանիկ որդի Սմբատը: Այդ յաղթութիւնից յետոյ տեսնում ենք, որ Թագաւորն ուշքը դարձնում է դէպի Փոքր Հայաստանի երկիրները, որտեղից այցելութիւն է գնում 888 թուին Լևոն կայսեր: Յետևեալ տարին մեծ պատուով յետ դառնալով Հայաստան, Զիրակ գաւառի մօտ Քառապուր ասուած տեղը մեռնում է և մեծ պատուով թաղվում է:

ՍՄԲԱՏ Ա. 889—914 ԹԻՒԸ:

Սմբատայ Թագաւորութեան ժամանակուայ Հանգամանքները և յարաբերութիւնը դէպի երկու դրացի մեծամեծ տէրութիւնները, յաջորդութեան մասին պատերազմները. Աբաս սպարապետ, Ատրպատականի Ապշին ոստիկանը, նորա արշաւանքը. Հայոց Թագաւորի յաջողութիւնները, Ապշինի կրկին արշաւանքները. Դոզս գիւղի ճակատը, Աբծրունի Աշոտի ապստամբութիւնն և նորա գործոց անյաջողութիւնը, Սմբատի ջանքը Հայաստանի հարաւն իրան ձեռքը բերելու և նախարարաց անմիաբանութիւնը. Վրաց Ատներսէհ եպիսկոպոսի Թագաւոր պսակուելը, Ատրպատականի Յուսուֆ ոստիկանի արշաւանքը, Եգերացւոց Կոստանդին Թագաւորի Թշնամանական գործքերը, նախարարաց խռովութիւնը վրաց Թագաւորի հետ միասին. Գագիկ Աբծրունի Թագաւորը, Յուսուֆի արշաւանքը և Սմբատի չարաչար վախճանը:

Սմբատայ կառավարութեան ժամանակակից Հանգամանքները միևնոյն էին դէպի երկու դրացի մեծամեծ տէրութիւնները, ինչպէս և Աշոտի, միայն թէ սորա ժամանակները Հայաստանի Հարկն տուզարկվում էր Բաղդադ, Ատրպատականի ոստիկանի ձեռամբը, որ անդուլ հսկում էր մեր Թագաւորի դիտաւորութիւններին և գործքերին և միշտ աշխատում էր մեր վերականգնած Թագաւորութեան զօրութիւնը Թուլացնել և երկպառակել. Հայոց ան-

բարհաւաճ նախարարներից շատերը նորա չարաին-դիր դիտաւորութիւններին գործիք էին դառնում, նորա կառավարութեան ժամանակը բաւականին վրդովեցան յաջորդութեան մասին:

Այսպիսով ինչ ժամանակ, Աշոտի մահից յետոյ, բոլորն էլ իրանց ուշքը դարձրին Սմբատայ վերայ, այն ժամանակ նորա հօրեղբայր Աբասն էլ կամենում էր ինքն թագաւորել և այս պատճառաւ բոլոր Հայաստանը մեծ աղմուկի և շփոթութեան մէջ ընկաւ, և իշխանները երկպառակվելով կատաղութեամբ միմեանց դէմ պատերազմում են, բայց Սմբատայ կողմն աւելի զօրեղ էր. Վրաց Ատրներսէհ իշխանը, Հայոց Գէորգ կաթողիկոսը և նախարարներից շատերը նորա կողմն էին և նրան էին կամենում թագաւորացնել: Աբասը ընկճվում է և ա-կամայ կամօք հրաժարվում է իրան դիտաւորութիւնից. իսկ Սմբատը 892 թուին Զիրակաւանի մէջ մեծ հանդիսով Հայոց թագաւոր է պսակվում:

Այնուհետև Սմբատն իրան Հօր նման սկսում է բարեկամական դեսպանութիւններ անել Վրաց կայսեր հետ: Ատրպատականի Ապշին ոստիկանը, որոյ ձեռամբ Հայաստանի հարկը հաւնում էր ամիրապետին, տեսնելով Սմբատայ այսպիսի գործերը, մտնում է Հայաստան: Հայոց թագաւորն ուշ է նմանում իրան անխոհեմ արարմունքը և աշխատում է ոստիկանի բարկութիւնը ցածացնել, զանազան պատճառներ բերելով, իբր թէ այն դեսպանութիւնները լինում են յօգուտ վաճառականութեան. ինչպէս

և լինի բանը խաղաղութեամբ է վերջանում, բայց ոստիկանը, և կարծես թէ հէնց Բաղդադի դուռն էլ անգամ, կասկածանաց տակ է ընկնում, նորա հաւատարմութեան մասին, և արդարև դորանից յետոյ, երբոր Սմբատը ապստամբ Պաւլին քաղաքը նուաճում է և ընդարձակում է իրան իշխանութիւնը Եզերայցոց աշխարհից սկսեալ մինչև Ատրպատականի կողմերը, տեսնում ենք Ապշին ոստիկանի ձեռի տակին մէկ մեծ մահմետական զօրութիւն, որով նա կամենում էր Հայոց թագաւորի զօրութեան առաջը կտրել, եթէ մէկ յաջող դէպք կը լինի:

Ազատ Պաւլին քաղաքը դժգոհ էր իրան ազատութիւնը կորցնելու համար և 894 թուականի երկրաշարժութիւնը մեծ վնաս էր պատճառել Հայոց աշխարհումը. Ապշին ոստիկանը զօրութեամբ մրտնում է Հայաստան, բայց Գողտ գիւղի ճակատը ցոյց տուեց, թէ Հայոց թագաւորի զօրութիւնը շուտով չէ կարող ոչնչացնել, որովհետև չարաչար չարդուելուց յետոյ դարձաւ իրան ոստիկանութեան աշխարհը: Այնուհետև տեսնում ենք, որ Ապշինը իրան մինչև այն ժամանակվան ուղղութիւնը փոխում է և կամենում է այլ ճանապարհով Հայաստանը տակնուվրայ անել, այն է—աւելի Հայոց նախարարների մէջ ապստամբութեան չար հողին զարթնացնել դէպի իրանց թագաւորը և նորանով զօրութիւնը երկպառակել, և այս հեշտ կարող էր լինել մէկ այնպիսի երկրում, որնոր աւելի սովորած էր ստրուկ լինել օտարներին, քան թէ հպատակ քաղաքացի

իրան Թագաւորին։

Վասպուրականի Աշոտ Արծրունի իշխանը Ապշինի ձեռնտուութեամբ գլուխ է բարձրացնում Վասպուրականում, նորա աներ Գագիկը խարդախութեամբ բռնում է նրան և նորա եղբայր Գագկին և Փուրդէնին բանտն է դնում, այն նպատակաւ, որ նոցա երկիրը և իշխանութիւնը իրան ձեռքի տակն առնու։ Սմբատն այս եղելութեանց վերայ սառն աչքով է մտիկ տալիս և որովհետև Գագկի դիտաւորութիւնը չէր իմանում, կամք տուեց մինչև անգամ Վասպուրականի իշխանութեան մէջ մնալու, բայց շուտով իմացաւեցան նորա խարդախութիւնները։ Այս ժամանակները Միջագետի ոստիկանը, տէր լինելով Աղձնեաց և Հայոց Միջագետին, սկսում է մեծ դօրութեամբ մտնել դէպի Տուրուբերան աշխարհը և հասնում է մինչև Տարօն, ամենայն տեղ մեծ նեղութիւն և վնասներ հասցնելով Հայոց ժողովրդին։ Սմբատ Թագաւորը յոյսը դնելով Հայոց նախարարաց վերայ և աւելի Գագկայ վերայ, գնում է նորա առաջը, բայց այնտեղ Գագիկն իրան չար նպատակները սկսում է իմացնել Միջագետի ոստիկանին (ԱՀմադին)։ Սմբատ Թագաւորն այդ մատնութեամբը յաղթվում է, իսկ Գագիկն, այն եղեռնագործութիւնը կատարելուց յետոյ, գառնում է Վասպուրական, յոյսը միանգամայն դրած օտար ազգի իշխանաց վերայ։ Անկախ իրան Հարազատ Թագաւորիցը սկսում է բռնել և յանգուգն գօրութեամբ իշխել բոլոր Վասպուրականի վերայ։ Զատ

աեղը էլ նախարարները վեր էին կացել մէմեանց վերայ և մէկ մէկու երկիր ոտնատակ էին տալի։ Թագաւորը տեսնելով իրան Հայոց անմիաբանութիւնը, Վրաց Աւրներսէհ իշխանին Թագաւոր պատկեց իրան երկրի վերայ. Աւրներսէհին, որ իրան ստորադրեալ նախարարների մէջին ամենից Հռետարիմն էր և որի վերայ մեծ Համարումն ունէր։ Սմբատայ այդպիսի գործը առաւել զայրացրեց Հայոց նախարարաց շատերին և նոյն իսկ Ապշինն ոստիկանը մէկ քանի անգամ սկսաւ Հայաստանը ոտքի տակ ձգել։ Այս պատճառաւ էլ նորա մահից յետոյ Հայոց Թագաւորը խնդրեց ամիրապետից, որ Հայաստանի Հարկն ուղղակի Բաղդադ ուղարկի։

Ապշինի եղբայր Յուսուֆը, որ ժառանգել էր Ատրպատականի ոստիկանութիւնը նորա (Ապշինի) տեղը, շատ անգամ ամիրապետին գրելուց յետոյ՝ որ Հայաստանը կրկին անգամ իրան վերահայեցողութեան տակ ձգէ, տեսեց իրան կարդին արշաւել Հայաստան, միայն տեսնելով Սմբատայ պատրաստութիւնները և ընդդիմութիւնները՝ նորա կամքին Թողեց։ Բայց Սմբատը Հարկ ժողովելն իրան ձեռքն առնելով և սաստիկ Հարկ ժողովելով շատերին գրգռում է իրան դէմ։ Եգերացիք մէկ կողմից են սկսում Սմբատայ երկրների վերայ ընկնել, իսկ Հայոց նախարաեներից շատերը միաբանվում են Աւրներսէհի Հետ և կամենում են Թագաւորին սպանել. Թէպէտ նա իրան աչալրջութեամբն ամեն որոգայթներից ազատվում է, այսուամենայնիւ մեծ

արիւնհեղութիւններ են լինում և աշխարհն երկպառակութեան մէջ է ընկնում: Աշոտ Արծրունին և նորա եղբայրքն, որոնք՝ Գագիկ բռնաւորի չարաչար վախճանից յետոյ, Վասպուրականի կառավարութիւնը իրանց ձեռքն էին առել, յաջող միջոց գտան՝ իրանց հին թշնամութիւնը ցոյց տալու դէպի թագաւորը, նախիջևան քաղաքը պատճառ բերելով, որ թագաւորը մեկ հրովարտակաւ տուել էր Սիւնեաց նախարարութեանը: Աշոտի եղբայրը Գագիկ Արծրունին գնալով Յուսուփ ոստիկանի մօտ նրանից առնում է թագաւորական թագ և այդպիսով աւելի է վրդովում հայոց աշխարհը. որովհետև նեղութեան մէջ ընկնելով հարազատ թագաւորիցը Գագիկը դիմում է ոստիկանի օգնութեանը, որնոր խոյն մտնում է հայոց աշխարհն և կամենում է թագաւորին ձեռք բերել. լինում են շատ արիւնահեղ պատերազմներ և թագաւորն իրաններից մատնուած՝ Կապոյտ բերդի մէջ ամրանում է, որտեղ և 913 թուին անձնատուր է լինում, իսկ հետևեալ տարումն Երնջակ քաղաքի հանդէպը չարաչար տանջանքներով սպանվում է Յուսուփիցը:

ԱՇՈՏ Բ. ԵՐԿԱԹ 915—928 ԹԻՒԸ:

Աշոտի քաջութիւնները, թագաւորութիւնը, նախարարաց անկարգութիւնները, Յուսուփի յարձակմունքները, Հայաստանի թշուառ դրութիւնը. Աշոտ Կոստանդնուպօլսում. սպարապետ Աշոտի թագաւորութիւնը և այս պատճառաւ եղեալ անկարգութիւնները. Գուգարաց վասակ և Աշոտ եղբայր իշխանները, Ուտէացւոց Լոմախ իշխանը. Աբաս թագաւորի եղբայր մհացեալ Գուրգէն Ափխազաց իշխանի հետ, Սահակ իշխան՝ թագաւորի անեը, հանգամանաց փոփոխութիւնները. Աշոտ երկաթ շահն շահ. Յուսուփի դարձը և Բէշիր ոստիկանի ասպատակութիւնները. Աշոտը Սևան կղզում, նորա չաղթութիւնը և մահը:

Աշոտի ժամանակուայ արտաքին հանգամանքները միևնոյն էին, ինչ որ Բագրատունի երկու նախորդ թագաւորների ժամանակը. Բիւզանդիոյ կողմից, ինչպէս և Բաղդադի դրան կողմից, թշնամութիւն չկայ, թէ և ոչ էլ սրտակից բարեկամութիւն, իսկ ներքին կողմանէ դարձեալ միևնոյն երկպառակութիւնները կային: Սմբատայ ողորմելի մահը կարծես առ ժամանակ Հայերի միմեանց դէմ ունեցած ատելութիւնը մոռացնել է տալիս, ամենայն նախարար և իշխան կարծես մեկ նպատակ են ունենում, այն է Սմբատայ մահուանը վրէժխնդիր լինել: Սորա անդրանիկ որդի Աշոտն, որ իրան չափազանց զօրեղութեան մասին Աշոտ Երկաթ է

ասվում, բաւականին զօրք է ժողովում իրան ձեռի տակը և նրանով չարաչար չարչելով՝ հալածական է առնում ոստիկանական խառնիճաղանճներին Հայաստանից։ Կայծական արագութեամբ թռչում էր Հայաստանի մէկ ծայրից դէպի միւսը. Բագրեւանդից տեսնում ենք թռչում է դէպի Ջիրակ, այստեղից մինչև անգամ Վրաստան՝ Տփխիսին օգնութիւն, յետոյ Աղաստևոյ կողմերը. Թշնամիք ամենայն կողմից փախչում են և Հայ նախարարները, նոյն և Վրաց Թագաւոր Ատրներսէհը, միաբան աղաղակում են նրան Թագաւորացնել Հայոց վերայ։

Այսպէսով 915 Թուին Աշոտ Երկաթը նստում է իրան Հօր գահի վերայ, բայց այս նոր Թագաւորը երանի Թէ իրան աննման քաջութեան և զօրեղութեան հետ ունեցել էր և քաղաքագիտութիւն. նորա ամենայն քայլումն երևում են անսահման քաջութիւն, առանց հեզահամբոյր բնաւորութեան, որով երևելի էր նորա պապը։ Փոխանակ նախարարաց սիրտն իրան հետ կապելու, Թշնամացրեց շատերին, նոցա երկիրները իրան ձեռքն առնելով։ Հայաստան աշխարհը, որ բաւական խաղաղացել էր, կրկին վրդովեցաւ, իրան մէջից Վասպուրականի Գագիկը նախիջևանի մասին պատերազմ բաց արաւ Սիւնեաց տան հետ։ Հայաստանի երկու Թագաւորներն օրինակ ցոյց տուին և միւս նախարարները միմեանց վերայ վերկացան, իւրաքանչիւրն իրան իրաւունքն և տեղերը պաշտպանելու։ Ժողովուրդը պէտք է հեծէր այս կամ այն նախարարի արշա-

ւանքից, պէտք է հեծէր այս կամ այն իշխանի ձեռի տակը մտնելով։

Յուսուիկը տեսնելով Հայաստանի աղմուկները՝ յանդուգն զօրութեամբ մտնում է Հայաստան, և հասնելով ոստիկանական Դուին քաղաքն՝ ամփոփում է այն տեղ իրան զօրութիւնը և սաստիկ ապատակներ է ուղարկում ամենայն կողմերի վերայ, և այս շարունակվում է եօթն տարի. երկիրն անմշակ մնալով, ժողովուրդը խղճութեան և նեղութեան մէջ, սաստիկ սով է ընկնում, որ սարսափելի հետևանքներ է ունենում *)։

Նոր երևոյթ զարմանալի.—Բիւզանդիան խրդճում է Հայաստանի վերայ և պատրիարգը ու կոստանդին կայսրը, Վասլ Թոռը, ցանկանում են Հայոց կաթողիկոսին և Թագաւորին տեսնել և Հայաստանի ցաւերին դարման տանել։ Յովհաննէս կաթողիկոսը մերժում է, իսկ Թագաւորը գնում է, և մեծ ընդունելութիւն գտնելուց յետոյ բաւական զօրութեամբ վերադառնում է Հայաստան։ Մինչ այս մինչ այն Յուսուիկը նեղութեան մէջ ընկնելով՝ կամենում է Հայաստանի զօրութիւնը իրան մէջ երկպառակել, ինչպէս արդէն ցոյց էր տուել Սմբատայ ժամանակները, Վասպուրականի Թագաւորութիւնը հիմնելով։ Աշոտ երկաթի հօրեղբօր որդի Աշոտն այն ժամանակները սպարապետական պաշտօն էր վարում։ Յուսուիկը նրան Հայոց վերայ Թագաւորացնե-

(*) Տես նկարագրութիւնը Յովհաննէս կաթողիկոսի։

լով ինքն գնում է Ատրպատական: Այնուհետև մեր աշխարհը երկպատակվում է. նախարարներից մեկ քանիսն Աշոտ Երկաթի կողմը բռնելով, միւսները սպարապետի, լինում են շատ արիւնահեղ պատերազմներ երկու համանուն թագաւորաց մէջ, թէպետ և յաղթողը միշտ հարազատ թագաւորն է լինում, այսուամենայնիւ Յուսուիը միշտ կրկին անգամ զրդռում է և օգնութիւն տալի սպարապետին և այսպիսով կրկին անգամ պատերազմները տաքանում են: Պատմաբան Յովհաննէս կաթողիկոսը միշտ նոցա մէջ է ընկնում և հաշտեցնում, այն պայմանաւ՝ որ Երկաթը Ջիրակաւանումը թագաւորէ, իսկ սպարապետը Գուխնի կողմերում:

Աշոտի արարմունքը վատ օրինակ ունեցաւ. Գուգարաց Վասակ և Աշոտ Գնթունի իշխանները մեկ կողմից են կամենում ինքնօրէն վարիլ, Ուտէացւոց Պովսէս իշխանը միւս կողմից, անկարգութիւններն այնքան շատանում են, մինչև անգամ Երկաթի եղբայր Աբասն, որ իշխանաց իշխան և թագաւորի երկրորդ էր կարգուած Երկաթիցը և նրան շատ սիրելի, նա էլ է գլուխ քաշում և չարամիտ նախարարաց կողմը բռնում. նոյն իսկ Աշոտ Երկաթի աներ Սահակ մեծ իշխանն էլ: Բայց Աշոտն ամենայն կողմից յաղթող է հանդիսանում, ապստամբներից շատերի աչքերն է հանում, ինչպէս էին՝—Պովսէս և Սահակ: Նոյնպէս յաղթութիւնը օրինաւոր թագաւորի կողմն է լինում, և Ատրպատականի անագորոյն գործերը ընդդէմ Հայոց ամիրա-

պետի ականջին են հասնում. ամիրապետն՝ որոյ միահեծան ընդարձակ տէրութիւնը վաղուց էր քայքայվել, ի հարկէ պէտք է փոքր ի շատէ երկիւղ կրէր Հայոց թագաւորից, որ միշտ բարեկամութիւն էր տեսնում կայսեր կողմից, այն ինչ մահմետականներից բացի որոմնացանութիւնը և մեր աշխարհի աւերութիւնը ոչինչ չէր տեսնում. պէտք էր, ասում եմ, ամիրապետը վախենար, որ Հայոց թագաւորը չմտնէ կայսեր իշխանութեան ներքոյ և Հայաստանի հարկը Բիւզանդիա չդնայ:

Ամիրապետը կամենում է Յուսուիին փոխել, բայց սա, վոխանակ իրան պաշտօնը թողնելու, ապստամբութեան դրօշակ է բարձրացնում և կամենում է ինքնագլուխ թագաւորել Ատրպատականի և նորա շրջակայ երկիրների վերայ. Հայոց զօրութիւնը որ և իցէ թագաւորի՝ թէ Ջիրակաւանի, թէ Վասպուրականի և թէ այլոց միանգամայն հակառակ էր մեծ ոստիկանութեան: Ի վերջոյ բռնւում է Յուսուիը և գերվում է Բաղդադ, այն ինչ նորա տեղը կալվում է Սբուկ անուամբ մեկը, որ շատ սիրով էր առհասարակ Հայոց հետ, և մեր երկիրն անդորր և կարգի մէջ պահելու համար՝ Աշոտ Երկաթին կոչում է շահն շահ (արքայից արքայ), իբրու այն՝ թէ մեծ է քան զմիւս թագաւորները: Ա՛ւ ժամանակ խաղաղանում է մեր Հայաստան աշխարհը ժանտ ոստիկանի որոգայթներից, մեծը և փոքր ճանաչում է իւր աստիճանը և պաշտօնը, (բացի Ուտէացւոց Յլիկ Ամրամ իշխանը, որ

մէկ քանի խռովութիւններ և աղմուկներ է յարուցանում.) բայց այս անդորրութիւնը շուտով էլի վրդովվում է։ Խարդախ Յուստիը, չէ լմացվում, ինչ եղանակաւ է դրաւում Բագրատի դրան Հաւատարմութիւնը և կրկին անգամ իրան նախնի ոստիկանական պաշտօնի մէջ ինչպէս է հաստատվում։

Չեզաբարոյ Սբուկի տեղը կրկին անգամ երևումէ ժամանակ, որ արդէն սկսում է իրան թոյնը վերաձել մեր աշխարհի վերայ։ Սորա ջանքն այնուհետև այն է լինում, որ Յովհաննէս կաթողիկոսին և Աշոտ երկաթ թագաւորին գերէ, իրրև այն թէ նոքա են հոգևոր և մարմնաւոր միացուցիչ կապերը Հայոց աշխարհի և առաւել ահարկու զօրութիւնները մահմետական իշխանութեան դէմ։ Բայց ինչպէս կաթողիկոսը, նոյնպէս և թագաւորն, իրանց խոհեմ և արի հսկողութեամբն և ժողովրդեան ջերմեռանդ անձնանուիրմամբն ազատում են Հայաստանը մեծ ոստիկանի լարած որոգայթներիցը։ Աշոտ երկաթն ապրիլ վտանգի մէջ էր և ապաստանարան էր որնում Սևան կղզումը։ Բէշիրն՝ որ Յուստիի երկրորդականն էր, իրան նեհան ամփոփում է Դուին քաղաքումը և այն տեղից շատ ասպատակներ է արձակում թագաւորական երկիրների վերայ։ Գէորգ Մարզպետունի քաջ իշխանը նորա առաջն ամենայն կողմից կտրում է և չարաչար կոտորածներ է գործում. Բէշիրը կամենում է Սևան մտնել, բայց Աշոտն անօրինակ քաջութեամբ 70 հոգուով 10 հազարաց վերայ չարաչար ջարդում է Բէշրին և չարաչար վախցնում է Սևանայ լճի կողմերիցը, Գէորգ Մարզպետունին նրան հալածում է մինչև Դուին, իսկ Աշոտը յաղթանակաւ մտնում է Շիրակ և այն տեղից բոլոր ազգին խնամք է տանում մինչև 928 թիւը, երբ որ մեռնում է։

ԱՐԱՍ 928—951 ԹԻԻՐ.

Առաջին երեք Բագրատունի թագաւորներից յետոյ եկած թագաւորների ուղղութիւնը. Աշոտ թագաւոր. Դաւսի մայր եկեղեցին, Ախլաթազ Բեր թագաւորը. Վասպուրականի այդ ժամանակուայ դէպքերը։

Այնուհետև Բագրատունի թագաւորները կարծես թէ մոռանում են միանգամայն, թէ իրանք օրինաւոր թագաւոր են բոլոր Հայաստանի համար. այս պատճառաւ էլ առաջին երեք թագաւորաց նման չեն աշխատում բոլոր Հայաստանը իրանց ձեռքը բերելու. ուստի և այնուհետև նախարարաց և Բագրատունի թագաւորաց մէջ այնքան աղմուկներ և խռովութիւններ չենք տեսնում, ինչպէս առաջ։ Հանդամանաց այսպէս լինելու պատճառները շատ են, ինչպէս են Հարևան ազգերի—Ախլաթազաց, Եգերացւոց, Վրաց, Աղուանից թագաւորութիւնների հաստատութիւնը, որոնք ամենայն ժամանակ աշխատում և խառնվում են Հայաստանի գործոց մէջ, և որոնք կարող էին թէև տալ որ և իցէ ապստամբ նախարարին։ Երկրորդ՝ Արշակունեան և Հայ-

կական չիշատակը սակաւ առ սակաւ սկսում է կորչել Բիւզանդական կայսերաց մէջ, նաև յունադաւանից աստելութիւնը սկսում է սակաւ առ սակաւ կրկին երևել։

Այսպիսով, երբոր անորդի Աշոտ Երկաթից յետոյ յաջորդում է իրան եղբայրը Աբասը, սա աշխատում է Հայաստանը առ հասարակ խաղաղ պահպանելու, չվիպչելով որևիցէ նախարարի արտօնութիւններին կամ երկիրներին, ոստիկանին բարեկամութիւն է ցոյց տալի և բաւականանում է նորանով, ինչ որ Շիրակաւանի դրանը կը պատկանէր։

Սորա ժամանակուայ երևելի անցքերի մէջին կարելի է այս ինչ ասել. երբոր սկսեց Վարսի շինած մայր եկեղեցին վերջացնել և մտադիր էր Հանդիսով օծել տալ, Ափխազաց Բեր թագաւորը սկսեց արշաւել Հայաստանի կողմերն, ու այն եկեղեցին յունական ծէսով օծել տուեց. բայց Աբասը, Գէորգ Մարզպետունի քաջ զօրավարի ձեռնտուութեամբը, Կուր գետի ափերումը նրան յաղթում է և բռնում և Վարսի եկեղեցին ցոյց տալուց յետոյ աչքերը հանում։

Աբասի թագաւորութեան սկիզբներումն Արծրունի Գագիկը մեռնում է և նորա տեղը յաջորդում է նորա որդի Դերենիկը։ Սա Ապլղարիբը երեւելի զօրավարին իրան պաշտօնեից արձակում է և մեկ ուրիշի է կարգում Սարգիս անուամբ։ Ապլղարիբը չեր և Ջաբևանդի ոստիկանի ձեռնտուութեամբը Դերենիկին գերում է և յետոյ խղճից

տանջուելով հնարք է գտնում ոստիկանի ձեռքից նրան ազատելու։

ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ 952—977 ԹԻՒՔ.

Աշոտի թագաւոր սլսակուելը և նորա ողորմածութեան գործքերը, նորա կրտսեր եղբայրը Մուշեղը և Վարսի թագաւորութեան ծագումը, Շամտուն Հագարացին. Յովհաննէս Զմշկիկ կայսրը։

Աբասի մահից յետոյ Բագրատունեան գահը և թագը, ինն տարի ժամանակ պարապ մնաց, նոցա երկրները Հարևան օտար ժողովուրդներից ասպատակվում էին։ Աբասը թողել էր երկու որդի,— Աշոտ և Մուշեղ. Աշոտն անդրանիկն էր և սևելի սրտացաւ հայրենի երկրի վերայ, միաբանվում է Մարզպետունի Գէորգի հետ և մեկ դինուորութիւն է կազմում՝ որոյ թիւը հասնում է մինչև 80,000 և որով իրան երկիրը մաքրում է այն ասպատակներից։ Ժողովուրդը և իշխանք տեսնելով այսպիսի սիրագործութիւնները, միաբան կաթողիկոսի հետ, հրաւիրում են Աղուանից Փիլիպպոս թագաւորին և Յովհաննէս կաթողիկոսին և նոցա ներկայութեամբն առաջին անգամ Բագրատունեաց տանից նրան օծում են Անի քաղաքումը. (միտը բերել ողորմածութեան գործքերը)։

Ի հարկէ Աշոտն իրան հօր մահից յետոյ կարող էր իսկոյն թագաւոր օծուիլ, բայց գուցէ թէ

առաջուց գիտէր իրան եղբօր խռովայոյզ հոգին և այս պատճառաւ լինն տարի, իբրև զօրապետ, կառավարեց իրան հողերը, որ իրան ինքնակամ թագաւորութեամբը պատճառ չըլինի երկպառակութեանց, մինչև որ ազգը և իշխանները ճանաչեն նորա արժանաւորութիւնը: Այսուամենայնիւ, ինչպէս նա թագաւոր օծուեցաւ, տեսնում ենք, որ նորա եղբայր Պուշեղը բաժանվում է նրանից և Վարսումը մէկ տէրութիւն է առաջացնում, որտեղ որդէց որդի յաջորդում են մինչև Սելջուկեանց տիրապետութիւնը Հայաստանի վերայ: Սորա արտաքին դործքերը այս ինչ են. արդէն գիտենք՝ որ Բագրատունիքը Հարկն ուղարկում էին ամիրապետին Ատրպատականի ոստիկանի ձեռամբն: Այս Աշոտի ժամանակները Աղձնեաց կողմի Համտուն ոստիկանը ապստամբելով ամիրապետիցը կամենում է Հարկն ինքն առնուլ, բայց Աշոտը չէ համաձայնվում Համտունի հետ և այս պատճառաւ պատերազմ է ծագում. յաղթութիւնը լինում է Աշոտի կողմն և Համտունը սպանվում է:

Միևնոյն ժամանակ Յունաց Ձմշկիկ կայսրը դալով Եփրատայ կողմի աշխարհներն, ուր նորա հպատակները չարչարվում են մահմետականներից, դեռ մահմետականաց չըտեսած, մտնում է Տարօնոյ աշխարհը և այնտեղի Հայերին սկսում է նեղացնել, իբրու այն թէ Հայերն ևս առելով յունադաւան ազգերին ևս պատճառ են լինում նոցա նեղութիւններին և չարչարանքներին: Հայերը աստիկ վախե-

նում են նորա դիւնաւորութիւնից, բայց Աշոտ թագաւորի և շատ նախարարաց ձեռնտուութեամբը բանը խաղաղութեամբ է վերջանում:

ՍՄԲԱՏ Բ. 977—990 ԹԻՒ.

Անի քաղաքի շինութիւնները. Վարս քաղաքի Մուշեղ թագաւորի թշնամութիւնը ընդդէմ Սմբատայ. անագորութիւնը:

Սմբատն՝ Աշոտ ողորմածի անդրանիկ որդի լինելով նորա տեղը յաջորդեց և որովհետև Հայաստանի վտանգներն օրէց օր աւելանում են և ժողովուրդն ամենայն կողմից դէպի Անի է ապաստանում, այս պատճառաւ էլ սկսեց այն քաղաքն ամրացնել, նորա շուրջն ամուր և հաստ պատ քաշելով, որ մինչև այսօր էլ ճանապարհորդներին ապշեցնում է, և որովհետև ժողովուրդը շատանալով հարկաւորութիւն ունէր աղօթատուններ ունենալու, այս պատճառաւ էլ Տրդատ ճարտարապետի ձեռամբը շատ եկեղեցիք շինել տուաւ, որոնց մէջին երևելի է մայր եկեղեցին: Սմբատայ անունն այսպիսով սկսաւ բարձրանալ և ամենայն որևիցէ Հայ ժողովրդի սրտումն արձագանք տալ. Հարևան փոքր տէրութիւնների և նախարարների ժողովուրդները գունդ գունդ վազում էին դէպի Անի:

Վարսայ Մուշեղ թագաւորը Սմբատայ այս փառքի վերայ նախանձվում է և սկսում է նորա

երկիրները ասպատակել։ Սմբատը բարկացած նորա դէմն է դուրս գալի և սաստիկ հարուած է տալի. բայց Տայոց նահանգի Կիւրապաղատը Քուշղին օգնութիւն է հասնում և Սմբատին յետ են քշում, որ լաւ է համարում խաղաղութիւն խօսել. առհասարակ նայելով Սմբատն իւր թագաւորութեան ժամանակները յաջող էր և ապրի մէջ մեծ համարումն ունէր և այս պատճառաւ, ասում է ականատես Առոզիկ պատմաբանը, հպարտանում է և ընդդէմ եկեղեցական օրինաց իրան քրոջ աղջիկն է կին առնում (միտր բերել ցնորեալ աղքատի դէպուսութիւնը և նորա չարաչար վախճանը)։

ԳԱԳԻԿ Ա. 990—1020 ԹԻՒՔ.

Բագրատունի թագաւորաց այդ ժամանակուայ նոր սկսած սովորութիւնը, որով աւելի նուազում էր նոցա իշխանութիւնը, Գագիկայ եկեղեցական շինութիւնները և իւր եղբօր դէմակի հանելը դերեզմանից։

Տանեփոխ դարու վերջերումն արդէն Հայաստանը սկսել էր միմեանցից անկախ անթիւ երկիրներ բաժանուիլ. որով քանի որ գնում էր, այնքան էլ միապետ թագաւոր ունենալու յոյսը բոլորովին կտրվում էր Հայաստանումը։ Բագրատունի թագաւորներն էլ տեսնելով, որ միշտ ամենայն նոր թագաւոր ընտրելու ժամանակը, ժառանգութեան մասին մեծ խռովութիւններ են դուրս գալի, այս

պատճառաւ էլ զօրօրինակ, եթէ թագաւորի մահից յետոյ լինում էին եղբարք կամ ազգականները, մէկը նստում էր Անիումն, իսկ միւսներն, որոնք ժառանգութեան մասին խռովութիւնները էին վերկացնում, ստանում էին Բագրատունեաց հողերից իրանց համար բաժին, զօրօրինակ. երբ որ Աշոտ ողորմածը մեռաւ, նորա երէք որդիքերանցից Սմբատն Անիումը թագաւորեց, Գագիկը Վայոց ձորի Խաչէնոյ գիւղումն, իսկ Գուրգէնը Տաշրայ կողմերն, այն ինչ նոյն իսկ Աշոտի աղջկայ որդի Աբուսահլը՝ Տաղկոտն գաւառումը։

Սմբատայ մահից յետոյ յաջորդեց Գագիկը, որ ժամանակի պետութիւնը նայելով իրան ուշքը դարձրեց Անի քաղաքի շինութիւնների վերայ։ Լուսաւորչայ անուանեալ փառաւոր եկեղեցին սա շինել տուաւ, նորա Կատրամիդէ տիկինը մայր եկեղեցին շինել տուաւ, որ Սմբատայ ժամանակները թերի էր մնացել. առհասարակ Գագիկը շատ ժամառէր մարդ էր, շատ անգամ ժամի գաւառը կանգնելով մարդ կ'առէր կամ գիրք կրկարդար։ Սա Անեցւոց խռովութիւնը դադարեցնելու համար, Սմբատայ դիակը հանել տուաւ գերեզմանից։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՄԲԱՏ 1020–1040 ԹԻՒԸ.

Յովհաննէս Սմբատ և նորա եղբայրը Աշոտ գըժտութիւնները ժառանգութեան մասին. Հաշտութեան պայմանները. Սմբատայ գերութիւնը և մահուան վրտանգից ազատուիլը. Սելջուկեան Թուրքերը Հայաստան են մտնում. Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորը Սեբաստիա է փախչում. Տուզբիլ բէգը առաջանում է մինչև Բագրատունեաց Թագաւորութիւնը. Անի քաղաքի վտանգն և Ցունաց Վասիլ կայսեր նամակաւ խոստանալը. Կոստանդին կայսեր քրիստոնէավայել գործքերը. Հայ քահանայի յուդայութիւնը. Սմբատայ և Աշոտի մահը։

Գագիկ Թագաւորը, մեռնելուց յետոյ, թողեց երկու որդի—Յովհաննէս Սմբատին և Աշոտին։ Իրանց հօր կտակին համեմատ Սմբատը պէտք է Անուոյ Թագն էր ժառանգել, իսկ Աշոտը՝ Փրուց աշխարհները։ Բայց Աշոտը, որ աւելի քաջ էր և պատերազմասէր, շուտով սկսում է իւր անբաւականութիւնը ցոյց տալ՝ բուն Թագը ժառանգելու ցանկալով՝ Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորն էլ նըրան բաւական օգնութիւն է տալիս։ Յովհաննէս Սմբատը Անի քաղաքի բնակիչներից կազմում է մէկ գունդ, որոյ թիւը հասնում է 60,000-ի։ Հայաստանի մայր քաղաքի շրջակայումը լինում է սրինաահեղ ճակատ։

Այս տեսնելով՝ նախարարները և պետրոս գե-

տաղարձ կաթողիկոսը՝ մէջնորդ են ընկնում և երկու եղբարցը հաշտեցնում են ըստ իւրեանց հօր կտակի, այսպէս աւելացնելով, թէ Աշոտն ունի իրաւունք, Յովհաննէս Սմբատից յետոյ, Թագաւորելու Անի քաղաքումը։ Վրաց Գօրգի Թագաւորը, որն որ Հայաստանումը հիմայ այնպէս ներգործութիւն ունէր, ինչ որ իրան ժամանակին Կարպատականի ոստիկանը, վկայ է լինում այդ խաղաղութեանը և և Բագրատունի Թագը Սմբատայ գլխին հաստատում։ Բայց այս անդորրութիւնը երկար չէ տևում, ըստ որում շատ նախարարները Աշոտիցը գրգռուած՝ Վրաց Գօրգի Թագաւորի մօտ ամբաստանութիւն են անում Սմբատայ վերայ, որ մէկ անգամ Անի քաղաքից դուրս գտնուելով՝ գերվում է Գօրգիի զօրքերիցը և միայն երեք բերդ տալուց յետ կարողանում է ազատուիլ։ Սրանից յետոյ էլ խեղճ Սմբատայ գլխին գալիս է այն փորձանքն, որով պէտք է որոգայթի մէջ էր ընկել և միանգամայն սպանվել, բայց Ապիրատ իշխանի ճեռնտուութեամբ ազատվում է։

Այն ինչ Հայաստանը իրան ներքին անկարգութիւններովն և երկպառակութիւններովը կրտսեռան անդունդին էր հասել, և այն ինչ Աշոտը, որ իւր պատերազմական հանճարովը, փոխանակ Հայաստանի զօրութիւնը առաջ տանելու դէպի արտաքին թշնամիքը, իրան եղբօր հետ է պատերազմում. տեսնում ենք Հայաստանի տհմանումը Սելջուկներին, որոնք դուրս գալով այժմեան Թա-

Թարաց աշխարհից և Էմիր ալ Ումարի կամ ուրիշ խօսքով ասել, մահմետական մարմնաւոր իշխանութիւնը՝ իրանց ձեռքն առնելով, կամենում էին բոլոր Հայաստանն էլ իրանց ձեռը գրաւել: Հայաստանի թագաւորներից Վասպուրականինը ամենից շուտով պէտք է հարուած էր ստացել. Սելջուկեանք մտնում են նորա աշխարհը. Սենեքերիմ թագաւորի որդի Պաւլիքը և զօրավար Զապուհը չեն կարողանում թշնամեաց առաջը կտրել: Սենեքերիմ թագաւորը տեսնելով վտանգը 1021 թուին իրան երկիրը յանձնում է Վասիլ կայսեր և որա փոխանակ ստանում է Սեբաստիա քաղաքը և իրան բնակութիւնը փոխում է այն տեղ. բայց սրանով էլ ոչինչ օգնութիւն չեղաւ Հայոց աշխարհին և մէկ քանի ժամանակից յետոյ տեսնում ենք, որ Տուղրիլ բէգի առաջնորդութեամբը թուրքերը հասնում են մինչև Արարատայ աշխարհը, այս տեղ նոցա առաջը դուրս է գալիս Վասակ Պահլաւունի իշխանը, որ ուղարկվում է Յովհաննէս Սմբատ թագաւորից. բայց սա էլ ոչինչ չի կարողանում անել նոցա դէմ: Պէտք է իմանանք, որ ինչ ժամանակ Արաբական տէրութեան քայքայուելովը դուրս են գալի զանազան փոքր տէրութիւններ, ինչպիսի են՝ Հայոցը, Վրացը, Ափխազացը և այլոց, Հայոցը ամենից զօրեղն էր և այն յունադաւան փոքր տէրութիւնները սկիզբները Հայոց Հովանաւորութեան ներքոյ էին. բայց մէկ քանի ժամանակից յետոյ, այն ինչ Բագրատունեացը սկսում էր թուլանալ, կայսերական ներդործութիւն

ենք տեսնում նոցա վերայ: Յովհաննէս Սմբատի օրերումը տեսնում ենք Վրաց կողմնէ մէկ ապստամբութիւն, որին ձեռնամուխ է լինում և մեր Բագրատունի թագաւորը: Վասիլ կայսրը, նոցա ապստամբութիւնը ընկճելուց յետոյ, մտնում է Բագրատունեաց թագաւորութեան սահմանները. Յովհաննէս Սմբատը զարհուրում է և մէկ նամակաւ խոստանում է Անի քաղաքն իրան մահից յետոյ կայսեր շնորհել: Լաստիվերտցի ականատես պատմաբանը ողբալով ասում է. «Անդ եղև Հայոց կորստեան գիր և նամակ, քանզի Յովհաննէս պատուէր էր տուեալ Հայրապետին, եթէ գրէ գիր և տուր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանի զիմ քաղաքս և զերկիրս նմա տացի ի ժառանգութիւն և այլն:

Երբ որ Վասիլ Բ-ին 1025 թուին յաջորդում է նորա եղբայր Կոստանդինը, տեսնում ենք մէկ անակնկալելի և սրտաշարժ դիպուած, որովհետև երեք տարուց յետոյ, երբոր այն Կոստանդինը գտնվում էր մահուան մահճումը, կոչում է իւր մօտ մէկ Հայ քահանայ, և վերոյիշեալ նամակը տալով նրան, խնդրում է տանել տալ Յովհաննէս Սմբատ թագաւորին. բայց նա փոխանակ վերադարձնելու իւր տիրոջը, պահում է իւր մօտ և Կոստանդնի մահից յետոյ մեծ գնով ծախում է նրան յաջորդող Միքայէլ կայսեր վերայ. այս միջոցին մտնենում են Հայոց ամենաթշուառ ժամանակները 1040 թուին. միևնոյն տարին մեռնում են Յովհաննէս Սմբատը և նորա եղբայր Աշոտը:

ԳԱԳԻԿ Բ. 1040—1045 ԹԻՒՔ

Հայաստանի անհէրութիւնը և չհետաքրքիրութիւնը, Յունաց պահանջմունքները, Վեստ—Սարգիս, Գագիկ և նորա գործքերը, Գագիկ Կոստանդնուպօլսումը, Բագրատունեաց թագաւորութեան անկումն։

Յովհաննէս Սմբատի և նորա եղբայր Աշոտի մահից յետոյ, թագը պէտք է անցել էր Գագիկ Բ. որովհետև Յովհաննէսը մեռել էր առանց որդու, և այս Գագիկը Աշոտի որդին էր. բայց Գագիկը լինելով փոքր, Հայոց նախարարներն առ ժամանակ փոյթ չունեցան նրան պսակելու։

Վեստ—Սարգիս Սիւնի անուանեալ իշխանը, որ Յովհաննէսի մահից յետոյ Բագրատունեաց տան հօդաբարձուն էր, դիպող ժամ գտնելով, կամենում է ինքն թագաւորել։ Միևնոյն ժամանակն էլ Մի-քայէլ կայսրը պահանջում էր Անի քաղաքը, միտը բերելով Յովհաննէսի խոստման թուղթը, բայց երբոր Հայերը յանձն չառին տալ քաղաքը, ուղարկեց Անի քաղաքի վերայ 100,000 զօրք, որին ձեռնտու և կարապետ է լինում Վեստ—Սարգիսը։ Հայերը 50,000 զօրքով նոցա առաջն են դուրս գալի և վահրամ Պահլաւունուոյ առաջնորդութեամբը չարաչար ջարդելով յետ են քշում կայսեր զօրքը։ Այնուհետև Վահրամ Պահլաւունին և նորա կողմնակիցները պարզ լուսով տեսնելով Վեստ—Սարգսի վատակութիւնները, միահաւան ընտրեցին իրանց թագաւոր Գագիկն։ Սա այնուհետև մէկ քանի ճակատներ է մղում Յունաց դէմ և իրան պատկանեալ հողերը նոցա ձեռիցը խլում, որ նոքա զօռով յափշտակել էին։ Միւս կողմից էլ տեսնում ենք, որ սա աշխատում է Այրարատը մաքրել Սելջուկեան թուրքերի ասպատակներից. Էսպէսով Հայոց թագաւորութիւնը սկսում է հոգի առնուլ, բայց Վեստ—Սարգիսը, որ առաջին անգամը թագաւորի հաւատարմութիւնը գրաւել էր և մեծ պատուի էր հասել, իրան սրտմտութիւն էր նիւթում։ Սա մէկ քանի նախարարների սիրտը գրաւելով, Մոնոմախոս կայսերը յորդորում է Գագիկին Կոստանդնուպօլիս կոչել և այդ կերպով իրանց նպատակին հասնել, և յիրաւի Մոնոմախոսը մէկ քանի անգամ հրաւիրում է Գագիկին, բայց մեր թագաւորն այդ ենթադրութ հրաւէրքը միշտ մերժում էր։ Պահլաւեան նախարարութիւնը և մէկ քանիները հէնց այդ մտքին էին։ Բայց Վեստ—Սարգսի կողմնակիցները, ենթադրելով, իրանց կողմը քաշելին և միաբան Քրիստոսի արեամբը ստորագրութիւն տուին, թէ այդ հրաւէրքից ոչինչ վնաս չի յառաջանալ և թէ իրանք միշտ հաւատարիմ կմնան իրան։ Գագիկն այնուհետև հարկադրուած էր Կոստանդնուպոլիս գնալու։ Կայսրը սիրով ընդունելուց և շատ պատիւ տալուց յետոյ, իրան դիտաւորութիւնը յայտնում է, այն է որ Գագիկ Անի քաղաքը թողնէ և նորա վոխարէնը Երզրոդ Հայքի Մելիտինէ քաղաքը ընդունէ։ Գագիկը չէ լսում նորա խօսքին և

այս պատճառաւ Կոստանդնուպօլսոյ մօտիկ կղզինե-
րից մէկի վերայ է աքսորւում:

Պէտք է իմանանք, որ այն ժամանակները, երբոր
Բագրատունեաց թագն անտէր էր մնացել Կիւրի-
կեան կամ Լօռուայ երկրումը թագաւորում էր Դա-
ւիթ Անհողը, որ սկսում է իր պահանջմունքները
յայտնել Անւոյ թագի մասին և արշաւել նորա եր-
կիրների վերայ: Նախարարները, որոնք որ իմացել
էին Գագկայ աքսորանքը, երկպառակւում են և
շատերը մինչև անգամ կամենում են Անւոյ թագը
Դաւիթին տալ, իսկ միւսները՝ Վրաց, այն ինչ յաղ-
թութիւնը ընկաւ Վեստ—Սարգսեանց կողմն՝ որոնք
նոյնպէս կաթողիկոսին իրանց կողմը քաշելով Անւոյ
բանալիքներն ուղարկում են կայսեր մօտ:

Գագիկը, որ իրան աքսորանքիցը վերադարձած
էր, տեսնելով այսպիսի նենգաւորութիւնը և այս
սրտառուչ խօսքերն առելով. «Թող, Աստուած իմ և
նենգաւոր լշխանների մէջ դատաստան անէ.» ըս-
տիպվում է Անիի բանալիքները կայսեր թողնել և
Կապադովկիոյ Պիզու քաղաքումն է բաւականանում
և իրան նիստը լինում է այն տեղ: Այս միջոցին
կայսրը Պառակամանոս զօրավարին տալով 100,000-ի
չափ զինուոր, հրամայում է գնալ Անի և դրա-
ւել Բագրատունեաց թագաւորութիւնը: Հայերը և
Հայոց զօրքերն ամենայն կողմից հաւաքուել էին և
միաբան իրանց թագաւորին էին խնդրում, թէպէտ
կարող էին ընդդիմանալ, ինչպէս և յոյց տուին,
այսուամենայնիւ երբոր լսեցին Գագկայ գլխի անցած

բանները, Յունաց զօրավարին քաղաքն ընդունեցին:

Ահա այսպէս 11-դ դարու կիսերումը վերջա-
նում է Հայաստանի արմատական թագաւորութիւնը,
մօտ երկու դար տևելուց յետոյ:

ՏԱՍՆ ԵՒ ՄԻԿ ԴԱՐՈՒ ԿԻՍԵՐԻՑԸ ՄԻՆՉԵՒ ԱՑՆ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԵՐԸ.

*Յունաց անարգութիւնները. Սելջուկեանց տպա-
տակները. Սմբատայ բերդի և Անւոյ քաղաքի կոտորա-
ծները, Տուղրիլ բէգ. Թաֆտուլ իշխան Հայկազն, Մա-
նազկերտի պաշարումն. Անւոյ քաղաքի առումն. Ա-
վետարան. Անիի առումն. Կարսուց թագաւորութիւն. Ռո-
մանոս Դիոժէն կայսր. Գագիկ Բ-ի ազէտալի մահը և
Հայաստանի նկարագիրը:*

Հայաստանի գլխաւոր պաշտպանին Յոյները լ-
րանց խորամանկութեամբ հեռացրին մեր աշխար-
հիցը, և այնուհետև ամենայն իրանց ձեռքի տակ
դտնուած քաղաքներումը պահապան զօրքեր դնելով
աշխատում էին բոլոր Հայաստանը իրանց ձեռը
նուաճելու և այս պատճառաւ ամենայն չարագոր-
ծութիւնները՝ ի գործ էին դնում: Կաթողիկոսական
իշխանութիւնը, որ մեր քայքայեալ աշխարհի և
ազգի միակ յոյսն և ապաւէնն էր, նոքա աշխա-
տում էին ոչնչացնել: Պետրոս Գետադարձ կաթող-
իկոսին աքսորեցին Հայաստանի սահմաններիցը դուրս:

Բայց արդէն պէտք է իմանանք, որ Սելջուկները

Հայաստանումը ոտք էին դրել. ոտքա իմանալով Հայաստանի աղմկեալ դրութիւնը և Յունաց դիտաւորութիւնը՝ բոլոր Հայաստանը իրանց ձեռը նուաճելու, մեծ ասպատակով մտնում են Հայոց աշխարհը և արևելեան մասերիցը սկսեալ մինչև արևմտեան մասերը բոլորն էլ ոտքի տակ են ձգում. Հասնում են Մարգպաղի գաւառն, որտեղ Սմբատայ բերդումն և Արծն քաղաքումը շատ կոտորածներ են գործում:

Մէկ քանի ժամանակից յետոյ, այն է մօտ 1050 թուին, Տուղրիլ բէգն ինքն անձամբ է մտնում Հայաստան. սա իրան դումարտակն ժողովելով Ապահունեաց գաւառն, այն տեղից Հայաստանի ամենայն կողմերի վերայ ասպատակ է ուղարկում. այս ասպատակները, շատ տեղեր աւերելուց յետոյ, մտնում են Վարսու թագաւորութեան հողերը՝ Վանանդ գաւառը: Հայ իշխանները միանալով Վարսու Գագիկ թագաւորի հետ, նոցա հարուածներ են տալիս. այսուամենայնիւ Թաթուլ քաջ իշխանը գերվում է, (Թաթուլի անվեհերութիւնը):

Տուղրիլի դիտաւորութիւնն էր խլել Յունաց ձեռիցն այն ամուր քաղաքներն, որոնց նոքա տիրել էին. այսպէս էր Ապահունեաց Մանազկերտ քաղաքը: Քաղաքացիք արդէն վաղուց իմանալով Տուղրիլի նպատակը, իրանց քաղաքը շատ ամրացրել էին և պաշարով լցրել. (Մեծ Բարանը. Ֆրանսիացւոյ քաջութիւնը): Սելջուկեանը սրտի դառնութեամբ դառնում է դէպի Արծկէ քաղաքը և ճան-

ծաղոտ տեղերովը մտնելով քաղաքը կորճանում է նրան: Յոյներն ի զուր են աշխատում նրանց դուրս անելու Հայաստանիցը, ամենայն տեղ չարդվում են, Թէպէտ և Վրացիքն էլ և Հայ իշխաններից շատերը նոցա օգնութիւն են շտապում:

1063 Թուին Տուղրիլն յաջորդում է նորա եղբայր Ալփասլանը, որ շարունակում է Հայաստանը գրաւելու. Հայաստանի ամրութիւններն առնելուց յետոյ, ինչպէս էր Մանազկերտը և ուրիշները, դիմում է Անի քաղաքի վերայ. արդէն Ալփասլանը յոյսը կտրել էր քաղաքը առնելուց, երբոր մէկ հանդամանք նրան ձեռնտու եղաւ: Քաղաքապետը կարծում էր թէ Ալփասլանը կամենում է նոր զօրութեամբ քաղաքը պաշարել. մտնում է իրան իշխաններովը և զօրքով միջնաբերդը. քաղաքացիք շուարած սկսում են աղաղակ բառնալ. Ալփասլանը յետ դառնալով հեշտութեամբ մտնում է քաղաքը և սաստիկ կոտորածներից յետոյ, քաղաքը իրան սահմանօքը իրան ձեռն է նուաճում: Այնուհետև Ալփասլանը դեսպան է ուղարկում Կարուց Գագիկ թագաւորին, իրան ձեռի տակը մտնելու. Թագաւորը դեսպանին խոհեմութեամբ ընդունելուց յետոյ, երբոր Ալփասլանը վերադառնում է Պարսկաստան, իրան դրութիւնը վտանգաւոր համարելով, առնում է Յոյներիցը Երկրորդ Հայքից արևմուտ գտնուած Ծմնդաւ քաղաքը, իսկ Վարսը Յոյներին է տալիս: Ալփասլանը 1070 թուին բարկացած մտնում է Հայաստան: Պիժէն կայսրը, որ Վարսայ առնելովը

հոգի էր առել, պատահում է Այվազովսկին Մանազկերտի մօտերքումը և մեկ արիւնահեղ ճակատից յետոյ գերվում է։

Հայաստանը հոպէսով երկար ժամանակ պատերազմի դաշտ է դառնում, Յոյների և Սելջուկեան թուրքերի մէջ, ինչպէս եօթներորդ դարի երկրորդ կիսերումը՝ Արաբացւոց և Յունաց մէջ։ Հայերը որոնք զրկուել էին իրանց թագաւորներից, հայերը՝ որոնք իրանց թագաւորների ժամանակը սառը հոգուով այս կամ այն նախարարի կողմն էին բռնում ընդդէմ թագաւորի, հիմա պէտք է հեծնեն օտար ազգայ սրի տակին, մեկ կողմից Սելջուկեան մահմետականներից, միւս կողմից . . . Յոյներից։ Վերջապէս 11-դ դարի վերջերումն այս արիւնալի տեսարանը փոխվում է. Յոյները պէտք է հայաստանից էին քաշել և Սելջուկեան թուրքերը, Մելիք շահի ժամանակները, միանգամայն իրանց ձեռի տակն առնէին նրան։ *)

Այս ողբերգական տեսարանները կատարուելու ժամանակները՝ հայոց թագաւորները և մեծամեծ իշ-

* Այս ժամանակներից յետոյ հետզհետէ 12, 13-դ դարերումը Սելջուկեանց, Մողոլաց և Լանկթամուրի արշաւանաց ժամանակները, գալիս են զանազան օրդաներ և լցնում Հայաստանումն, որոնք Թաթար և Թուրք ցեղերին էին պատկանում. սոքա Հայերին հալածում են և նրանց տեղն են բռնում. այդ ժամանակներից Հայ անուններն տեղի են տալի Թաթարականներին։

խանները թողին իրանց ծննդական երկիրը և խեղճ ժողովրդեանը թողին օտարազգի բռնութեանց և սրածութեանց ներքոյ. շատերը գնացին դէպի Վրաստան, միւսները դէպի Յունաստան, ինչպէս վերևն ասացինք Վասպուրականի թագաւորի և իշխանների, նոյն և Կարուց Գագիկ թագաւորի համար։ Միայն այսպէս հեշտութեամբ չէր թողել Բագրատունի վերջին թագաւորը իրան մայրաքաղաքը, որոյ վախճանը յոյներից պիղծն էր առել։ Խղճալի վերջ ունէր Բագրատունի թագաւորութիւնը, և առաւել ողբերգական էր նորա վերջին թագաւորինը։ Որովհետև Կեսարիոյ . . . . . յոյն արքեպիսկոպոսին սպանուելուց յետոյ, ինքն էս ընկաւ Կիզիստրայի բերդակալ Յոյն իշխանների ձեռն և 1079 թուին սրանցից սպանվում է և կախվում այն բերդի պատերի վերայ։

ՌՈՒԲԵՆԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի վիճակը տասը և մեկ դարի վերջերումը խղճալի էր, նորա միջի թագաւորները և իշխանները յուսահատած միանգամայն մեր աշխարհի ազատութեան համար, մի առ մի թողել էին և թողնում են անօգնական աշխարհը և գաղթում են զանազան կողմեր։ Հասարակ ժողովուրդը անտէր մնալով ճնշվում է օտար ազգի բռնութեանց ներքոյ, սրբութիւններն աւերվում են և ընդհանուր աւերմունքն ամենայն տեղ զգալի կերպով յառաջանում.

երկինքը պատել է մառախուղով և ոչինչ լաւ նշան չէ երևում Հայաստանի ապագայ վիճակի համար. նորա նախաքայլները փոխանակ միաբանական ոգուԹեամբ հասարակաց Թշնամու առաջը կտրելու, արդէն գաղԹել են, ոմանք վրաստանի, միւսները յունաց կայսերուԹեան կողմերը և կարծես սառն աչքով էին նայում նորա աւերանաց և ԹշուառուԹեանց վերայ: Հայաստանի որդւոց հայրենի հողը մոռանալու պառն զանգակները բօԹում են և հայերն բակում են կամաց կամաց Թողուլ իրանց հայրենիքն, մոռանալ իրանց դիւցազանց անուննները և նոցա սխրագործուԹիւնները: Բայց ո՞վ էր, որ չէր կամենում հեշտուԹեամբ Թողուլ այն նուիրական հողն ու երկիրը.—այդ եկեղեցւոյ աւանդապահն էր և նորա կրօնաւորական միաբանուԹիւնները, որոց նշանակած էր ոչ միայն եկեղեցական աւանդուԹիւնները պահել, այլ և հայի լեզուն և գրականուԹիւնը: Ջանգակները բօԹում են, ասում եմ, և ոչինչ նշան չէր երևում բարեյաջողուԹեան. բայց ինչ եմ ասում, հաւատն և արիւնն ինչ չեն կարող առնել./ չորեքօրեայ մեռեալը ինչպէս յարուԹիւն առաւ. հայոց եկեղեցին հինգերորդ դարու վտանգներից ինչպէս ազատեցաւ: . . . . . .

Թէև վհատուԹիւնը տիրել էր բոլոր հայվաղանց վերայ, և մեր աշխարհը աւերանաց ասպարէզ էր դարձել, այսուամենայնիւ գաղկայ մահը և խաչակրուԹիւնները, արիւնն ու հաւատը արձագանք տվեցին մէկ քանի հայերի հոգու մէջ. հայաստանի

մայր մտնող վայլուն աստղն առ ժամանակ կանգ առաւ և սկսեց իրան վերջին ճառագայԹները Թափել հայաստանի արևմտեան հարաւոյ հողերի վերայ:

Մէկ քանի հայ երիտասարդներ գագկայ արեան վրէժխնդիր լինելով՝ յունաց ձեռից խլում են մէկ քանի ամրոցներ և կիլիկիայումը հիմնում են Ռուբինեանց իշխանուԹիւնը:/ հայերը շուտով տեսնում են խաչակիր զինուորներին իրանց սահմաններումը և նրանց օրինակովը վառված՝ իրանց վհատուԹիւնը անհետանում է և իրանց հաւատոյ ջենքովը վառված, միևնոյն ժամանակը մաքառում են անհաւատների դէմ: Այսպիսով Ռուբենեան հայկական իշխանուԹիւնը՝ որ սկիզբներն ոչինչ նշանակուԹիւն չունէր, շուտով Եւրոպական կոչումն և նշանակուԹիւն ունեցաւ:

յունաց կայսերներն աշխատում էին և ամենայն ճիգն Թափում մեր մատաղ տէրուԹիւնը կործանել, բայց հայի սրտիցը գագկայ արեան արձագանքը դեռ չէր գնացել. այն ինչ խաչակրական բարձր ասպետական հոգին նրան վառում էր և մղում էր դէպի արիւնըռուշտ ասպարէզները: Եւրոպան շուտով ճանաչում է նորա նշանակուԹիւնը, և եւրոպական բարձր երեսփոխանները, Պապը և կայսրը, նորա օրինաւորուԹիւնը հաստատելու համար, Թագ են ուղարկում: Ռուբենեան ԹագաւորուԹեան շահը և արժանաւորուԹիւնը այսպիսով խիստ կերպով կապվում է խաչակրուԹեանց հետ: Ռուբենեան ԹագաւորուԹիւնը մէկ քանի կերպով խաչակիր զի-

նուոլութեան և սուրբ երկրի համար մէկ այլ իմն պատնէշ և շտեմարան հանդիսացաւ։ Սուրբ երկիրների ազատութեան կռիւները յառաջադէմ էին, քանի որ կրօնական հոգին տիրապետում էր եւրոպական մտքերը, քանի որ շահասիրութիւնը և աշխարհային վաճառքը չէր դրաւել եւրոպական ասպետների և իշխանների սիրտն ու հոգին, քանի որ Պապը՝ հեռի ամենայն որևիցէ չնչին դիտաւորութիւններից և բարոյական ապականութիւններից, ներգործում էր եւրոպական քրիստոնէից վերայ և օգնում էր, թէ բանիւ և թէ գործով արևելեան քրիստոնէից։ Հայոց թագաւորութիւնն էլ անվտանգ յառաջ էր խաղում իրան իշխանութեան վաճառքի մէջ։

Բայց ընդհանուր պատմութեան մէջը տեսնում ենք, որ շուտով առաջին խաչակրութիւններիցը յետոյ, եւրոպական իշխանները սեպհական շահասիրութիւնը բարձր համարեցին, քան ընդհանուր քրիստոնէականը. Պապերն արդէն իրանց Թեոմինիկեան զինուորութիւնը 13-դ դարումը հիմնեցին՝ իրանց իշխանութիւնը ապահով և անվտանգ պահելու և աւելի ընդարձակելու համար։ Իսպէտով Հայոց մատաղ Կիլիկիական աթոռը մէկ քանի ժամանակից յետոյ սկսում է վտանգներ կրել, մինչև անգամ իրան նախկին բարեկամներիցը. Եփրատայ և Ասորոց կողմի իշխաններիցը մէկ կողմից, Ունիթօռներիցը միւս կողմից։ Քրիստոնէական ջերմեռանդութիւնը տեղի տալով շահասիրութեանը, Պատմելուկները յաղթող են հանդիսանում և սուրբ եր-

կիրը Քրիստոնէից ձեռքից խլում և հաստում են մինչև Կիլիկիայի սահմանները։ Հայաստանը այդ միջոցներումը Սելջուկեան թուրքերի ձեռքից ընկել էր Մողոլների ձեռն։ Թուրքինեան թագաւորները սովորում են բարեկամանալ մեծ խանի կամ Չինգիս խանի յաջորդների հետ և մեր աշխարհի ապահովութեան համար տարիներով ճանապարհորդում են Միջին Ասիա, չնայելով դառնաշունչ հիւսիսային եղանակներին և խստամբեր դժուարութիւններին։ Այո, չեն խնայում և իրանց քնքուշ օրիորդներին խժռուահայեաց Մողոլի սէրը և ձեռնատուութիւնը գրաւելու համար։ Եւրոպական քրիստոնէից փոխանակ անօգնական Թուրքենեանց Ասիայի միջիցը Մողոլն է ձեռք մղում և միմեանց ձեռն տալով Պատմելուկների արշաւանաց առաջն են կտրում։ Բայց թշուառ Հայաստանի համար արդեօք ինչ կայուն, հաստատուն բան տեսանք. նորա եկեղեցին և կրօնն են, որոնք հիմնուած են անշարժ վիմի վերայ. նա աշխարհի երեսին ոչինչ կայուն բան չի տեսել, բացի իրան եկեղեցին . . . . .

Մողոլների միահեծան տէրութիւնը 13-դ դարի վերջերումը քայքայվում է և միմեանց հակառակ կտորներ է բաժանվում, այնպէս, ինչպէս երբեմն Ամիրապետականը և յետոյ Սելջուկեանցը։ Այսպէս է ասիական տէրութեանց վիճակը.— շուտով բարձրանալ և շուտով քայքայվիլ։ Թուրքինեանք գրկվում են իրանց հաւատարիմ Մողոլ խաներիցն. անճարացեալ դիմում են դէպի Պապը՝ որ արդէն

գերի էր Գաղղիացւոց Թագաւորների մօտ, և կորցրել էր իրան բարձր բարոյական նշանակութիւնը Եւրոպացւոց մէջ։ Պապերը վոխանակ օգնելու, Ունիթօռներով են լցնում Կիլիկիան և Մեծ Հայաստանը։ Կիլիկիան աղմկվում է և իրան մէջն երկպառակվում, Մամելուկները՝ արևելեան քրիստոնէութեան խարազանը, կործանում են երեք դարեան Ռուբինեան տունը։

Ծանօթ.—Վերջին անգամները Հայերը ոչինչ չունէին վախենալու Յոյներից, ըստորում նոքա ստիպուած էին Օսմանցւոց առաջն առնելու և Կիլիկիան աչքից ձգել էին։

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հրչան Հորդորդ.

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ (1080—1123 Թիւը։)

ՌՈՒԲԻՆ Ա. մինչև 1095. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. մինչև 1100 և ԹՈՐՈՍ Ա. մինչև 1123 Թիւը։

Հայաստանի Բագրատունի վերջին Թագաւորի մահը, նորա կարմիր արիւնը՝ որ Թափուեցաւ ՚ի վրէժխնդրութիւն Հայրենի օրինաց, վառեց մորմոքեց ճշմարիտ Հայասէր սրտերը։ Հայութիւնը վիրաւորուած էր և փոքր Հայաստանի Հայերն, որոնք Յունաց ձեռքի տակն էին, վրէժխնդրութիւն էին կամենում։ Մտքերն այսպիսի դրութեան մէջ էին գտնվում, երբոր Ռուբէնը, Գագիկ Թագաւորի ազգականներից մէկն, որ նորա բռնվելու ժամանակն ականատես էր, Հաւաքեց իրան շրջապատը մէկ քանի քաջ Հայեր. Հայաստանը պատերազմի ասպա-

բէզ էր դարձել այն ժամանակվան երկու մեծամեծ բռնաւոր դրացի ազգաց մէջ, Հայաստանը կորցրել էր իրան մէջից ՀԷր որդկերանց բազմութիւնը: Մեր քաջերն ապահով տեղ էին կամենում իրանց զէնքը գործ դնելու. Տաւրոսի բարձրութիւնները լաւ ապագայ էին խոստանում, այն տեղ էին գտնվում և շատ Հայեր. Սեաւ լերան վերայ Հաւաքուած էին շատ Հայ կրօնաւորներ, Լամբրոն քերդը գտնվում էր Օշին Հայ իշխանի ձեռքն. Գող մականուանեալ Հայկազն Վասիլ քաջ իշխանի ձեռին էր Քեսնու ամրոցը Մարաշայ մօտերքը: Մեր Ռուբէնը բարձրանում է Տաւրոսի վերայ և Կոռոմզոլ գիւղումը հաստատում է իւր բնակութիւնը 1080 թուին: Ահա այս տեղ է լինում Համարեա թէ Ռուբինեանց առաջին բանակը և այս բարձրութիւնից են սկսում Կիլիկիան գրաւելու, Յոյներին այն տեղից Հալածելով:

Ռուբէնը Հալածեալ Հակառանց Համար նոր Հայկ է Հանդիսանում և ամենայն կողմից նորա թիւն տակն են ժողովում Բազրատունի զինուորները: 1095 թուին վախճանում է Ռուբինեան թագաւորութեան Հիմնադիրն և նրան յաջորդում է նորա Կոստանդին որդին:

Եթէ Ռուբէնի ժամանակները միայն գագկայ արեան վրէժխնդրութիւնն էր՝ որ Հայերին մղում էր դէպի Կիլիկիայի տիրապետութիւնը, նորա որդի Կոստանդնի ժամանակները Հայոց վՀատեալ Հոգին զարթնում է և մէկ ուրիշ Հանգամանքով: Քրիստոնէութիւնը տանջվում էր արևելքումը Սելջուկ-

ներից և Եգիպտական մահմետականներից, և սուրբ գերեզմանը գերութեան մէջ էր: Պետրոս Ամիէնացւոյ քարոզութիւնը և Ուրբանոս Ե. պապի քրիստոնեավայել յորդորանքն արևմտեան քրիստոնեաները մղում են դէպի սուրբ երկիրը: Քրիստոնեայ խաչակիր զինուորութիւնը երևում է արևելքումը և արևելեան քրիստոնեայքը Հոգի են առնում: Կոստանդինը և նորա Հայկական զինուորութիւնը ձեռնտու և կարեկից են լինում, նրանց ճանապարհները ցոյց տալով և Անտիոքի ճակատագրութեան ամլի ժամանակը պաշար և կերակուր ուղարկելով: Հայոց ազգի անունը Հնչում է Եւրոպական ազգաց մէջ և խաչակրութեան առաջնորդ Գոտֆրիդ Բուլիոնացին Կոմսութեան (գրաֆութեան) իշխանութիւն է շնորհում մեր Կոստանդնին: Այն ինչ միևնոյն ժամանակները Ռուբինեան Հողերն ընդարձակվում են Տաւրոսի երկայնութեամբը և Վահկայ ամուր բերդը Յոյների ձեռից խլվում: 1101 թուին, այն է անմահ յիշատակաց արժանի Գոտֆրիդի մահուան տարին, վախճանում է և մեր Կոստանդինը և յաջորդում է նրան նորա որդի Թորոսը:

Կիլիկիայի իշխանութիւնն արդէն նշանակութիւն էր ստացել. Թորոսը՝ որ իրան քաջութեամբը գերազանցում էր իրան նախորդներին. իրան յաջողակ ձեռնարկութեամբն և բարւոք կառավարութեամբը լրացրեց միանգամայն իրան նախորդների սկսածը: Առնում է Անարզաբայ երևելի քաղաքը, Հիմնում է Դրազարկ վանքն և ուրիշ շատերը, որ

լցվում են Հայոց կրօնաւորներով. Հայոց Հալածեալ եկեղեցւոյ Հոգևոր երդերը և շարականները Հնչում են Տաւրոսի վերայ, ապահով նրանց դաւազանի և իշխանութեան ներքոյ: Կիլիկիան կամաց կամաց Հայոց տուն է դառնում: Այն ինչ միւս կողմից Թորոս քաջ իշխանի աչքի առաջիցը չէ անհետանում Ֆագկայ արիւնը, նա ընկնում է Կիպրոսարայի ամրոցի վերայ. Մանտալեան յոյն իշխաններին չարաչար վախճան է տալի և բերդը միացնում իրան երկրների Հետ: Թորոսի անունն առաւել քան զառաւել ահարկու էր դառնում յունական կայսերութեանը, որ որոգայթներ էր Հնարում Թորոսի իշխանութիւնը և երկիրն ոչնչացնելու համար:

Սելջուկեան թուրքերը՝ որոնք գտնվում էին Իկոնիոյ կողմերը, դրդռվելով յոյներից, մէկ քանի անգամ փորձ են փորձում Կիլիկիան նուաճել. ասպատակում են Անարզաբալի գաւառը, բայց միշտ կասում են Թորոսի քաջութեան առաջ և առաւել Գող Վասիլ իշխանի՝ որ Քեսու քաղաքումն իրրև մէկ նոր Սիսական տուն էր Հանդիսանում Կիլիկիայի Հիւսիս արևելքումը: Թորոսն այսպիսով իրան բոլոր իշխանութեան ժամանակները յաղթող Հանդիսանալով՝ ոչ միայն Տաւրոսի բարձրութիւններն է խլում յունաց ձեռքից, այլ և նորա ստորոտի դաշտավայրը մինչև ծովի ափերը, բացի մէկ քանի ամուր քաղաքներից, ինչպիսի էին—Տարսոն և Մամեստիա:

ԼԵՒՈՆ Ա. 1123—1141 ԹԻՒ.

Սորա ժամանակները Կիլիկիան միանգամայն Հայոց իշխանութեան ներքոյ է ընկնում, բստորում Մամեստիան և Տարսոնը Թորոսի ժամանակները դեռ յունաց ձեռքին էին: Լևոնը ամենայն ջանքն ՚ի գործ է դնում և այս քաղաքները նուաճում, յոյներին միանգամայն Հալածելով Կիլիկիայից: Ռուբինեան տան իշխանութիւնը ընդարձակվում է և Լևոնը աչքը ձգում է արդէն Սելևկիա քաղաքի և Խաւրիա աշխարհի վերայ: Միւս կողմից Հզօր Լևոնը չէ մոռանում իրան սրբազան պարտքն, օգնութիւն է մատուցանում եւրոպական իշխաններին՝ ընդդէմ մահմետական Սելջուկեանց: Լևոնի բազկի զօրութիւնը և զօրեղ իշխանութիւնը թնդում է. և այս բանս նրան նախանձելի է առնում իրան Հարևան իշխաններին: . . . . . Յունական պետութիւնը արդէն վաղուց միջոց էր որոնում Ռուբինեան տունը կործանելու:

1120 թուին Անտիոքի բարի Ռոժեր կոմսին յաջորդում է Պևռին անուամբ մէկը, որ նախանձելով Լևոնի զօրութեան և երկրի ընդարձակութեան վերայ, Մարաշի Բալդուին կոմսի Հետ միաբան խորհրդով կոչում են Լևոնին Մարաշ, բռնում են և Անտիոք արդելում: Լևոնը անճարացած Ատանա և Մամեստիա քաղաքները և 60,000 դահեկան տալով՝ ազատվում է և գալով Կիլիկիա Հաւաքում է իրան բոլոր ոյժը և կրկին խլում նրանց տուած

քաղաքները և էապէսով չէ բաւականանում, այլ և նոցա երկիրները անգամ ասպատակում։ Այս միջոցում Յունաց Յովհաննէս Կոմնենեան կայսրն աւելի անհանգիստ աչօք էր նայում Կիլիկիայի եղելութեանց վերայ։ Նա հրամայում է իրան կայսերութեան մէջ նոր զօրք ժողովել. այն և Իկոնիոյ և Լատինական իշխաններին էլ իրան կողմն է գրաւում և այնպէս մտնում Կիլիկիա. առնում է Տարսոն, Ադանա, Մամեստիա և ուրիշ դաշտավայրական քաղաքները դիւրութեամբ, ըստորում նոցա մէջը կային բացի Հայ բնակիչները և Յոյները ու Եւրոպացիք։ Հայոց պինուորութիւնը կենդրոնացել էր երկու տեղ. այն են Անարզաբայ քաղաքումն և Վահկայ ամուր ամրոցումը։ Կայսրը մէկ քանի ամիս պաշարելուց յետոյ, իրան Խահակ որդւոյ հնարագիտութեամբն առնում է այն քաղաքը, և ապա դիմում է Վահկայ բերդի վերայ, այն էլ առնում է Ռուբինեանց ազգական Կոստանդնի երկար ընդդիմանալուցը յետոյ։ Կոստանդինը ուղարկվում է Կոստանդնուպոլիս, այն ինչ կայսերական մեծ զօրամատակը Տարսոն բարձրութիւններումը վրայ է հասնում Լևոն իշխանին և նրան նեղը ձգելով դերում է նրան Ռուբէն և Թորոս որդւոց հետ միասին։ Կայսրն նոցա էլ կապանօք ուղարկում է Կոստանդնուպոլիս։

ԹՈՐՈՍ Բ. 1145—1168 ԹԻՒԸ.

1138 թուից յետ Հայոց մեծ իշխանը և նորա

որդիքը գերեալ էին և Կիլիկիան Յունաց ձեռն էր ընկել։ Կիլիկեցի Հայկազունքը ճնշվում էին Յունաց ձեռի տակին, և իրանց եկեղեցական արարողութեանց համար զանազան հայհոյանք և նախատինք էին կրում նրանցից։ Հայութիւնը իրան իշխանութիւնն էր որոնում, լատինական իշխանները սկսել էին ճանաչել և յաւելով միտը բերել Հայկական Կիլիկիական իշխանութիւնը, ըստ որում Հալէպի Զէնգի Ամիրէգը և ապա նորա մահից յետոյ նորա նուրէդդինն որդին զօրանալով արևելեան քրիստոնեայ իշխանութիւնները կործանում էին և երևելի եղեսական կոմսութիւնը իրան քաղաքով կործանուեցաւ Նուրէդդինից։ Անտիոքին սպասում էր նոյն վիճակը, և արևելեան քրիստոնէութիւնը հոգւոց հանելով էր միտը բերում առիւծասիրտ Լևոնին։ Բայց Լևոնը Կոստանդնուպօլսում սաստիկ տանջանքներից մեռել էր 1142 թուին, նորա դիւցազնական Ռուբէն որդին նախանձոտ յոյներից իրան զօրեղութեան մասին աչքերիցը զրկուել էր և դառն տանջանքով սպանուել։

Որպէս և իցէ Հայկական իշխանութիւնը մեծ ախոյեան էր արևելեան քրիստոնէութեան և նորա անկմամբը մահմետականութիւնը զօրեղանալով մեծ վնաս հասցրեց։ Յովհաննէս Կոմնենեան կայսրը 1145 թուին մեծ պատրաստութեամբ Կիլիկիայի կողմերն եկաւ Ամիրէգեանց առաջը կտրելու. բայց հազիւ թէ այնտեղ հասաւ, մեռաւ. իսկ Լևոնի կրտսեր որդի Թորոսը, որ նորա հետ եկած էր, մէկ հնարքով

թողուց կայսերական զօրքը և գնաց մէկ հայ քահանայի մօտ։ Հայ քահանան գաղտնի կերպով յայտնում է հայ իշխաններին և ժողովրդականաց Թորոսի գալուստը. Հայերը վառվում են անցեալ յիշատակովը և Լևոնի և Ռուբէնի մահուամբը, ոտի են կանգնում և շուտով 10,000 հայ երիտասարդներ Թորոսի դրօշակի տակն են ժողովում, առնվում են մի առ մի—Անարզաբայ, Վահկայ բերդը, Ադանայ, Մամեստիա, և այլն, և Հայուքեան իշխանութիւնը տիրապետում է, գրաւում է բոլոր Կիլիկիան։ Յոյները հալածվում են այն տեղից և նրանց ինչքերը յաղթող զինուորութեան ձեռքն է ընկնում։

Կիւմանուէլ կայսրը, որ արդէն յաջորդել էր Յովհաննէսին, բաւական զօրութեամբ ուղարկում է Անդրոնիկոս զօրավարին (իրան հօր եղբօր որդուն) Կիլիկիա. Թորոսը կամենում է բանը խաղաղութեամբ վերջացնել, բայց զօրավարը սպառնում է նրան միւսնոյն վախճանը տալ, ինչ որ նորա հօրը՝ Լևոնին։ Թորոսն առանց ժամանակ կորցնելու Հայոց Հետևակ զօրքը դարանի է գնում այն կիրճում՝ որով յունական զօրքը բարձր բերդի կողմերովը պէտք է մտել էր Կիլիկիա. այն ինչ ինքն ամրանում է բարձր բերդումը. Յունաց զօրավարը և նորա հետ շատ իշխանները գերվում են, իսկ զինուորութիւնը ջարդվում է։ Յունաց կայսրը հաշտութիւն է կամենում և մեր Թորոսը շատ գանձ առնելուց յետոյ է արձակում նոցա զօրավարին և իշխաններին։ Այսուամենայնիւ կրօնամոլ յոյները յաջող ժամանակի էլին

սպասում. Թորոսը օգնութիւն է գնում Երուսաղէմի Բալդուին Գ. Թագաւորին ընդդէմ Նուրէդդին Ամաբէգի՝ որ Եգեսիան նուաճելուց յետոյ արշաւում էր Երուսաղէմայ երկրների վերայ։ Այն ինչ Թորոսի գէնքը դարձած էր մահմետականաց դէմ, յոյները սկսում են թշնամական գործողութիւնները, Անդրոնիկոսը կրկին անգամ արշաւում է Կիլիկիա. Թորոսը վերադառնալով իւր աշխարհը, կրկին անգամ կոր՝ի գլուխ ջարդում է Անարզաբայի մօտ յունական զօրքին 1152 թուին։ Գալիս է ապա Կայսմանոս զօրավարը, բայց Թորոսը սրան էլ է ջարդում Տարսոնի մօտ։

Այսպիսով ամենայն հնարքները և ջանքը յունաց՝ի զուր անցկացան։ Բայց Կիւմանուէլը էր հանգստացաւ, մեծ գանձով և հողեր տալով Իկոնիոյ Սուլթանին, գինում է Կիլիկեցւոց դէմ։ Սուլթանը Անարզաբայի մօտ գտնուած թիլ ամրոցը պաշարում է, բայց զօրաց մէջը ժանտախտ ընկնելով ոչինչ չէ կարողանում. այն ինչ Թորոսը հայկական գունդերովը 1155 թուին ասպատակում է Սուլթանի երկիրները։ Սուլթանը ստիպվում է յետ դառնալ և հաշտութիւն խօսել մեր իշխանի հետ։ Սորանով հայերը աւելի սիրտ առած, գրաւում են և Գերմանիկ կամ Մարաշ քաղաքը և նորա շրջակայքը՝ որ Լատինացւոց ձեռքից խլվելով Իկոնիոյ Սուլթանի ձեռքն էր ընկել։ Սորանով էլ չը բաւականացած հայերը մտնում են Խաւրիա և Ստեփաննոսի մահուան վրէժը այն տեղի յոյներից առնում։ Կայսրը

տեսնելով այս ամենայն եղելութիւնները, կամենում է անձամբ մտնել Կիլիկիա: Այն ինչ Հայերը իրանց յաղթութիւններով միանգամայն անհոգացած և զօրքերը ցրուած էին, կայսրը 1159 թուին մեծ զօրութիւն ժողովեց և փոքր Ասիայով անցանելով գնում էր, իբր թէ Սելջուկական զօրութեանց վերայ: Հասնելով Կիլիկիայի սահմաններըը, ճանապարհը փոխում է և մտնում Կիլիկիա: Հայերը դեռ ոչինչ չէին լմանում, մէկ եւրոպական ուխտաւոր այս տեսնելով՝ յայտնում է Հայերին, բայց շատ ուշ էր. Թորոսն իրան ընտանիքով ամուր տեղ քաշուեցաւ. Յոյները Կիլիկիա մտան և արդէն Հայկական իշխանութեանը այն վիճակն էր սպասում, ինչ որ Լևոնի ժամանակը. բայց Երուսաղէմի թագաւորը և ուրիշ շատ լատինական իշխաններ՝ որոնք պայծառ լուսով էին տեսնում Հայկական իշխանութեան նշանակութիւնը և տուած օգուտը արևելեան քրիստոնէութեան, մէջ են մտնում և կայսրը համոզում են բանը խաղաղութեամբ վերջացնել: Թորոսը ձեռն է վերառնում Անարզաբայ և Մամեստիա քաղաքներիցը, որոնք անմիջապէս կայսերական իշխանութեան ներքոյ են մտնում:

ՄԼԵՀ՝ ԹՈՐՈՍ Բ-ի ԵՂԲԱՅՐԸ 1168—1174 ԹԻՒԸ.

Թորոս Բ. իւր մահիցն առաջ կոչում է Անտիոքիցը իրան աներ Թովմաս Պայլին՝ որ դեսպանական պաշտօնիւ նստած էր այն քաղաքումը, յանձանձիչ

է կարգում նրան իրան դեռահաս որդւոյ վերայ և տէրութեան սանձը տալով նորա ձեռն՝ վախճանում է: Բայց Մլեհը, որ արդէն իրան Հայկական յանդգնութեամբը ապստամբելով եղբօրիցը, նստում էր Հալէպ՝ Նուրեդդինի մօտ, լսելով եղբօր վախճանը, աճապարում է այն Սուլթանի օգնական զօրքերովը, մտնում է Կիլիկիա և շատ արիւնհեղութիւնից յետոյ այն երկրի իշխանական գաւազանը իրան ձեռն է առնում. Թովմաս Պայլը (պալեօզը կամ դեսպանը) ստիպվում է Անտիոք դնալու, գոնեա իրան կենայ ապահովութեան համար. իսկ Թորոսի դեռահաս որդին գաղտնի կերպով ապանվում է: Մլեհը միանգամայն փոխում է իրան նախորդների քաղաքականութիւնը և բռնած ճանապարհը. և յիրաւի, եթէ մի քներս բերենք այն ժամանակվայ հանգամանքները, պարզ լոյսով կըտեսնենք իրաց այդպիսի լինելը. քրիստոնեայքը երկպառակեալ և Մահմետականները զօրեղացած էին. Մլեհը մահմետականաց օգնականութեամբն արդէն աթոռի վերայ բարձրացած, միանգամայն քրիստոնէից դէմ է զինուորվում և Կիլիկիայի սահմաններումը գտնուած Տաճարական ասպետութեան հողերը իրան ձեռն է գրաւում: Արևելեան քրիստոնեայ բարօնները միաբանական զօրութեամբ կամենում էին Կիլիկիական իշխանութեան վերայ յարձակիլ: Երուսաղէմի թագաւորը կամենում է իրաց ելքը խաղաղութեամբ վճռել, գալիս է Անտիոք, կոչում են Մլեհին խորհուրդ, բայց նա չէ անսում: Այնուհետև Երուսաղէմայ թա-

դաւորը և այլ քրիստոնեայ Եւրոպական իշխանները մտնում են Կիլիկիա և հէնց սպառնում էին նորա կործանումն. երբ որ Նուրէդդինը յանդուգն զօրութեամբ յարձակուելով Երուսաղէմայ թագաւորութեան հողերի վերայ, նրան յետ է կանչում և Մլեհը ազատվում: Թէ և Մլեհը իրան քաղաքականութիւնը այդ կողմանէ փոխում է, այսուամենայնիւ յոյների վերաբերութեամբ չէ փոփոխում, և իր պապերի ատելութիւնը և վրէժխնդրութիւնը սկսում է երևան հանել. օգուտ քաղելով իրան մահմետականաց հետ սէր և հաւատարմութիւն ունենալուց, կազմում է մէկ դաշնակցութիւն՝ Իկոնիոյ, Հալէպի և ուրիշ մահմետական իշխաններից, և նոցա հետ միասին նեղի է ձգում Բիւզանդական կայսերութիւնը: Մլեհը իրան այսպիսի անվեհեր ուղղութեամբը, գուցէ մէկ ուրիշ ժամանակ կամ մէկ ուրիշ դարում, շատ բան կանէր, միայն ոչ այն դարում, երբ որ մահմետականութեան դէմ ընդհանուր քրիստոնէութիւնը մաքառում էր և նա ինքն իրան գործքերը նրանց հետ էր բռնում: Գուցէ հէնց այս պատճառաւ մեր այս Ֆրիդերիքոսը սպանվում է իրան զօրքերից՝ ատելի դառնալով թէ ժողովրդեան և թէ հոգևորականներին:

ՌՈՒԲԷՆ Բ. 1174—1185 ԹԻՒԸ.

Մլեհի տեղը նստեց նորա եղբայր Ստեփաննոսի որդի Ռուբէնը, որոյ իշխանութեան սկիզբներում Տարսոնը և միւս քաղաքները՝ որոնք Յունաց ձեռին էին, Ռուբինեան տան հետ միացան. Ռուբէնը կամեցաւ և Լամբրոն ամրոցը նուաճել, որովհետև նորա իշխանները՝ որդիից որդի ժառանգում էին այն ամրոցը յունաց կայսեր իրաւատութեան ներքոյ և հաւատարիմ հպատակ էին նոյն կայսեր և միշտ աշխատում էին կայսեր զօրութիւնը Կիլիկիայում ընտեսարացնել: Հեթումը՝ Ներսէս Լամբրոնացոյ եղբայրը որ այդ ժամանակը Լամբրոնի իշխան էր, ընդդիմացաւ, սաստկացաւ թշնամութիւնը և ատելութիւնը երկու հայկազն իշխանաց մէջ և Ռուբէնը սաստկութեամբ պաշարեց Լամբրոնը: Անտիոքի Պեմոնդ իշխանը Հեթումի յորդորանօքը կանչում է Ռուբէնին Անտիոք խորհուրդի համար: Ռուբէնը բռնվում է այն տեղ և նորա եղբայրը Լևոնը Լամբրոնի պաշարը առաւել ևս սաստկացնում է և այն տեղն է հասցնում Հեթումին՝ մինչև նորա խնդրքովը Պեմոնդը արձակում է Ռուբէնին, որ գալով Կիլիկիա, 1185 թուին իշխանութիւնը յանձնելով իրան հաւատարիմ եղբօրը, ինքն առանձնանում է և կրօնաւորական կեանք է անցկացնում մինչև իր մահը:

Ռուբէնը իրան արձակուելուց յետոյ շատ սիրով է վարվում լատինականաց հետ, խնամութիւն

է անում Պեմունդի հետ և տաճարականաց հողերը յետ պարձնում։

ԼԵՒՈՆ Բ. 1186 1219 ԹԻՒԸ.

Այս Լեւոնը վերոյիշեալ Թոռիկեն կրտսեր եղբայրն էր և հինգ նորա կենդանութեան ժամանակը իրան քաղաքագէտ հանճարովը և պատերազմական սիրազօրծութեամբն արժանացաւ գրաւելու Կիլիկիայի իշխանութիւնը. ժամանակի բերմունքները և իրան շրջահայեաց տեսութիւնը բաձրացրին, ինչպէս իրան պատիւը և իշխանութիւնը, նոյնպէս և Կիլիկիական Հայկազանց անունը և նշանակութիւնը։ Պարզ լոյսով ճանաչում է իրան ժամանակի հոգին և ուղղութիւնը, վաղաքշում է և մէկ քանի կերպով հնազանդութիւն է ցոյց տալի Հռովմայ աթոռին և պապութեանը, յանդուգն և խիստ է վարվում Բիւզանդիայի հետ, որ Հայաստանի դարաւոր ոսոխն էր կրօնի և իշխանութեան վերաբերութեամբ միանգամայն ընկճում է և ոչնչացնում Լամբրոնի իշխանութիւնը՝ որ յոյսը դրած արևելեան կայսրների վերայ չէր հնազանդում և հպատակութիւն ցոյց տալի Թուրքինեանց։ Իբրև ասպետ և խաչակիր ձեռն օգնականութեան է մատուցանում Ֆրիդերիքոս Բարբարոսա կայսերը, այն ինչ իրանց կոչումն և նշանակութիւնը կորցնող ասպետների հետ մաքառում է՝ իրան երկրին և իրաւունքը պաշտպանելու։ Ահա այս օրինակ է վարվում մեր Լեւոնը՝ որ առաջին պսակաւոր

թագաւոր է հանդիսանում Կիլիկիայում։

Լեւոնը ինչ ժամանակ Կիլիկիայի կառավարութիւնը իրան ձեռն առաւ, երկու հարևան իշխանութիւնները, ինչպիսի էին Անթաբէգեանցը արևելքումը, Բիւզանդիայինը արևմուտքումը, բաւականին անկարգութիւններ էին ցոյց տալի, որոնցից օգուտ քաղելով իրան երկիրը ընդարձակում էր ի վնաս նոցա, Խաւրիան միանգամայն նուաճեց և արևելեան Կիլիկիային տիրապետեց։ Նուիրդինը մեռած էր և նորա ժառանգը դեռ ևս մանուկ լինելով գտնվում էր Սալահադին քուրդի խնամատարութեան ներքոյ, որ սկսել էր Իյուբեան տունը կոչնանել Եգիպտոսումը և նորա աւերակների վերայ իրան իշխանութիւնը յարդարել և քիչ քիչ առաջ գալով Երուսաղէմայ թագաւորութեան հետ մաքառել։ Խաւրիան միանգամայն նուաճելն դիւրին էր, բան որում Խահակ Անդելոսը առաւել իրան գուարճութեանց ետևից էր գնում, քան թէ իրան երկիրները պաշտպանելու։ Իկոնիոյ Սուլթանը տեսնելով Լեւոնի երկրի ընդարձակուելն, կասկածանք է կրում և սկսում է արշաւել Կիլիկիական երկիրների վերայ, բայց սպանվում է հայկական զինուորութիւնից և այնուհետև Իկոնիացիք պէտք է առաւել պաշտպանել էին, քան թէ ընդարձակել իրանց սուլթանութիւնը Կիլիկիայի կողմից։

Մինչ այս մինչ արդէն հասել էր այն ժամանակը՝ երբոր պէտք էր Կիլիկիական Հարստութիւնը իրան երկար ժամանակվայ սիրագործութիւններիցը

և քրիստոնէութեանը ջատագով կանգնելուց յետոյ արևելեան մահմետականաց դէմ վարձատրվել էր՝ Եւրոպական քրիստոնէութիւնից և պահպանել արքայական թագիւ: Սալահադինը 1187 թուին նուաճեց Երուսաղէմը և քրիստոնեայ զինուորաց արեամբը աղատած սուրբ երկիրը կրկին անգամ մահմետականութեան ներքոյ ընկաւ: Գերմանացւոց Ֆրիդերիկոս Բարբարոսա կայսրը 1189 թուին սկսեց երրորդ խաչակրութիւնը՝ Հասաւ մինչև Իկոնիոյ Սուլթանութեան սահմանները: Սակայն Լևոնը իմացաւ նորա գալուստը՝ իմացաւ և նորա պաշարի պակասութիւնը, իսկոյն ամենայն բան պատրաստելով կայսերն է ուղարկում և մինչև անգամ Հայոց զինուորութիւնը ժողովում է, որ նրան Կիլիկիայից անցկացնելով՝ ազատ սուրբ երկիրը: Բայց կայսրը Սելևկիա քաղաքը հասնելով՝ խեղդվում է Կալիկադնոս գետում:

Ֆրիդերիքոսն, իբրև կայսր, արդէն իւր մահիցը առաջ խոստացել էր թագաւոր պսակել Լևոնին: Լևոնը իսկոյն նորա աղէտալի մահից յետոյ նամակ գրեց կեղեստինոս Գ. պապին և Հենրիկոս Զ. Գերմանացւոց կայսեր, վերոյիշեալ կայսեր որդուն, և ամենայն բան մի առ մի նրանց պատմելով՝ յայտնեց նրանց և Ֆրիդերիքոսի դիտաւորութիւնը իրան թագաւոր պսակելու համար: Նոքա իսկոյն միահաւան ուղարկեցին թագ, որով 1198 թուին Տարսոն քաղաքումն, Ննդեան օրը, վառաւոր հանդիսիւ Լևոնը թագաւոր օծուեցաւ, Գրիգոր Զ. կաթողիկոսի

ձեռամբն, ի ներկայութեան հայ երևելի իշխանաց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և այլ բազմաթիւ կղերաց և աշխարհականաց: Ներկայ էր հանդիսումն և Կոնրադոս կարդինալն պապի, թագը բերող Եւրոպայից: Օտար ազգայ իշխանները և թագաւորները շնորհաւորեցին մեր այս նոր թագաւորի օծումն և նորա բարեկամութեանն էին ցանկանում. Ալեքսիոս կայսրը, Իսահակ Անգելոսի աչքեր հանողն անգամ, նորա բարօրութիւնը և յաջողութիւնն էր ցանկանում: Լևոնը զարդարում է Սիս մայր քաղաքը և թագաւորական աթոռն իրան օծվելուց յետոյ այնտեղ է տեղափոխում, նոր պալատ շինելով՝ նոր նոր կարգեր յարդարելով, ըստ եւրոպական կարգի:

Այս միջոցին 1199 թուին Անտիոքի դքսութեան ժառանգութեան համար մեկ վէճ է բացվում Լևոնի և Տրիպոլսոյ կոմսի (ձիւան անուամբ) մէջ, որ տևում է 12 տարի և գրեթէ այդ միջոցումն զբաղեցնում է հայկական բոլոր զօրութիւնը և խաչընդոտ է լինում որևիցէ երևելի գործ յառաջ տանելու: Պատճառն այսպէս է ծագում. Անտիոք քաղաքի Պեմոնդ դքսի Բայմունդոս որդին պսակված լինելով Լևոնի Թուբէն եղբօր Ալիպայ աղջկան հետ, ունէր մեկ որդի՝ որոյ անունն էր Ռուբէն. Բայմունդը մահուան մահիճը մտնելով՝ իրան հօրիցն երդմամբ խօսք է առնում Անտիոքայ դքսական իշխանութիւնը իրան Ռուբէն որդուն տալ: Պեմունդը շուտով իրան որդուց յետոյ մեռնում է և

Անտիոքայ դքսութիւնը, իւր երդմանը համեմատ, տալիս է Ռուբէնին՝ իրան թոռանը: Տրիպոլոյ այն ժամանակվայ կոմսը՝ որոյ անունը Ճիւան էր և որ Պեմոնդի միւս որդին էր, Լատինական իշխանութեան իրան կողմն է գրաւում, նոյն և Տաճարական և Յովհաննիսեան կարգի ասպետներին և նոցա հզօր օգնականութեամբը հալածում է Ռուբէնին Անտիոքիցը՝ որ իսկոյն փախչում է Լևոնի մօտ և նորա ձեռնտուութիւնն է խնդրում: Լևոնը վերաւորեալ իրան ազգականի անպատուութեան համար՝ բուռն զօրութեամբ մտնում է Անտիոքի սահմանները, մեծամեծ արիւնահեղ ճակատներ է ունենում Լատինականաց դէմ. խլում է Տաճարականաց կալուածները՝ որոնք գտնվում էին թէ Կիլիկիայումն և թէ նորա սահմաններումը, լինում են կատղածներ թէ այս և թէ այն կողմերը, բայց մէկ քանի ժամանակից յետոյ շրջահայեաց Լևոնը բանին ուրիշ շրջան է տալիս: Իննովկենտիոս Գ. պապը՝ որ այն ժամանակները յաջորդել էր Կեղեստինոսին և որ ամենամեծ պապերից մէկն լինելով՝ արդէն ըստ ժամանակի բերմանցն, ՚ի կատար էր ածում Գրիգոր Է-ի նպատակները և մէկ բարոյական բարձր իշխող և տիրապետող լինելով Եւրոպական մարդկութեան, մեծ ներգործութիւն ունէր և արևելքումը: Լևոնը Անտիոքի խնդիրը յանձնում է, իրան դեսպանների ձեռամբը, Հռոմայ աթոռին և մեծ պապի աչքն իրան վերայ է դարձնում: Պապը, ըստ նորա թախանձանաց, դատաւոր է կարդում առաջ Պետրո և յետոյ Սուրբեր կարդինալներին, բայց նոքա միշտ Լատինականաց կողմը բռնելով՝ բանին աչառութ վախճան էին տալի, յօգուտ Եւրոպականաց և Պետրոսն (կարդինալն), մինչև անգամ, յանուն պապին նզովք դրեց Հայոց Թագաւորի վերայ, բայց Հայոց ժողովուրդը Գերմանացւոցը և Անգլիացւոցը չէր և ոչ Հայոց եկեղեցին Կատոլիկացը, ուրեմն իզուր էր կարդինալի սպառնալիքը: Վերջապէս Իննովկենտիոսի երկարամեայ տարաձայնութիւնները վերջացնելու համար, պէտք է խիստ միջոց էր դործ դրել. նշանակութեան դատախազ՝ Երուսաղէմայ Թագաւորն, նոյն քաղաքի և Անտիոքայ պատրիարգները, և մէկ քանի անաչառ իշխանները, որոնք վճռեցին յօգուտ Ռուբէնի: Իսկ Լևոնը Տաճարականաց կալուածները պէտք է նրանց յետ էր դարձրել: Բայց պէտք է ասել, որ այդ վէճի վերջին տարին Լևոնի ոսոխները իրանց ամենայն ջանքն ՚ի դործ դրին նրան վնաս տալու և փորձանքի մէջ ձգելու և այդ մասին զանազան որոգայթներ լարեցին: Լամբրոնի Հեթում իշխանն է ապստամբում, Նուբէդդինի որդին մեծանալով պահանջում է իրան մէկ քանի քաղաքները՝ որ նորա մանկութեան ժամանակները Լևոնը միացրել էր Կիլիկիայի հետ. բայց ամենայն տեղ յաղթող է հանդիսանում Թագաւորը և միւս կողմանէ խնամութիւն և սէր է կապում Լուսինեան տան հետ՝ որ Երուսաղէմը թողնելով երրորդ խաչակրութեան ժամանակը գաղթել էր Կիպրոս կղզու վերայ:

Լևոնը ամուսնացած էր Հուգոն Թագաւորի քրոջ վերայ և այն Թագաւորին այցելութեան գընալու ժամանակը լատինական նաւերը նրան շրջապատեցին. Լևոնը քաջութեամբ ազատվում է և հասնելով Կիլիկիա, հեթումի իշխանութեանը վերջ է տալիս, նրան պահելով միս քաղաքումն և նորա բերդը և կալուածները յարքունիս գրաւելով: Քաջութեամբ հալածում է և Հալէպի Սուլթանին և նորա ասպատակների առաջը կտրում: Այնուհետև իրան ուշք ու միտքը դարձնելով տէրութեան կարգաւորութեան և ապահով կեցութեան վերայ, մեռնում է 1219 թ. և թաղվում է միս քաղաքումն:

Լևոնի մահից յետոյ ծագած շփոթութիւնները 1219—1226 թիւը:

Լևոնը իւր մահից առաջ իրան յաջորդ նշանակել էր իրան Ջաբէլ մանկահասակ աղջկանը, Բարձր բերդոյ Կոստանդին Բարօնի (պարոնի) խնամատարութեամբը, որ Հայոց երևելի իշխաններից մէկն էր: Բայց Ռուբէնը Անտիոքի դուքսը լսելով այս ամենայն եղելութիւնները, կամենում է ինքն թագաւորել Կիլիկիայումն և այն զինու զօրութեամբ: Կոստանդինը, տէրութեան խնամատարը, նորա առաջը բռնում է Մամեստիա քաղաքի պաշարելու ժամանակը և նրան բռնելով բանտ է դնում Տարսոնումը՝ ուր և մէկ քանի ժամանակից յետոյ մեռնում է:

Անտիոքումն այնուհետև նստում է Պեմունդը, որ Ռուբէնի ազգականներից մէկն էր: Կոստանդինը, Հայոց կաթողիկոսի և Հայոց մեծամեծների հաւանութեամբը Ջաբելին ամուսնացնում է Պեմունդ դքսի Փիլիպպոս որդւոյ հետ, որ գալով միս 1222 թուին պսակվում է և օծվում է Հայոց Թագաւոր՝ երդուելով ամենայնիւ հարազատ լինել Հայաստանեայց եկեղեցուն և աշխարհին:

Բայց Փիլիպպոսը հաւատարիմ չէ մնում իրան խօսքին, խորութիւնն է անում Լատինականաց և Հայոց մէջ, առաւել Լատինականաց շահու օգնելով. սրանով էլ չէ բաւականանում, պալատական դարդերը և հարստութիւնը քիչ քիչ ուղարկում է Անտիոք՝ հօր մօտ: Հայերը, չորս տարուց յետոյ, իրանց համբերութիւնը կորցնելով՝ նրան բանտն են ձգում և զրկում են Թագաւորական տիտղոսից և պատուից: Հայրը սաստն աչօք է նայում այս ամենայն եղելութեանց վերայ, և Փիլիպպոսն իրան կենաց վախճանը բանտումն է գտնում:

ՀԵԹՈՒՄ Ա. 1226 –1270 ԹԻՒ.

Հայերն՝ արդէն բաւական զայրացած լինելով Լատինականներից, կամեցան լատինական հոգւով մեծացած Ջաբելին ամուսնացնել մէկ այնպիսի իշխանի հետ, որ ոչ միայն հոգւով, այլ և արեամբ Հայկազն լինի: Այսպիսի ոք էր Կոստանդին խնամակալի անդրանիկ Հեթում որդին՝ որ Հայոց մեծաց

և Հայոց կաթողիկոսի ընտրողութեամբը և հաւանութեամբը պէտք է ամուսնանար Թագուհու վերայ. բայց Զաբէլը խորշում էր և միայն երկար ընդդիմութիւններից յետոյ հազիւ հազ տուեց իրան ձեռն չեթումին: Այսպէս Լևոն Բ. մեծ Թագաւորի աթոռի վերայ, մէկ քանի ժամանակից յետոյ, բազմում է Հեթում Ա. որ արդարև իրան աչալուրջ և շրջահայեաց քաղաքական գործքերովն և Հայաստանումն արած շինութիւններովը նրանից պակաս չէ: Եւ յիրաւի այդ ժամանակները, երբ այնժամեան աշխարհումը մեծ փոփոխութիւններ էին կատարվում և Հայաստանի ինչպէս և արևելքի հրամայողներն փոխվում էին, մէկ այդպիսի մարդ շատ հարկաւոր էր:

Արդէն դուրս էին եկել Մողոլները և գրաւել Պիջին Ասիան. քայլ առ քայլ յառաջ էին մղում իրանց աշխարհակալութիւնը դէպի արևմտեան Ասիա: 1240 թուին, երբ որ Մողոլաց Բաչու զօրավարը Հայաստանը գրաւելուց յետոյ պատրաստութիւններ էր տեսնում դէպի Կիլիկիա արշաւելու, Հեթումը նորա մօտ դեսպան ուղարկելով դաշն սիրոյ և բարեկամութեան է կապում: Այսքանովս չէ բաւականանում, այլ և Հայոց մեծաց և Հոգևորականաց հաւանութեամբը կամենում է անձամբ գնալ Մողոլիա (Թաթարստան): 1253 թուին, երբ որ իրան դեսպանը վերադարձաւ Բաթուի մօտից՝ (որոյ հաճութեամբն և հաւանութեամբն իւր ցանկութիւնը յայտնեց նախ և առաջ մեծ խանին (Կարակօրօնի այն

ժամանակը ճանապարհ ընկաւ և հասաւ Մանգոյ խանի բնակութեան քաղաքը: Հաստատ պայման և դաշն կռեցան միմեանց օգնութիւն տալու, Թեճն Հայաստանի վիճակն բարելաւացնելու և այնտեղի Հայերին անդորը պահպանելու, և որ առաւելն է Աստոյց և Սուրբ երկրի կողմերը միմեանց օգնականութեամբ պատերազմ մղելու ընդդէմ Մամելուկների՝ որոնք պատերազմ էին մղում Եւրոպական քրիստոնէից թագաւորներից օգնութիւն խնդրելով՝ կամաց կամաց յառաջ էին խաղում: Երեք և կէս տարի ճանապարհորդութիւնից յետոյ Հեթումը Մանգոյ խանի Հուլաւուն եղբօր հետ վերադարձաւ. Հուլաւունը Աստոյց կողմը մնաց, իսկ Հեթումը Կիլիկիա հասաւ: Թեր Թագաւորն այնուհետև ընկնում է Իկոնիոյ Սուլթանի հողերի վերայ և գերմանիկը խլում. ըստ որում սուլթանը նորա բացակայութեան ժամանակն ասպատակ էր արել Կիլիկիան: Արևելեան կողմից նմանապէս ընդարձակվում է Կիլիկիան՝ Մողոլների տուած մէկ քանի քաղաքներովն:

Մինչ այս մինչ այն Բաղդադի խալիֆայութեան կործանելուց յետոյ, Հեթումը 40,000 հետևակ զինուորութիւնով և 12,000 հեծելազօրով գնում է Հուլաւունի մօտ և միաբանական զօրութեամբ առնում են Հալէպը և արդէն մտքներումը դրել էին Մամելուկների ձեռքիցը Սուրբ երկիրը խլել, երբ որ Մանգոյ խանի մահուան լուրն եկաւ: Հուլաւունը մանաւոր զօրք թողնելով գնաց Մողոլիա, այն ինչ Հեթումն էլ մէկ քանի ժամանակից յետոյ պէտք է

ճանապարհ էր ընկել այն տեղ, մեծ խանի գերդաստանական կուռք պատճառ:

Մամելուկների գլուխն և Սուլթանը լինելով Բիբարսը (Փնդուխտարը) այն ժամանակը ընկնում է Ասորոց երկրի վերայ, և Մողոլական գունդը չարգելուց յետոյ ասպատակ է ուղարկում Կիլիկիա: Ավերում են, կոլծանում են բոլոր այն երկրի ընդարձակութիւնը. Թագաւորի որդի Թորոսը մեռաւ պատերազմումը, իսկ Լևոնը գերուեցաւ, Հեթումն սճապարեց՝ Կիլիկիա եկաւ. բայց ուշ էր, ցաւեցաւ և արդէն տեսնում էր պայծառ լոյսով այն սարսափելի գազանին, որ պէտք է կոլծանէր քանի մի ժամանակից յետոյ Կիլիկիական տունը: Մէկ քանի դեսպանական բանագնացութիւններից յետոյ Սանկտ-լասար եգիպտական դերեալ իշխանը Մողոլների ձեռքից ազատելով ուղարկում է Բիբարսին, որ նորա տրիտուր ուղարկում է Լևոնին: Հեթումն ուրախութեանը չափ չկար, ինչպէս և բոլոր Կիլիկիացւոց: Այնուհետև և Թագաւորը երկարամեայ ծանր իշխանութիւնը և պսակը տալով իրան որդուն, ինքը 1270 թուին կրօնաւորական դգեստ է հագնում:

ԼԵՒՈՆ Գ. 1270—1289 ԹԻՒԸ.

Լևոնի տասն և ինն ամեայ Թագաւորութեան ժամանակը կարելի է երկու կէս բաժանել, մինչև 1276 թիւն անյաջող, մնացեալը յաջող. առաջին մասնումը զանազան ձախ հանգամանքների պատճառաւ

պարտեալ, իսկ երկրորդումը յաղթող:

Լևոնը մէկ այնպիսի ժամանակում էր գտնվում, որ եթէ ունեցել էր բաւական կարգաւորեալ գինուորութիւն, կարող էր արդէն վաղուց որբացած Հայաստանը ձեռք բերել. Մողոլներն իրանք էին առաջարկում, բոտորում դաշնակից էին և բոտորում նոցա քաղաքական և ժառանգութեան պատճառաւ պատերազմները օրէց օր աստկանում էին, և քայքայվում էր նոցա լայնաճաւալ տէրութիւնը: Կիլիկիական հողերը ընդարձակուել էին մինչև Եփրատ և Միջագետք, իսկ եւրոպական քրիստոնեայքը, ինչպէս երկու հարիւր տարուց առաջ, գունդագունդ վազում են դէպի սուրբ երկիրը՝ այժմ գունդգունդ թողում էին այն սուրբ երկիրը՝ որ իրանց արեամբն էին ներկել:

Սուրբ երկրի պաշտպանողը և արևելեան քրիստոնեայ ժողովուրդների հովանաւորութիւն տուողը՝ Հայերը պէտք էին հանդիսացել. բայց բանը այն է, որ Հայոց Կիլիկիական Թագաւորութեան մէջ այդքան գօրութիւն չկար, և հենց իրան ներքին բարոյական կարգերն էլ բաւական արգելքներ և երկպառակութեանց պատճառ էին լինում: Հայերն, եթէ ունեցել էին իրանց ետևն Աստուբեան լեառները և Ատլանտեան ովկիանոսն, այն կարող էին շատ բան անել. բայց ետևից Յոյներն և Սելջուկեան, Ղոնիական և Իկաւնական իշխաններն էին, իսկ առաջից մահմետական Մամելուկներն, որոնք արդէն Եգիպտոսից դուրս գալով դրաւել

էին Սուրբ երկիրը և Ասորոց երկրի մեծ մասը։

Հագամանքներն այսպէս էին, երբոր Կիլիկիոյ իշխանական գահազանը բանիմաց Լևոն Գ-ի ձեռն ընկաւ. մէկ քանի ամսից յետոյ Հայրը վանքումը վախճանեցաւ և այս Հարուածը այնքան սաստիկ վիրաւորեց Լևոնի զգայող սիրտը, մինչ գի նա մէկ քանի ամիս ժամանակ մերձ՝ի մահ Հիւանդացաւ և ապա հազիւ հազ առողջանալով Հմուտ բժշկաց ձեռամբը, վերջապէս օծուեցաւ թագաւոր Տարոնումը Յակոբ կաթողիկոսից՝ ի ներկայութեան Հայկական մեծամեծաց և պարոնայից։ Իսկ ի սկիսատեց այնուհետև իրան երկիրը խաղաղութեան և ապահովութեան մէջ պահել, հեռի ամենայն որևիցէ պատերազմական ադմուկներից և ներքին խռովութիւններից։ Բարօնները միշտ նենգութիւններ էին անում և պատճառ թիւն թագաւորի դէմ, իսկ արտաքին կողմանէ Սելջուկեան Թուրքերը, որոնք Կիլիկիոյ չորս կողմն էին և Մողոլական իշխանութեան ներքոյ, տեսնելով Մողոլաց և Հայոց ներքին երկպառակութիւնները և արդէն զայրացած լինելով նոցա իշխանութիւնից, Բիւրաւսին գրգռում են և մէկ քանի անգամ ասպատակ են վերկացնում Կիլիկիայումը, մեծ կոտորածներ են ունենում Կիլիկիայի քաղաքները՝ բացի ամուր Սիսը. այս պատեհեցաւ 1274 Թուին, թագաւորը մնայն էր մնացած, յանդուգն բարօնները մի կողմն էին քաշուել և սառն աչօք էին նայում։ Այդ մէնոյն ժամանակները ժանտախտն, սովն, թագաւորի աղջկայ և որդւոյ

մահը և հէնց թագաւորի կրկին անգամ սաստիկ հիւանդութիւնը՝ Կիլիկիայի դրութիւնը աւելի էին թշուառացնում։ Այսպէս աղետորդի և կորստաբեր տեսարանները շարունակվում են մօտ մինչև 1276 Թիւն, երբոր բանը այլ շրջան առաւ Աստուածային նախախնամութեամբն։

Հայերը և Պարոնները վերջապէս միաբանվում են և թագաւորի եղբայր Սմբատ զօրավարի առաջնորդութեամբը բաւական կոտորած են տալի Մամելուկներին արևելեան Կիլիկիայումը, ուր և վիրաւորուելով Բիբարսը մէկ քանի ժամանակից յետոյ վախճանվում է Դամասկոսումը։ Մողոլաց Ալաղա խանը լսելով Լևոնի այս յաղթութիւնները՝ շատ ուրախանում է և մինչև անգամ կամենում է Կիլիկիայի Հարևան Սելջուկական Հողերը նորա իշխանութեան ներքոյ ձգել. բայց Լևոնը համեստութեամբ յետ է կանգնում այդ առաջարկութիւնից՝ իրան զօրութիւնը և այն ժամանակուայ հանգամանքները աչքի տակ բերելով։

Լևոնը այսպիսով իրան ուշքն ու միտքը միայն ձգեց Կիլիկիայի վերայ և մեծ խանին խորհուրդ էր տալի իրան գաւառներումն և նահանգներումը հաստատիմ և խոհեմ մարդկերանց կարգել, որոնք պատճառ չը տան նորանոր խռովութեանց և անկարգութեանց։ Այնուհետև, այն է 1282 Թուին, Մողոլական և Հայկական բանակները միանալով՝ մեծաւ զօրութեամբ մտնում են Ասորոց երկրի սիրտը՝ վրէժ առնելու Մամելուկներից, որոնք պատճառ

էին եղել Սելջուկեանց և Թուրքմէններուն անկարգութեանց, Հասնում են մինչև Համա քաղաքը (Անտիոքի մօտերքը), ուր և ճագեցաւ դլխաւոր ճակատն։ Բիբարսի յաջորդ Սուլթանը նրանց առաջը դուրս եկաւ. Բանդոտամուրը, Ազաղայ մեծ խանի եղբայրը, բուն դնդի դլուխն անցկացաւ, աջ թևն Լևոնը առաւ, իսկ ձախը Ալմալս մոդոլական զօրավարներից մէկն։ Թէ զօրութիւնը պէտք է յաղթէր, եթէ Բանդոտամուրի կաշառակերութիւնը կամ անհոդութիւնը չէր եղել, աջ և ձախ թևերը թշնամուն ջարդեցին և հալածեցին պատերազմի դաշտից, այն ինչ բուն գունդը մնացած էր անպոծունեայ։ Այսպիսով, թէ և յաղթութիւնը Մամելուկների կողմն անցաւ, այսուամենայնիւ այնուհետև Լևոնի բոլոր կառավարութեան ժամանակները Մամելուկները չը համարձակեցան Կիլիկիայի սահմանների վերայ ոտք դնել։ Այնուհետև Լևոն երրորդը մինչև 1289 թիւը իրան ուշքը ձգեց իւր ժողովրդեան հոգևոր և մարմնաւոր կրթութեան վերայ, գրել տուեց շատ գրքեր, բանասէր ուսումնականաց դիւրութեան համար և մինչև այսօր էլ նորա ժամանակ գրուածներից շատերը կան։

ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ 1289 -1307 ԹԻՒԸ.

Հեթումի տասն և ութ ամեայ կառավարութեան ժամանակները նոր տեսարաններ են բացվում և միանգամայն նոր հանդամանքներ. Ա. Հայոց դաշնակիցների, այն է Մոդոլաց, զօրութիւնը առաւել քան պառաւել քայքայվում է և թուլանում և նրանց խաներից շատերը, մինչև անգամ, ընդունելով մահմետականութիւն, Հայոց ազգին սկսում են հալածել և կոտորել։ Բ. Մամելուկները զօրեղանում են և Կիլիկիայի զրութիւնը դժուարանում և Գ. Հայերը դիմում են քրիստոնէից օգնութեանը և այս օգնութիւնը պէտք է լինէր մէկ քանի ճէսերի փոփոխութեամբը, որ մեծ ազմուկների և խռովութեանց պատճառ եղաւ և որ ներքին կողմանէ մեր աշխարհի մնութեան կապը քակեց և մեր համազգեացը թշնամացրեց միմեանց դէմ։

Հեթումն, որ Լևոն Գ-ի որդին էր, հէնց իրան կառավարութեան սկիզբները սկսեց դեսպանական բանակցութիւններ անել Նիկողայոս Գ. պապի հետ և նորա օգնութիւնն էր թախանձում։ Կաստանդին կաթողիկոսն՝ որ ընդդէմ էր և չյաջտնի կշտամբում թագաւորին, դրկվում է աթոռից և նորա տեղը ժառանգում է Սահականնոսն՝ որ Հռոմկլայ նստող կաթողիկոսներից վերջինն էր։

Այս միջոցին, այն է 1291 թուին, Մէլիք Աշրաֆը (Կալավունը)՝ Մամելուկների Սուլթանը, Տաճարականներից և Յովհաննիսեան կարգից խլում է

Տրիպոլիսը և Ակկոնը՝ նոցա վերջին ապաստանարանը Սուրբ երկրումը և այնուհետև դիմում է դէպի Կիլիկիա: Արղուն -Խանը պատերազմայ մէջ գտնուելով ձեռն օգնականութեան չը կարողացաւ տալ, և Հռոմկլայ ամրոցը, գարուկիսեայ կաթողիկոսարանը, առնուեցաւ և կործանուեցաւ, և արդէն Մամելուկները մտնում են Կիլիկիայի սիրտն, երբոր Համբարձասաւ Աշրաֆին՝ թէ Եգիպտոսը վտանգի մէջ է քրիստոնեայ գինուորներից, որոնք պապի յորդորանօքն արդէն պաշարել էին Ազէքսանդրիան: Սուլթանը շտապաւ վերադառնում է այն տեղ, հետը տանելով շատ գերեալներ, որոց մէջին էր և Ստեփաննոս կաթողիկոսը և Լուսաւորչայ աջն: Եգիպտոսն ազատվում է քրիստոնեայ գինուորների արհաւիրքից, այսուամենայնիւ ժանտախտը նրանց տեղն է բռնում, և Սուլթանը կարծելով թէ պատճառն Հայոց կաթողիկոսն և սուրբ աջն է, ուստի և արդէն խնդրեալ լինելով Հայոց Թադաւորից, արձակում է: Կաթողիկոսն արդէն գերութեան ժամանակները մեծ տառապանքներ կրելով մեռնում է մէկ տարի վտարանդութիւնից յետոյ: Իսկ նորա տեղը յաջորդում է 1294 թուին դիւրահաւան Գրիգոր Է. կաթողիկոսը, և կաթողիկոսարանը այնուհետև լինում է Սիս մայրաքաղաքումն, ըստորում Հռոմկլան քակտեալ էր:

Դորանից յետոյ Հեթումը մէկ քանի ժամանակ հրաժարվում է կառավարութիւնից և առանձնանում է մի վանքի մէջ, իշխանութիւնը յանձնելով

իրան եղբայր Թորոսին, բայց սա էլ երկու տարուց յետոյ հրաժարուեցաւ և վանքն մտաւ: Հեթումը կրկին անգամ պէտք է կառավարութիւնը ձեռն էր առել և Ղազան խանին տեսութիւն գնար, որ Արղունի մահից յետոյ շատ քաղաքական պատերազմներից յետոյ խան կարգուելով՝ գտնվում էր Ատրեստանի կողմերը (նոցա խօսակցութիւնը): Դորանից յետոյ Հեթումը իրան քոյր Մարիամին Անդրոնիկոս կայսեր Միքայել որդուն է տալիս 'ի կնութիւն և մէկ քանի ժամանակից յետոյ իրան Թորոս եղբօր հետ նոցա այցելութիւն գնալով Կիլիկիայի կառավարութիւնը յանձնում է իրան երրորդ եղբայր Սմբատին, որ իսկոյն նորա գնալուց յետոյ ժողովելով մէկ քանիսներին իրան շրջապատը, Գրիգոր կաթողիկոսի ձեռամբն օծվում է թագաւոր, իրրու այն, թէ Հեթումը իրան բոլոր կառավարութեան ժամանակը թագ չէր կրած: Ղազան խանը իւր կողմանէ նրան է ճանաչում Հայոց թագաւոր: Հեթումը իրան եղբօր հետ վերադառնալով Կոստանդնուպօլսից՝ իմանում է այս ամենայն եղելութիւնները և կամենում է գնալ Ղազան խանի մօտ, բայց Սմբատը դոցա բռնել տալով՝ Թորոսին սպանում է, իսկ Հեթումի աչքերը հանել տալով՝ բանտը դնում: Հեթումի չորրորդ եղբայր Կոստանդինը 1298 թուին ընկնելով Սմբատայ վերայ՝ բանտարկեց և Հեթումին ազատեց:

Քիչ ժամանակից յետոյ բացվում են Հեթումի աչքերը և շատերը նրան են կամենում Թագաւո-

բացնել. Կոստանդինը կամենում է Սմբատայ հետ միասին ընդդիմանալ և խռովութիւն յարուցանել, բայց բռնվում-ձն Հեթումից և ուղարկվում են Կոստանդնուպոլիս, ուր և մեկ քանի ժամանակից յետոյ մեռնում են: Սորանից յետոյ Ղազան խանի սիրտն էս առնում է, Եգիպտացոց անուանի զօրավարներից մեկին բռնելով և նրան ուղարկելով Աղբեստան: Քանի որ Ղազան խանը կենդանի էր, Հայերն այնքան նեղութիւն չէին կրում Մողոլաց կողմից, բայց երբոր նա մեռաւ և նրան յաջորդեց Ղարբաղանդը, այնուհետև Հայերին ոչ թէ պաշտպանում են, այլ հալածում են և ամենայն կերպ նեղութիւններ տալիս, ըստորում այդ Ղարբաղանդը մեկ քանի ժամանակից յետոյ ընդունեց մահմետականութիւն: Ղազան խանի ժամանակներից հետէ Կիլիկիայում կար և Մողոլական զօրք, այն երկրի պաշտպանութեան համար, նրանք էլ ոչինչ օգնութիւն չէին անում:

Ահա այս ժամանակներն է, որ Հեթումը յոյսը միանգամայն կտրելով արևելեան որևիցէ ազգից, ուշքը ձգում է արևմուտքի վերայ, նախ և առաջ 1305 թուին, ըստ Իւրեան տոմորութեան, Հրաժարվում է աթոռից և Կիլիկիայի թագաւոր է նշանակում իրան դիտաւորութեան հաւատարիմ Լևոն Գ-ին, որ նախայիշատակեալ Թորոսի որդին էր: Այս Լևոնը թագաւորում է երկու տարի ժամանակ 1305—1307 թիւը և ամենայն բանի մէջ վարվում էր Հեթումի խորհրդովը՝ որ թէպէտ միայնակեացական կեանք էր վարում, այսուամենայնիւ

թագաւորահայր և յանձանձիչ էր: Գրիգոր Ի. կաթողիկոսը նրանց կամքին էր, արդէն վաղուց և ետքն յօդուած վախելով Հայկական ճէաների և խոտովանութեանց մէջին, կամենում էր Հայերին ուղղափառ երևացնել արևմտեան եկեղեցւոյ առաջին: Հայոց պատմութեան մէջին այսպիսի մեհաւատն Հակացողութեամբ թագաւոր և կաթողիկոս Հաղիւ թէ պատահած էր: Երկեն մտքներումը դրել էին ժողովք անել, երբոր Գրիգոր Ի. Անարզաբեցին մեռաւ:

Հեթումը և Լևոնը յայտարարութիւն կարգացին Հայոց ազգին՝ Սիս ժողով առնել՝ նոր կաթողիկոս ընտրելու համար, և նախընթաց վախճանեալ կաթողիկոսի դիտաւորութիւնները քննել: Քառասնից աւելի եպիսկոպոսներ, բազմաթիւ իշխաններ և պարոնայք և ստորին հոգևորականք լցվեցան 1307 թուին Սուս մայր Սոփիա եկեղեցին: Հանդիսականները լմանում են թագաւորահօր և թագաւորի դիտաւորութիւնը, շուտով հրատարակում է Հայաստան աշխարհումը, ամենայն տեղ տրտունջի և դանդատանաց ձայն է լսվում: Սոր բնակիչները տեսնելով իրանց եկեղեցական արարողութիւնների մէջին մեկ քանիսները՝ որոնք լատինական կերպիւ էին կատարվում, խռովում են, գանգատում են Մողոլական գնդի Պիլարղու Հրամանատարին, որ իրան զինուորութեամբն Անարզաբայ էր նստում: Պիլարղուն կանչելով թագաւորին, թագաւորահօրը և շատերին՝ որոնք նրանց կողմն էին, սպանել է տալի:

ՕՇԻՆ 1308—1320 ԹԻՒԸ ԵՒ ՆՈՐԱ ՈՐԴԻ ԼԵՒՈՆ Ե. 1320–1342 ԹԻՒԸ։

Այս երկու թագաւորներն էլ միանգամայն լրանց ուշք ու միտքը ձգում են կատոլիքական աշխարհի վերայ և կամենում են նրանով Հայաստանի և Հայաստանի որդւոց ազատութիւնը որոնել։ Բայց սոցա այս կերպ ուղղութիւնը առաւել վտանգներ առաջացրեց, քան թէ որևիցէ մէկ շահաւէտ և հաստատուն օգուտ։ Սոքա կարծես թէ մտածում էին՝ թէ Պապերը այն զօրեղութիւնը և բարոյական իշխանութիւնն ունեն՝ ինչ որ երկու հարիւր տարուց առաջ և կարծում էին, թէ Եւրոպան այն ուղղութիւնն և հանգամանքներն ունի, ինչ որ խաչակրութեանց սկիզբները։ Սոցա այսպիսի թիւր հասկացողութիւնից և բռնած ճանապարհից յիրաւի Կիլիկիայի ներքին և արտաքին հանգամանքները շատ վատթարացան։ Ունիթօռները կամ պապական քարոզիչները դիւրութեամբ մտնելով Հայկազանց հողը պապութիւն են քարոզում և ծխից փոփոխութիւն, խռովում են Հայաստանեայց եկեղեցին՝ նորա որդիքը և պաշտօնակատարները, և միմեանց դէմ մաքառում և երկպառակվում։ Արևելեան Քահանայականք տեսնելով մեր աշխարհի այս աղմուկները շատ օգուտներ են քաղում և տեսնելով մեր թագաւորաց և մէկ քանի անձանց անդադար հաղորդակցութիւնը եւրոպական աշխարհի հետ, շտապում են Կիլիկիայի թագաւորութիւնը շուտով կոր-

ծանել՝ ահից թէ մէկ էլ ինչպէս առաջ արևմուտքը չը յառնի ընդդէմ արևելեան մահմետականութեան։ Ահա այսպիսի մոլար ճանապարհով շտապեցրին մեր այս թագաւորները Կիլիկիայի անկումն։

Օշինը՝ որ Լևոն Գ-ի եղբայրն էր, իսկոյն նորա չարաչար վախճանից յետոյ, ժողովեց Հայոց զինուորութիւնը և Թաթարաց Պիլարղու զօրապետին հալածեց Կիլիկիայից և ինքն 1308 թուին թագաւոր օծուեցաւ թագաւորական Սիս քաղաքումն։ Կամեօծուեցաւ թագաւորական Սիս քաղաքումն։ Կամեցաւ թագաւորական կրօնական խռովութիւնը վերջացնել, երբ թէ կրօնական խռովութիւնը վերջացնել, կրկին անգամ ժողով է առնել տալի Սիս քաղաքումն և ստիպում է Հայերին ընդունել Գրիգոր կաթողիկոսի կանոնագրութիւնները։ Բայց աղմուկներն առաւել սաստկանում են և 1311 թուին Երուսաղէմի Հայոց Սալգիս եպիսկոպոսը չ'անսալով նորա անիրաւ հրամանին, Մամելուկների Սուլթանի նորա ձեռամբը, պատրիարքական իշխանութիւն է առնում։ Սրանից յետոյ Օշինը սկսեց դեսպանական բանակցութիւններ Ավինեօնումը դերեալ և առաջին նշանակութիւնից զրկեալ պապութեան հետ. դեսպանութեան գլուխ կարգուած էր Կապանի (Կիլիկիայումը դղեակ) Յակոբ եպիսկոպոսը։ Կղեմէս Ե-ի յաջորդ Յովհաննէս Իբ պապը, Հայոց դեսպաններին ընդունելուց յետոյ, ուղարկեց Գաղղիացւոց Փիլիպպոս Ե. թագաւորի մօտ, բայց ոչինչ բան գլուխ չեկաւ։ Այսպիսով անշահ յետ դարձան Հայոց դեսպանները, Պապը մեծ բաներ էր խոստանում, բայց գործով ոչինչ էր ցոյց տալի և չէր էլ կարող, ըս-

տորում ժամանակը առաջուայ ժամանակը չէր: Թոռանից մէկ քանի ժամանակից յետոյ մեռնում է Օշինը, և տեղը 1320 թուին յաջորդում է Լևոն Ե. նորա տասնամեայ զաւակը, Օշին պարոնի խնամակալութեամբը:

Քամելուկների Մելիք-Նազար Սուլթանը լսելով Հայոց դեսպանական բանակցութիւնները և կարծելով թէ արդէն Ֆազղիացիք պէտք է արշաւեն արևելք, զայրացաւ, բարկացաւ Կիլիկիական իշխանութեան վերայ և մտքումը դրեց կործանել, հիմն ի վեր տապալել այդ քրիստոնեայ տէրութիւնը, որ այդպիսի մեծ սպառնալիքներ է սպառնում մահմետականութեանը: Յայտնեց ամենայն եղելութիւնները Թաթարներին և Թուրքերին, և նոցա իշխաններին իրան կողմը գրաւեց. Թաթարների Գիմուրթաշ և Թուրքաց Արաման զօրավարները՝ իրանց ահագին զինուորութեամբն անցան Քամելուկաց կողմըն: Հայաստանի վերջին թագաւորութեան գրութիւնը և ապագայ թշուառ վախճանի նշանը սարսափելի կերպով որոտաց: Տարաբախտութեամբ ներքին կրօնական երկպառակութիւնները, որ պատճառվել էր ոչ թէ Հայաստանի Հարազատ որդիքեանցից, այլ Ընկերօռներից և թագաւորաց մոլար քաղաքականութիւնից, կեզեքում էր բոլոր Հայկազանց գլուխին. բայի այդ Օշին խնամակալի արարմունքներն և ներքին երկպառակութիւններն աւելացնում էին և Կիլիկիական գօրութիւնը բաժանում. ըստորում այն խնամակալը կառավարութեան սան-

ձը իրան ձեռքն առնելով՝ իրան որդիքերանցը և ազգականներին էր առաջ տանում և այդպիսով զանազան աղմուկներ էր յարուցանում: Ահա այսպէս էր Կիլիկիայի գրութիւնը տասնամեայ Լևոն Ե-ի թագաւորութեան սկիզբները: Սկսեցին մի տա մի արշաւել. նախ Գիմուրթաշը 30,000 ձիաւորով մօտ մի ամիս ժամանակ աւերեց, գերեց, կործանեց անարգել բոլոր Կիլիկիայի ընդարձակութիւնը: Թաթարներից յետոյ եկան Թուրքերը Արամանի առաջնորդութեամբը և՝ ի վերջոյ Քամելուկները միանգամայն սպառնալով՝ ջնջել Կիլիկիական հարստութիւնը, պաշարեցին Ճովասինեայ Լայաս ամրոցը և նրան առնելով գետնին հաւասարեցին, բնակիչներին սրի ճարակ տուին, թէև Կիպրոսի թագաւորութեան նաւերը շատերին ազատեցին և Կիպրոս տարան: Այսպիսով Կիլիկիան երկու երեք տարի ասպատակաց ասպարէզ էր դարձած: Հայկական կառավարութիւնը՝ աղերսանաց գիր գրելով Գայիին՝ մի առ մի նկարագրեց Կիլիկիայի թշուառ վիճակը: Գայը, որ մէկ քանի կերպով ինքն էլ էր պատճառ այսքան հարուածոց արևելեան քրիստոնէութեան, հոգով չափ ցաւեցաւ և խղճիցը տանջուեցաւ. խոկոյն յայտնեց եւրոպական դռներին և կոնդակ գրելով կաթոլիկական աշխարհին՝ յայտնեց Հայոց Կիլիկիական թագաւորութեան գրութիւնը, բայց սպասելի պատուղ չ'երևեցաւ: Կոնդակներն, այո, կարդացուեցան կաթոլիկական եկեղեցիներում, քարոզիչները անխնայ էլին իրանց հանճարը վերածում, այսու ամենայնիւ

բայլ ափսոսալը և խղճալը ոչինչ բան չ'երևեցաւ: Միայն այս էր լավում,—ճանապարհը երկար է, մեծ պատրաստութիւն կուզի, ափսո՛ս որ քրիստոնէութիւնը տանջվում է արևելքումը և Հայերը նահատակվում: Հայերն ամենայն տեղից անօգնական մնացած, ճանաչում են՝ որ իրանց ազատութիւնը կարելի է լինի էլի նոյն արևելեայց հետ խոհեմութեամբ վարուելով:

Հայերը Պողոսներին կամ Թաթարներին ուշ ածին իրանց առաջին ժամանակաց դաշն և սէրն, Կոստանդին Գ. կաթողիկոսն իրան ամենայն ջանքն 'ի գործ դրեց Համոզելու նոցա Բուսայիդ խանին. Պապն իրան կողմանէ տեսնելով բանի այլ շրջան առնելն, նամակ գրեց վերոյիշեալ խանին: Վերջապէս Բուսայիդն Հայոց կողմն անցկացաւ և ինչպէս առում են, 20,000 զինուոր Հայոց օգնութիւն ուղարկեց: Այնուհետև Մամելուկաց Սուլթանը խաղաղութիւն է առաջարկում և Հայոց կաթողիկոսն գնալով Եգիպտոս՝ այս ինչ պայմաններն են հաստատում.— Ա. Հայերը պէտք է տարէկան մէկ միլիոն երկու հարիւր հազար դենար տուրք տան. Բ. Ծովից հանած աղի կէսն և Ծովային վաճառականութեան արևելեան ափերի մաքսերի կէսն. Գ. Եփրատ գետի կողմերի բնակիչները՝ որոնք քսան տարուցն աւելի են՝ գլխահարկ տան մէկ Բիւզանդեան ոսկի: Իսկ ինքն Կլիկիայի մէջն ամրոց և տեղ չպէտք է ունենայ և քանդածները իրան ծախսովը վերանորոգէ, ինչպէս էր Այասը: Թէպէտ և այսպէս յաջող վերջացաւ, այսուամենայնիւ Թագաւորի անիրաւութեանց և անկարգութեանց պատճառաւ Կլիկիան կրկին անգամ վտանգի մէջ ընկաւ:

1329 Թուին, երբոր Թագաւորը կատարելահասութեան Հասնելով՝ սանձն միանգամայն իրան ձեռն առաւ, թշնամացաւ իւր խնամակալի հետ և նրան սպանել տուաւ. շատ իշխանների պաշտօնից զրկեց. վրդովեց խաղաղութիւնը և ամենևին Հոգս չանելով իրան տուած պայմանների վերայ, Մամելուկները սկսեցին արշաւել Կլիկիայի վերայ: Անխոհեմ Թագաւորը Կլիկիայի արևելեան կողմերի մէկ քանի դղեակները, ինչպէս էին Անտիոքիա և Սիգուինոն տալով Յովհաննիսեան կարգի ասպետներին, նրանց պարտաւորեց մաքառել մահմետականաց դէմ: Գրեց և նամակ Բենեդիկտոս ԺԲ. պապին՝ Յովհաննէսի յաջորդին: Պապը, ըստ իւր սովորութեան, խաչակրութիւն քարոզեց, բայց չյաջոնի բան է որ անշահ. Գաղղիացւոց Փիլիպպոս Ջ. Թագաւորը—Վալուեանը —սպառնալիքներ գրեց Սուլթանին: Սուլթանը սաստիկ զայրանալով բոլոր մահմետական իշխաններին ոտի կանգնացրեց և Կլիկիան այնուհետև ասպատակաց և աւերանաց ասպարէզ դարձաւ. նեղութեանց, կոտորածից, աւերանաց նկարագրելը աղէտալորդ և ցաւալի է՝ որ մեր Թագաւորի անխոհեմութիւնից առաջացաւ: Կրկին անգամ Կլիկիայի կառավարութիւնը փորձով և արդեամբ ճանաչում է իրան սխալանքները. 1338 Թուին կամ 37-ին Մէլիք-էլ-Նազար-Մահմուդ Սուլթանի դեսպանի ա-

ռաջին մեր Թագաւորն երդուեցաւ աւետարանի և խաչի վերայ, այնուհետև հաղորդակցութիւն չառնել Պապի՞ և Եւրոպայի հետ, և իրան պարտականութիւնը և տուած պայմանները կատարել։ Բայց ինչ, հէնց նոյն տարին, պապի խօսքին նայելով, լուծում է իրան երդումն, ըստ այնմ թէ անհաւատին տուած է եղել։ Լեւոնը կրկին անգամ սկսեց իրան երդման հակառակ հաղորդակցութիւն առնել Ալինեօնի դրան հետ։ Մահմետականները կրկին անգամ սկսեցին իրանց ասպատակութիւնները շարունակել։ Իսկ Լեւոնի մահիցը յետոյ, որ պատահեցաւ 1342 թուին, Կիլիկիական Թագաւորութեան վիճակն առաւել վատթարացաւ։

Լուսինեան տան Թագաւորաց սկզբնաւորութիւնը, Կոստանդին Դ. Գուիտոն։ Առաջինը 1342—1343 Թիւը, երկրորդը 1343—1345 Թիւը։

Եթէ մինչև ցայս ժամանակ Կիլիկիական Թագաւորները կամենում էին քանի մի կրօնական ծէսեր փոխելով դրաւել Պապին և կաթոլիքական աշխարհին և նոցա օգնութիւնը այնու հայթայթել. այնուհետև մեր Թագաւորները հոգով և կրթութեամբ կաթոլիք և Եւրոպացի են լինում, որից և ներքին աղմուկները և երկպառակութիւնները աւելի շատանում են և միանգամայն քակում են Թագաւորութեան միաւորող կապերը։ Որովհետև Լեւոնի մահիցը յետոյ ժառանգ չմնաց և Կիլիկեցիք պէտք

է նորա հեռաւոր ազգականներից մէկին էին Թագաւոր ընտրել։ Հենց իմ ի. Թագաւորի քոյր Զաբէլն արդէն ամուսնացած էր Կիպրոսի Թագաւորի եղբօր հետ և նորա ամուսնութիւնից ծնած էր Կոստանդին անուամբ մէկ որդի։ Հայոց աչքը նորա վերայ ընկաւ, որ գալով Թագաւորեցաւ. բայց իրան անբաւ վարմունքովը մեծ աղմուկների պատճառ եղաւ, որովհետև ալքունիքն սկսեց այլ ևմն տարագ ընդունել. հրամայեց, և բռնի կատարել էր տալի, Հայկական ձևերը թողուլ և վարուել արևմտեան ազգաց պէս. եկեղեցականացը հարկադրում էր եկեղեցական պաշտամունքները Ընդհանուր պէս կատարել՝ ընդդէմ Հայկական հին կարգաց։ Ժողովուրդը և նոյն իսկ Թագաւորական զօրքը խռովեց և սպանեց իրան ձեռամբը այդ օրինակ Թագաւորին։

Հայերը չբնարատուելով Թագաւոր կարգեցին նորա եղբայր Գուիտոնին՝ որ աթոռը բարձրանալուց յետոյ իրան եղբօր քայլովն սկսեց գնալ, խռովութիւնը և աղմուկն առաւել սաստկացաւ. եգիպտական Մամելուքները, լսելով Կիլիկիոյ այնպիսի դրութիւնը, առաւել սկսեցին ասպատակել։ Թագաւորը անօգնական մնալով իրան իշխաններից և զինուորութիւնից՝ որոնց նա զայրացնում էր իր անուղղայ ճանապարհով և որոնք սաստն աչօք էին նայում և իրանց մէջն մաքառում, դրում է Թուղթ Կղեմէս Ջ. պապին։ Պապը յայտնում է Փիլիպպոս և Եդուարդ Գաղղիացւոց և Անգղիացւոց Թագաւորներին, բայց նոքա իրանց ժառանգութեան խնդ-

րովն էին զբաղեալ։ Այսպիսով Կիլիկիան ասպատակվում էր, արևմուտքիցը ոչինչ օգնութիւն չէկար. Հայոց մէջն ազմուկ և շփոթութիւնը աւելանում էին կատոլիքութեան զօրեղանալու առթով, որ կատոլիք թագաւորն առաւել ստուարացնում էր։ Ունիթօռների առաջը կտրող չէկար, շատերը նրանց կողմն էին բռնում և կարծես թէ խախտեալ գահի պէս՝ վտանգի մէջ էր և Լուսաւորչայ եկեղեցին։ Հայ արիւն ունեցողներն՝ ի զուր տեղ էին կատոլիք թագաւորին զգուշացնում և եղբօր մահուամբը բպառնում. թագաւորն շատ խոհեմ էր, բայց խաբուեցաւ պապիցն, իրան կամքն ունէր աչքի առաջին և այն չկատարուեցաւ. վերջապէս 1345 թուին Գալիտոնն էլ իրան եղբօր վախճանն է ունենում։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. 1345—1362 ԹԻԻ.

Գալիտոնի մահից յետոյ Հայերը կարծես քիչ խրատուելով՝ իրանց դրութիւնը լաւ են ճանաչում և Հայոց Հեթում անունամբ իշխանի որդի Կոստանդինին են թագաւորացնում։ Եւ յիրաւի չեն սխալվում։ Այս թագաւորը լաւ ճանաչելով երկպառակութեանց պատճառն, կրօնական խնդիրները վերջացնում է և Մխիթար ու Մեսրոպ կաթողիկոսաց ժամանակները ժողովներ անելով Սիս մայրաքաղաքումն, արգելում է միանգամայն կաթոլիքական և Ունիթօռական ձևերը։ Պէտք է Հայերը միանգամայն իրանց Հին սովորութիւններով էին վարուել՝

Հեռի ամենայն որևիցէ նորամտութիւններից։ Սրբանով մեր ազգը խազաղանում է, ներքին կապը յարդարվում է և մեր Հերետիկոսական կարգերովն առաւել բախտաւոր ենք լինում, քան թէ կաթոլիքական ուղղափառութեամբը, ինչպէս Պապերը և Ունիթօռներն էին Հաստատում, թէ կատոլիք լինելով Աստուծոյ Հետ կըՀաշտուենք և յաղթութիւնը մեր կողմը կը լինի։ Այն ինչ, ինչպէս տեսանք, առաւել յաղթուեցանք և մեր անդորրութիւնը կորաւ։ Եւ յիրաւի Հայերի միջից Հեռանալով ներքին խռովութիւնները՝ իրանց յոյսը իրանց վերայ և իրանց Հաւատի վերայ ձգելով՝ Հալածում են Կիլիկիայիցը Պամելուկաց ասպատակները, և այն էլ այն ժամանակը, երբ որ մահմետականները իրանց սոսկալի զօրութիւնները և մեքենայքն էին՝ ի գործ դնում և Հայերի վերայ ոչինչ վստահութիւն չունենալով Հաւատարմութեան կողմից, կամենում էին կործանել Կիլիկիան, որ արևմտեան ազգերը՝ յուսակտուր լինին առևելք արշաւելուց, թէև առանց էն էլ Եւրոպացիք չէին թողուլ իրանց ներքին կարգապրութիւնները և խնդիրները և գալ Սուրբ երկիրը, ինչպէս մէկ քանի դար առաջ։ Վերոյիշեալ թագաւորների աղմկալից կառավարութեան ժամանակները և նրանցից յետոյ Պամելուկները առել էին Հայոց ձեռքից Այաս և Ադէքսանդրիա դղեակները՝ Կիլիկիայի սահմանի պաշտպանները։ Կոստանդին Դ. թագաւորն այն էլ յետ է խլում Հայկական միաբանական Հոգւովն և կիպրացւոց ու Հռոդոսի ասպետների քրիս-

տոնէավայել ձեռնտուտեամբը։

Այսպիսի ճանապարհ բռնելով Կոստանդինը, մինչև 1362 թիւը, բաւական ապահով է պահում Կիլիկիան. թէև խնամոտ պապերը, Աւետեոնի գերեալները, միշտ իրանց սովորական հայրական գթառատութեամբը հոգս էին անում մեր հոգւոյ վերայ և թղթեր ու կոնդակներ ուղարկելով կամենում էին ուղղափառութեան մէջ մեզ հաստատ պահել. թէև մեզ նրանով առաւել վտանգի մէջ էին ձգում և Քամելուկներին առաւել զայրացնում։

Կիլիկիայի Լևոն Զ. 1365-ին, նորա գերութիւնը 1374 թուին, Կիլիկիոյ թագաւորութեան անկումն և Լևոնի մահն 1393 թուին։

Կոստանդինն չորրորդի մահից յետոյ մեծամեծ անկարգութեանց մէջ ընկաւ Կիլիկիան և դիւրաւ բացէ ի բաց անցնելու համար, և այս տեւեց մօտ երեք տարի ժամանակ։ Հայոց իշխաններն չէին կամենում իրանց միջից մէկին թագաւորական աթոռի վերայ բարձրացնել և նրան հնազանդել ինչպէս թագաւորի, այսպիսի տարաձայնութեանց ժամանակները շատերը չօժարակամ թողում էին Կիլիկիան և գաղթում էին ուրիշ աշխարհներ,—դէպի Սեծն Հայաստան, Փոքր Հայաստան և այլն։ Կաթոլիք իշխանները գալով Կիպրոսից և ուրիշ տեղերից՝ նրանց տեղն էին բռնում. օրէց օր Հայերը սակաւանում էին և կաթոլիքները շատանում. որոնք

ապացուցանելով իրանց ազգականութիւնը Ռուբինեանց տան հետ, կամենում էին թագաւորել. մնացած Հայերը ընդդիմանում էին և սորանով աղմուկն առաւել բազմանում, այն ինչ Քամելուկները յաջող միջոց են գտնում վերջին հարուածն տալու։ Վերջապէս կաթոլիքականաց կողմն յաղթելով և Ութբանոս վեցերորդ պապը նոցա կողմն անցանելով վերուիշեալ Ռուիտոնի ազգականներից մէկին, Լևոնին, թագաւոր են ընտրում 1365 թուին։

Այս վերջին թագաւորը թէև բնութեամբ քաղցր էր և ամենի հետ լաւ վարվում, այսուամենայնիւ հասած էր Կիլիկիական թագաւորութեան վերջին ժամն. զօրութիւն չունէր, զօրեղ իշխանները և զինուորներն արդէն գաղթել էին, մնացածներն էլ միմեանց հակառակ, թէ հակացողութեամբ, թէ կրօնիւ և թէ արիւնով։

Եգիպտացի Քամելուկները 1367 թուին հարուած կրելով Կիպրոսի ծովային զօրութիւնից, որոնց ձեռնամուխ պէտք է եղել էր և մեր Լևոնը, կատաղութեամբ Կիլիկիայի վերայ յարձակվեցան. Լևոնը քիչ ընդդիմանալուց յետոյ, ամուր տեղեր ապաստանեցաւ և մէկ քանի ժամանակ աներևոյթ եղաւ։ Կիլիկիացւոց բախտիցը Քամելուկները յետ քաշուեցան, բայց թագաւորը դեռ չէր երևում, և կարծելով թէ արդէն վախճանած է, Քարիամ թագուհին մտքումը դրաւ մէկ այլ իշխանի հետ ամուսնանալ։ Արդէն Հայոց Յովհաննէս արքեպիսկոպոսն Տարենտոնի Փիլիպպոս իշխանին և Գրիգոր ԺԱ-

պապին յայտնել էր ամենայն եղելութիւնները և նոքա Բրևնավիկի Գերմանացի Օթոն իշխանին էին վեհապ ընտրում. երբ որ Լևոնը յանկարծ երեւեցաւ ի Թինդուիթիւն բոլոր Կիլիկեցւոց:

1374 Թուին Մելիք-էլ-Էշրէֆ Զաբան Սուլթանը լսելով Եւրոպացւոց դիտաւորութիւնները ի մասին նոր վեհապի և կարծելով միանգամայն՝ Թէ վերջը վտանգաւոր է, իւր եղբօրն ահագին զինուորութեամբ Կիլիկիա ուղարկեց, որ միանգամայն վերջացնէ այդ տէրութիւնը: Թագաւորն անտէր անօգնական մնացած, Հաղիւ Հազ կարողացաւ իւրան ընտանիքը մահիցն ազատել և նոցա Հետ միասին Կապան ամուր դղեակումն ամրանալ: Մամելուկների առաջին բաց էր բոլոր Կիլիկիան, մի առ մի առան —Մամեստիա, Ադանա, Տարսոն, Սիս և ուրիշ երեւելի քաղաքները, քանդեցին, կործանեցին, սրի ճարակ տուին առ Հասարակ ամենայն բան: Այն ինչ մեկ օրերեղ խումբ էլ սկսեց պաշարել Կապանը, բերդը ամուր էր և ինն ամիս ոչինչ չըկարողացան առնել. բայց Հաղորդակցութիւնը արգելելով և պաշարը սպառուելով Հարկադրուեցաւ Թագաւորը իւրան ընտանիքովն անձնատուր լինել:

1375 Թուին Կիլիկիայի վերջին Թագակիրը կրկին շղթայիւ կապուելով գերուեցաւ, նորա երկիրն ապականուեցաւ, քաղաքները ամայացան, ժողովուրդի շատերը սրի ճարակ եղան, մնացածները մօտ 60,000 Հոգի մի ժամանակում Թողին Կիլիկիան և գրուեցան զանազան կողմերը, դէպի Վրաստան, Ազուանք և Փոքր Ասիա: Ամայացաւ միանգամայն Թուբինեանց տան և Հայկական զինուորութեան կարմիր արիւնով ներկուած Կիլիկիան. և Պօղոս կաթողիկոսն, իբրև մէկ նոր Երեմիա, պէտք է կոծէր և ողբար իւրան անբախտ որդւոց վերայ՝ որոնք իրանց կրօնի ազատութեան համար միշտ մահմետականաց ձեռից Հալածանաց մէջ էին, ինչպէս երբեմն Իսրայէլացիք: Հայաստան աշխարհի Հովիւը երկար ժամանակ այդ տեղ մնաց և այդ տեղից սկսեց իւրան աչքը դարձուցանել իւրան տարագրեալ և որբացեալ որդւոց վերայ և Սիս քաղաքումն էր կատարում միւռոնի օրհնութեան և եպիսկոպոսական ձեռնադրութեան Հանդէսը:

Մինչ այս մինչ այն Լևոնը եօթն ամ բանտումը մնալուց յետոյ վերջապէս 1382 Թուին Կաստիլիոյ Յովհաննէս Թագաւորի գանձովը և Թախանձանօքն ազատվեցաւ իւրան գերութիւնիցը և գնալով Սպանիա իւրան ազատողին իւր երախտագիտութիւնը ցոյց տուեց և ապա գնաց Գաղղիա և Անգղիա Կարոլոս Ջ. Գաղղիացւոց և Ռիչարդոս Բ. Անգղիացւոց Թագաւորների ժամանակը և շատ աշխատեցաւ այն երկու միմեանց ոսոխ ազգերին Հաշտեցնել և ապա նոցա օգնութեամբը իւրան կորցրած Թագը ձեռք բերել. բայց ի զուր, նորա ջանքն ունայն անցկացաւ և 1393 Թուին մեռաւ Փարիզումը և Թաղուեցաւ Կեղեստինեանց վանքումը: Այսպիսի վախճան ունեցաւ Ռուբինեան վերջին Թագաւորը և նրանով միանգամայն բարձաւ Հայոց Թագաւորութիւնը:

Հայոց ազգի, քաղաքական իշխանութիւնը կորցնելից յետոյ, ունեցած վիճակների համառօտ նկարագրութիւնը (հազար չորս հարիւր թուից մինչև ներկայ ժամանակս)։

Նոր դարումը նախկին Հայոց երկիրը ընկաւ իւր ամենամեծ թշուառութեանց, իւր վերջին տկարութեան և ամայութեան մէջ, կրկին և վերջին հարուած և աւերածութիւններ է կրում. Թշնամիքն մի զկնի միոյ անգադար ոտնակոխ են անում նրան (Հայաստանը). մնացած հայերն էս սկսում են ցրուիլ զանազան երկիրներ կամ ամամայ ստիպմամբ, կամ ինքնայօժար կամօք։ Հայաստանը լցվում է այս օրուան խառնիճաղանճ ազգերով. ինչպէս են՝ Քուրդերը, Թուրքմէնները, Թաթարները, Պարսիկները, Օսմանեան Թուրքերը և . . . Հայկական ազնիւ բնութիւններից շատերը կորչում են, գնում են Հայոց Հողու միջից. բռնութիւնը, տարագրութիւնը ծնում են մեր մէջ զանազան պակասութիւններ, իրանց սարսափելի հետևանքներովը,

դպրոցները պակասում են, եկեղեցականք անուսումնանում, անվոյթանանում քարոզելու կենաց ճանն, դրութիւնը անճոռնիանում, աշխարհաբառ գրութիւնը ծագում. ժողովուրդը շատ տեղ իրան լեզուն և կրօնական դաւանութիւնը մոռանում, շատերը և գրեթէ բոլորը օտար բարբառների խառնուրդով նոր լեզու ստեղծում, հին քաղաքները, աւանները անհետ կորչում, ամայանում, նորերը և շատ սակաւ նոցա տեղը դուրս գալիս օտար անուններով և անճաշակ ճարտարութեամբ։ Գաղթականներից շատերը յաջողութիւն են վայելում, հարստանում են. հայրենեաց սէրը վառ են պահում Հոգու և սրտի մէջ. ձեռքից եկած օգնութիւնը մատուցանում իրանց ազգին։ Իվերջոյ լուսաւորեալ Եւրոպան ներգործում է Հայոց ազգի բարբարոս տիրապետողների վերայ. զանազան տեղ նոր կերպիւ ուսումնարաններ շինելով՝ Հայոց ազգը աշխատում է իրան նիւթական և մտաւոր վիճակը բարելաւացնելու։ Այս միջոցն գրաւում է մօտ 1400 թուից մինչև մեր օրերը։

ԱՌԱՋԻՆ շրջանումն Հայաստանը իր ամենասարսափելի ամայութեան մէջն ընկաւ, զրկուեցաւ իւր բազմամարդ քաղաքներից, իւր որդիքն գաղթեցին. Հեծում էին անգադար Մողոլների կամ Թաթարաց լծի տակին, յետոյ Քուրդերի. ապա երեւում են Օսմանեան Թուրքերը և ապա Պարսիկներն Աֆղեանց, որոնք գրեթէ բոլոր 16, 17-դ դարերումն և 18-դի առաջին կիսումն անգադար պատերազմում են Հայաստանի Հողի վերայ, այն երկիրն

իրանց ձեռքը ձգելու համար: Այնուհետև Հայութեան նշանն աւելի ուրիշ երկիրներումն էր երեւում, քան թէ Հայաստանումն. արդէն գնացել էին—Ղրիմ, Լեհաստան, Մօլդօ—Վալահիա, (Ուլահ և Բուղտան), Վենդրիա, (Մահառատան), Տրանսիլվանիա, (Արտեալ), Փոքր Ասիա, Մակեդոնիա, Թրակիա, Պարսկաստան, Հնդկաստան և ուրիշ շատ տեղեր, բայց ոչ այնքան բազմութեամբ: Այն ինչ մէկ քանի տեղ կրօնի պատճառաւ հալածանքներ էին քաշում, (Նիկօլ, Ձիդուխք.) միւս տեղերումն անուանի են լինում և մեծ հարստութիւն դիզում, (Հնդկաստանի Հայք:) Այս միջոցն գրաւում է 1400 թուից մինչև մօտ 1800 թուականը Քրիստոսից յետոյ:

ԵՐԿՐՈՐԴ շրջանումն Հայաստանը համարեայ թէ մեւնոյն ամայութեան մէջն է, բայց հանգամանքները բարելաւանալով կարծես մէկ լաւ ապագայ են գուշակում Հայաստանի համար: Հայաստանի տիրապետողների կառավարութիւնը բարւոքանում է, և ինչպէս բռնութիւնները Հայերին ցրուել են օտար աշխարհներ, բարի կառավարութիւնը պէտք է որ Հայաստանի ցրուած որդիքներին այն տեղ ժողովէ: Նախ և առաջ գաղթականների վիճակը բարելաւանալով՝ երևում է նիւթական և մտաւորական յառաջադիմութիւն և ուսումնասիրութիւն, շինում են ուսումնարաններ, տպարաններ, Հայկական գրականութեան համար նոր դար է բացվում, կաթոլիքական միաբանները՝ Վենետիկի և Վիեննայի, մեծ ծառայութիւն են մատուցանում Հայկական

գրականութեան վերածնութեանը. Հայերը հետևում են անմիջապէս այս օրինակին Կոստանդնուպօլսում, Զմիւռնայում, Տիվլիսում, Մոսկվայում, Նոր Ջուղայում, Կալկաթայում և այլն:

Օսմանեան Հպատակ Հայերն պարադրվել են Հանդիսանում մտաւոր յառաջադիմութեան ասպարիզում և Եւրոպացոց օդնականութեամբն աշխատում են այն տեղ բազմութեամբ կիտուած Հայերի վիճակն բարելաւացնելու և անդորրելու. (Սահմանադրութիւն):

Հայոց աշխարհի հիւսիսն Ռուսաց իշխանութեան տակ մանելով՝ այն տեղի Հայերի մտաւոր և նիւթական վիճակն բարելաւանում է և նոցա որդիքը կրթվում են և լուսաւորվում տէրութեան ստորին, միջին և բարձր ուսումնարաններումն, երևում են ուսումնական անձինք, որպէս Ռուսիայումն նոյն և Օսմանեան պետութիւնումն. աշխատում են ազգի ուսումնական յառաջադիմութեան համար: Հրատարակվում են լրագիրներ Տիվլիս, Մոսկվայ, Կոստանդնուպօլիս, Զմիւռնիա և այլն, որոնք ազգի ամեն տեղի վիճակն են ծանուցանում և նորա լուսաւորութեան ծառայում:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ—Арм. ССР
им. А. Мясникяна

Gzcon-



7r

1609

2.013